1037

UGPUF
1034

1/5
32

1087

2013

Ստեփաննոս Պօղոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Աստրախան

1034

ԶԱԽԵՐ—ՄԱԶՕԽ

71349

ԿԱՅԷՆԻ ԿՏԱԿԸ

(ԳԱԼԻՑԻԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ)

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՐԱՖՖԻԻ

(Արտատպած „Մշակ" լրագրից)

ԹԻՖԼԻՍ
Կովկասի Կառավարչի Գլխ. Կառավ. տպարանում
1884

Дозвол. ценз. Тифлисъ. 15-го Декабря 1883 г.

1087/41
1034-2013
Հ.Բ.1027

(Перепечатано изъ газеты „Мшакъ“).

I. ՋԱԽԵՐ-ՄԱՋՕԽԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ . . . . . . 1.
II. ԿԱԼՕՄԷԱՑԻ ԴՕՆ-ԺՈՒԱՆԸ. . . . 1.
III. ՖՐԻՆԿՕ ԲԱԼԱԲԱՆ. . . . . 105.
VI. ԼՈՒՍՆԿԱՑ ԳԻՇԵՐ. . . . . 205.

Ստեփաննոս Պօղոսեան

ԶԱԽԵՐ-ՄԱԶՕԽԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Լէօպօլդ Զախեր-Մազօխի անունը համարեա անծանօթ է մեր ընթերցող հասարակութեանը։ Նա ծնվեցաւ յունվարի 27-ին 1836 ամի Լվօվ (Լեմբերգ) քաղաքում, որը գալիցիական հին թագաւորութեան մայրաքաղաքն էր։

Նրա բազմաթիւ բեմական և վիպական աշխատութիւնների մէջ նշանաւոր տեղ են բռնում մի շարք գեղեցիկ վէպիկներ, որոնք բոլորը միասին ընդհանուր անունով կոչվում են „Կայէնի Կտակը"։ Այդ վէպիկները պատկերացնում են գալիցիական կեանքի այն սարսափելի ժամանակները, երբ 1846 թուականի լեհական ապստամբութիւնը իր սոսկալի բորբոքման մէջն էր, երբ աւստրիական զօրքերը պաշարման վիճակի մէջ էին պահում երկիրը, և երբ

գիւղացիները, դարերով տանջված լինելով ազնուականների կեղեքումներից, փոխանակ այդ վերջինների հետ միանալու, անցնում էին կայսերական զօրքերի կողմը և իրանց մանգաղներով կոտորում էին կալուածատէրներին: Ամեն տեղ կատարվում էին արիւնհեղութիւններ և գազանային անգթութիւն:

Ես թարգմանեցի *) „Կայենի Կտակից" երեք վէպիկներ միայն՝ „Կալօմէայի Դօն-Ժուանը", „Ֆրինկօ Բալաբան" և „Լուսնկայ գիշեր": Հիմնական գաղափարը այդ վէպիկների և առհասարակ „Կայենի կտակի" մեծ աղմուկ բարձրացրեց կրիտիկայի կողմից, և մանաւանդ գերմանական կրիտիկոսները սաստիկ զայրացան հեղինակի դէմ:

Գալիցիական ժողովրդի սկզբնական համոզմունքները, նրա բոլոր կրաւորական իմաստութիւնը, որը արտայայտվում է այն

*) Իմ թարգմանութիւնը արել եմ Ս. Ա. Կատենիկօվայի ռուսական թարգմանութիւնից, և նրա յառաջաբանից եմ քաղում հեղինակի մասին տեղեկութիւնները:

մշտական անձնուրացութեան և անսահման համբերութեան մէջ, որոնցմով դրոշմված է այդ ժողովրդի և բարոյական կերպարանքը, վերջապէս նրա բոլոր նախնական աւանդութիւնները, կազմում են „Կայենի Կտակի" հիւսուածքը, որի մէջ, իբրև հիմնական գաղափար անց են կացրած և Շօպէնհաուէրի փիլիսոփայութեան սկզբունքները: Բնագիտութեան այժմեան ազդութիւնը և Դարվինի գիտնական փաստաբանութիւնը աւելի ևս օգնեցին հեղինակին հաստատել իր աշխատութիւնների հիմնական գաղափարը այն ճակատագրական գործողութեան վրա, որը աշխարհի սկզբից կառավարում է մարդկութեանը, և որը անցնում է սերունդից սերունդ, որպէս մի դըժբախտ ժառանգութիւն: Մարդկային սեռի վրա ծանրացած այդ ժառանգութիւնը, հեղինակի կարծիքով, կայանում է սիրոյ մէջ, այդ „յաւիտենական և մահացու մաքառման մէջ, որ կատարվում է երկու սեռերի կողմից",—կայանում է անյագ շահասիրութեան մէջ, որին դատապարտված է

մարդը, և որը, իբրև մի անհրաժեշտու-
թիւն, առնում է մարդուն հարստահա-
րութիւն ու խաբէյութիւն կատարել,—և
վերջապէս, կայանում է պատերազմի մէջ,
այդ անհրաժեշտ, բայց սարսափելի սպա-
նութեան մէջ, թէև արդարացնում են
նրան ազգասիրական կամ պետական նկա-
տումներով:

Ահա հիմնական գաղափարները „Կայէ-
նի կտակի“: Այդ գաղափարները հեղի-
նակը կատարելապէս զարգացնում է մի
փոքրիկ վէպիկի մէջ, որ կոչւում է „Պան-
դուխտ“, և որը, իբրև յառաջաբան, միաց-
րել է այն վէպիկների շարքի հետ, որոնք
բոլորը միասին կազմում են „Կայէնի
կտակը“: Միայն „Պանդուխտի“ հրատա-
րակութիւնից հասկանալի եղաւ „Կայէնի
կտակի“ անունը, այդ պատճառով մենք
հարկաւոր ենք համարում ծանօթացնել ըն-
թերցողներին նրա համառօտ բովանդակու-
թեան հետ:

Հրացանը ուսի վրա դրած,—պատմում է
հեղինակը,—թափառում էր ինքը կուսական

անտառի խորին թաւուտներում, և նրան
առաջնորդում էր մի ծերունի որսորդ: Յան-
կարծ նրա ուղեկիցը կանգ առեց, ցոյց տա-
լով մի արծիւ, որ բարձրում սաւառնում
էր նրանց գլխի վրա. որսորդը նշան դրեց,
և սպանված թռչունը ընկաւ նրանց ոտների
առջև:—„Կայէ՜ն, կայէ՜ն“,—յանկարծ
լսելի եղաւ մէկի զօրեղ ձայնը, և թփերի
միջից յայտնվեցաւ մի ծերունու ստուերի
կերպարանքը, երկայն ալեխառն մօրուքով և
նոյնպիսի երկայն ալեւոր մազերով, որոնք
ծածանվում էին քամուց: Հնամաշ հա-
գուստը և գդմապուակը, որ քարշ էր ընկած
նրա կշտից, ցոյց էին տալիս, որ այդ ան-
ծանօթը այն տեսակ մարդկիներից մէկը
պէտք է լինի, որոնք հեռանում են մարդ-
կային հասարակութիւնից, որոնք փախչում
են կեանքի բոլոր յարմարութիւններից ու
զուարճութիւններից:—„Ի՞նչ օգուտ ունէ-
իք այդ անմեղ արարածի սպանութեան
մէջ, Կայէնի զաւակնե՞ր“,—ասաց ծերու-
նին, և նրա ու հեղինակի մէջ սկսվեցաւ
ջերմ խօսակցութիւն: Ծերունին անապա-

տ ա կ ա ն էր, այսինքն՝ պատկանում էր անապատականների աղանդին, որոնք բաւական տարածված են Գալիցիայի ուղղափառ բնակիչների մէջ: Անապատականների հիմնական սկզբունքները դրանք են. աշխարհը սատանայի թագաւորութիւնն է, այդ պատճառով անապատականները փախչում են աշխարհից, փախչում են մարդկութիւնից, և այն ամենից, ինչ որ կայացնում է մարդկային կեանքի և գործունէութեան շահերը, որովհետև այդ բոլորի վրա ծանրանում է անէծք: Սէրը, ձգտումը դէպի հարստութիւն և դէպի իշխանութիւն, և այն բոլորը, ինչ որ ուրախացնում է ու առաջ է մղում մարդուն նրա հասարակական և անհատական կեանքի մէջ,—այդ բոլորը Կայէնի կտակն է, որ թողել է իր ժառանգներին, այդ բոլորը այնպիսի բաներ են, որոնցից ծագում են բոլոր չարիքները, բոլոր դժբախտութիւնները և բոլոր կորուստը մարդկութեան: Միայն մահը կարող է խլել մարդու ձեռքից այդ անիծեալ ժառանգութիւնը, որ թունաւորում է նրան. միայն

մահը կարող է կատարելապէս վերականգնել մարդու մէջ այն խաղաղութիւնը, որը մի ժամանակ վայելում էր նա բնութեան գրկում, և միայն մահը կրկին կը վերադարձնէ նրան այդ գրկի մէջ: Ուրեմն, մահը է այն ցանկալի սահմանը, դէպի որը մեծ յուսով ձգտում է անապատականը և նրան սպասելով, նա պէտք է այնպիսի կենցաղավարութիւն ունենայ, որը աւելի նմանեցնէ կենդանի մարդուն մեռելի. այստեղից առաջ է գալիս ինքնուրացութիւնը, ճգնութիւնը և համբերութիւնը:

Այդ պատմութիւնը, որը, իբրև յառաջաբան, դրած է „Կ ա յ է ն ի կ տ ա կ ի“ սկզբբում, բացատրում է մի և նոյն ժամանակ այդ անուան տակ զետեղված վէպիկների ամբողջ ծրագիրը, որոնց իւրաքանչիւրը առանձին վեր առնելով, ամեն մէկը ներկայացնում է բոլորովին լրացրած և ամբողջացրած պատկեր, իսկ բոլորը միասին զարգացնում են հեղինակի հիմնական գաղափարը, որի մասին յիշեցինք վերևում:

Մեր թարգմանած երեք վէպիկների մէջ

Զախեր-Մազոխը առաջ է բերում Կայէնի ժառանգութիւններից մէկը, որ կտակել է նա ապագայ սերունդին, դա է—կնոջ և տղամարդի սէրը: Այդ սկզբունքը պատկերացնում է նա յիշեալ վէպիկների մէջ, բայց պատկերացնում է իբրև չարութեան տարր, իբրև պատճառ մարդկային բոլոր դժբախտութիւնների, և իբրև մի չարիք, որ սարսափելի կերպով ոչնչացնում է այն բոլորը, ինչ որ մարդիկ սովոր են համարել բարիք, մի խօսքով—իբրև Կայէնի կտակը իր թշուառ ժառանգներին:

Եւ այդ էր պատճառը, որ „Կ ա յ է ն ի կ տ ա կ ը“ սաստիկ յարձակմունքներ կրեց կլերիկայի կողմից, և առանձնապէս գերմանական կլերիկաները զինվեցան նրա դէմ: „Պանդուխտը“, որը իբրև յառաջաբան զետեղված էր „Կ ա յ է ն ի կ տ ա կ ը“ կազմող վէպիկների սկզբում, համարեցին իբրև Profession de foi աթէիզմի: Հեղինակին մեղադրում էին, որ նա հերքում է Աստուծոյ գոյութիւնը, որ նա ամէն երևոյթների մէջ Աստուծոյ փոխարէն գտնում է բնութեան

բնական զօրութիւնը, և այսպիսով ոչնչացնում է ամբողջ բարոյական աշխարհը: Հեղինակի բոլոր աշխատութիւնները համարում էին պեսիմիզմի վերջին խօսքը, և Դարվինի ու Շոպենհաուէրի վարդապետութիւնների ծայրայեղ արդիւնք, մայն արևելեան անհաւատութեան յատկանիշներով դրոշմված: Այդ կարծիքները առիթ տուին սաստիկ բանակռւի հեղինակի և գերմանական կլերիկաների մէջ: Իզուր Զախեր-Մազոխը աշխատում էր պաշտպանել իրան: Գերմանական զայրացած կլերիկան իր յարձակմունքների մէջ այն ծայրայեղութեան հասաւ, որ սկսեց մինչև անգամ ուրանալ „Կ ա յ է ն ի կ տ ա կ ի“ գրականական արժանաւորութիւնը: Հեղինակին առանձնապէս չէին ներում այն անխնայ արդարութեան համար և այն անաչառ ռէալիզմի համար, որով նա երևան էր հանում մարդկային կեանքի մթին կողմերը, նկարելով միշտ մռայլ պատկերներ, որոնց մէջ խիստ աչքի էր զարկում իդէալների բացակայութիւնը: „Ես աւելի կը սիրեմ անախորժ

ճշմարտութիւնը, քան թէ շողոքորթող սուտ-թիւնը", պատասխանում էր հեղինակը: Ռոմանի նպատակը, որպէս ասում է Գէօթէն, է—ծառայել իբրև մի հայելի, որը միակերպ ցոլացնում է իր մէջ բոլոր երեւոյթները շրջապատող կեանքի: Այդ կէտից նայելով, ինչ որ վերաբերում է այն մասնաւոր գոյներին, որոնցմով ներկված է Զախեր-Մազոխի իւրաքանչիւր պատկերը,—դա նրա մեղքը չէ, եթէ ժամանակակից կեանքը իսկապէս այնպէս է, որ չէ կարող աւելի պայծառ գոյներով նկարվել ռոմանի մէջ: Եւ այսպէս, Զախեր-Մազոխը շուտով հաշտվեցաւ վիպասանի աննախանձելի վիճակի հետ, որը համարձակվում է բարձրացնել կեանքի մթին կողմերը ծածկող վարագոյրը ինքնախաբէութեան մէջ ապրող հասարակութեան առջև: Գերմանական կրիտիկոսների վիճաբանութեան կողմից ձևը շուտով հարկադրեց Զախեր-Մազոխին հրաժարվել բանակռուից և պատասխանել իր հակառակորդներին միայն խորին արհամարհանքով:

Հրաժարվելով բանակռուից, և կրկնելով

Գէօթէի յայտնի խօսքերը. „Ստեղծի՛ր, արհեստագէտ, բայց մի խօսիր",—հեղինակը սկսեց պատասխանել իր հակառակորդներին „Կայէնի կտակի" շարունակութեամբ, և մինը միւսի ետևից ի լոյս ածեց աւելի և աւելի հետաքրքիր պատկերներ: Այդ պատկերների մէջ խիստ կենդանի կերպով նկարված է այն անխնայ և մշտական մաքառումը, որ կատարվում է մարդկութեան աղքատ և հարուստ դասակարգերի մէջ, և ամէն քայլում հանդիպում են ամենասոսկալի կոտորածների և վրէժխնդրութեան տեսարաններ: Կարծեմ, ոչ ոք չէ կարողացել այնպէս կենդանի և այնպէս ազդու կերպով նկարագրել մարդկային բնաւորութեան վայրենի բնազդումները, որպէս այդ յաջողվել է Զախեր-Մազոխին: Այդ դէպքում նա շատ նման է ամերիկացի մատենագիր Բրետ-Գարտին, որին նա ինքը շատ բարձրացնում է, բայց որից նա շատ գերազանցում է իր տաղանդով:

Կրիտիկան թէև անարդար գտնվեցաւ դէպի յարգելի հեղինակը, բայց անցեալ

տարի, երբ տօնվեցաւ նրա յօբելեանը, համարեա ամբողջ լուսաւոր աշխարհը ցոյց տուեց նրան իր խորին համակրութիւնը նրա արդար և անաչառ գրական գործունէութեան համար:

ՐԱՖՖԻ

I.

ԿԱԼՕՄԷԱՅԻ ԴՕ՛Ն-ԺՈՒԱՆԸ

ԿԱԼՕՄԻԱՅԻ ԴՕՆ-ԺՈՒԱՆԸ

—

Մենք գնում էինք Կալօմէա *) կոչված գաւառական քաղաքից դէպի մի գիւղ։ Օրը ուրբաթ էր, գիշերային պահուն։—Ուրբաթը բախտաւոր օր է,—ասաց մի լեհացի, բայց գերմանացի կառապանը, որը Մարիագիլֆի **) գաղթաշէնից էր, պնդում էր, թէ ուրբաթը անբախտ օր է, որովհետև Փրկիչը խաչվեցաւ ուրբաթ օրում։

---

*) Կալօմէա կոչվում է այն գաւառը և գաւառական քաղաքը, որ գտնվում է արևելեան Գալիցիայում։ Կալօմէա կազմվել է կ ա լ օ ն ի բառից, որովհետև այժմեան քաղաքը շինված է նոյն տեղում, ուր առաջ կար հռօմէական կալօնիա։

**) Մի գիւղի անուն է, որտեղ բնակութիւն են հաստատել գերմանացի գաղթականները, ըստ մեծի մասին շվաբներից, գտնվում է Կալօմէայից ոչ այնքան հեռու։

Այս անգամ ուղիղ դուրս եկաւ գերմանացու ասածը. դեռ ևս կէս ժամ չէր անցած, երբ մեզ կանգնեցրեց չինական պահապանը:

—Կանգնի՛ր:—Անցագի՛րը:

Մենք կանգնեցինք: Իսկ անցագրի մասին ինչ պէտք էր անել... Իմ թղթերը, ի հարկէ, կարգին էին, բայց ո՞վ կը մտածէր իմ չվաք կառապանի մասին: Նա բոլորովին հանգիստ նստած էր իր բազմոցի վրա, մտրակը շրխկացնում էր և դնում էր նոր վառած աքեթը իր կարճլիկ չիբուխի վրա: Միթէ չէր կարելի կասկածել նրան ապստամբների դաւակցութեան մէջ: Նրա չափազանց խաղաղ դէմքը գրգռում էր իմ ռուս չինականների կասկածանքը, և նրանք բոլորովին հաստատ պատճառներ ունէին երկրայութեամբ շարժելու իրանց ուսերը:

—Դաւաճա՛ն,—գոչեցին նրանք:

—Է՜հ, եղբայրներ, մտածեցէ՛ք, թէ ինչ էք ասում:

Բոլորը ի զուր էր:

—Դաւաճա՛ն...

Իմ չվաքը յուզվեցաւ, և շարժվելով իր բազմոցի վրա, սկսեց սարսափելի կերպով կոտրատել ռուսաց լեզուով: Բոլորը ի զուր էր: Չինական պահապանը գիտէ իր գործը: Ո՞վ կը համարձակվի կաշառել նրան փողով: Ի հարկէ, ես այդ չէի անի: Այդ պատճառով մեզ բռնեցին, տարան մերձակայ պանդոկը:

Նոյն ուղղութեամբ գնալու ժամանակ նկատեցինք, հեռուից ինչ-որ մի բան փայլում էր: Դա մի մանգաղ էր, որ պահապան գիւղացին քարշ էր տուել պատի դրսի երեսից, իսկ ուղիղ ծխնելոյզի վրա նայում էր լուսինը և լուսաւորում էր թէ գիւղացուն, թէ նրա մանգաղը: Նա ներս էր նայում ի պանդոկի փոքրիկ պատուհանից և, կարծես, ժլատ-հրէային բարկացնելու համար, թափում էր նրա վրա իր արծաթեայ ճառագայթները, որպէս արծաթեայ դրամներ, և մինչև անգամ արծաթաջրում էր խորին ճակները, որ կազմվել էին պատուհանի առջև: Հրէան պանդոկապետն էր, որը հանդիպեց մեզ շէմքի վրա, և տեսնելով յարգելի հիւրերին, իր ուրախութիւնը արտայայտեց նրանով, որ դուրս արձակեց կուրծքից մի տեսակ միակերպ, ողորմելի ձայն:

Նա բազի նման օրօրվելով, մօտեցաւ, և իսկոյն վրապռծնելով, համբուրեց ցեխի պատառը, որ ընկած էր իմ աջ թևքի վրա, և համահաւասարութիւնը պահպանելու համար համբուրեց և ձախ թևքս: Այդ միջոցին հայհոյում էր չինականներին, որ նրանք համարձակվեցան կանգնեցնել մի այսպիսի... մի այնպիսի... Նա ինքը դժուարանում էր վճռել, թէ որպիսի ածականով պէտք էր մկրտել ինձ,—մի այսպիսի սև-դեղնագոյն պարոնին, որի երեսն անգամ բոլորովին սև-դեղնագոյն է: Նա պատրաստ էր իմ անմեղութեան մասին

երգվել տասն պատգամների ծրարի վրա, և ցի-
շոցներ էր տալիս, և ծռմռվում էր, կարծես թէ
հէնց իրան սաստիկ վիրաւորած լինէին:

Վերջապէս, ես հրամայեցի չվաբին մնալ ձիա-
ների մօտ,—չինական պահապանը հսկում էր
նրա վրա,—իսկ ինքս վճռեցի իմ սև-դեղնագոյն
հոգին պատսպարել պանդոկի մէջ, ուր ձգվեցայ
երկայն նստարանի վրա, հնոցի մօտ:

Շուտով ձանձրոյթը տիրեց ինձ, որովհետև
Մօիշան առանց ինձ ևս բաւական զբաղմունք ու-
նէր: Նա անդադար պլինի էր ածում իր յաճա-
խորդների համար և մի և նոյն ժամանակ դուրս
էր թափում այն բոլոր նորութիւնները, ինչ որ
լսել էր: Որպէս մի լու, թռչկոտում էր նա եր-
կայն սեղանի շուրջը, երբեմն վազ էր տալիս իմ
մօտ, շողոքորթում էր, և որպէս մի կրթված մարդ,
աշխատում էր սկսել ինձ հետ խօսակցութիւն
քաղաքականութեան կամ գրականութեան վրա:

Տաղտկութիւնից սկսեցի ես մեքենաբար նայել
իմ շուրջը:

Պանդոկի ընդհանուր տեսքը կրում էր իր վրա
ինչ-որ մի առանձին կանաչութիւն: Աղօտ
լամպան կամ, աւելի ճիշտ ասած, գիշերային ճրա-
գը տարածում էր կանաչագոյն լոյս: Կանաչագոյն
բորբոսը ծածկել էր պատերը: Քառանկիւնի մեծ
հնոցը, կարծես թէ, օծած լինէր սև վէռնիճով և
անդրադարձնում էր իր վրա կանաչ մամուռը, որը

ծածկել էր Իսրայէլի որդու քարեայ յատակը: Կա-
նաչագոյն մուրը նստած էր ապակեայ բաժակ-
ների և թիթեղեայ չափերի մէջ, որոնցմով մու-
ժիկները խմում էին, առաջուց դնելով սեղանա-
տախտակի վրա իրանց պղնձեայ գրօշները: Կա-
նաչագոյն բուսականութիւն ծածկել էր պանիրը,
որ դրեց իմ առջև Մօիշան, իսկ հնոցի միւս կող-
մում նստած էր նրա կինը, դեղին կրկնոց հագած,
կանաչագոյն մեծ ծալքերով, և օրօրում էր իր
բաց-կանաչագոյն երեխային: Հրէայի ողորմելի և
սպաւոր դէմքն անգամ, կարծես թէ, կանաչագոյն
լինէր, առաւելապէս բարակ ու շարժուն ռնչերի
ծայրերում և սեղմված ու զզուելի շրթունքների
մօտ: Նրա արագաշարժ, անհանգիստ աչքերը ու-
նէին մի և նոյն գոյնով արտափայլութիւն:

Սեղանատախտակը փոքր ինչ բաժանում էր
ինձ յաճախորդներից: Նրանք նստած էին նեղ ու
երկայն սեղանի միւս կողմում և ըստ մեծի մա-
սին այն շրջակայքի գիւղացիներից էին: Նրանք
խօսում էին միմեանց հետ կիսաձայն կերպով և
մինչև անգամ աւելի անլսելի ձայնով, և այդ մի-
ջոցին նրանց խառնամազ, թմրած, կանաչագոյն
գլուխները համարեա թէ յենած էին մինը միւսի
վրա: Նրանցից մէկը, որը, ինչպէս երևում էր, տի-
րացու պէտք է լինէր, ներկայանում էր նրանց
մէջ որպէս գլխաւոր հռետոր: Նա ի լուր ամենե-
ցուն կարդում էր մի հին, կանաչոտած, ռուսաց

լրագիր: Նրա կողքին սեղանի վրա դրած էր քթախոտի մի մեծ տուփ, որից երբեմն վեր էր առնում մի-մի պտղունց քթախոտի, ամենևին չը մոռանալով հիւրասիրել և իր խօսակիցներին, շատ կարելի է, իր արժանաւորութեան առաւելութիւնը բարձր դասելով միւսներից:

Ամեն ինչ հանդարտ էր, լուրջ էր և վայելուչ էր: Փողոցում պահապանը երգում էր ինչ-որ տըխուր երգ, որի հնչիւնները հասնում էին ինձ, կարծես թէ, լսելի էին լինում շատ հեռուից: Ինձ այնպէս էր թւում, որ այդ հնչիւնները ոգիների պէս սաւառնում էին խղճուկ պանդոկի շուրջը և չէին համարձակւում մերձենալ այն մարդիկներին, որ խօսում էին միմեանց հետ այնպէս խորհրդաւոր կերպով: Եւ բորբոսը, և լուսնի լոյսը, և երգը,—այդ բոլորը աւելի ևս սաստկացնում էր իմ տրամութիւնը:

Այդ տրամութիւնը հետզհետէ փոխւեցաւ տըխրութեան, բոլորովին տարբեր տխրութեան, որ յատուկ է մալորոսներին, որը աւելի նման է ճակատագրին արխաբար համբերելուն, մի համբերութիւն, որ առաջ է գալիս անհրաժեշտութեան զգացմունքից: Երբեմն տրամութիւնը դառնում էր ինձ համար մի այնպիսի պէտք, որպէս կերակուրը և քունը:

Տիրացուն կարդաց իր լրագիրը մինչև այն տեղերը, ուր նշանակւած էին շուկայի գները, որ-

սրդութեան ժամանակը և երկաթուղիների գընացքների գնալու և գալու ժամերը: Այդ միջոցին յանկարծ բակից լսելի եղան մտրակի հարւածներ, ձիու ոտնաձայն և տաք վիճաբանութիւն. այդ բոլորը միախառնւում էր մի առանձին խուլ, անհասկանալի դղրդոցի հետ:

Քանի րոպէից յետոյ ես լսեցի մի անծանօթ ձայն, որ դարձրած էր դէպի պահապանը: Դա տղամարդի ուրախ ձայն էր, մի ձայն, որ հնչւում էր մուզիկայի նման, բայց ուրախ, համարձակ, հպարտ մուզիկայի նման, որը ամենևին չէր նեղւում պանդոկի այցելուներից: Ձայները մօտենում էին, և վերջապէս մէկը ոտքը ներս դրեց պանդոկի շէմքից:

Ես վեր բարձրացայ, միայն կարողացայ տեսնել այդ մարդու բարձր, վայելչակազմ հասակը, որովհետև եկւորը, պանդոկի մէջ ներս մտնելու միջոցին, երեսը շուռ էր տւած և դեռ ՛ես շարունակում էր խօսել չինականների հետ:

—Շնորհ արէք, եղբայրներ, միթէ դուք չէք ճանաչում ինձ: Միթէ ես լրտես եմ: Լաւ նայեցէք իմ վրա: Հաւատալո՞ւ բան է, որ լեհական ժօնդայի մի անդամ ուղեգնացութիւն անէր մեծ ճանապարհի վրա, չորս ձիաներ լծած, այն ևս առանց անցագրի: Միթէ ման է գալիս նա չիբուխը բերանում բռնած, ինչպէս ես: Խելքի եկէք, բարեկամներ, թող տւէք ինձ, խելքի եկէք:

Այդ միջոցին դռների մէջ յայտնվեցան մուժիկների երկու գլուխներ և երկու ձեռքեր, որ քորում էին իրանց մօրուքները. դա նշանակում էր՝ հանգիստ կաց, բարեկամ, քեզ բաց թողնելու միտք չունենք:

—Դէ, էլ ինչ կայ: Դէ, հիմա ուրախացրէք ինձ, ապացուցէք, որ դուք իսկապէս խոհեմ մարդիկ էք:

—Չենք կարող համաձայնվել...

—Մի՞թէ ես լեհացի եմ: Մի՞թէ դուք կամենում էք, որ իմ ծնողները շուռ գային իրանց գերեզմանների մէջ, ռուսաց հանգստարանում, որ գտնվում է Չերնօլիկում: Միթէ իմ նախնիքը չէին, որ Բօղդան Խմելնիցկիի հետ պատերազմում էին լեհացիների դէմ: Ի՞նչ կռիւների մէջ, ասէք, նրանք չեն մասնակցել:—Եղել են և Կօրսունի մօտ, և Բատօլի մօտ, և Դեղին Ջրերի մօտ...

—Անկարելի՛ է...

—Անկարելի՛ է: Իրաւ անկարելի է:

—Իրաւ անկարելի է:

—Ուրեմն, դուք ողջ լինէք:—Եկուորը առանց տրտունջի արիաբար հնազանդվեցաւ անհրաժեշտութեան առջև: Նա ներս մտաւ, գլխի թեթև շարժումով պատասխանեց հրէայի բաղանման ծռմռվելուն և նստաւ սեղանատախտակի մօտ, մէջքը դարձրած դէպի ինձ:

Հրէուհին բոլոր ժամանակը ականջ էր դնում

կատարվող խօսակցութեանը. այժմ նայեց նրա վրա, և ձեռքից ցած դնելով քնած երեխային, մօտեցաւ սեղանատախտակին:

Ես պատրաստ եմ գրաւ գալ, որ նա մի ժամանակ գեղեցիկ էր, երբ Մօիշան առաջին անգամ բերեց նրան իր պանդոկում, իսկ այժմ նրա բոլոր գծերը անախորժ կերպով սուր ձև էին ստացել, այլանդակվել էին: Տանջանքը, նախատինքը, հարուածները, մորակը երկար ժամանակ ծեծել են այդ ժողովրդի երեսները, մինչև որ նրանց վրա տպաւորվեցաւ միայն այդ ազգին յատուկ մի արտայայտութիւն, որը մի և նոյն ժամանակ և այրող է և՛ թառամած, և՛ թախծալի է և՛ կծու, և՛ խոնարհ է և՛ ժանտ:

Հրէուհին կռացաւ սեղանատախտակի վրա, և պտտացնելով թեթեղեայ չափը իր թափանցիկ ձեռքերի մէջ, աչքերով յառած էր դէպի նորեկը: Հրաբորբոք և ծարաւի հոգին արտափայլում էր այդ խոշոր և կրքոտ աչքերում, որ սև էին, որպէս գիշեր: Դրանք նմանում էին վամպիրի, որ դուրս է սողում լուծված գլխակի գերեզմանից, և սևեռած մնալով անծանօթի գեղեցիկ երեսի վրա, ծծում էին բոլոր բերկրանքը:

Իրաւ, նրա դէմքը գեղեցիկ էր և պայծառ էր, որպէս լուսին, երբ նա սեղանատախտակի վրայով թեքվեցաւ դէպի տիկինը և խնդրեց իր համար մի չիչ գինի: Միայն այդ լուսինը

բաշխեց նրան արծաթեայ խնկական դրամներ:

—Հեռացի՛ր այստեղից,—ասաց հրէան իր կնոջը:

Կինը, կարծես, աւելի ես կզանման ձև ստացաւ, և կիսախուփ աչքերով, օրօրվելով ինչպէս քնի մէջ, հեռացաւ սեղանատախտակից:

—Դա վտանգաւոր մարդ է,—սեղանի ետևից կամաց ասաց ինձ Մօիշան,—շա՜տ վտանգաւոր,— և նա խորհրդաւոր կերպով շարժեց իր գզոյշ գլուխը, պատած խիտ ճալվերով:

Դրանով դարձրեց նա իմ վրա նորեկի ուշադրութիւնը. նա արագութեամբ յետ նայեց, վեր կացաւ, գլխից առեց մորթէ գդակը և չափազանց քաղաքավարի խօսքերով սկսեց ներողութիւն խնդրել: Մենք գլուխ տուեցինք միմեանց և փոխադարձաբար յայտնում էինք մեր զգացմունքները սաստիկ փաղաքշական, ռուսաց խօսքերով:

«Վտանգաւոր» մարդը տեղաւորվեցաւ իմ հանդէպ և թոյլտուութիւն խնդրեց իր չիբուխը լցնելու: Ծխում էին մուժիկները, ծխում էր տիրացուն, ծխում էր և հնոցը, իսկ նա այսուամենայնիւ թոյլտուութիւն էր խնդրում: Նա պատրաստեց իր երկայն տաճկական չիբուխը:

—Նայեցէք այդ մուժիկներին,—ուրախ կերպով խօսեց նա.—ես ուր, լեհացին ուր: Ասեցէք, խընդրեմ, դուք կընդունէիք ինձ լեհացու տեղ մինչև անգամ հարիւր քայլ հեռաւորութեան վրա:

—Երբէք չէի ընդունի:

—Հիմա տեսնում էք, թանկագին բարեկամ, աւելացրեց նա անկեղծ գոհունակութեամբ,—բայց մի փորձեցէք խօսել նրանց հետ:—Այդ խօսքերի միջոցին նա հանեց քսակիցը կայծքարը և աբեթը և դանակով սկսեց կրակ կպցնել:

—Բայց և այնպէս, հրէան էլ ձեզ վտանգաւոր մարդ է համարում:

—Այո՜:—Նա համեստութեամբ խոնարհեցրեց գլուխը և ժպտաց:—Մօիշան այդ ասելով ի նկատի ունէր կանանց միայն: Դուք տեսա՞ք, ինչպէս շտապեց նա հեռացնելու իր կնոջը: Այդ տարրը շատ հեշտ բոցավառվել գիտէ:

Նրա աբեթը վառվեցաւ: Դրեց նրան չիբուխի մէջ, և շուտով կապտագոյն թանձր ամպերը ամեն կողմից պատեցին մեզ: Նա աչքերը ցած թողեց և թեթև կերպով ժպտում էր:

Այժմ ես կարող էի ուշադրութեամբ հետազօտել նրան: Նրա գեղապաճոյճ հագուստից դատելով, կարելի էր ենթադրել, որ դա մի կալուածատէր պէտք է լինէր: Նրա քսակը նախշած էր խիստ գեղեցիկ կերպով. վարուեցողութեան ձևերի մէջ ցոյց էր տալիս ազնւութիւն. շատ հաւանական էր, որ նրա կալուածները գտնվում էին Կալօմէայի մերձակայքում, որովհետև հրէան ճանաչում էր նրան: Իսկ թէ նա ռուս էր, տարակոյս չը կար, ինչպէս ինքն ասաց այդ, երբ ներս մըտաւ պանդոկը. այդ պատճառով նրա մէջ չը կար

լեհական շատախօսութիւն: Որպէս տղամարդ, նա պէտք է որ դիւր գար կանանց: Նա նշանաւոր չէր այն կոպիտ ուժով, կամ անշնորք ծանրաշարժութեամբ, որոնք միւս ազգերի մօտ արիութիւն են համարվում. Նրա հասակը բարեշուք էր, վայելչակազմ և գեղեցիկ, իսկ եռանդոտ աչխոյժը, կազմուածքի առաձգականութիւնն ու ամրութիւնը նշմարվում էին ամենափոքր շարժումների ժամանակ: Նրա խիտ, թուխ, թեթև գանգուրներով խուճուճված մազերը և կարճ մօրուքը խիստ ախորժելի կերպով հովանաւորում էին նրա օդից այրված, բայց գեղեցիկ դէմքը:

Նա արդէն իր երիտասարդական առոյգութեան մէջ չէր գտնվում, բայց նրա կապոյտ, ուրախ աչքերը յիշեցնում էին աչքերը մի անհոգ երեխայի: Նրա մռայլ դէմքի վրա դրած էր անկեղծ, անսահման մարդասիրութեան կնիքը,—մռայլ միայն այնտեղ, ուր կեանքը արդէն կարողացել էր տպաւորել իր հետքերը:

Նա վերկացաւ և երկու անգամ անցուդարձ արեց սլանդոկի մէջ: Նրա լայն շալվարը մտցրած էր բարձր կօշիկների մէջ. կափտանի տակից երևում էր գոյնզգոյն գօտին, որ սեղմում էր նրա մէջքը. մորթէ գտակը շնորքով դրած էր գլխին: Այդ հագուստի մէջ նա ակամայից յիշեցնում էր ինձ ռուսաց այն քաջ բոեարներից մէկին, որոնք խորհուրդ էին կազմում Վլադիմիրի և Նարօ-

սլաւի հետ, կամ Իգօրի և Ռօմանի հետ արշաւանքներ էին գործում:

Ես հաճութեամբ հաւատացի, որ նա կարող էր փռանդաւոր լինել կանանց. ես ինքս մի առանձին բաւականութիւն էի զգում նրա վրա նայելով: Մինչդեռ նա անցուդարձ էր անում, հրէուհին վերադարձաւ, և շիշը բերելով, դրեց սեղանի վրա. յետոյ առանձնացաւ նա հնոցի միւս կողմում և աչքերը չէր հեռացնում նրանից: Իմ պարոնը մօտեցաւ սեղանին, նայեց շիշի վրա և կանգնած մնաց, կարծես թէ, մի այլ բան էր սպասում:

—Տօկայեան գինի է,—ասաց նա,—այսու ամենայնիւ դա կարող է փոքր ի շատէ փոխարինել կնոջ ջերմ արեանը:

Նա ձեռքով շօշափեց իր կուրծքը, կարծես թէ, մի բան այրում էր նրա սիրտը:

—Ձեզ, երևի, նշանակված է... ես անհամեստ չերևալու համար կտրեցի իմ խօսքը, բայց նա իսկոյն աւելացրեց.

—Տեսութիւն: Ի հարկէ,—և աչքերը կիսով չափ փակելով, նա բերանից դուրս թողեց ծուխի մի թանձր պատառ և շարժեց դէպի ինձ գլխով:

—Տեսութիւն, հասկանում էք արդեօք, բայց որպիսի մի տեսութիւն: Ա՛խ, ես բախտաւոր եմ կանանց մօտ, անհամեմատ բախտաւոր: Ուղարկեցէք ինձ երկինքը—այնտեղ աստուածուհիներին անգամ և բոլոր անարատ կոյսերը կը հնազանդ-

վեն ինձ. երդվում եմ ձեզ, որ սուտ չեմ ասում:

—Ես հաճութեամբ հաւատում եմ ձեզ:

—Այժմ լսեցէք... մեզանում մի այսպիսի առած կայ. դու կը պատմես մի անծանօթին մեծ ճանապարհի վրա այն, ինչ որ չես հաւատայ ոչ լաւ բարեկամիդ, ոչ կնոջդ... Բայց արա շիշը, Մօյիշա, և բեր երկու փոքրիկ բաժակներ: Շնորհ արէք, խմեցէք ինձ հետ այդ գինին և միայն լսեցէք իմ սիրային հրաշալի պատահարները, որոնք ամենատեսակ սիրային պատահարների մէջ պէտք է խիստ հազուագիւտ համարել, որոնք մասամբ յիշեցնում են փղշտացի Գօլիաթի կենսագրութիւնը:

Մօիշան վաղեց այդ միջոցին շիշի մօտ, երկու անգամ օրօրվեցաւ, վեր առեց խցհանը, մաքրեց խիցը կնքամոմից, փչեց նրա վրա, յետոյ կոխեց շիշը իր նիհար ծնկների մէջտեղում, և երեսը սարսափելի կերպով ծամածռելով, սկսեց դուրս քաշել նրանից խիցը: Կրկին անգամ փչեց նա շիշի պարանոցի վրա և ածեց դեղին գինին ամենամաքրագոյն բաժակների մէջ, որպիսիները միայն կարող էին գտնվել իսրայէլացու պանդոկի մէջ: Անծանօթը վեր առեց բաժակը:

—Ձեր կենացը, ասաց նա, նայելով իմ վրա:

Նրա ցանկութիւնը բոլորովին անկեղծ էր, որովհետև միանգամով խմեց իր բաժակը: Բայց նա արբեցող չէր. նա չը սկսեց կանխապէս փորձել գինին կամ գնահատել նրա արժանաւորու-

թիւնները, այլ խմեց, առանց երեսը խոժոռելու և առանց լեզուով մռչացնելու:

Հրէան երկչոտ կերպով նայում էր նրա վրա:

—Որպիսի՜ պատիւ է ինձ: Բախտաւոր դէպքը բերեց իմ բարերարին իմ պանդոկի մէջ: Եւ ինչպէս լաւ պահվում էք դուք, ամենևին չէք փոխվում:—Իր նկատողութիւնները անելուց յետոյ, Մօիշան աշխատում էր առիւծի դիրք բռնել, որի համար, նա կարծում էր, թէ պէտք էր Փօմպէի ջարդված վազանների նման արօրել իր թարշամած ձեռքերը, և ոտները փոփոխակի կերպով բարձրացնելով, բախել նըրանցով յատակը, ինչպէս ջրաղացի չախչախկան զարկում է երկանաքարի վրա:

—Բայց ինչպէս է առողջութիւնը իմ ողորմած բարերարուհու և ձեր գեղեցիկ զաւակների:

—Լաւ է, լաւ է:—Իմ բօյարինը ածեց իր համար երկրորդ բաժակը և դարձեալ միանգամով խմեց, առանց աչքերը վեր բարձրացնելու, կարծես թէ, ամաչում էր հրէայի վերջին հարցմունքներից: Միայն մի քանի րոպէներ անցնելուց յետոյ նա վճռեց նայել իմ վրա և իսկոյն նրա դէմքը այլայլվեցաւ:

Երկար լուռ նստած էր նա և հանգիստ կերպով ծխում էր իր չիբուխը. վերջապէս, ածելով գինին իմ բաժակի մէջ, համարեա կիսաձայն ասաց նա.

—Դուք երևի բուսական [illegible] էք գտնում

ՍՍՀ-ССР

ինձ: Դուք մտածում էք—թէ այդ ծերացած յիմարը իր տնում կին և որդիք ունի, բայց պատրաստվում է պատմել ինձ իր ռոմանները, վստահանում է հաղորդել ինձ իր սիրահարական արկածները: Խնդրում եմ, չը պատասխանէք ինձ, ես արդէն գիտեմ, որ դուք այլ կերպ չէիք կարող մտածել իմ մասին: Բայց ինքներդ դատեցէք: Երբեմն շատ հաճելի է լինում խօսել անծանօթ մարդու հետ, այդ պատճառով ես մտածեցի... ցանկացայ... ներեցէք ինձ... այդ բոլորը իրաւ շատ օտարոտի է... կը պատահես միանգամ, իսկ յետոյ, շատ կարելի է, այլ ես երբէք չես տեսնվի նրա հետ: Կարելի է այն էլ մտածել, թէ ես ինչ գործ ունեմ այդ մարդու կարծիքների հետ: Բայց այդպէս չէ... Ես ինձ, լաւ ցոյց տալու ցանկութիւն չունեմ. մի այնպիսի գայթակղեցուցիչ մարդ, որպէս ես եմ, հրապուրվում է երբեմն կրքերով, երբեմն սնափառութեամբ: Եթէ իմ սիրային արկածները ոչ ոքին յայտնի չը լինէին, ես կը համարէի ինձ ամենաթշուառ մարդը այս աշխարհում. ահա ինչու ես շատ անգամ խօսում եմ նրանց մասին, և ամենքը նախանձելի են համարում ինձ, բայց այսօր—ես բոլորովին ծիծաղելի եմ դարձել:

Ես մի նկատողութիւն արի նրան:

—Մի աշխատեցէք հակառակել ինձ, ես պէտք է որ ձեզ ծիծաղելի երևնամ, որովհետև դուք չը

գիտէք իմ պատմութիւնը: Բայց մեր ամբողջ վիճակը գիտէ, թէ ինչեր են պատահել ինձ հետ, իսկ դուք դեռ ոչինչ չը գիտէք: Ճշմարիտ, ինչպէս զարգանում է այդ սնապարծութիւնը, երբ սկսում ես հաճելի թւիլ կանանց... Ակամայ դառնում ես ծիծաղելի սնապարծ: Կամենում ես, որ ամեն մարդ ունենայ լաւ կարծիք քո մասին, ճանապարհով գնալիս սկսում ես մուրացկաններին փողեր ձգել, իսկ իջևաններում ձանձրացնում ես ճանապարհորդներին քո սիրային արկածների պատմութիւններով: Իրաւ, այդ շատ ծիծաղելի է: Բայց այսօր, ինձ այնպէս է թւում, թէ ես պէտք է պատմեմ ձեզ մինչև անգամ իմ բոլոր պատմութիւնը: Շնորհ արէք, լսեցէք մինչև վերջը: Չը գիտեմ ինչու, բայց դուք մի առանձին հաւատարմութիւն էք ազդում իմ մէջ...

Ես շնորհակալութիւն յայտնեցի:

—Լաւ: Բայց այնու ամենայնիւ, մենք ինչով պէտք է ժամանակ անցկացնէինք:—Խաղաթղթեր չը կան: Ուրեմն, ես ձեզ կը պատմեմ... ոչ, լաւ է, որ լռեմ:—Չէ՞ որ դուք կը մտածէք, թէ բարի թռչունը չէ աղտոտում իր բոյնը,—այդ ասումէ մեզանում ամեն մի գիւղացի: Բայց և այնպէս, ինչ մի բարի թռչուն եմ ես.—ես մի ուրախ, թեթևամիտ թռչուն եմ: Մօյիշա, բեր մի շիշ ևս տօկայեան գինի:—Ես կը պատմեմ ձեզ իմ բոլոր պատմութիւնը:

Նա դրեց գլուխը երկու ափերի մէջ, արմունկները նեցուկ առեց սեղանին և մտածութեան մէջ ընկաւ։ Կրկին դրսից լսելի եղաւ պահապանի երգը. Նա հնչւում էր օդի մէջ, որպէս մի հառաչանք, որ դուրս է թռչում գերեզմանի խորքից, և ինձ թւում էր, որ իմ խօսակցի հոգին հանգչում էր այդ յուսահատ, սիրտ կտրատող մելօդիայի մէջ։

—Ուրեմն, դուք ամուսնացած էք,—հարցրի նրանից։

—Այո։

—Բախտաւոր էք։

Նա ծիծաղեց։ Նրա ծիծաղը նմանում էր երեխայի անմեղ ծիծաղին, բայց ես չը գիտեմ թէ ինչ էր պատճառը, որ ես միայն սոսկացի։

—Բախտաւոր։—Ի՞նչ ասեմ... Շնորհ արէք, դուք փոքր ինչ մտածեցէք, թէ այն ինչ է, որ կոչւում է բախտաւորութիւն։—Դուք գիւղական կալուածատէր էք,

—Ոչ։

—Բայց, երևի, մի բան հասկանում էք գիւղական տնտեսութիւնից։—Տարակոյս չունեմ։ Ուրեմն, ինքներդ դատեցէք։ Բախտը, ինչպէս բացատրեմ ձեզ, այն չէ, ինչ որ է մի գիւղ, կալուածք, մի խօսքով, անշարժ սեփականութիւն. Նա—ժամանակաւոր վարձակալութիւն է։ Սեփականատէրը, գիտենալով որ մշտապէս

պիտի վայելէ իր կալուածքը, կարգի է դնում նրան, պարարտացնում է դաշտերը, պահպանում է հին անտառը, անկում է նորը, հարթում է ճանապարհները,—նա հոգ է տանում ապագայի համար, իր զաւակների ապրուստի ապահովութեան համար։ Բայց վարձակալը (арендаторъ), անդադար վարելով դաշտերը, ուժաթափ կը դարձնէ նրանց, կը կտրատէ անտառը, կը ոչնչացնէ մարգագետինները, հոգ չի տանի ճանապարհների մասին, սառնասրտութեամբ կը նայէ, թէ ինչպէս փուլ է գալիս մարագը, թէ ինչպէս ամեն բոպէ կարող է քանդվել և ախոռատունը, վերջապէս և ագայի տանը սպառնում է կործանում,—նրան ինչ. բոլորը չմա լաւ է, պգանչելն է։ Այդպիսի վարձակալը միայն օգտւում է քանդում և զուարճանում է։—Ահա ձեզ և բախտը։ Ուրախալի բան է։

Նա վերաւեց գինու երկրորդ շիշը և նևանդով լցրեց բաժակները։

—Ի՞նչ է բախտը, գոչեց նա,—լոկ քամի է և աւելի ոչինչ։ Ահա, նայեցէք,—նա բերանով փչեց դէպի վեր,—ահա նա. ուր է այժմ։ Մի բոպէ, մի վայրկեան, միանգամ զարկեց ժամացոյցի ճօճանակը,—և նա արդէն կորաւ... Պահապանի երգը... Արդեօք լսում էք դուք նրա վերջին երկարաձիգ հնչիւնը։ Նա բարձրանում է, լողում է օդի մէջ. դուք մտածում էք, թէ նա վերջ չի ունենայ, ա-

կանչ էք դնում—և յանկարծ նա հանգչում է գիշերային խաւարի մէջ... Ահա ձեզ և բախտը...

Մի քանի րոպէ մենք երկուսս էլ լուռ մնացինք: Յանկարծ, այժմ համարեա ուրախ կերպով, նա կրկին դիմեց ինձ.

—Ներեցէ՛ք, ես թոյլ եմ տալիս ինձ հարցնել, ինչու բոլոր ամուսնութիւնները, կամ, գրեթէ, ամուսնութիւնների մեծ մասը, այսպէս անբախտ են լինում: Ի՞նչ կասէ՛ք դուք այդ մասին:

—Ե՞ս, ոչինչ, բոլորովին ոչինչ ասել չեմ կարող:

—Ուրեմն, դա փաստ է: Բայց նա, որ առանց դատելու, որ առանց հիմնվելու ոչինչի վրա, հաշտվում է իրերի արդէն գոյութիւն ունեցող կարգերի հետ, մի այսպիսին ամեն բանի մէջ բնաւորութիւնից զուրկ մարդ է: Իմ կարծիքով, պէտք է անտրտունջ համբերել միայն այն բանին, ինչ որ բոլորովին անխուսափելի է, ինչպէս օրինակ, ձմեռը, գիշերը և մահը: Բայց միթէ դրանց նման անհրաժեշտութիւն կայ և անբախտ ամուսնութիւնների մէջ: Այո՛, հասկացէ՛ք ինձ, միթէ և անբախտ ամուսնութիւնները անօրինված են բնութեան օրէնքներով:

Իմ խօսակիցը այդ հարցերը առաջարկում էր ինձ գիտնականի հաստատամտութեամբ, որ խորին կերպով ուսումնասիրել էր իր առարկան: Երեւում էր, որ նա հիմնաւոր կերպով գիտէր բոլորը, բայց այնուամենայնիւ, նայում էր ինձ վրա

ոչ այնքան լուրջ կերպով, որքան մի առանձին քաղցր հետաքրքրութեամբ:

—Ի՞նչու ամուսնութիւնների մեծ մասը անբախտ է լինում, կրկնեց նա,—արդեօք հասկանում է՛ք ինձ:

Ես տուեցի նրան մի չատ հասարակ պատասխան:

—Ներեցէ՛ք ինձ, դուք այդ միտքը դուրս էք բերել գերմանացոց գրքերից: Այդ ուղիղ է: Դուք երեւի սիրով է՛ք կարդում նրանց: Ես էլ երբեմն կարդում եմ. բայց գիտէ՞ք, այդ միջոցներում մենք հրապուրվում ենք ինչ-որ գաղափարներով, աւելի պարզ ասած, դատարկ ֆրազներով միայն: Ես խոստովանվում եմ ձեզ, որ ինձ համար սկսել էր մէկ կինը, որովհետև նա չը հասկացաւ ինձ: Ա՛խ, ո՛րքան սարսափելի բան է, երբ ձեզ չեն հասկանում... Ցեսնո՞ւմ էք, որպիսի՜ բացառական մարդ եմ ես, գրեթէ ինքնուրոյն մի մարդ. որպիսի՜ ինքնուրոյն մտքեր ու զգացմունքներ ունեմ ես: Կանանց ընտրութեան մէջ ես անդադար սխալներ եմ գործում, երբէք չեմ կարողանում գտնել մի այնպիսին, որը հասկանար ինձ, բայց դարձեալ չարունակում եմ ինձ համար կին որոնել... Դուք արդէն գիտէ՛ք այդ ֆրազները. բայց չէ՞ որ այդ բոլորը խաբէութիւն է և կատարեալ սուտութիւն... Առհասարակ, չէ՞ք նկատել դուք, որ իւրաքանչիւր մարդ անպատճառ սուտխօս է...

Գտնվում են երկու տեսակ մարդիկ. ոմանք սուտ են խօսում ուրիշների մասին—նրանց կոչում են մատերիալիստներ, և նրանց գրքերը հաճութեամբ կարդացվում են, միւսները, որոնք Գերմանիայում կոչվում են իդէալիստներ,—դրանք սուտ են խօսում իրանք իրանց մասին:

Ես պէտք է խոստովանվեմ, որ իմ խօսակիցը հետզհետէ աւելի և աւելի հետաքրքրում էր ինձ:

Նա խմեց մի բաժակ ևս ռօկայեան գինի և այժմ գտնվում էր կատարեալ բորբոքման մէջ: Նրա աչքերը լողում էին, լեզուն լողում էր, իսկ խօսքերը դուրս էին հոսվում արդէն իրանք իրանց:

—Ի՞նչպէս էք կարծում, բարեկամ, ինչու ամուսնութիւնները անբախտ են լինում, կրկնում էր նա և այդ միջոցին ձեռքերով յենվեցաւ իմ ուսերի վրա, կարծես, կամենում էր սեղմել ինձ իր սրտին,—ինչ է պատճառը,—որդիները…

Ես մնացի շուարած:

—Բայց, սիրելի բարեկամ, ասեցի ես,—նայեցէք այդ խեղճ հրէաների վրա, ինչ չքաւորութեան մէջ են ապրում նրանք. սակայն դրանք վաղուց միմեանցից փախած կը լինէին, եթէ որդիներ չունենային. որդիների սէրն է, որ կապում է նրանց միմեանց հետ:

Նա արագութեամբ շարժեց գլուխը, բարձրացրեց ձեռքերը, կարծես թէ, պատրաստվում էր օրհնել ինձ:

—Այդպէս է, այդպէս է: Հէնց այդ է… Հիմա լսեցէք իմ պատմութիւնը:

—Ես դեռ փոքրիկ էի, այլ խօսքով ասած, մի մեծ յիմար էի. ես վախենում էի կնիկներից: Ես ինձ տղամարդ էի զգում, երբ նստում էի ձիու վրա կամ երբ վեր էի առնում հրացանը և ման էի գալիս դաշտերի, անտառների և լեռների մէջ:—Դիտաւորութիւն չունեմ ձեզ որսորդական առակներ պատմելու, այն էլ բաւական է, եթէ ասեմ, երբ հանդիպում էի արջին, ես առանց չփոթվելու թոյլ էի տալիս նրան մօտենալ և այն ժամանակ ասում էի նրան. կանգնիր, եղբայր,—և իսկոյն արձակում էի իմ գնդակը ուղիղ դէպի նրա սպիտակ նշանը, դէպի կուրծքը: Բայց, երբ հանդիպում էի կնոջ, ես ծռում էի իմ ճանապարհը, խոյս էի տալիս դէպի մի այլ կողմ: Եթէ մի կին խօսում էր ինձ հետ, ես յիմարի նման կարմրում էի, լեզուս սկսում էր կակազել: Ես այնքանն էի միայն հասկանում, որ կնիկները նրանով են միայն որոշվում տղամարդերից, որ աւելի երկայն մազեր ունեն և աւելի երկայն հագուստ են հագնում, քան թէ մենք, այսքանը միայն: Ահա այսպիսի յիմար էի ես: Դուք գիտէք, թէ ինչպէս է կատարվում մեզանում ամեն բան… Մինչև անգամ ծնողները երբէք չեն խօսում այնպիսի բաների վրա. աճում ես, մեծանում ես, յայտնվում են մազեր երեսիդ վրա և դեռ չես հասկանում,

Թէ ինչու է այնպէս բաբախում սիրտդ, երբ տեսնում ես մի կնոջ: Կատարեալ յիմար էի ես, ասում եմ ձեզ: Երբ ես ինքս հասկացայ, թէ բանը ինչումն է, այն ժամանակ իրաւ մտածում էի, որ ես ոչ սակաւ չափով գտել եմ Ամերիկան կամ մի նոր համաստեղութիւն: Երեւակայեցէք, ես նոր հասկացայ, որ երեխաներին չեն դուրս քաշում ջրից, ինչպէս խեցգետիններին: Լաւ: Այդ միջոցին ես իսկոյն սիրահարվեցայ, ինքս էլ չը գիտեմ թէ ինչպէս... Արդեօք չեմ ձանձրացնում ձեզ:

—Ոչ, խնդրում եմ ձեզ...

—Լաւ, ես սիրահարվեցայ: Իմ հօր խելքին փչեց, որ մեզ պար սովորեցնել տայ, ինձ և քըրոջս: Գալիս էր փոքրիկ Ֆրանսիացին իր ջութակով և հարեան կալուածատէրները հաւաքվում էին իրանց զաւակների հետ: Բոլորը ճանաչում էին միմեանց, միայն ես գտնվում էի տենդային դրութեան մէջ: Իմ Ֆրանսիացին երկար մտածել չէր սիրում, դասաւորում էր զոյգերը, ինչպէս պատահում էր, քարշում էր իմ թեւքից և բռնում էր մեր հարեանի աղջկան, կանգնեցնում էր իմ մօտ:—Իսկ և իսկ աղջիկ, ասում եմ ձեզ: Նա դեռ այնքան խամ էր, որ կոխ էր տալիս իր փէշերը և նրա գիսակները իջնում էին մինչև ծնկները: Ահա մենք կանգնած ենք և բռնել ենք միմեանց ձեռքից: Ես գրեթէ հալվում եմ: Մենք պար ենք գալիս, բայց

ես չեմ նայում նրա վրա, միայն մեր ձեռքերը վառվում են: Դա շարունակվում է մինչև կադրիլի վերջը. այստեղ, վարժապետի հրամանի համեմատ, կանգնում ես քո տիրուհու առջև, բաղխում ես յատակը կրնկով, խոնարհեցնում ես գլուխդ կուրծքի վրա, կարծես թէ մէկը կտրած լինէր նրան, աջ թեւքիդ բոլորակ ձև ես տալիս, բռնում ես քո տիրուհու մատների ծայրից և համբուրում ես նրա ձեռքը... Նա նստում է իմ մօտ, ես բարձրացնում եմ գլուխս և ինչ,—տեսնում եմ, որ նա շառագունած է և որ նրա աչքերը... այն ինչ աչքեր էին...

Նա մի առանձին կերպով խոժոռեց աչքերը և օրօրվեցաւ դէպի յետ:

—Շատ լաւ է, պարոններ, ձայն տուեց վարժապետը, բաւական է:—Ես ապշած էի: Այն օրից ես երբէք չէի պար գալիս նրա հետ: Նա մեր հարևանի աղջիկն էր, որքան գեղեցիկ էր... Ի՞նչպէս հասկացնեմ ձեզ, մի խօսքով, սարսափելի գեղեցիկ էր... Պար էինք գալիս շաբաթը մի անգամ: Ես չէի վստահանում խօսել նրա հետ, բայց երբ նա կաղակների պար էր պարում, այդ միջոցին աչքերս չէի հեռացնում նրանից, պատահում էր, երբ նայում էր նա իմ վրա, ես միայն սուլում էի և շուռ էի գալիս կրունկներիս վրա: Միւս պատանիները մղում էին նրա մատները, կարծես թէ, շաքարից լինէին շինված. Նը-

բանք շատ ուրախ կը լինէին կոտրատել իրանց ձեռքերն ու ոտները, միայն թէ կարողանային որսալ նրա թաշկինակը, բայց նա իր գիսակները յետ էր ձգում դէպի ետևը և միայն նայում էր իմ վրա։ Հէնց որ նա պատրաստվում էր տուն գնալ, ես հերոս էի դառնում, ժամը բռնում էի սանդուղքների վրա և կանգնում էի չէմքի մօտ, մինչև նա կը փաթաթվէր իր սփածանելիքի մէջ, մինչև կը ծածկէր իր երեսաքօղը և մինչև քաղցրութեամբ մնաք բարեաւ կասէր ամենքին։ Այդ միջոցին մի առանձին նախանձ սկսում էր մաշել իմ սիրտը։ Դրան զանգակը արդէն հազիւ լսելի ձայնով հընչում էր հեռուից, իսկ ես դեռ ես կանգնած էի լինում մեր պատշգամբի վրա, ժամը ձեռքիս բըռնած, և բռնած այնպէս, որ նրանից սկսում էր կաթկթել, բայց ես չէի նկատում։ Ո՛րքան յիմար էի ես, ասում եմ ձեզ... Գարունքին պարերը դադարեցին, և ես երկար չէի տեսնում նրան։ Այժմ պատահում էր, որ ես գիշերը զարթնում էի և տեսնում էի, որ բարձս բոլորովին թրջված էր արտասուքով։ Յանկարծ սկսեցի մի առանձին փափագ զգալ դէպի բանաստեղծութիւն, սերտում էի սիրահարական ռոմանսները, և կանգնելով իմ հագուստի կախարանի առջև, սկսում էի տաքացած կերպով ասել նրանց։ Առհասարակ, օրըստօրէ դառնում էի ես, կարծես թէ, աւելի համարձակ, վեր էի առնում կիթառը, երգում էի և

երեւակայական ցնորքների մէջ էի ընկնում, այնպէս որ, մեր ծերացած որսորդական շունը դուրս էր սողում հնոցի տակից, բարձրացնում էր իր դունչը և սկսում էր դառն կերպով ոռնալ։ Կրկին սկսում եմ ես գնալ որսորդութեան, միայնակ թափառում եմ լեռների վրա։ Բայց միանգամ, տարակուսութիւնների մէջ ընկղմված, պառկեցի ես մի նեղ ձորի մէջ։ Յանկարծ լսում եմ, որ իմ վերևում ոտերը շարժվում են և անտառի մթութիւնից դուրս է գալիս ահագին արջ։ Նա դանդաղ կերպով անցնում է ձորով, մօտենում է ինձ, —ես չեմ շարժվում։ Անտառում ամեն ինչ լռել էր, միայն ագռաւը կռնչալով թռչում էր իմ մօտով։ Մի անբացատրելի երկիւղ տիրեց իմ սրտին, երեսս խաչակնքում եմ և էլ ոչինչ չեմ քաշում։ Արջը իջնում է դէպի հովիտը, ես ոտքի եմ կանգնում և սկսում եմ ամենայն արագութեամբ փախչել անտառից։—Հարևան չէնում ժամանում է տօնավաճառի օրը։ Ներեցէք, ես պատմում եմ ձեզ բոլորը, ինչպէս պատահել է, բայց ոչ կարգով։ Գնում եմ տօնավաճառը, սկսում եմ թափառել վրանների շարքերի մէջ,—տեսնում եմ, նա էլ այնտեղ է, այո՛, նա, ես չը սխալվեցայ։ Այժմ նրա ընթացքը մի իշխանուհու ընթացքի ճիշտ նմանութիւնն ունէր. գիսակները կախ չէին ընկած, այլ կատարեալ ոսկեայ կամարի նման բոլորել էին նրա գլուխը։—Ես մոռացայ ձեզ ասել,

որ նրան կոչում էին Նիկոլա Սենկօվա։—Այնտեղ ման էր գալիս նա խիստ սիգապանծ կերպով, հազիւ-հազ օրօրվում էր, իսկ նրա հագուստի ծալքերը խիստ ախորժելի ձայն էին հանում. միայն նրանց սօսափիւնից կարելի էր սիրահարվել... Տօնավաճառի մէջ տիրում էր աղմուկ. փերեզակները չորս կողմից աղաղակում էին, մուժիկները իրանց կօշիկներով թնդեցնում էին գետինը, հրէաները լցվում էին ամբոխի մէջ, ոմանք չարախօսում էին, ոմանք ծիծաղում էին, ոմանք իրանց ծանր շալակների ներքոյ տնքում էին, իսկ մանուկները գնել էին իրանց համար փայտեայ դուդուկներ և չրխ-չրխացնում էին, որքան ուժ ունէին։ Իսկ նա իսկոյն ճանաչեց ինձ։ Ես օգնութեան եմ կանչում իմ բոլոր համարձակութիւնը, նայում եմ իմ չորսը և մտածում եմ. Եկ, ընծայիր նրան մի արեգակ, այդ կուրախացնէ նրան, ուրիշ բան ընծայելու կարողութիւն չունես։ Ներեցէք, դա շաքարից շինած արեգակ էր, գեղեցիկ ոսկեջրած, և ոչ այլ կերպ։ Նա հեռուից իմ աչքին ընկաւ, և ես մի առանձին կերպով զարմացած դէմք շինեցի, ինչպէս մեր ծխական քահանան, երբ նրան պատահում է ձրի թաղել մի որ և իցէ հանգուցեալին։ Լաւ, ես դառնում եմ սատանայի նման քաջ, վազում եմ դէպի վրանը, ձգում եմ այնտեղ իմ մօտ գտնված միակ քսան կոպէկնոցը և գնում եմ արեգակը։ Դրանից

յետոյ, անցնում եմ տօնավաճառի միջով, հասնում եմ իմ տիրուհու ետևից, բռնում եմ նրա հագուստի ծալքերից, որը, ուղիղն ասած, իմ կողմից ոչ բոլորովին վայելուչ էր, բայց այսպիսի սխալներ պատահում են սիրահարվածների հետ,—բռնում եմ նրան և տալիս եմ արեգակը։ Ի՞նչ էք կարծում, ինչ է անում Նիկոլան։

—Շատ հաւանական է, որ շնորհակալութիւնը յայտնէր ձեզ։

—Շնորհակալութիւն։—Նա սկսեց իմ երեսին ծիծաղել, ծիծաղում էին նրա հայրն ու մայրը, ծիծաղում էին եղբայրներն ու հօրեղբօր որդիքը. մի խօսքով, բոլոր Սենկօվները բարձր ձայնով ծիծաղում էին։ Իմ սրտում կատարվում էր նոյնը, ինչ որ կատարվեցաւ այն ժամանակ, երբ նեղ ձորի մէջ արջը անցաւ իմ մօտով։ Ես շատ ուրախ կը լինէի, եթէ կարողանայի փախչել, բայց ամաչում էի։ Սենկօվները դեռ շարունակում էին ծիծաղել։ Նրանք հարուստ էին, բայց մենք էլ աղքատ չէինք, այնքան ունէինք, որ ապրում էինք։ Ես երկու ձեռքերս էլ դնում եմ գրպաններիս մէջ և ասում եմ. լաւ չէ, օրիորդ Նիկոլա, հայրս տուեց ինձ մի հատ քսանկոպէկնոց տօնավաճառի համար, իսկ ես ծախսեցի նրան ձեզ համար, որպէս մի իշխան, որը կը ձգէր ձեր ոտների առջև իր ամբողջ հարստութիւնը։ Գթացէք իմ վրա...—իմ ձայնը կտրատվում էր, արտասուքը

թափվում էր աչքերից: Կատարեալ յիմարութիւն, ասում եմ ձեզ: Բայց օրիորդ Նիկօլան ընդունում է իմ արեգակը, սեղմում է իր սրտին և նայում է իմ վրա: Նրա աչքերը այնքան խոշոր էին, այնքան խոշոր էին,—ամբողջ աշխարհը չէր թւում ինձ այնքան ընդարձակ,—և այնքան խորն էին: Մի առանձին զօրութիւն ձգում էր ինձ դէպի այդ աչքերը, և նա հրաւէր էր կարդում, այսինքն, նրա աչքերը մի ինչ-որ բանի համար խնդրում էին, իսկ շրթունքները հազիւ միայն թրթռում էին: Այդ միջոցին ես ձայն եմ տալիս. ախ, որպիսի յիմար եմ ես, օրիորդ Նիկօլա: Ես շատ ուրախ կը լինէի պո-կել երկնքից իսկական արեգակը, Աստուծոյ պայծառ արեգակը, և ձգել ձեր ոտների առ-ջև, միայն մի ծիծաղեցէք իմ վրա:—Այդ միջոցին արագութեամբ սլանում էր մի լեհական զուքս: Լծած իր կառքին վեց ձիաներ, մտրակը ձեռքում, միայնակ նստած էր նա բազմոցի վրա և բոլոր թափով քշում էր տօնավաճառի միջով: Անխել-քութիւն: Բոլորը սկսում են աղաղակել, մի հրէայ ցած է գլորվում, թաւալվում է գետնի վրա: Սենեօրները փախչում են դէպի զանազան կող-մեր, իսկ օրիորդ Նիկօլան երկիւղից չէ շարժ-վում տեղից. նա միայն վեր բարձրացրեց իր ձեռ-քերը, կարծես թէ, կարող էր ձիաներին կանգ-նեցնել: Մի ակնթարթում յափշտակում եմ նրան

և հեռացնում եմ: Նա պինդ գրկել էր իմ պարա-նոցը իր ձեռքերով: Իմ չորս կողմում ամենքը աղաղակում էին, բայց ինձ մնում էր միայն պար գալ իմ թանգագին բեռան տակ: Կառքը արա-գութեամբ անցաւ, օրիորդը ցած իջաւ իմ գրկից, այդ բոլորը կատարվեցաւ մի րոպէում: Բայց ես պատմում եմ բոլորը այնպէս, որպէս այն ժամա-նակ պատահեց ինձ հետ. թոյլ տուեցէք, աւելի լաւ կը լինի, եթէ վերջացնեմ մի քանի խօսքով:

—Ո՛չ, ոչ, մենք, ռուսներս, ինչպէս ինքներս սիրում ենք հաճութեամբ պատմել, այնպէս էլ սիրում ենք հաճութեամբ ուրիշներին լսել. խընդ-րեմ, շարունակեցէք:

Մինչև նա իր չիբուխը կը լցնէր, ես ձգվե-ցայ նստարանի վրա:

—Ուրեմն, լսեցէք մինչև վերջը,—ասաց նա,—ի հարկէ, այստեղ ուրիշ ինչով կարելի է զբաղ-վել: Եւ այսպէս, լեհացի զուքսը բաժանեց մեզ քաջասիրտ ընտանիքից: Իմ Սենեօրները փախան դէպի զանազան կողմեր: Դուք կարծում էք, թէ ես իսկոյն սկսեցի որոնել նրանց: Օրիորդ Նիկօ-լան քնքշութեամբ քարշ էր ընկած իմ թևքից, և մենք իբր թէ որոնում էինք նրա ծնողներին, այ-սինքն, ես միշտ նայում էի իմ շուրջը և, հէնց որ տեսնում էի նրանց, իսկոյն ճանապարհս ծը-ռում էի դէպի մի այլ կողմ: Կաղակի նման հպարտ կերպով ես գլուխս բարձր էի բռնել, և

մենք շատախօսում էինք զանազան դատարկ բաների վրա։ Ի՞նչ բանի վրա։--Ահա նստած է մի գիւղացի կին և վաճառում է խեցեղէն ամաններ։ Օրիորդ Նիկօլան պնդում է, թէ ջրի համար աւելի լաւ են խեցեղէն ամանները, իսկ ես աշխատում եմ ապացուցանել, որ փայտեղէն ամանները աւելի յարմար են. նա գովում էր ֆրանսիական ռօմանները, իսկ ես գերմանականը. նա գովում էր շներին, իսկ ես—կատուներին։ Այսպէս վիճում էինք մենք, նրա համար միայն, որ խօսակցութեան համար մի առարկայ ունենայինք։ Վիճում էի, որ լսէի նրա ձայնը, որ ինձ սաստիկ ախորժելի էր թւում։ Բայց ինչ հիանալի ձայն էր այն, մանաւանդ երբ նա բարկանում էր։ Կատարեալ մուզիկայ, ասում եմ ձեզ... Վերջապէս, Սենկօվները շրջապատեցին ինձ, որպէս մի որ և իցէ երէին. խօյս տալ նրանցից այժմ անհնարին էր. այդ միջոցին մենք ուղիղ ընկնում ենք հայր Սենկօվի գիրկը։ Նա իսկոյն պատրաստվում է վերադառնալ տուն։ Լաւ։ Իմ երկչոտութիւնը փարատվեցաւ, ես բարձր ձայնով կանչում եմ կառապանին, սովորացնում եմ նրան, թէ ինչպէս պէտք է տանել, նստեցնում եմ կառքի մէջ նախ մօրը, յետոյ ներս եմ կոխում և հօրը, նա, ներս մտնելու ժամանակ, մէջքը դարձնում է դէպի ինձ,—իսկոյն չոքում եմ գետնի վրա և ծնկներիցս մէկը, որպէս պատուանդան,

առաջարկում եմ օրիորդ Նիկօլային, նա դնում է նրա վրա իր ոտը և թռչում, նստում է իր տեղը։ Յետոյ ամբողջ խումբով յայտնվում են քոյրերը, հօրեղբօրորդիքը, տեղաւորվում են, կառապանը շարժում է մտրակը, կառքը անհետանում է իմ աչքերից։ Ներեցէք ինձ, ես խիստ վատ սովորութիւն ունեմ ամեն ինչ պատմել այսպէս անկապ կերպով։ Բայց աւելի լաւ է, որ շարունակեմ, քանի որ դեռ կալանաւորների նման նստած ենք այստեղ, եթէ ոչ, դուցէ, յետոյ արգելք կը պատճառեմ ձեզ։

—Ուրեմն, տօնավաճառը։

—Ես վաճառվեցայ նրանում, ասում եմ ձեզ, ամբողջապէս վաճառվեցայ։ Այնուհետև տանը թափառում էի, ինչպէս մի շուն, որ կորցնում է իր տիրոջը։ Կորա՛յ, բոլորովին կորա՛յ... Միւս օրը ես ձիով գնացի Սենկօվների գիւղը և լաւ ընդունելութիւն գտայ։ Նիկօլան աւելի սառն էր, քան թէ տօնավաճառի ժամանակ. նրա գլուխը, կարծես թէ, աւելի կորացած էր։ Ես նոյնպէս տըխրեցայ, և նայելով նրա վրա, մտածում էի. ինչ է պատահել քեզ հետ։ Ես հօ քեզ եմ պատկանում, քո սեփականութիւնն եմ, քո ստրուկն եմ, արա ինձ հետ, ինչ որ կամենում ես, միայն թէ ծիծաղի՛ր, ուրախացի՛ր։—Իմ գլխումը չէր մտնում, թէ նա կարող էր ուրիշ ցանկութիւններ ևս ունենալ։—Ես սկսեցի յաճախ գնալ Սենկօվների մօտ։

Միանգամ ասեցի Նիկօլային. Թոյլ տուեցէք ինձ, այսօրից սկսած, այլ ևս սուտ չը խօսել ձեզ հետ։—Նա զարմացած նայեց իմ վրա։—Միթէ դուք սուտեր էք խօսում։—Այո, չէ՞ որ ես ձեր ծառան եմ, իմ ամբողջ սիրտը լցված է ձեզանով, ես աւելի սիրով կը նետվէի դէպի ձեր ոտները, և կը սկսէի համբուրել ձեր քայլերի հետքերը, բայց դարձեալ չեմ նետվում և լռում եմ։ Թոյլ տուեցէք խօսել ճշմարիտը և այլ ևս սուտ չասել։ —Հաւատո՞ւմ էք արդեօք, այդ օրից ես դադարեցի սուտ խօսելուց։ Շուտով Նրանից յետոյ, իմ ծերունի դայեակը խօսում էր սպասաւորների սենեակում. որքան բարեպաշտ է դարձել մեր մանկահասակ աղան. երևում է, որ միշտ ծունր իջած աղօթում է, գոյացել են մինչև անգամ կապոյտ բիծեր ծնկների վրա.—այո, այդ ճշմարիտ էր։ Հիմա կը պատմեմ ձեզ այն պատմութիւնը, որ պատահեց շան հետ։ Սենկօմների կալուածքը գտնվում էր լեռներին աւելի մօտ, քան թէ մերը։ Նրանք ունէին շատ ոչխարներ, որոնք երբեմն արածում էին մեծ անտառի սարոտում։ Գիշերները Նրանց քշում էին փարախի մէջ, որ շրջապատած էր ամուր ցանկապատով։ Հովիւները ամեն գիշեր վառում էին մեծ խարոյկներ և քնում էին, չը բաժանվելով հաստ ցուպերից, որ ամրացրած էին երկաթեայ գլխիկներով. բացի դրանցից, Նրանք ունէին իրանց մօտ հրացաններ։ Այդ

բոլոր նախազգուշութիւնները անհրաժեշտ էին, որովհետև անմիջապէս փարախի ետևից, դէպի լեռը, տարածվում էր մեծ անտառ, որի մէջ գայլերը և արջերը ազատ վազվզում էին և բազմացել էին առատութեամբ։ Շների մէջ, որ գտնվում էին փարախում, նշանաւոր էր մի սև շուն։ Նրան կոչում էին Ածուխ։ Եւ նա սև էր, ինչպէս ածուխ, և Նրա աչքերը վառվում էին շիկացրած ածուխների նման։ Նա էր բարեկամը իմ... ներեցէք, լեզուիցս դուրս թռաւ։

Նա կարմրեց և աչքերը խոնարհեցրեց դէպի ցած։

—Եւ այսպէս, Ածուխը օրիորդ Նիկօլայի բարեկամն էր. դեռ երեխայութեան հասակում, երբ Նա խաղ էր անում ցամաք աւազների մէջ, Ածուխը խաղակից էր լինում Նրա հետ,—Նա ինքն էլ այդ ժամանակ փոքրիկ լակոտ էր,—շատ անգամ պատահում էր, որ սկսում էր լիզել Նրան, լիզում էր լեզուով Նրա երեսը, իսկ փոքրիկ աղջիկը դընում էր իր մատները Նրա ատամների մէջ և ծիծաղում էր. շունն էլ սկսում էր ծիծաղել։ Յետոյ երկուսն էլ աճեցին։ Ածուխը դարձաւ մեծ և ուժեղ, ինչպէս մի արջ։ Նիկօլան, ի հարկէ, յետ մնաց, բայց Նրանք շարունակում էին սիրել միմեանց։ Ածուխը բնութիւնից մեծահոգի էր. Նա, գրեթէ, մի առանձին պահանջ էր զգում պաշտպանել տկարներին։ Գժուար էր Նրա նմանը գըտ-

նել: Եւ այդպէս նա մտքին դրեց ընդունել իր վրա ոչխարների պաշտպանութիւնը: Այդ խեղճ, երկչոտ անասունները կարծես թէ, ստեղծված էին Ածուխի համար: Նա իր կամքով տեղափոխվեցաւ ոչխարների փարախի մէջ և երբեմն որպէս հիւր սկսեց յայտնվել կալուածական տանը, իսկ երբ վերադառնում էր այնտեղից փարախը, ոչխարները իսկոյն խմբվում էին նրա չուրջը և ուրախութիւնից սկսում էին ամէն կողմից խթել նրան: Իսկ նա դուրս էր պարզում իր կարմիր լեզուն և լիզում էր նրանց մերթ աջ կողմը, մերթ ձախ կողմը, կարծես թէ, կամենում էր ասել. դէ, լաւ է, ես հօ բոլորը գիտեմ, բաւական է: Հաւատում էք արդեօք, գայլերը վախենում էին նրանից. պատահում էր, որ արջն էլ խոյս էր տալիս, երբ տեսնում էր նրան հսկողութեան մէջ: Երբեմն Նիկոլան անձամբ գնում էր փարախը նրա տեսութեան համար, և երևում էր, որ խելացի չունը հասկանում էր այդ: Եթէ օրիորդը երկար ժամանակ չէր տեսնվում, Ածուխը կարօտութիւնից սկսում էր խոժոռվել, այլ ևս կալուածական տան մէջ չէր մնում, և իր տխրութիւնը ցրվելու համար, սկսում էր վազվզել ուրիշ տեղերում: Զարմանալի անասուն: Պատահում էր, երբ որ Նիկոլան գալիս էր նրա մօտ, նա քշում էր նրա ընդառաջ բոլոր փոքրիկ գառներին: Օրիորդը նըստում էր նրա վրա և նա ազատ տանում էր նը-

րան, բոլորովին ազատ և հպարտ կերպով: Չէ՞ որ նա իմանում էր իր կրած չալակի արժէքը: Այն ժամանակ, երբ ես առիթ ունեցայ ծանօթանալու Ածուխի հետ, նա արդէն ծերացել էր, ձայնը կերկերվում էր, ատամները փչացել էին, երբեմն նիրհում էր և ոչխարները սկսել էին կորչել: Այդ միջոցին լուրեր տարածվեցան մի սարսափելի արջի մասին, սարսափելի՛, ասում եմ ձեզ: Արդէն մի քանի անգամ տեսել էին նրան փարախի մերձակայքում: Ակամայ կրկին յիշեցի ես այն արջին, որից ես գարնանը այնքան վախեցայ կիրճի մէջ, և ես սկսեցի ամաչել... Միանգամ գնում էի Սենկօյեների մօտ, տեսնում եմ, որ գիւղացիները փախչում են այս կողմ և այն կողմ, և աղաղակում են. արջը, արջը: Տեսնում եմ, որ բոլորն էլ վազում են դէպի ոչխարների փարախը: Սոսկումը տիրում է ինձ. ձիս արագութեամբ քշում եմ դէպի այն կողմը, ցած եմ իջնում, տեսնում եմ՝ կանգնած են մի խումբ մարդիկ, իսկ նրանց մէջտեղում գետնի վրա ընկած է Նիկոլան, գրկած ունելով Ածուխին, հեկեկում է, իսկ նրա չորս կողմում բազմութիւնը շշնջում է: Ես ականջ եմ դնում: Ի՞նչ եմ լսում: Ահագին արջը ներս էր մտել փարախի մէջ և դուրս էր քարշել մի ոչխար: Հովիւները, շները տեղից չէին շարժվել, սկսել էին միայն բոլոր ուժով աղաղակել: Յանկարծ լսելի է լինում օրիորդի ձայնը: Կաղ Ածու-

խը խոկոյն դուրս է ցատկում ցանկապատից, յարձակվում է արջի վրա, իսկ արջը նրա վրա. հովիւները հրացաններով դուրս են վազում—արջը փախչում է,—ոչխարը ազատվում է: Աճուխը քարշ գալով յետ է դառնում, փախում է մի քանի քայլեր և ցած է ընկնում, որպէս մի հերոս: Նիկօլան նետվում է նրա վրա և սեղմում է նրան իր կուրծքին: Արտասուքը թափվում է օրիորդի աչքերից: Աճուխը աշխատում է բարձրացնել գլուխը, ծանր կերպով հոգւոց է հանում—և ամեն ինչ վերջանում է: Այդ րոպէին ես նայում եմ իմ վրա, որպէս մի եղեռնագործի վրա:—Թո՛ղ տուեցէք նրան, օրիորդ Նիկօլա,—ասում եմ ես: Բայց նա բարձրացնում է իր արտասուալի աչքերը և ասում է. դուք խստասիրտ մարդ էք, Գիմլորէ,—այդ իմ անունն է:—Ես խստասիրտ մարդ եմ: Լաւ մտածեցէք: Իսկոյն ձիս յանձնում եմ հովիւներին, վեր եմ առնում երկայն դանակը, սրում եմ, վեր եմ առնում մի հին հրացան, դուրս եմ հանում նրա միջից առաջվայ լցրածը, նորից լցնում եմ,—մի բուռն վառօդ և նոյն քանակութեամբ կտրտած կապար—և դիմում եմ դէպի լեռները: Ես գիտէի, որ նա դեռ կիրճից անցած չէր լինի:

—Ա՞րջը:

—Այո՛, արջը: Սպասում եմ նրան:—Այստեղ դու իմ ձեռքից չես պրծնի, մտածում եմ ես:

փուլ եկած եզրը ամուր է, ինչպէս ժայռ: Վերևում ծառեր կան, բայց նրանց արմատները չեն հասնում մինչև քո գլուխը, անկարելի է բռնել նրանցից կամ մագլցել դէպի վեր: Չես կարող անցնել և ոչ կարող ես յետ դառնալ. ես էլ չեմ հեռանայ այստեղից: Կանգնած էի և սպասում էի:—Արդեօք որ և իցէ ժամանակ զգացել էք, թէ ինչ բան է միայնակութիւնը: Գիտէ՞ք, թէ ինչ է նշանակում սպասել մէկին:—Սպասե՛լ և վախենա՛լ... ո՛չ, սոսկալի է միայն մի բան՝ մարդ սպանել: Բայց այդ դարևոր անտառի մէջ ես սպասում էի արջին: Մտածեցի կրկին անգամ ստուգել, թէ հրացանի մէջ գնդակ դրել եմ, թէ ոչ... Ծիծաղելի նախազգուշութիւն, որը գրգռուած դրութեան անիմաստ խոհեմութիւն պէտք է համարել: Չը գիտեմ, ո՛րքան ժամանակ կանգնած մնացի իմ տեղում: Միայնակութիւնը սարսափելի կերպով տանջում էր ինձ: Բայց ահա, կիրճի վրա ճիւղերը սկսում են խշխշալ, լսում եմ նրա ոտների ձայնը, կարծես թէ, մուժիկի ծանր կօշիկների ձայն լինէր: Նա ինչ-որ մրթմրթում էր ինքն իրան: Նա ինքն էր: Նա տեսնում է ինձ և կանգ է առնում: Ես մի քայլ առաջ եմ գնում, փորձում եմ չախմախը վեր քաշել, շօշափում եմ հրացանը, տեսնում եմ չախմախ չունի: Ես խաչակնքում եմ երեսս, հանում եմ վերևի հագուստս, նրանով փաթաթում եմ ձախ թևքս,—արջը արդէն գալիս է...

Զօ՜չ, եղբայր,—ձայն եմ տալիս նրան։ Նա իբր թէ չէ լսում և չուռ է գալիս ինձանից։—Դէ, կանգնի՛ր, եղբայր, ես կը սովորեցնեմ քեզ խօսել ռուսերէն։ Հրացանս պտըտեցնում եմ օդի մէջ և բոլոր թափով զարկում եմ նրա դունչին։ Նա մռնչելով բարձրանում է, ես ձախ ձեռքս կոխում եմ նրա բերանը, իսկ դանակս նրա սրտի մէջ,—նա հարուածում է ինձ թաթերով. արեան յորձանքը ողողում է ինձ, լոյսը խաւարում է իմ աչքերում...

Նա կանգ առեց, գլխով յենվեցաւ ձեռքերի վրա և մի րոպէի չափ լուռ մնաց։ Յետոյ ձեռքով թեթև կերպով զարկեց սեղանին և ժպտաց։

—Հիմա դուք կը մտածէք, որ ես պատմեցի ձեզ մի ճարպիկ կերպով հնարած առակ։ Բայց ես ցոյց կը տամ նրա թաթերի հետքերը։ Թոյլ տուեցէք բաց անել շապկիս կոճակները։

Իրաւ, ես տեսայ նրա կուրծքի երկու կողմերում ես սպիներ, որոնք, կարծես թէ, առաջ եկած լինէին մարդկային ահագին ձեռքի ճնշումից։

—Նա խիստ վարպետ կերպով ճանկերով բըռնեց ինձանից։

Բաժակները դատարկ էին։ Ես Մօյիշային նշան արի, որ բերէ մի շիշ ևս։

—Այդ դրութեան մէջ գտան ինձ գիւղացիները,—շարունակեց նա,—բայց թողնենք այդ։ Ես երկար պառկած էի ջերմի մէջ, Սենկօվների տը-

նում։ Ցերեկով, երբ ուշքի էի գալիս, նրանք նըստած էին լինում իմ անկողնի մօտ, հաւաքվում էին այնտեղ և իմ սպասաւորները, ուղիղ այնպէս, ինչպէս մեռնողի մահճի մօտ։ Բայց հայր Սենկօվը ասում էր, որ ես սկսում եմ առողջանալ, և Նիկօլան այդ լսելով ժպտում էր։ Միանգամ կէս գիշերին զարթնում եմ ես։ Ճրագը վառվում էր։ Նիկօլան ծունր իջած, աղօթում էր։ Բաւական է այդ մասին։ Այդ բոլորը անցաւ, բայց երբ որ մտաբերում ես կատարվածը, այնպէս է թւում, որ այդ ամենը տեսել ես երազի մէջ... Բաւական է։ Դուք տեսնում էք, որ ես չը մեռայ։ Այնուհետև Նիկօլայի հայրը սկսեց իր կառքով երբեմն գալ մեզ մօտ, կանայքը նոյնպէս գալիս էին նրա հետ։ Մեր ծերունի ծնողները շշնջում էին միմեանց հետ, բայց պատահում էր, երբ ես մտնում էի նրանց, այդ միջոցին ծերունի Սենկօվը ժպտում էր, աչքերը ծիծփացնում էր և առաջարկում էր ինձ իր քթախոտի տուփից մի պտղունց վեր առնել։ Նիկօլան սիրում էր ինձ, խիստ անկեղծ կերպով սիրում էր։ Հաւատո՞ւմ էք արդեօք։ Ես ինքս հաւատում էի նրան, մեր ծնողները նոյնպէս հաւատում էին։ Հարսանիքը կատարվեցաւ Ձերնօլիկում։ Պէտք է ասած, կատարեալ արբեցութեամբ։ Իմ հայրը կազակների պար էր պարում տիկին Սենկօվի հետ։ Նրանք ամենքն էլ հաւաքել էին իրանց քաջքայված ոսկը-

ները, ինչպէս յարութիւն առածները անհոգ դատաստանի օրում: Միւս օրը ես արդէն պատրաստւում էի մեր տունը վերադառնալու: Ես ինքս լծեցի վեց ձիաները,—բոլորն էլ սպիտակ էին, որպէս աղաւնիներ: Արջի փայլուն, երկարամազ մորթը տարածված էր կառքի մէջ մեր նստելու տեղի վրա, թաթերը ոսկեզօծ ճիրաններով քարշ էին ընկած պատուանդանի վրա, իսկ մեծ գլուխը վառվռուն աչքերով, ինչպէս կենդանի, ընկած էր մեր ոտքերի տակ: Սպասաւորները, գիւղացիները, կազակները, բոլորը ձիաւորված էին, կրելով ձեռքներում ջահեր: Կինս հագած ունէր կարմիր թաւիշեայ մուշտակ, պատած սպիտակ աքիսի մորթով: Բռնում եմ նրա ձեռքից և ուսի վրա տանում եմ կառքի մէջ: Բոլորը սկսում են ուրախութեան աղաղակներ բարձրացնել. կատարեալ իշխանուհի էր նա: Նա նստում է արջի մորթիի վրա և իր փոքրիկ ոտիկները դնում է նրա գլխին: Բոլորն էլ իրանց ձիաները վազեցնում են մեր ետևից. և այսպէս տանում եմ իմ տիկնոջը իմ տունը: Ո՛րքան սարսափելի յիմարութիւններ են գրում գերմանական գրքերի մէջ երկնային սիրոյ մասին և մի ինչ-որ հոգեկան խոնարհման մասին կոյսի առջև:

—Ինչպէս ասաց Շիլլերը…

—Ի սէր Աստուծոյ, միթէ դուք կամենում էք մէջ բերել պարոն ֆօն-Շիլլերի ոտանաւորները:

Աղաչում եմ ձեզ, խնայեցէք ինձ:

—Միայն նրա գեղեցիկ ասածներից մէկը…

—Խնդրում եմ, ազատեցէք ինձ դրանից:

«Գօտիի և քօղի հետ
Թռչում է և ցնորքը:»

Ճառեցի ես առանց ցաւակցելու իմ խօսակցին:

—Մի անգամ գոնէ ուղիղ է խօսել այդ պարոն ֆօն-Շիլլերը,—ասաց կալուածատէրը,—գեղեցիկ ցնորք: Դա կունենար մի որ և իցէ իմաստ, եթէ կոյսը լինէր արարչագործութեան պսակը, և եթէ սէրը լինէր այն սքանչելի-անմիտ զգացմունքը, որը կարող էր ներշնչել մի այսպիսի կոյսը: Եւ իմ ցնորքը միանգամից յօդս ցնդեցաւ: Ես միայն այն ժամանակ վստահութեամբ սիրեցի Նիկօլային և նա ինձ, երբ որ նա դարձաւ իմ կինը: Այն ժամանակ միայն նա կօրսէտի հետ թօթափեց իրանից այն բոլորը, ինչ որ սահմանված էր նրա համար սովորութիւններով և պատշաճի կանօններով, և իմ սէրը աճում էր նրա սիրոյ հետ, աճում էր, անդադար աճում էր: Իմ սէրը և նրա սէրը աճում էին, որպէս երկուորեակներ: Քանի որ Նիկօլան օրիորդ էր, ես նրա ձեռքերն էի համբուրում, իսկ երբ իմ կինը դարձաւ, սկսեցի համբուրել ոտները, և երբեմն կծում էի նրանց այնպէս, որ նա աղաղակում էր և կոխում էր իմ երեսը: Մտածեցէք, աղջիկը հօտարուկ է ծննդական տան մէջ: Հայրերից ո-

մանք նրանց հաշւում են իրանց անշարժ կայքերի թւում։ Բայց կինը—նա կարող է ամեն րոպէ ձգել ինձ։ Ուղիղ չեմ ասում։ Միթէ նա նոյնպէս ընտրութեան իրաւունք չունի, ինչպէս ես։ Ի՞նչ էք մտածում դուք ամուսնութեան մասին։

—Ամուսնութիւնը է սէր կնոջ և տղամարդի մէջ, ես հասկանում եմ ամուսնութիւնը, որպէս բնութեան օրէնք։

—Շնորհ արէ՛ք, քննեցէ՛ք փոքր ինչ մեր կեանքը… Որպիսի՜ երևելի երգ է…

Նա սկսեց մի րոպէի չափ ականջ դնել գիշերային պահապանի երգեցողութեանը։

—Եւ նրա մէջ միշտ մի և նոյն եղանակն է լսվում… Նայեցէ՛ք, գերմանացիք ունեն Ֆաուստ, տարակոյս չը կայ, որ անգլիացիք նս ունեն իրանց գիրքը։ Իսկ մեզ մօտ ամեն մի գռեհիկ այդ գիտէ առանց գրքի։ Նա, կարծես թէ, նախազգացութեամբ հասկանում է, թէ ի՞նչ բան է կեանքը։ Ի՞նչու մեր ժողովուրդը հակումն ունի դէպի մելամաղձոտութիւն։—Երկրի տափարակ դրութիւնից։ Հարթ երկիրը, ինչպէս մի լայնածաւալ ծով, արտաղեղվում է, և ծովի նման ալեկոծվում է, երբ նրա մէջ շառաչում է անզսպելի հողմը, որին անհնար է ոչինչով կանգնեցնել։ Երկինքը խորասոյզ է լինում նրա մէջ, ինչպէս և ծովի մէջ, նա լուռ է մնում, ինչպէս յաւիտենականութիւն, և անհասանելի է, ինչպէս ինքը բը-

նութիւնը։ Ամեն կողմից նա շրջապատում է մարդուն։ Մարդը շատ կը ցանկանար խօսակցել նրա հետ և ստանալ պատասխան նրա մասին, ինչ որ վրդովեցնում է իրան։ Նրա երգը նման է հիւանդոտ հառաչանքի, որը դուրս է թռչում կուրծքից և, ոչինչով չը մխիթարված, հանգչում է, որպէս հեծութիւն։ Այն ժամանակ մարդը սկսում է նեղվիլ։ Արդեօք բնութեանն է պատկանում ինքը։ Արդեօք նա է ստեղծել իրան։ Թէ ինքը միայն առժամանակ ստորադրված է բնութեանը։ Արդեօք ինքը չէ՞ թողել նրան։ Թէ բնութիւնը ինքը հեռացրել է մարդուն իրանից։ Բնութիւնը լուռ է մնում։ Նրա գերեզմանից բուսնում է ծառ. ճնճղուկները ճլվլում են նրա ճիւղերի վրա։ Արդեօք այդ պատասխան չէ՞ մարդու հարցերին։ Նա նայում է մրջիւնների վրա. ամբողջ երամներով քարշ են տալիս նրանք դէպի առաջ և դէպի յետ իրանց ձուաները տաքացած աւազի վրայով—միթէ այսպէս չէ՞ և նրա սեպհական աշխարհը։ Ունայն փութաջանութիւն անձուկ տարածութեան մէջ, անվաստակելի աշխատանք ոչինչի համար։ Նա զգում է, կամ ինքը մոռացված է, կամ ամեն րոպէ կարող են մոռանալ նրա գոյութեան մասին։ Այն ժամանակ կնոջ շրթունքով բնութիւնը ասում է նրան. դու իմ զաւակն ես. դու ոչ սակաւ քան թէ մահից՝ վախենում ես ինձանից, բայց այստեղ ես մի և նոյնն եմ, ինչ որ դու ես։ Ե՛կ

ինձ մօտ, ես կը գրկեմ քեզ, ես սիրում եմ քեզ, Եկ, մի՛ մերժիր գործ ունենալ կեանքի հանելուկների հետ, որոնք այդպէս սաստիկ վրդովեցնում են քեզ: Ե՛կ, ես սիրում եմ քեզ...

Նա փոքր ինչ լռեց, յետոյ կրկին շարունակեց իր պատմութիւնը:

—Մենք բախտաւոր էինք, ես և Նիկօլան: Ապա մի տեսնէիք դուք, թէ ինչպիսի հրամաններ էր տալիս նա, երբ մեզ մօտ հաւաքւում էին մեր ազգականները կամ հարևանները, և ինչպէս սպասաւորները հնազանդւում էին նրան: Ծառաները աւելի ուրախ կը լինէին թաղչիլ, ինչպէս բադերը ջրի մէջ, երբ նա մտիկ էր անում նրանց վրա: Միանգամ փոքրիկ կաղակը վայր է ձգում տասներկու հատ ափսէներ. նա ափսէները դիզել էր միմեանց վրա և տանում էր, պահելով նրանց իր կզակով, յանկարծ բոլորը ցած է ընկնում յատակի վրա: Կինս խլում է մեխից քարշ ընկած մըտրակը.—եթէ տիրուհին կը մտրակէ ինձ, ասում է նա, այսպէս ես ամեն օր վայր կը գցեմ տասներկու հատ ափսէներ,—հասկանո՞ւմ էք դուք,—և երկուսն էլ ծիծաղում են: Մեզ մօտ էին լինում և հարևանները: Երբեմն գալիս էր պաշտօնից հրաժարված լէյտենանտ Մակը. նա Շիլլերը անգիր գիտէր, իսկ մնացած բաներում լաւ մարդ էր: Միայն մի դժբախտութիւն ունէր, որ սաստիկ խմում էր: Այդ բաւական չէ, որ երբեմն հարկա-

դրված էինք թաղցնել նրան թախտի տակ, բայց մտածեցէք, այդ կարճլիկ, հաստլիկ և կարմիր մարդը, յանկարծ, առանց որ և իցէ շարժառիթի, կը կանգնէր սենեակի մէջտեղում և կը սկսէր ճառական եղանակով կարդալ, օրինակ, «Կռիւը Դրակօնի հետ»: Իսկ երբ զգաստութեան մէջ էր գտնվում, երևակայեցէք, կը պատմէր մեզ Ֆրանսիական բոլոր պատերազմները: Ինքներդ դատեցէք, ինչ կարելի էր անել այդ դէպքում: Գալիս էր մեզ մօտ նաև բարօն Շէբիկը: Ճանաչո՞ւմ էք նրան: Նրան, ի միջի այլոց, երբեմն կոչում էին պառաւ Շէբիգ, Սօլօմօն Շէբիգ: Նա առաջ հրեայ էր, ման էր գալիս բօղչայով, առնում էր և վաճառում էր ամեն բան, ինչ որ պատահում էր, յետոյ պարապվում էր զօրքերին հաց մատակարարելով, վերջը գնեց կալուածներ և կոչեց իրան Շէբիգշտէյն: Եթէ կան այնպիսիները, ասում էր նա, որ կոչվում են Լիխտենշտէյն, ուրեմն ինչու ես չեմ կարող կոչվել Շէբիգշտէյն: Իսկ որդին արդէն դարձաւ բարօն Րաֆայէլ Շէբիկը: Անդադար ծիծաղում էր: Դուք ասեցէք նրան. շնորհ արէք, այցելեցէք ինձ մօտ,—նա կը ծիծաղի. ասեցէք. ահա քեզ դուռը, գնա՛,—նա դարձեալ կը ծիծաղի: Ամեն մի գեղեցիկ կնոջ համար պատրաստ է հագուստ բերել տալ Բրօդից և շալ բերել տալ Փարիզից. միշտ խմում է միայն ջուր. իւրաքանչիւր օր ընդունում է գոլորշիացրած բա-

ղանիք և երբէք չէ մոռանում երեսը խաչակնքել ապուրը ուտելուց առաջ և ճաշելուց վերջը։ Յետոյ ազնուական Գոմբիսսկի, մի բարձրահասակ լեհացի, կարմրած աչքերով, թառամած բակենբարդներով և դատարկ գրպաններով. անդադար նուիրատուութիւններ է հաւաքում յօգուտ աղքատ պանդուխտների, ուժգին կը սեղմէ ձեզ իր կուրծքի վրա, հէնց որ կը տեսնէ ձեզ երկրորդ անգամ. ամեն մարդու թեքից կը բռնէ և կը հաւատայ նրան լեհական դաւադրութեան բոլոր գաղտնիքները. երբ որ գլուխը կը տաքանայ, կը գոչէ. «կեցցէ, Լեհաստանը կորած չէ, սկսենք սիրել միմեանց»,—և կը խմէ գինի կնոջ կեղտոտ կօշիկներով։ Բարձրապատիւ Մացիկը, գիւղական քահանայի տիպը, միշտ ունէր նա մխիթարական խօսքերի առատ պաշար, երբ պատահում էր ծընունդ, մահ կամ հարսանիք։ Իսկ ամենից առաւել բարեբանում էր նա ի Տէր հանգուցեալներին։ Երբ որ նրան պէտք էր լինում, որ հաւատային իր խօսքերին, միշտ ասում էր «հուր մաքրութեան», ինչպէս ուրիշները ասում են «Աստուած վկայ» կամ «ճշմարիտը գիտենայ»։ Մէկն էլ գիտնական Կուտերնօգա, որը ամբողջ տասերկու տարի պատրաստվում է դօկտորի քննութիւն տալու, երևակայեցէ՛ք,—փիլիսօփայութեան դօկտորի։ Գալիս էր և կալուածատէր Լևոն Բօդօչկանը, որը մի բարեսիրտ մարդ էր, և ուրիշ մշտաուրախ ազ-

նուականներ,—դրանք բոլորը շատ յարգում էին իմ կնոջը։ Գալիս էին նրա մօտ և ծանօթ կանայք, որոնք շատախօսում էին, նազելի կերպով ժպտում էին, ամեն րոպէ երդվում էին, իսկ յետոյ—մենք հօ գիտենք այդ բոլորը։ Եւ այսպէս, մենք լաւ ժամանակ էինք անցկացնում մեր հարևանների հետ, և ես հպարտանում էի իմ կնոջով, երբ որ հիւրերը խմում էին նրա կենացը և գրում էին նրա անունով ոտանաւորներ։ Նա ինքը այնպէս նայում էր նրանց վրա, կարծես թէ, կամենում էր ասել. ինչու համար էք դուք ամենքդ այդպէս նեղութիւն կրում, առանց ձեզ էլ մենք միշտ ուրախ ենք։

—Մի այնպիսի մեծ կալուածք, շարունակեց իմ խօսակիցը,—ձեզ յայտնի է, որ կունենայ շատ հոգսեր և շատ էլ ուրախութիւններ։—Մենք ինքներս կը սկսենք կառավարել, յայտնեց կինս, մեզ պէտք չեն մինիստրներ։—Մինիստրներն էին՝ հաւատարմատար Կրամուլինսկին, մի ծերունի լեհացի, երևելի մարդ, ասում եմ ձեզ, նա չունէր ոչ մի մազ գլխի վրա և ոչ մի հաշիւ, որ կարգին լինէր, և յետոյ անտառապետ Կրէյգելը, ինչպէս տեսնում էք, գերմանացի, կարճահասակ, փոքրիկ աչիկներով, թափանցիկ ականջներով և մեծ ախտակ շնով։ Կինս լաւ էր լծել դրանց։ Ես կարծում եմ, թէ նա չէր խնայի մորթել և դրանց, եթէ դրանք կուրօրէն հպատակելու չը լինէին ի-

րան։ Բայց գիւղացիները պաշտում էին մեզ։ Պատահում էր, որ գնում էինք դաշտերը ման գալու, ամէն կողմից լսում էինք. Թող Աստուած օրհնէ ձեզ։ Ո՛րքան ուրախանում էր մեր սիրտը, հաւատացնում եմ ձեզ։ Իսկ երբ ժամանում էր հունձքի տօնախմբութեան օրը, բոլորը բազմութեամբ գալիս էին և խմբւում էին մեր բակում։ Կինս կանգնում էր պատշգամբի վրա, և հնձւորները դնում էին նրա ոտների մօտ հասկերից հիւսած մի պսակ։ Սկսւում էին ուրախաձայն աղաղակներ, երգեր և պարեր։ Կինս հրամայում էր լցնել իր համար մի բաժակ գինի և խմում էր հնձւորների կենացը։ Հաւատո՞ւմ էք, թէ ոչ, գիւղացիները համբուրում էին նրա ոտները։ Սկսեց նա ման գալ ձիով։ Պատահում էր, որ փոխանակ ասպանդակի ես առաջարկում էի նրան իմ ձեռքը, նա ոտքը դնում էր և մի ակնթարթում թռչում էր թամբի վրա։ Նրա գլխին դրած էր լինում կազակի գտակ, ոսկեայ փունջը ծածանվում էր թիկունքի վրա, ձին խրխնջում էր, ռունգները ուռցնում էր, երբ նա ձեռքով փայփայում էր նրան։ Յետոյ ես սովորեցրի նրան հրացան արձակել։ Ես ունէի մի փոքրիկ հրացան, որով ես ճնճղուկներ էի վայր գցում, երբ ինքս նոյնպէս փոքրիկ էի։ Նա ուսից քարշ էր գցում այդ հրացանը և միասին գնում էինք որսորդութեան։ Նա խիստ յաջող կերպով կարողանում էր գնդակահարել

լորերին, շատ յաջող, հաւատացնում եմ ձեզ։ Ահա թռչում է անտառից բաղէն. նա յափշտակում էր մեր վառեակներին, մինչև անգամ յափշտակեց Նիկօլայի սիրելի Թխսմայրին, որը գոյնով սև էր և գլխին սպիտակ խօպօպիկ ունէր։ Ես մի քանի օր ծածուկ հսկում էի նրան—անշուշտ նա էլ սպասում էր ինձ։ Միանգամ վերադառնում էի կարտոֆէլի արտից, տեսնում եմ, բաղէն հէնց այնտեղ է ու այնտեղ, աղաղակում է և պտոյտներ է գործում բակի մէջ։ Ինձ մօտ հրացան չունէի, և ես միայն անիծում էի նրան։ Լսելի է լինում հրացանի ձայն։ Բաղէն օդի մէջ շուռումուռ է գալիս և ընկնում է գետնի վրա։ Ո՞վ արձակեց հրացանը։—Կինս։—Այժմ այլ ես նա չի յափշտակի իմ հաւերին, ասում է նա և մեխում է բաղէին բակի դռան վրա։

Գալիս է վաճառականը, կարգով բաց է անում իր վաճառքը։ Բոլորը շատ լաւ է, էժան է, նոր մօդայի համեմատ է։ Ի՛նչպէս սկսում է բազար անել կինս։ Հրէան միայն հառաչանքներ է արձակում։—Խիստ էք, տիրուհի, ասում է նա և համբուրում է նրա արմուկը։ Գնում եմ ես քաղաքը։ Տեսնում եմ, ման է գալիս ազնուականների առաջնորդի կինը կապոյտ հագուստով, զարդարած սպիտակ խատուտիկներով։ Ես էլ առնում եմ կընոջս համար կապոյտ հագուստներ սպիտակ խատուտիկներով։ Իմ Նիկօլան կարմրում է։ Գնում

եմ ես Բրօղ, բերում եմ զանազան տեսակ թաւիշներ, մետաքսեայ գործուածներ, մաղեղէններ,— և ինչպիսի մաղեղէններ։ Նրա սիրտը թռթռում է ուրախութիւնից։ Եւ ինչ լաւ հագնվում էր նա։ Արժան էր ծունր իջնել նրա առջև։ Նա ունէր մոյգ-կանաչագոյն թիկնոց, մի սիրուն և քնքոյշ կանաչ գօտով, և սկիւռի մորթուց շրջապատով. մոխրագոյն սկիւռի շրջապատը մի թիզ լայնութիւն ունէր և Սիբիրեայի սկիւռներից էր։ Պատահում էր, որ երկար գիշերներում նա պառկած էր լինում գլւանի վրա, դնելով ձեռքերը գլխի տակ, իսկ ես նստած եմ նրա մօտ բազկաթոռի մէջ և լսելի ձայնով կարդում եմ նրա համար։ Բուխարու մէջ կրակը ճարճատում է, սամօվարը շնչում է, ծղրիդը ճռճռում է, մուկը մի ինչ-որ բան կրծոտում է անկիւնում, իսկ ծոյլ կատուն հանդարտ թաւալվում է գորգի վրա։ Ես կարդում եմ նրա համար ռօման։ Գաւառական քաղաքում, գիտէք, արդէն կար գրադարան, կամ վեր էինք առնում հարևաններից. երբեմն մէկի մօտ, երբեմն միւսի մօտ գտնվում էր մի բան կարդալու։ Նա կիսախուփ աչքերով պառկած է, իսկ ես նստած եմ բազկաթոռի մէջ, և մենք միասին կլանում ենք գիրքը։ Երբեմն նըստած էինք լինում մինչև խորին գիշեր, և անդադար շատախօսում էինք միմեանց հետ։ Եթէ գըրքի մէջ նկարագրվում էր մի որ և իցէ, իմանում

էք, այնպիսի վարմունք, Նիկօլան կարմրում էր, բարկանում էր, պառկած տեղից բարձրանում էր, ձեռքերը դնում էր ծնկների վրա և ասում էր ինձ. տես, այդպիսի բաներ պէտք է չը լինեն մեր մէջ, լսում ես,—և համարեա լաց էր լինում։ Կարծես թէ, ես գրած լինէի գիրքը։ Գիտէք, կանայք զարմանալի մեծահոգի են ռօմանների մէջ։ Երևակայեցէք, նրանք միշտ պատրաստ են իրանց անձը զոհել, երբ որ նրանց սիրած տղամարդը վտանգի մէջ է։ Միանգամ նկարագրվում էր մի տեսարան, որի մէջ կինը զոհում էր իր ամուսնին իր տղային ազատելու համար։ Պէտք է ասած, մի յիմար պատմութիւն էր. կարծեմ, գիրքը կոչվում էր «Մայրական սիրոյ զօրութիւնը», շատ յիմար գիրք, բայց իմ Նիկօլան տենդային դրութեան մէջ էր և երկար չէր կամենում նայել գրքի վրա։ Հէնց որ ես սկսում եմ կարդալ, նա խլում է ինձանից գիրքը, շպռտում է իմ երեսին և լեզուն ցոյց է տալիս։ Սկսում ենք այդ ժամանակ երեխաների նման վազվզել միմեանց ետևից։ Ես թագչում եմ դրան ետևում և վախեցնում եմ նրան։ Իսկ նա հնարում է իմ դէմ ուրիշ զանազան ֆանդեր։ Գնում է իր սենեակը և ասում է ինձ. երբ ես կը վերադառնամ, դու կը լինես իմ ստրուկը, նայիր, չը մոռանաս այդ։—Հագնվում է սուլթանուհու նման, կապում է շալէ գօտի, մի այլ շալից թիւր-

բէնդ է չինում գլխի վրա, խրում է գօտու մէջ իմ չերքէզի խէնջարը, փաթաթվում է սպիտակ սփածանելիքի մէջ, վերադառնում է իմ մօտ և սկսում է բռնակալի եղանակով հրամաններ կարդալ ինձ: Ի՛նչ կին էր: Աստուածութիւն, և ոչ թէ կին: Երբ նա քնում էր, ես ամբողջ ժամերով կարող էի նստել նրա մօտ և նայել, թէ որպէս շունչ է քաշում նա. իսկ եթէ նրա կուրծքից դուրս էր թռչում որ և է հառաչանք, իմ սիրտը սկսում էր մռմռալ, որպէս թէ ես նրա վերաբերութեամբ սաստիկ անիրաւութիւն գործած լինէի. յանկարծ տիրում էր ինձ մի անբացատրելի երկիւղ. ես երևակայում էի, թէ նա մեռաւ, թէ նա այլ ևս իմը չէ: Բայց երբ կանչում էի նրան, նա իսկոյն բարձրացնում էր գլուխը, լայն բացած աչքերով նայում էր իմ վրա և ժպտում էր: Սուլթանուհու դերը բոլորից աւելի յաջողվում էր նրան. ոչ մի մկնակ չէր շարժվում նրա երեսի վրա: Երբ ես ըսկսում էի հանաքներ անել, նա խոժոռում էր յօնքերը և աչքերով սաստում էր ինձ, այնպէս որ, ինձ թւում էր, թէ ես արդէն կապված եմ սիւնի վրա: Ի՛նչ պէտք էր արած, ես պէտք է խոնարհվէի, որպէս մի ստրուկ, և նա անում էր ինձ հետ ամէն ինչ, ինչ որ կամենում էր: Այսպէս ապրում էինք միմեանց հետ, և որպէս մի զոյգ ծիծեռնակներ, նստում էինք երկուսս միասին և ճլվլում էինք: Քաղցր յոյսը խոստանում էր մեզ

նոր ուրախութիւններ: Բայց ո՛րքան երկիւղ էի կրում նրա մասին: Ես փայփայում էի նրա ծամերը, և արտասուքը թափվում էր իմ աչքերից: Նա հասկանում էր ինձ, գրկում էր իմ պարանոցը և համբուրում էր: Այդ բոլորը պատահեց անսպասելի կերպով, ինչպէս մի բախտաւորութիւն: Ես չտապեցի բժշկին կանչելու, վերադառնում եմ, իսկ նա արդէն տալիս է իմ գիրկը իր նորամանուկին: Մեր ծնողների հրճուանքին չափ չը կար, մինչև անգամ սպասաւորները շատ ուրախ էին, բոլորը զուարճանում էին, ծիծաղում էին և բոլորը արբեցութեան մէջ էին գտնվում: Միայն կըռունկը համեստաբար կանգնած էր մարագի վրա և մտախոհութեան մէջ բարձրացնում էր իր ոտքը: Այնուհետև մեզ նոր հոգսեր աւելացան. պէտք էր մտածել, խնամք տանել մեր մանուկին, բայց ամէն մի հոգատարութիւն, ամէն մի բազմազբաղ ժամ աւելի ևս կապում էր մեզ միմեանց հետ: Բայց չը մնաց բոլորը այնպէս, ինչպէս որ էր...

Նրա ձայնը զգալի կերպով ցածանում էր, ինձ հասնում էին այժմ մեղմ, հանդարտ հնչիւնները միայն, որոնք նոյնպէս քնքշութեամբ սփռվում էին օդի մէջ, որպէս և նրա չիբուխի թափանցիկ ծուխը:

—Այն վիճակը չէր կարող մնալ այնպէս, ինչպէս որ էր. իմանո՞ւմ էք... ինչպէս բացատրեմ ձեզ: Այդ արդէն ընդհանուր կանոն է... Ես կա-

մնում եմ ասել, որ այդ հէնց բնութեան օրէնք է: Ես շատ անգամ խորհել եմ այդ մասին: Ես ունէի մի բարեկամ՝ Լեոն Բօդօշկան: Նա խիստ շատ կարդում էր և մտածում էր, այդ պատճառով էլ աւելի հալւում ու մաշւում էր: Նա ասում էր ինձ—բայց ինչ պէտք է ձեզ նրա ասածը: Ես չեմ կարող...

Նա դուրս հանեց մի քանի թղթի պատառներ, որ թաղցրած ունէր կուրծքի վրա, և որոնք դեղնել էին ժամանակից:

—Բօդօշկանը շատ էլ գրում էր: Թէև նա հըռչակված չէր, բայց կատարելապէս գիտէր ամեն ինչ: Նա այնպէս կը հասկանար ձեզ, որպէս թէ ձեր սիրտը դրած լինէր նրա առջև, ինչպէս մի լեռնային պարզ աղբիւր: Լինում էր, որ նա ժամացոյցի նման բաց կանէր մարդուն և կը նայէր, արդեօք նրա սիրտն ու հոգին կարգին էին, և իսկոյն կասէր, թէ ինչ էր խանգարված այնտեղ: Օրինակ, նա հասկանում էր, թէ ինչ են խօսում միմեանց հետ կատուները, և կասէր, թէ ինչ են ցանկանում նրանք: Երբեմն կը վեր առնէր ձեռքում մի ծաղիկ, կէս կը կտրէր նրան և կը բացատրէր, թէ ինչով է ապրում նա, կամ ինչով է սնանում: Նա մի առանձին յօժարութեամբ մեկնութիւններ էր տալիս կանանց մասին: Սիրում էր իր մտքերը արձանագրել թղթի վրա, յետոյ կը գնար իր համար անտառը և բոլորը դէն կը

գցէր: Կարծես թէ այդ գրված թուղթը վրդովեցնում էր նրա սիրտը: Բայց, որպէս զի չը մոռանամ, կասեմ ձեզ. նա միշտ ասում էր ինձ, թէ նա, որ կարող է իր սէրը նկարագրել թղթի վրա, ինքը չէ սիրում: Նա համբերութիւն ունէր մինչև վերջը կարդալ ամենամեծ գրքերը, ամբողջ Նեստորը, բայց փախչում էր սիրահարական նամակից:

Այդ միջոցին նա բաց արեց սեղանի վրա թըղթի մի քանի դեղնած պատառներ:

—Ոչ, այդ հաշւի ցուցակ է—և նա կրկին կոխեց իր ծոցը:—Ահա նրա գրածը:

Նա հազաց և սկսեց կարդալ:

—«Ի՞նչ է այն, որ կոչվում է կեանք:—Չարչարանք, տարակուսանք, երկիւղ և յուսահատութիւն: Ո՞րտեղից եկար դու: Ո՞վ ես դու: Ո՞ւր ես գնում:—Եւ չունենալ ամենափոքր իշխանութիւն անգամ բնութեան վրա, և չը լսել պատասխան այդ ողորմելի, յուսահատական հարցերի մասին: Մարդկային բոլոր իմաստութիւնը վերջ ի վերջոյ—ինքնասպանութիւն է: Բայց բնութիւնը ստեղծել է մեզ համար մի այլ տանջանք, որը աւելի վատ է քան թէ կեանքը: Այդ տանջանքը—սէրն է: Մարդիկ կոչում են նրան ուրախութիւն, զուարճութիւն»:—իմ բարեկամը այդ խօսքերի ժամանակ միշտ դառն կերպով ծիծաղում էր:—«Նայեցէք գայլի վրա, երբ որ նա որոնում է իր էգին.

Ինչպէս ուժգին թափով անցնում է նա անտառային խտութեան մէջ, լործունքը թափվում է նրա բերանից, նա չէ մռնչում, այլ կաղկանձում է.—մինչ դրանից յետոյ կարելի է սէրը զուարճութիւն անուանել: Դա մի կռիւ է, կռիւ կեանքի համար: Տէր Աստուած: Արդեօք ընդունակ չէ՞ և տղամարդը յարձակվել կնոջ վրա, ինչպէս իր թշնամու վրա: Մինչ նոյն ժամում չէ՞ իմանում և տղամարդը, որ ինքը գտնվում է իր անգութ թշնամու տիրապետութեան ներքոյ: Մինչ նա չէ՞ դնում կնոջ ոտների մօտ իր հպարտ գլուխը և մինչ ինքը չէ՞ աղաչում նրան՝ կոխ տուր ինձ, կոխ տուր քո ոտքով, ես պատրաստ եմ լինել քո ծառան, քո ստրուկը, բայց միայն ազատիր ինձ: Այո՛, սէրը տանջանք է, իսկ զուարճութիւնը—ոչ աւելի քան ազատութիւն: Նրանից յետոյ տղամարդը և կինը սկսում են մրցել միմեանց հետ. երկուսն էլ փորձում են իրանց իշխանութիւնը, և կնոջը սիրող տղամարդը անխուսափելի կերպով դառնում է նրա ստրուկը: Հասկանում ես, որ կինը վիրաւորում է քեզ, և նրա բռնակալութիւնից ու խստասրտութիւնից դու խեղդվում ես զուարճութեան մէջ: Համբուրում ես քեզ չարչարողի ոտքը: Իմ սիրած կինը երկիւղ է ազդում իմ վրա: Ես սարսափում եմ, երբ նա անսպասելի կերպով անց է կենում սենեակի միջով, և երբ ես լսում եմ նրա հագուստի խշխշոցը: Նրա ամեն մի անակնկալ

շարժումը վախեցնում է ինձ: Ցանկալի կը լինէր յաւիտեանս պսակվել նրա հետ, ոչ միայն այս, այլ և ապագայ աշխարհում, կը կամենայի հանապազ միացած լինել նրա հետ: Ընկղմում ես քո հոգին ուրիշի հոգու մէջ, մտնում ես ուրիշի թշնամական բնաւորութեան մէջ և ընդունում ես նրանից մկրտութիւն: Ծիծաղելի է թւում, շատ ծիծաղելի, որ մինչ նրա հետ չես եղել: Ամեն մի րոպէ դողում ես, չը լինի թէ կորցնես նրան: Վախենում ես, երբ նա խփում է աչքերը և երբ նկատում ես փոփոխութիւն նրա ձայնի մէջ: Եւ այսպէս փափագում ես նրա հետ լինել մի անբաժանելի էակ: Յօժարութեամբ արմատախիլ կանէիր քո բոլոր յատկութիւնները, մտքերը, կեանքի իդէալները, նրա համար միայն, որ կատարելապէս լուծվես ուրիշի էութեան մէջ: Անձնատուր ես լինում նրան, որպէս մի ստրուկ: Արա՛ դու ինձանից ամեն ինչ, ինչ որ ցանկանում ես: Ինչպէս ինքնասպանութեան մէջ, այնպէս էլ այստեղ, նետվում ես օտար բնաւորութեան մէջ, մինչև քո սեպհական բնաւորութիւնը չէ վրդովվում: Եւ ահա, յանկարծ սկսում ես դու սարսափի մէջ ընկնել, երբ մտածում ես, որ քո եսը անդառնալի կերպով կորչում է: Քո մէջ զարթնում է ատելութիւն դէպի օտար էակի իշխանութիւնը: Դու պատրաստ էիր մեռնելու, և յանկարծ քո մէջ յայտնվում է ցանկութիւն ընդդիմադրել այդ օ-

տար կեանքի բանակայութեանը, և նորից անձնիշխան դիրք ստանալ: Հէնց այդ է բնութեան յարութիւնը»:

Նա սկսեց որոնել թղթի մի այլ պատառ:

—«Տղամարդը ունի իր աշխատանքը, իր հայացքները, ձեռնարկութիւնները և նպատակները: Դրանք չեն դադարում նրա ուղեղը զբաղեցնելուց և, վերջապէս, նրա մտքերին բարձր թռիչքներ են տալիս: Դրանք թոյլ չեն տալիս նրան մշտապէս խորասուզվել օտարի բնաւորութեան մէջ: Իսկ կինը:—Նա օգնութիւն է աղաղակում: Նրա եսը չէ կամենում կորչել, չէ կամենում: Բայց օգնութիւն չը կայ: Եւ ահա նա կրում է իր սրտի ներքոյ օգնութեան նման մի բան, զգում է, թէ ինչպէս նա աճում է, շարժվում է, ապրում է: Վերջապէս նա բռնում է նրան իր ձեռքերի մէջ, բարձրացնում է նրան: Ի՞նչ է կատարվում այժմ: Արդեօք երազ չէ՞ այդ: Մանուկը շշնջում է նրան. ես նոյնն եմ, ինչ որ դու ես. դու ինքդ ապրում ես իմ մէջ. նայիր իմ վրա, և ես կը լինեմ քո փրկիչը:—Մայրը սեղմում է նրան իր կուրծքի վրա—և ազատված է: Այն ժամանակ, իր մանուկի մէջ, մայրը սկսում է հոգ տանել իր մասին և նայում է, թէ ինչպէս աճում է նա իր ծնկների վրա, և հետզհետէ տալիս է նրան իր ամբողջ հոգին, և ինքը կայան է գտնում նրա մէջ:»

Իմ խօսակիցը ծալեց իր բարեկամի այդ հա-

տուկտոր դատողութիւնները և կրկին թաքցրեց իր կուրծքի վրա. միանգամ ևս ձեռքով շօշափեց նրանց, կարծես վախենում էր կորցնել նրանց. յետոյ կոճկեց իր քափթանը:

—Մի և նոյնը պատահեց և ինձ հետ,—դարձեալ խօսեց նա,—կատարելապէս նոյնը: Ի հարկէ, ես չեմ կարող այնպէս լաւ արտայայտել այդ, որպէս Լեոն Բօզօշկանը, բայց, այսու ամենայնիւ, կը պատմեմ ձեզ, թէ ինչպէս պատահեց: Կամենում էք լսել շարունակութիւնը:

—Անտարակոյս:

—Կատարելապէս մի և նոյնը պատահեց և ինձ հետ, կատարելապէս մի և նոյնը:

Ցանկանալով գրգռել իմ նոր բարեկամին, ես սառնասրտութեամբ նկատեցի.

—Սովորաբար ասում են, որ զաւակը սիրոյ ճշմարիտ գրաւականն է:

Իմ խօսակիցը ընդարմացաւ: Նա զայրացաւ, որպէս թէ ես սաստիկ վիրաւորեցի նրան:

—Սիրոյ գրաւակա՜ն,—գոչեց նա,—այո՛, էլ ի՞նչ ասել կուզէ, սիրոյ փառաւոր գրաւական է:—Ահա ես վերադառնում եմ տուն: Մի այնպիսի տնտեսութեան մէջ, որպէս իմն էր, սակաւ գործեր չը կան: Վերադառնում եմ յոգնած, ինչպէս մի որսորդական շուն: Գրկում եմ կնոջս. նա ձեռքը քսում է իմ ճակատին, հարթում է գլխիս մազերը—և բոլոր հոգսերս անհետանում են: Ես կատուի

նման փաղաքշելով պտըտվում եմ նրա չուրջը, նա ծիծաղում է. յանկարծ լսում եմ, սիրոյ գրաւականը աղաղակում է,—մեր խաղը վերջացած է. ցանկանում ես սկսել նորից,—վերջացած է: Ամբողջ առաւօտը քարշ ես գալիս հաւատարմատարի հետ, տնտեսի հետ, անտառապետի հետ: Նստում ես ճաշելու, հէնց որ կապում ես սեղանի անձեռոցիկը,—ես միշտ կապում եմ նրան հին սովորութեան համեմատ,—և ահա աղաղակում է իմ սիրոյ գրաւականը: Կինս հեռանում է սեղանի մօտից և ծիծ է տալիս նրան: Փոքր ինչ անցնում է, նա դարձեալ ինչ-որ մի այլ պահանջ ունի,—կինս կրկին վազում է նրա մօտ, իսկ ես ստիպված եմ ճաշել միայնակ, և տխրութիւնից սկսում եմ սուլել մի որ և իցէ երգ: Այդ ժամանակ ցանկութիւն ես զգում տանից դուրս գալ գոնէ բաղեր գնդահարելու համար: Ամբողջ օր թափառում ես, մինչև ծնկներդ խրված ջրի մէջ, և ուրախութեամբ սպասում ես լաւ անկողնի: Ի՞նչ էք անուանում դուք, օրինակ, լաւ անկողին: Յայտնի բան է, լաւ դօշակ, փափուկ բարձեր, տաք վերմակ և գեղեցիկ կին:

Նա կարմրեց և ինչ-որ մրմնջաց:

—Այսպէս: Համբուրում ես քո նազելի կնոջ պարանոցը, ծոծրակը և կուրծքը, ձեռքդ սահեցնում ես նրա քնքոյշ, լիքը մարմնի վրայով, փայփայում ես նրան, յանկարծ—սիրոյ գրաւականը

աղաղակում է: Կինս դուրս է թռչում անկողնից, հողաթափները հագնում է և սկսում է յետ ու առաջ ման գալ սենեակի մէջ և օրօրել մանուկին: Մինչև կէս գիշեր անդադար լսում եմ ուա՜-ուա՜, վա՜յ-վա՜յ—և քնում եմ միայնակ: Այսպէս անցնում է մի տարի: Մեր չուրջը կատարվում է մի ինչ-որ տարապայման շարժում, օդի մէջ մի բան նշմարվում է: Ամէն ոք նկատում է այդ, բայց ոչ ոք հաստատապէս ասել չէ կարող, թէ ինչ է: Պատահում ես շատ անծանօթ անձինքների: Լեհական կալուածատէրները անդադար անցուդարձ են անում յետ ու առաջ: Մէկը ձիաներ է գնում, միւսը վառօդ: Գիշերը տեսնում ես երկնքի վրա մի կարմիր զօլ: Գիւղացիները խմբվում են պանդոկի մօտ և միմեանց հետ խօսում են, թէ պատերազմ պէտք է լինի, կամ խռովութիւն, և կամ խօլերա կը գայ: Սիրտդ սկսում է նեղվել: Յանկարծ մի բան զարթնում է հոգուդ մէջ, յիշում ես, որ դու հայրենիք ունես, թէև նրա սահմանները, այնպէս խորին կերպով կտրելով, ներս են մտնում սլաւօնական, գերմանական և ուրիշ երկրների մէջ: Այդ ինչ դաւադրութիւն են սարքում լեհացիները, ինչ են ցանկանում նրանք, մտածում ես քեզ ու քեզ և սկսում ես հոգ տանել այն արծուի մասին, որ դրած է նահանգային վարչութեան տան վրա, մտածում ես և քո սեպհական կալի մասին: Գիշերը պտըտվում ես

կալուածական տան չուրջը, նայում ես, արդեօք չէ՞ սպառնում քեզ որ և իցէ հրդեհարկութիւն։ Ցանկանում ես խորհրդակցել տեսածներիդ մասին։ Ո՞ւմ հետ, կնոջդ հետ։—Ի՞նչպէս չէ։ Սիրոյ դրաւականը բոլոր ուժով գուգուում է, նրա համար միայն, որ ճանճը նստեց նրա քթի վրայ։ Ես պատշգամբից նայում եմ. հորիզոնի վրա նշմարւում են կրակի կարմրափայլ ցոլացումներ. ցանկապատի մոտով ձիով անցնում է մի չինական և ձայն է տալիս ինձ. «խռովութիւն կայ»,—և առաջ է քշում իր նիհար ձին։ Մի այլ գիւղացի գնում է ճանապարհով մանգաղը ուսին դրած, ուրիշ երկուսն էլ գնում են շղթաներով։ Իմ բակում հաւաքվում է ամբողջ բազմութիւն. պարոն, մենք եկանք քեզ մոտ,—լեհացիք գալիս են։—Ես լցնում եմ ատրճանակս, հրամայում եմ սրել իմ թուրը, վազում եմ կնոջս մոտ և ասում եմ նրան. տուր ինձ մի ժապաւէն կամ մի որ և իցէ շորի կտոր գլխարկիս համար, միայն մոյգ-դեղնագոյն լինի։—Ուա՛-ուա՛, վա՛յ-վա՛յ։—Չէք հաւատում։—Հեռացիր այստեղից, գոչում է կինս, երեխան լաց է լինում, մեռնում է, շուտով գնա գիւղը, հրամայիր, որ դադարացնեն զանգահարութիւնը, դէ, գնա շուտով։—Ո՛չ, այժմ ներեցէ՛ք, ես կը հրամայեմ, որ զանգակները հարկանեն բոլոր գիւղերում, թող քո լածիրակը որքան ուզում է, աղաղակէ, պէտք է գիտենաս, որ հայրենիքը վտանգի մէջ է։

—Ա՛խ, ասում եմ քեզ...—Դէ, լաւ։ Վերջապէս, նա մի կերպով նստեց իմ մոտ։ Մենք նստած ենք թախտի վրա, և ես թեքս փաթաթած ունեմ նրա մէջքին։ Առանց այս և այն պատճառի, նա ըսկսում է ականջ դնել, արդեօք չէ՞ շարժվում երեխան։—Դու ինչ ասեցիր, հարցնում է նա, փոքր ինչ անցնելուց յետոյ։—Ոչինչ, պատասխանում եմ ես, ոչինչ,—բայց իմ սիրտը սկսել էր նեղվել, հաւատացնում եմ ձեզ։—Ո՞ւր է քո թիկնոցը, Նիկոլա։—Ա՛խ, մտածիր, ասում է նա, ինչպէս կարելի է թիկնոց հագնել, երբ երեխայ ունես։—Ի հարկէ։ Այդ ժամանակ մազերը միայն հարևանցի կերպով սանրվում են, հագնում են այն, ինչ որ պատահաբար ձեռք է ընկնում։—Երբեմն ես չեմ ճանաչում սիրուն դէմքդ։—Բայց երեխան... հասկանում ես, ասում է կինս։—Երբ ես հագուստս փոխում եմ, երեխան չէ ճանաչում ինձ, հասկանում ես, ինչ եմ ասում։—Ի հարկէ, բոլորը հասկանում եմ, սիրելիս։—Բայց երբ որ մեզ մոտ հիւրեր են լինում, այն ժամանակ երեխան կարող է և աղաղակել։ Այն ժամանակ նա մի րոպէ կը վազէ նրա մոտ և յետոյ հանգիստ կերպով կը սկսէ թէյ ածել, ծիծաղել և շատախօսել, ախար ինչ չեն անում հիւրերի համար։—Ահա դարձեալ հանդիսանում է կանաչ թիկնոցը, նկատում եմ նրան։—Պէտք է որ ես հագնված լինեմ հիւրերի համար։—Իմ խելքին փչեց միանգամ ես գնալ

արջի վրա: Ես մոտենում եմ կնոջս և մնաք բարեաւ եմ ասում: Նա օրօրում է երեխային, ինձ պատասխանելով. դէ գնա էլի, դու հօ չես թողնում, որ երեխան քնէ:—Ի հարկէ, ես շուտով հեռանում եմ: Իմ որսորդը մի արջի հետքը գտել էր... փոքր էր մնում, որ կրկին ձեզ առակ պատմէի... Կարճ կասեմ—որսորդը և ես, մենք երկուսս էլ, վտանգի մէջ էինք գտնվում: Գիւղացիներից մէկը առաջ վազեց, որ հաղորդէ այդ դէպքը: Մեր տան մէջ աղմուկ է բարձրանում, ասում եմ ձեզ: Մենք գալիս ենք—կինս նետվում է ինձ մօտ, գրկում է իմ պարանոցը, յետոյ քարշ է տալիս ինձ մօտ և երեխային: Արիւնը հոսում է իմ գլխից. երեխան սկսում է աղաղակել:—Կորիր այստեղից, գոչում է կինս:

Նա զզուանքով չարժեց ուսերը:

—Արժէր արդեօք խօսել արեան և խեղճ երեխայի արտասուքի մասին, չէ՞ որ վտանգը անցաւ,—կանայք այսպէս գործնական են: Լաւ, ես լուանում եմ արիւնը: Որսորդը փաթաթում է իմ գլուխը,—նա պաշտօնաթող զինուոր էր: Բայց, հաւատա՞ւմ էք արդեօք, սիրոյ զրուականը, տեսնելով իմ գլխի սպիտակ փաթոթը, նորից աղաղակ է բարձրացնում:—Դուրս, դուրս այստեղից, երեխան վախենում է:—Էլ ինչ էր մնում անել: Ընկնում եմ անկողնի վրա և միայնակ պառկում եմ, ինչպէս լինում էր այդ ամուսնութիւնից ա-

ռաջ: Թող սատանան տանէ սիրոյ այդ զրուականը: Տէր Աստուած, ներէ՛ իմ յանցանքը:

Նա խաչակնքեց երեսը, բարկացած կերպով թքեց և ապա շարունակեց.

—Ես սպանված արջի մորթը փռում եմ կնոջս մահճակալի առջև: Ի՞նչ էք կարծում:—Նա ճչաց.—Կորիր դու էլ քո մորթի հետ, նա յիշեցնում է ինձ երեխայի երկիւղը:—Մտածեցէք, ապա իմ արիւնը, վտանգը, դրանք ոչինչ: Ո՛րքան գործնական են այդ կնիկները, զարմանալի գործնական են:

—Թոյլ տուեցէք մի րոպէ ընդմիջել ձեզ,—ես դիմեցի իմ խօսակցին,—դուք չասեցիք ձեր կնոջը...

—Ներեցէք, համարեա զայրացած կտրեց նա իմ խօսքը և նրա աչքերը լայնացան:—Ես ասեցի նրան: Բայց գիտէք, թէ ինչ պատասխանեց ինձ:

—Լաւ, ուրեմն ինչ հարկաւոր են այն ժամանակ որդիները:—Երևակայեցէք, նա պատրաստ էր մինչև անգամ...—ահա թէ ինչու դառնում ես կնոջ ստրուկ: Ցանկանու՞մ ես դաւաճանել նրան:—Ոչ:—Ցանկանու՞մ ես ապրել ինչպէս կուսակրօն:—Դարձեալ ոչ: Էլ ինչ է մնում քեզ անել, եթէ ոչ, թոյլ տալ, որ նա ոտքի տակ առնէ քեզ: Հաւատացէք, լինում էին այնպիսի րոպէներ, որ ես պատրաստ էի իմ երեխային... հասկացէք, ինչ եմ ասում... օրինակ, միանգամ

պատահեց այսպիսի տեսարան: Առաւօտեան ես ծխում էի իմ տաճկական երկայն ծխաքարշը, որը հէնց դրա նման էր, միայն ունէր մաֆթուլից հիւսած կալփակ:—Երեխան լաց է լինում, տուր նրան ծխաքարշը: Ինչքան ուզում է, թող աղաղակէ, մտածում եմ ինձ ու ինձ: Բայց կինս արդէն տենդային դրութեան մէջ է:—Տուր նրան, ասում են քեզ, ծխաքարշը,—նա կարծում է, թէ չիբուխ է: Ես տալիս եմ երեխային տաքացած ծխաքարշը, նա բռնում է և աւելի սաստիկ ըսկսում է աղաղակել:—Աստուած իմ, խեղճ երեխայ: —Ես վեր եմ առնում հրացանը, գնում եմ դաշտը, ցանկանալով կնոջս, որ ուրախ անցկացնէ ժամանակը: Ես էլ, կարծես թէ, ուրախ էի, որ նա մնաց երեխայի հետ, որը ամբողջ օր պէտք է լաց լինէր: Իմ բնաւորութիւնը զգալի կերպով փոխվում էր: Ի՞նչ պէտք է արած, բնաւորութիւնը ակամայ փչանում է: Անում ես, ինչ որ կարող ես,—մտածեցէք, խնդրեմ,—օրինակ... Պատահել է ձեզ որ և իցէ ժամանակ, որ յանկարծ, առանց պատճառի, կանգնէր ձեր ծոցի ժամացոյցը: Կամ պատի ժամացոյցը: Պատահել է:—Ասեցէք, դուք անհամբեր էք:

—Երբեմն:

—Լաւ: Եւ այսպէս, դուք անհամբեր էք: Դուք կամենում էք, որ ժամացոյցը իսկոյն սկսի բանել. դուք չարժում էք նրան, չարժում էք ճօ-

ճանակը. լաւ, սկսում է բանել, բայց երկար է տեւում այդ:—Կրկին կանգնում է. դուք միանգամ ևս չարժում էք ճօճանակը, բայց ժամացոյցը դարձեալ կանգնում է. դուք սկսում էք համբերութիւնից դուրս գալ, չարժում էք աւելի սաստիկ կերպով—բոլորովին կանգնում է: Մի և նոյն փորձն ես անում, երբ աշխատում ես վերադարձնել քո սրտի կանոնաւորութիւնը,—կատարելապէս մի և նոյնը: Ահա սիրում ես քո կնոջը և չես բաւականանում միայն հանգիստ անկողնով: Հասկանում էք, զգում ես մի տեսակ ցաւի նըման բան, երբ սաստիկ փափագ ունես դէպի կինը: Բայց դրանից յետոյ բանը պռծած է: Այդ ժամանակ միայն կը հասկանաս, որ դու ազատված ես,—և աւելի ոչինչ. կը հասկանաս, որ իսկապէս այդ ունայն է, որ կայ մի ուրիշ բան, բոլորովին ուրիշ բան, աւելի բարձր, թէ այր և կինը աւելի գերազանց են, քան թէ գայլը և նրա էգը: Բայց այդ բոլորը ի զուր է: Երևակայեցէք, որ կինը մի և նոյնն է, ինչ որ է մի գիրք: Ես յօժարութեամբ կը կարդայի նրան մինչև վերջը, բայց ես ստիպված եմ միշտ նորից սկսել նրան: Վերջապէս, ես փակում եմ նրան: Թող մինչև վերջը կարդայ նա, ով որ կամենում է: Սկզբում, հասկանում էք, ես միայն ցանկանում էի ցրվել իմ հոգսերը: Մեր մերձակայքում կանգնած էին գուսարներ: Ես ծանօթացայ օֆիցերների հետ:

Ի՛նչ մարդիկ էին։ Օրինակ, Բօնէյ, ճանաչո՞ւմ էք նրան։

—Ոչ։

—Կամ պարոն Պօլը,—դարձեալ ո՞չ։ Բայց Բամետէյին սուր բակենբարդներով, երևի, կը ճանաչէ՞ք։ Ես գնում էի երբեմն մէկի, երբեմն միւսի մօտ, և նրանք համարեա ամեն օր այցելում էին ինձ։ Պատահում էր, որ նստած էինք լինում սամօվարի չուրջը, ծխում էինք, մեզանից ամեն մէկը պատմում էր մի որ և իցէ անցք, յետոյ ըսկսում էինք թուղթ խաղալ։ Երբեմն միասին գնում էինք որսորդութեան։ Այդ ժամանակ ես սովորեցի գնդակահարել բեկասներին։ Կինս նկատում էր իմ կեանքի նոր եղանակը։ Միանգամ հանդիսաւոր կերպով նստում է իմ մօտ, սկսում է նկատողութիւններ անել։ Ես միայն ասեցի նրան. սիրելիս, ի՛նչ ուրախութիւն է ինձ նստել տանը, լսո՞ւմ ես, քո երեխան լաց է լինում։—Գուսարների միւսանգամ գալու ժամանակ Նիկօլան հագնում է իր կանաչ թիկնոցը, պատած սկիւռի սպիտակ մորթի հաշիայով, սանրվում է մօդայի համեմատ և դուրս է գալիս մեզ մօտ։ Ինձ ծիծաղելի էր թըւում այդ։ Երևի, նա մտածել էր գրգռել իմ խանդոտութիւնը։ Նա պտոյտ էր գալիս հիւրերի չուրջը, հանաքներ էր անում և ամենևին չէր նայում իմ վրա։ Իմ գուսարները, գիտէ՞ք, նախ, տարակոյս չը կայ, որ ազնիւ տղամարդիկ էին, երկ-

րորդ, ոչ ոք նրանցից չէր կամենայ—և ինչու համար,—մեռնել իմ ձեռքից կամ վտանգի մէջ ընկնել, և գուցէ յաւիտեանս լինել հաշմանդամ,—ինչու համար։ Եթէ կնոջդ չես սիրում, ուրեմն մի և նոյն չէ՞, այսպէս կամ այնպէս։ Բայց նըրանք սկսում են ջղայնացնել ինձ։—Քեզ ինչպէս է թւում, եղբայր, չէ՞ որ քո կինը սիլի-բիլի է անում մեզ հետ։—Իսկ դուք սիրախօսեցէ՛ք, որքան կամենում էք։—Իրաւացի չէր իմ ասածը։ Բայց այդ միջոցին սկսեց մեզ մօտ գալ մի ուրիշը... նա—դուք նրան չէք ճանաչում։ Հէնց առաջին վայրկեանից այդ մարդը զզուանք ազդեց իմ մէջ. նա բաց-շիկագոյն մազերով և շատ լուսաւոր մի կալուածատէր էր։ Ամեն օր իր սենեկապետին ստիպում էր, որ իր մազերին գանգուրներ տայ. բարձր ձայնով կարդում էր Պուշկինը և նոյն միջոցին ձեռքը նրա եղանակով շարժում էր,—կատարեալ խեղկատակ էր, ասում եմ ձեզ։ Եւ այսպէս, նա անհաճոյ էր թւում ինձ։ Բայց նա հաճելի եղաւ կնոջս։ Նրա ձայնը բոլորովին խուպոտ էր։ Որքան աւելի կիրքը բորբոքվում էր նրա մէջ, այնքան նրա ձայնը խլանում էր, խեղդվածի նըման էր դառնում, կարծես թէ, դժուարութեամբ էր դուրս թռչում կուրծքից։ Բայց այդ մասին յետոյ։ Այդ ժամանակ մեր օրերը ուրախ էին անցնում։ Ձմեռը հարևանները սկսեցին իրանց կանանց հետ գալ մեզ մօտ, կառքով զբօսանք-

ներ էին անում, պար էին գալիս, զարդարվում էին: Յետոյ, գարնանը, ծնվեց երկրորդ տղան, դարձեալ արու,—երկուսն էլ արու էին: Միաբանութիւնը մեր մէջ կրկին վերականգնեց: Միանգամ ասում եմ Նիկօլային (ես նստած էի նրա անկողնի մօտ և ծածկում էի նրան, երբ նա անհանգիստ կերպով թաւալվում էր) խնդրում եմ, խղճա ինձ, վարձիր մի ծծմայր քո տղայի համար:—Նա բացասական կերպով շարժեց գլուխը: Իսկ ես ինչ եմ անում: Արտասուքը դուրս ցայտեց իմ աչքերից և ես դուրս փախայ սենեակից: Բոլորը ի զուր էր. Նիկօլան ամբողջ տարի միշտ զբաղված էր իր երեխայով: Մենք մինչև անգամ խիստ հազիւ էինք խօսում միմեանց հետ: Փոքր առ փոքր մինչև այնտեղ հասաւ, որ ինձ պէտք էր մի բան հնարել, թէ ինչ խօսեմ նրա հետ, իսկ նա սկսեց ձանձրանալ իմ ներկայութիւնից: Ես սկսում էի յօրանջել, իսկ նա սկսում էր նիրհել: Զարմանալի է, թէ ինչպէս հեշտութեամբ այդ ժամանակ ծագում էին մեր մէջ կռիւներ և հակաճառութիւններ: Իսկ կինս միշտ իրան էր արդար համարում: Երբ ես գովում էի այս կամ այն ծառային, իսկոյն նա դուրս էր վռնդում նրան տանից: Շատ բնական է, որ դրանից յետոյ մեր մէջ անախորժ տեսարաններ էին կատարվում: Կամ, ես գտնում էի, որ կապոյտ թաշկինակը աւելի սազ է գալիս նրա դէմքին: Հետև-

եալ կիրակի տեսնում էի, որ մեր պառաւ տընտեսուհին ժամ է գնում նրա թաշկինակը գլխին կապած: Եւ այդ բոլորը կատարվում էր օտարների ներկայութեամբ: Որքան անախորժ բան է: Հօ չես ուզի, որ կինդ մեղաւոր համարվի, ախր դու տղամարդ ես: Իսկ եթէ նա դիտմամբ սկսում է ուրիշներին պաշտպանել: Միթէ բոլորն էլ արդար են, բացի ինձանից: Ի՞նչ կասէք դրան:

Նա զայրացած կերպով թքեց միւս կողմը:

—Կամ ես ասում եմ նրան. սիրելի Նիկօլա, խնդրում եմ, այդ բանը մի արա, խնայիր ինձ:—Ի՞նչ բան: Միւս անգամ նա լուռ է մնում, ինչպէս փրփուր:—«Ի՞նչ կասէք դուք, տիկին»:—Ես... ես կասեմ այն, ինչ որ այրս կասէ:—Ա՛խ, սատանայի չարամտութիւն: Կարծես, ես ստիպում լինէի նրան, հասկանում էք, մի և նոյնը մտածել ինձ հետ: Ա՛խ, երբոր յիշում եմ ես բոլորը, ինչ որ լինում էր: Մի խօսքով, չեմ հասկանում, թէ ինչպէս ես դիմացայ այդ տանջանքներին: Յանկարծ ես սարսափելի կերպով տանուլ տուի: Վէր եկած գումարը մեծ էր, և շատ բնական էր, որ ես անբախտ կը լինէի խաղի մէջ: Եւ այսպէս, ես միանգամից կորցնում եմ իմ պատրաստի փողերը, ձիաները և կառքերը:

Այդ խօսքերը ասելու ժամանակ նա բոլոր սրտով ծիծաղեց:

—Լաւ: Ես բռնում եմ իմ գլուխը և ասում եմ.

դա զզուելի է: Պատուաւոր կերպով վճարում եմ պարտքս և հեռանում եմ իմ խաղընկերներից: Բոլորն էլ դադարում են մեզ մօտ յաճախելուց: Գալիս էր միայն նա: Նրա այցելութիւնները չէին վրդովեցնում իմ հանգստութիւնը: Այդ ժամանակ ես անձամբ սկսեցի պարապվել իմ տնտեսութիւնով: Բախտը ժպտում էր դէպի ինձ, և երբ որ տեսնում ես, ինչ որ ցանել ես, լաւ աճում է, այդպիսի դէպքերում ակամայ հրապուրվում ես քո գործով: Տնտեսութիւնը նմանապէս մի տեսակ խաղ է: Ինչպէս խաղի մէջ, այնպէս էլ տնտեսութեան մէջ, պէտք է մարդ իր համար ծրագիր կազմէ, պէտք է յարմարվի հանգամանքների հետ, իսկ յետոյ, ոչ սակաւ նշանաւոր դեր են խաղում և պատահարները, որպիսի են՝ մըրրիկը, կարկուտը, սաստիկ ցուրտը, երաշտութիւնը, հիւանդութիւնը, մորեխը: Վերադառնում եմ թէյ խմելու, լցնում եմ չիբուխս, և յանկարծ յիշում եմ, թէ պէտք է ձին նալել տալ կամ նայել մրգեղէնների այգուն, կամ արդեօք վերակացուն հարբած չէ՞, և մոռանում եմ, որ կինս տան մէջ երեխաների հետ նստած է: Սկսում են մեր մասին խօսել. «Նրանք ապրում են միմեանց հետ ոչ աւելի լաւ, քան թէ ուրիշները:» Ինքը արժանապատիւ Մացիկը երբեմն յայտնվում էր իր խրատներով: Ոչ միայն նրա դէմքը և մազերը պայծառացած էին մնում, այլ մինչև անգամ օձիքը,

կօշիկները և արմունկները: Նա ամբողջ մարմնով փայլում էր, ինչպէս մի քերովբէ, և իր հովուական ցուպի փոխարէն բարձրացնում էր իմ վրա իր եղէգնեայ գաւազանը, և աւելի ես բարձրացնում էր իր ձայնը:—Ի՞նչ պէտք է արած, տէր հայր, երբ որ ես և կինս դադարել ենք սիրել միմեանց:—Օհ, հէնց դրա մէջն է քրիստոնէական ամուսնութեան բոլոր էութիւնը,—պատասխանում էր նա և այնպէս ծիծաղում էր, որ նրա փորը և թշերը սկսում էին շարժվել:—Բայց, բարերար տէր հայր, ինչպէս կարող ենք այսպէս ապրել միմեանց հետ, ախար ոչ մի կերպով մեր սրտերը չեն կպչում:—Չէն կպչում: Ապա էլ ինչու համար է եկեղեցին: Դուք գիտէք արդեօք, իմ յարգելի և մոլորեալ բարեկամ, թէ ինչ բան է մեր ամուսնութիւնը: Եթէ դուք կը զուարճանաք ուրիշ կնոջ հետ, առանց սիրելու նրան, այդ ժամանակ ինչ կասեն ձեր մասին:—Անառակ: Իսկ քրիստոնէական ամուսնութեան մէջ այդ ինքն ըստ ինքեան հասկացվում է: Եթէ դուք կը վճարէք օտար կնոջը, կընծայէք նրան մի թաշկինակ կամ չը գիտեմ ուրիշ ինչ բան, այդ ժամանակ ամեն մարդ կը թքէ ու կասէ նրա մասին, թէ նա վաճառված կին է: Իսկ եթէ դուք կանէք այդ բոլորը ձեր կնոջ վերաբերութեամբ, դուք կը լինէք—բարեօրինակ ամուսին: Բարի կինը հէնց միայն այդ է պահանջում, հէնց միայն

դրա վրա է մտածում, թէ ինչպէս բարի, քրիստոնեայ ամուսինը կը կերակրէ և կը հագցնէ նըրան։ Միթէ ճշմարիտ չեն իմ ասածները։—Իսկ սէրը։—Սէրը նշանակում է՝ հոգ տար կնոջդ վրա, կերակրէ քո զաւակներին և դրանց փոխարէն դու վայելում ես—անկողին։ Ահա ինչ է նշանակում սէրը մեր ամուսնութեան մէջ։ Ո՛րքան ամօթ է, երբ աղջիկը կը սիրահարվի և կը ծնէ տղայ, բայց ամուսնութեան մէջ, եթէ հէնց ամեն օր կռուելու լինեն, այսուամենայնիւ, այստեղ—Աստուծոյ օրհնութիւնը կայ։ Այլ ես ինչու համար եմ ամուսնանում. սիրոյ համար, թէ քահանայի օրհնութիւնը վայելելու համար։—Եթէ ամուսնանային միայն սիրոյ համար, այն ժամանակ օրհնութիւնը էլ ինչ հարկաւոր կը լինէր։ Ուրեմն...—Այսպիսի դատողութիւններ էր անում մեր տէր հայրը։ Այսուամենայնիւ, կարծես, մի առանձին բան դուրս էր քշում ինձ տանից։ Ես համարեա ապրում էի դաշտում. հունձքի ժամանակ նստում էի խաչաձև դրած խուրձերի հովանու ներքոյ, ինչպէս վրանի տակ, ծխում էի և ականջ էի դընում հնձւորների երգերին։ Կամ գնում էի անտառը փայտ կտրողների մօտ և գործի միջոցում գնդակահարում էի բեկասներ։ Չէի մոռանում ոչ մի տօնավաճառ, գնում էի յաճախ Լեմբերգ, առաւելապէս պայմանագրերի ժամանակ։ Շաբաթներով տանից կորչում էի։ Ինքն ըստ ին-

քեան հասկանալի է, որ ես կնոջս հետ շարունակում էինք ապրել քրիստոնէական ամուսնութեամբ։ Բայց իմ հարևանը այդ չէր հասկանում։ Նա կարծում էր, թէ սիրտը ամեն օր պէտք է փոքր ինչ խարել, ինչպէս նա խարում էր իր մազերը նրանց գանգուրներ տալու ժամանակ, և ճշտութեամբ անց էր կացնում օրվայ կէսը իմ կնոջ հետ, իսկ երբ ես տանը չէի գտնվում, նստում էր աւելի երկար։ Հարկաւոր էր միայն, որ ես գնայի մի որ և իցէ տեղ,—և նա այնտեղ էր ու այնտեղ։—Տա՛նն է իմ բարեկամը (նա սիրում էր ինձ իր բարեկամ անուանել)։—Ոչ։—Ո՛րքան ափսոսում եմ։—Երևակայեցէք, աքիսը նըստում է և սկսում է ճառական եղանակով կարդալ Պուշկինը։ Իսկ խօսակցութեան մէջ մի կերպով մէջ է բերում նկատողութիւններ հետևեալ կերպով. զարմանալի՜ է, երևում է, ձեր ամուսինը ամենևին տանը չէ կենում։ Հը՛մ,—և սկսում է միայն գլուխը թափ տալ։ Իսկ կի՜նս—Աստուած իմ։ Կինս ձայնակից է լինում նրան։ Ակնարկութիւններ են անում, նա դարձեալ գլուխը շարժում է և քթով մի կերպ ներս է ծծում մաքուր օդի հոսանքը։ Սկսում է խօսել տղամարդերի վրա առհասարակ, խօսում է հետաքրքիր և խրատական ձևով, և այդ միջոցին, գիտէք, ուղիղ չէ թքում, այլ զգուշութեամբ խըխում է իր աղլուխի մէջ։ Միանգամ նա իմ գլխին մի ամբողջ օյին

է համում այն պատճառով, որ ես իբր թէ արհամարհում եմ իմ կնոջը և որպիսի կնոջ, գեղեցկուհի, որը այնպիսի մաքուր սիրտ ունի, և մի և նոյն ժամանակ խելացի կին է, կարդում է Պուշկինը, ինչպես մի աղօթագիրք:—Քեզ հեշտ է այսպէս խօսել, բարեկամ, դու տեսնում ես նրան սամովարի մօտ պտըտելիս, ինչպէս մի սկիւռ, իսկ ես:—Ա՛խ, թողնենք այդ:—Բայց իսկապէս մենք ինչով ենք մեղաւոր միմեանց մօտ:—Մենք չենք հասկանում միմեանց,—պատասխանում է կինս: Իմանում էք, բառ առ բառ վեր է առած մի գերմանական գրքից: Ահա ձեզ և այդ գաղափարները:

—Միանգամ,—շարունակեց պատմողը,—Դօբբոմիլից գիշերը վերադառնում եմ տուն: Կինս նըստած էր թախտի վրա. նա դրել էր մէկ ոտը միւսի վրա և ձեռքերով գրկել էր իր ծնկները: Նըրա հայացքը մոլորված կերպով յածում էր սենեակի շուրջը: Իմ բարեկամը հէնց նոյն րոպէում դուրս էր եկել այնտեղից,—կինս հագած ունէր կանաչ թիկնոցը, և դրեթէ իր հիւրի հոտն էր բուրում իրանից: Ես պատրաստ էի բարկանալու, բայց միայն թափ տուի ձեռքս: Կինս դուր է գալիս ինձ իր նոյն դիրքի մէջ. ես համբուրում եմ նրա ձեռքերը, սկսում եմ հարթել մորթը նրա թիկնոցի վրա: Յանկարծ նա գցում է իմ վրա մի հայացք, մի առանձին, ինձ անծանօթ հայացք—

զարմանալի բան:—Այլ ես այսպէս ապրել չէ կարելի,—ասում է նա բոլորովին անսպասելի կերպով: Նրա ձայնը խեղդվեցաւ, բայց իրան զօռ էր տալիս, որպէս զի բարձր խօսէ:—Ի՞նչ է պատահել քեզ հետ:—Դու միայն գիշերը մօտ ես բերում ինձ,—բացականչում է նա,—և աւելի քո սիրուհիների ետևից ես ընկած, իսկ ես—ես սէր եմ պահանջում:—Սէր: Բայց միթէ ես չեմ սիրում քեզ:—Ոչ:—Նստում է ձիու վրա և հայդէ: Ես որոնում եմ նրան ամբողջ գիշերը, որոնում եմ և հետևեալ օրը: Գիշերը վերադառնում եմ տուն: Նրա մահճակալը դրած էր երեխաների սենեակում, ես քնում եմ մէն-միայնակ: Ինձ պէտք էր թոյլ չը տալ այդ, պէտք էր հարկադրել նրան, բայց ես շատ հպարտ էի, մտածեցի, թէ այդպէս էլ կանցնի: Ախար ի՞նչ են մեր կնիկները: Այո՛, ես ճանաչում էի գաւառական դատարանի մի ծառայողի: Նրա կինը նամակ է ստանում մի գնդապետից:—Այդ ի՞նչ է ձեռքումդ, սիրելիս:—Առնում է նամակը, կարդում է և իսկոյն ծեծում է իր կնոջը: Ծեծում է և երկրորդ անգամ,—հաւատացնում եմ ձեզ,—և այնքան ծեծում է, մինչև նա կրկին չէ սկսում սիրել իրան: Դա մի բախտաւոր ամուսնութիւն էր: Իսկ ես... Ես իմ կնոջ ըստրուկն էի: Եթէ ես այն ժամանակ ընդդիմադրէի նրան... Բայց այժմ ամեն ինչ անցած պէտք է համարել: Եւ այսպէս, մենք ասում էինք միմեանց միայն

բարի գիշեր, բարի լոյս: Դրանով էլ ամեն ինչ վերջանում էր: Բարի գիշեր... Ի՛նչ մի լաւ գիշերներ էին: Ես համարձակ կարող էի պնդել, որ ինձ սրբերի կարգը դասէին:

—Կրկին սկսեցի ես գնալ որսորդութեան,— մի րոպէ լուռ մնալուց յետոյ շարունակեց նա,— և ամբողջ օրեր անց էի կացնում անտառում: Այդ ժամանակ ես ունէի մի որսորդ, Իրինէյ Վօլֆ անունով, մի զարմանալի մարդ: Նա սիրում էր երկրի վրա բնակվող բոլոր կենդանիներին: Երբ յարձակվում էր գազանի վրա, ցաւակցութիւնից ամբողջ մարմնով դողում էր, այսու ամենայնիւ, միշտ սպանում էր նրան: Իսկ երբ կը սպանէր գազանին, վեր կառնէր ձեռքին, և նայելով նրա վրա, տխրութեամբ կասէր. Նա հիմա լաւ է, լաւ է նա:—Մենք օթակայում էինք անտառի մօտ: Իրինէյը գնում էր դաշտը, դուրս էր փորում գետնախնձորներ, կրակ էր վառում և մոխրի մէջ խորովում էր նրանց: Ուտում էինք, ինչ որ պատահում էր: Երբ թափառում ես անմռունչ, մթին անտառում, հանդիպում ես գայլի և արջի, տեսնում ես, թէ որպէս արծիւը հանում է իր ձագերին, շնչում ես անտառային զով օդը, որ ծանր է և տոգորված կծու անուշհոտութեամբ, քնում ես լեռնային քարանձաւի մէջ, լողանում ես անյատակ լճակում, որի հարթ և մըթին մակերևոյթը ներս է կլանում լուսնեակի

լոյսը,—այդ ժամանակ անհետանում է ամեն զգացմունք: Զգացմունքները փոխվում են ցանկութիւնների. ուտում ես, երբ քաղցած ես, սիրում ես, երբ ցանկութիւնը զրդում է քեզ: Արեգակը խոնարհվում է դէպի իր մուտքը: Իրինէյը սունկ է որոնում: Փոքր ինչ հեռու, գետնի վրա, նստած է մի գեղջկուհի: Գունաթափ-կապտագոյն կիսաշրջազգեստը հազիւ ծածկում է նրա փոքրիկ, փոշեպատ ոտները: Կեղտոտ շապիկը ցած է իջած նրա ուսերից, և որովհետև նա իր մէջքը պնդած էր գօտիով, այդ պատճառով առջևից շապիկի ծալքերը յետ էին քաշված և երևան էին հանել նրա կուրծքը: Շուրջանակի բուրում էր ծոթրինի հոտով: Գեղջկուհին թևքերը յենած ունէր ծնկների վրա և ձեռքերով բռնել էր գլուխը, իսկ նրա աչքերը աննպատակ կերպով նայում էին դէպի հեռաւոր տարածութիւնը: Փայլող միջատը (լուսատտիկը) սողաց նրա թուխ մազերի մէջ, որ, կարմիր թաշկինակի տակից, չը սանրված, թափվել էին նրա մէջքի վրա: Երեկոյեան արեգակի լոյսով ես տեսնում էի նրա երեսի կէսը միայն, որը մռայլոտ էր, սրացած էր, կարծես թէ, տաշած լինէր: Նրա քիթը բարակ էր և զօրաւոր, որպէս գիշերակեր թռչունի կտուցը: Երբ ես ձայն էի տալիս նրան, իսկոյն արձակում էր նա մի տեսակ հնչիւն, որ նման էր լեռնային բազէի ձայնին, և նրա աչքերը ցայտում էին կայ-

ծեր։ Նոյն վայրկենում Նրա դէմքը վառվում էր, ինչպէս Նաւթի բոցը։ Նրա աղաղակը երկար չէր լռում—Նա զարկվում էր քարաժայռերի բեկորներին, թափանցում էր դարևոր անտառի մէջ, և հետզհետէ թռչում էր մինչև հեռաւոր լեռները։ Այդ կնոջ Ներկայութիւնը իմ վրա երկիւղ էր ձըգում։ Նա թեքվում է, սկսում է ծոթրին հաւաքել և քաշում է գլխի թաշկինակը իր բոցավառ երեսի վրա։—Ի՞նչ պատահեց քեզ, հարցնում եմ Նրանից։—Նա չէ պատասխանում, բայց լսում եմ, թէ որպէս մալօրօսեան երգի թախծալի հնչիւնները տարածվում են օդի մէջ,—հնչիւններ, որ Նման էին արտասուքի։—Ի՞նչ պատահեց քեզ, հարցնում եմ երկրորդ անգամ.—Ինչ ցաւ կամ տխրութիւն ունես սրտումդ։—Նա լուռ է մնում։ —Ասա։—Նա Նայում է իմ երեսին, ծիծաղում է և ծածկոցի փոխարէն ցած է թողնում աչքերի վրա իր երկայն թերթերունքները։—Ասա, ինչ կը կամենայիր դու։—Ոչխարի մորթուց թուլուպ,—հազիւ լսելի ձայնով պատասխանեց Նա։ Ես ծիծաղում եմ։—Սպասիր, ես կը բերեմ քեզ համար թուլուպ տօնավաճառից։—Նա թաքցնում է իր երեսը։—Բայց քեզ չէ կարելի մօտենալ. դու գիտես, թէ ինչպէս հոտում է Նոր թուլուպը։ Չես ուզի, որ թուլուպի փոխարէն գնեմ քեզ համար տաք բաճկոն սպիտակ ճագարի մորթուց, սպիտակ, ինչպէս կաթ։—Նա զարմացած Նայում է

իմ աչքերի մէջ, ոչ թէ լուրջ կերպով, այլ աչքերը պլշացնելով, և մի և Նոյն ժամանակ Նրա մեծ և սպիտակ ատամների մօտ սկսում են շրթունքները շարժվել, յետոյ ցնցվում են թշերը, և, վերջապէս, ամբողջ երեսը ուրախութեամբ ծիծաղում է։—Ի՞նչ բանի վրա ես ծիծաղում դու։—Այնպէս, ծիծաղում եմ։—Ո՞ւզում ես, թէ ոչ։ Լա՛ւ է բաճկոնը ճագարի մորթուց, սպիտակ, որպէս կաթ։—Յանկարծ կանգնում է Նա, ուղղում է իր կիսաշրջազգեստը և մէջքակապով պնդում է իր շապիկը։—Ոչ, պատասխանում է Նա, եթէ դուք կամենում էք մի բան ընծայել ինձ, թող Նա լինի արծաթագոյն մազով։—Ո՞րպիսի արծաթագոյն։—Այնպիսի, որպիսին հագնում են աղաները։—Ես միայն Նայում եմ Նրա վրա։ Եսականութիւնը Նոյնպէս ուրախ և պայծառ կերպով փայլում էր Նրա երեսի վրա, ինչպէս անմեղութիւնը։ Նա փայփայում էր իր սիրտը, իր ցանկութիւնները Նոյնպէս անգիտակցաբար, որպէս երբ համբուրելու կը լինէր մի սուրբ պատկեր։ Այստեղ չը կար ոչ սկզբունք, ոչ գաղափար և ոչ էլ դրանց Նմանները։ Նա գիտէր միայն բազէին յատուկ բարոյականութիւն, և միայն անտառի օրէնքները։ Քրիստոնէութեան մասին տեղեկութիւն չունէր։ Ես գնեցի Նրա համար Լեմբերգից... դուք անշուշտ կը ծիծաղէք... Ես սիրահարվեցայ այդ կնոջ վրա։ Դա մի այնպիսի ռօման էր, որպիսին

շուտով չես գտնի։ Նա իսկոյն յայտնվում էր, հէնց որ լսում էր հրացանի ձայնը։ Ես սանրում էի նրա գլխի մազերը իմ մատներով և լուանում էի նրա ոտները ծառերով հովանաւորված գետակի մէջ, իսկ նա ջուր էր շաղ տալիս իմ երեսին։ Զարմանալի արարած։ Նա տանջում էր ինձ իր մեծ հեզութեամբ այնպէս, որ ոչ մի տիրուհի չէր տանջի իր հպարտութեամբ։ Բայց ներեցէք, իմ պատուելի, ես դարձեալ սկսեցի խօսել ուրիշ բանի վրա... Այսքանը միայն կասեմ, որ նա անել էր տալիս ինձ ամեն բան, ինչ որ ցանկանում էր։

Մենք երկուսս էլ մի քանի րոպէ լուռ կացանք։ Մուժիկները և տիրացուն վաղուց գնացել էին։ Հրէան կարդաց իր աղօթքները և քնած էր։ Նրաղի մէջ նա կիսաձայն կերպով ինչ-որ մի բան երգում էր և նրա եղանակով երբեմն շարժում էր գլուխը։ Նրա կինը նստած էր սեղանատախտակի ետեւում։ Նրա գլուխը խոնարհված էր ձեռքերի վրա, փոքրիկ մատները խրած էին ատամների մէջ, կիսախուփ աչքերը նայում էին, ինչպէս քնի մէջ, բայց նրանք չէին կարող կտրվել անծանօթի երեսից։

Նա ցած դրեց չիբուխը և սկսեց պարզ օդ ծծել։

—Դարձեալ պատմեմ ձեզ իմ կնոջ հետ կատարված օյինները․ դուք թոյլ տալիս էք։ Մի

ժամանակ կինս հալումաշ էր լինում։ Ես մնում էի տանը և կարդում էի։ Մի անգամ նա անցաւ իմ մօտով և հարեւանցի կերպով կամաց ասաց․ բարի գիշեր։ Ես իսկոյն վեր թռայ, բայց չը կարողացայ նրան հասնել, դուռը նա արդէն կողպել էր իր ետեւից։ Դարձեալ ամեն ինչ կորաւ։ Այդ ժամանակ ես դատ ունէի պարոն Օնուֆրիանների հետ։ Նախ քան փաստաբանին դիմելը, ես բարւոք համարեցի հրամայել, որ լծեն ձիաները և ինքս անձամբ գնացի խօսելու իմ հակառակորդների հետ։ Ո՞ւմն եմ գտնում։ Մի մանկահասակ տիկնոջ, որը իր ամուսնի հետ բաժանված էր, բնակվում էր իր կալուածքներում, որովհետև աշխարհը ձանձրացրել էր նրան,—դա ժամանակակից փիլիսոփայուհի էր։ Նրան կոչում էին սատանայ, և իսկապէս նա մի սքանչելի, փոքրիկ դեւիկ էր։ Ամեն մի խօսքի ժամանակ նա տեղից վեր էր թռչում, իսկ նրա աչքերը վառվում էին, ինչպէս շրջմոլիկ կրակներ։ Տարակոյս չը կայ, որ ես դատը պէտք է տանուլ տայի, բայց նրա փոխարէն ես վաստակեցի նրա սիրտը։ Բայց ես դեռ ես սիրում էի իմ կնոջս․ երբեմն, այդ կնոջ գրկի մէջ գտնված ժամանակ, ես խփում էի աչքերս և աշխատում էի հաւատացնել ինձ, որ շօշափում էի Նիկօլայի երկայն, փափուկ մազերը, և համբուրում էի նրա հեշտախտութեամբ վառված և տենդային տապից ցամաքած շրթունքը։ Մինչդեռ իմ

կինը հեծում էր թէ սէրից և թէ ատելութիւնից, որ ունէր դէպի ինձ: Նրա սիրտը նմանում էր այն ծաղիկներին, որ ծաղկում են շուաքի տակ: Այժմ նա լի էր կատաղի քնքշութեամբ: Հակառակի պէս, որքան աշխատում էր, դարձեալ չէր կարողանում թագցնել իր զգացմունքները: Մի անգամ նա ինքը տուեց ինձ նամակը, որ բերել էր փոքրիկ կազակը իմ սիրուհուց, և այդ միջոցին ծիծաղեց, բայց նրա ծիծաղը ակամայ դուրս պրծաւ,—այդ մինչև անգամ անախորժ էր: Ես լքեցի նրան օտարի անչափ սիրոյ համար, իսկ այժմ նա փափագում էր վրէժխնդիր լինել, այն մասին, որ ես արհամարհանքով էի վարվում նրա կրքերի հետ: Երբ որ նա ման էր գալիս, այդ միջոցին նրա շարժմունքների մէջ երևում էր մի առանձին անբնական շտապողութիւն: Քնի մէջ յանկարծ աղաղակում էր նա. ցերեկով ծեծում էր ծառաներին և երեխաներին: Բայց յանկարծ ես նկատեցի նրանում փոփոխութիւն: Նրա մէջ սկսեց երևալ մի տեսակ ինքնազսպութիւն և, կարծես թէ, նա մասամբ բաւականութիւն ստացած լինէր: Նրա աչքերը գրէթէ յագեցած և խիստ օտարոտի կերպով նայում էին իմ վրա, բայց մի և նոյն ժամանակ, նրա հպարտ ծիծաղի մէջ լսվում էր տանջանք: Եկաւ որսորդը:

—Ազան ամենևին չէ գնում որսորդութեան, ես գտայ մի աղուէսի հետքը և տեսայ փառաւոր

բեկասներ,—առաւելապէս վերջինները ես սիրում էի որսալ,—և «նա» սպասում է անտառի մօտ. խղճացէք ողորմելի կնոջը:—Ես վեր եմ առնում հրացանը և հասնում եմ մինչև մեր շրջակայքի վերջին ծայրը: Այստեղ իմ սրտում կատարվում է մի ինչ-որ անբնական բան: Ես զգում եմ մի առանձին անբացատրելի սարսափ, թողնում եմ որսորդին և վազելով վերադառնում եմ տուն: Ես ամօթահարվում էի. մտնում եմ տունը. ոտքերիս մատերի վրա կամաց-կամաց գնում եմ—և յանկարծ լսում եմ...

Նա մի քանի անգամ ձեռքը քսեց իր մազերին:

—Այդ հաղորդելու համար պակասում են իմ ուժերը... Դուռը բաց եմ անում,—կինս գտնվում է նրա գրկում...—Կարելի է, ես այստեղ աւելորդ եմ,—ասում եմ և նոյն րոպէում դուռը յետ եմ դնում: Ի՞նչ էր իմ արածը: Մեզ մօտ այդ այդպէս է լինում: Գերմանացին առհասարակ նայում է կնոջ վրա, որպէս իր հպատակի վրա: Իսկ մենք վարվում ենք, որպէս միմեանց հաւասարներ, որպէս մի թագաւոր միւսի հետ: Մենք մեզ չենք ասում. արա ամեն բան, ինչպէս որ կամենում ես, բայց մտածում ենք, որ մեր կինը պէտք է գոհ լինի մեր արածից: Մեզ մօտ ամուսին այրը չէ վայելում այսպիսի արտօնութիւն. այր և կին հաւասար իրաւունք ունեն: Եթէ ցանկանում ես, կարող ես գտնել մի որ և իցէ օղիվաճառ կնոջ

ծնօտը, բայց դրա համար էլ պէտք է համբերես, եթէ քո կնոջը հաճելի է, որ նրա չուրջը քծնուէին երկրպագուները: Մխիթարվիր քո սիրած կնոջ գրկում, բայց մի և նոյն ժամանակ լուռ կաց, եթէ քո կինը գրկում է մի ուրիշին: Այդ պատճառով, ես իրաւունք ունէի արդեօք նախատելու նրան: Ո՛չ:—Ես հեռացայ և անցուդարձ էի անում կնոջս սենեակի դռան առջև: Իմ բոլոր զգացմունքները համարեա թէ մեռած էին այդ րոպէում: Ամեն ինչ ինձանում անշարժ էր, հանդարտ էր, բոլորովին հանդարտ էր: Ես միայն անդադար ասում էի ինձ. միթէ դու մի և նոյնը չէիր անում: Դու իրաւունք չունես, իրաւունք չունես խանգարելու նրան: Վերջապէս, նա դուրս է գալիս: Ես ասում եմ նրան. ես չը կամեցայ խանգարել քեզ, բարեկամ, բայց դու մոռացար, որ իմ տանն ես գտնվում:—Նա դողդողաց և նրա ձայնը դողդողում էր:—Արա ինձ հետ, ինչ որ կամենում ես: —Ի՞նչ պէտք է անեմ քեզ հետ: Միթէ դու չես իմանում, թէ ինչ բան է պատիւը: Մեզ անհրաժեշտ է միմեանց բաւականութիւն տալ գնտակներով:—Ես սանդուղքներից լուսաւորեցի նրա ճանապարհը, յետոյ գնացի Լեօն Բադօչկանի մօտ և խնդրեցի նրան լինել իմ կողմից վկայ մենամարտութեան ժամանակ: Նա տխուր կերպով ժպտաց:—Իսկապէս դա յիմարութիւն է, ասաց նա, բայց բո-

լորը առաւօտեան կարգի կը դրվի: Ինձ բաւականութիւն կը պատճառես, եթէ այս գիշեր կը կարդաս, թէ ինչ է գրած այդ թերթիկների մէջ: —Ես կարդացի թերթիկները: Եւ ինչո՞ւ համար կամենում էի կռուել: Ես մենամարտութեան հրաւէր կարդացի իմ կնոջ սիրողին, բայց, իսկապէս, դա ոչինչ միտք չունէր: Ես իրաւունք չունէի այդ անելու: Ես գիտէի, որ ես ինքս մեղաւոր եմ, բայց պատիւը—ինչ կասէք դրան: Այսուամենայնիւ այստեղ ոչինչ միտք չը կար: Ես հաւատացած էի, որ նրա գնտակը չէր կարող դիպչել ինձ: Տասն և հինգ քայլ հեռաւորութեան վրա նա չէր կարող որոշել ճանկրիկը թիակից, բայց ես նետել գիտէի,—այո, լաւ նետել գիտէի: Ես կարող էի վրէժխնդիր լինել նրանից—կարող էի սպանել. ոչ ոք չէր դատապարտի ինձ, բայց ես իրաւունք չունէի վրէժխնդիր լինելու, և ատրճանակս արձակեցի դէպի ուրիշ կողմ: Ախար ես էլ յանցաւոր էի, ինչպէս և կինս: Առաջին րոպէներում ես մտածում էի բաժանվել կնոջս հետ: Բայց զաւակները: Հէնց բոլոր բանը դրանումն էր: Նրանք յաւիտեան կաշկանդում են ամուսիններին և անբաժան քշում են ուղիղ դէպի կեանքի փոթորիկները, որպէս թշուառներին Գանթէի դժոխքի մէջ:—Առհասարակ չէ՞ պատահել ձեզ խորհել, թէ բնութիւնը որպիսի որոգայթ է լարել մեզ համար սիրոյ մէջ: Ձեզ ըն-

ղունում դուք.... ախ, էլ ինչ էի ուզում ասել,— այո, հէնց սկզբից տղամարդը և կինը յատկապէս ստեղծված են փոխադարձ թշնամութեան համար։ Յոյս ունեմ, որ դուք հասկացաք ինձ։ Բնութիւնը իրան նպատակ է դրել շարունակել մարդկային ցեղը, բայց մենք մեր բնաւորութեանը յատուկ սնափառութեամբ և դիւրահաւատութեամբ երևակայում ենք, որ նա միայն հոգ է տանում մեր երջանկութեան համար։ Ո՛նց չէ։—Հէնց որ լոյս կը տեսնի Աստուծոյ բաշխած տղան, այնուհետև վերջ կը դրվի թէ երջանկութեանը և թէ սիրոյ։ Այր և կին կը սկսեն նայել միմեանց վրա, ինչպէս մարդիկ, որոնք արել են միմեանց հետ մի վատ առևտուր. երկուսն էլ խաբված են, բայց և այնպէս, ոչ մէկը և ոչ միւսը նպատակ չէ ունեցել խաբելու։ Բայց նրանք դեռ ևս շարունակում են կարծել, թէ բանը միմիայն իրանց բախտաւորութեան մասին է։ Նրանք թշնամանում են միմեանց հետ, փոխանակ մեղադրելու բնութեանը, որը նրանց անյարատև սիրոյ հետ միացրել է մի այլ զգացմունք, զգացմունք, որ անցողական չէ, այն է—սէրը դէպի որդիները։ Եւ այսպէս մենք մնացինք մի և նոյն տան ծածկի տակ։ Նա դադարեց գալ իմ տունը, բայց կնոջս հետ տեսնվում էին մի բարեկամուհու մօտ,— ախար աշխարհում լինում են այսպիսի բարեհոգի անձինք,—իսկ ես կրկին սկսեցի բեկասներ

որսալ։ Ես սկսեցի նայել կնիկների վրա, որպէս երէների մի առանձին տեսակի վրա, որոնց որսալը թէև դժուարին է, բայց դրա համար էլ գոհացուցիչ է։ Իմանո՞ւմ էք թէ ինչպէս են որսում բեկասներին։ Չէք իմանում։—Այդ մասին պէտք է նախ գիտենալ, թէ ինչպէս է թռչում բեկասը։ Երբ որ նա բարձրանում է տեղից, այդ միջոցին երեք անգամ պոչը շարժում է դէպի զանազան կողմեր, իսկ յետոյ թռչում է ուղիղ, որպէս նետ։ Հէնց այդ վայրկեանից պէտք է օգուտ քաղել. ես իսկոյն նշան եմ գնում, և բեկասը ընկնում է գետին։ Այդ կերպով էլ պէտք է վարվել և կնիկների հետ։ Եթէ կը շտապես նշան գնել նրանց—կը սխալվես, իսկ եթէ հարկաւոր եղած զգուշութիւնը ի նկատի կառնես,—կը որսաս նրանց ամեն մէկին։

—Մեր տանը թագաւորում էր խաղաղութիւն,— շարունակեց իմ պարոնը։—Երեխաները արդէն սկսել էին վազվզել, և,—հաւատո՞ւմ էք ինձ,— հիմա ես սիրում էի նրանց։ Ես սիրում էի երեխաներին, որովհետև կինս նոյնպէս սիրում էր նրանց։ Երբեմն ինձ այնպէս էր թւում, որ մեր սէրը մարմնացել է և թէ նա վազվզում է, խաղում է, և ծիծաղում է մեր շուրջը պտըտվելով և իմ սրտում կատարվում էր մի ինչ-որ անհասկանալի բան։ Ուրիշ անգամ սկսում էի չարանալ, պահանջում էի, որ երեխաները կամ

միայն ինձ սիրէին, կամ սիրէին ինձ աւելի քան թէ իրանց մօրը: Ես վեր էի առնում նրանց ձեռքերիս վրա, երբ նստած էի լինում բուխարու մօտ, ստիպում էի նրանց ձիու նման հեծնել ծնկներիս վրա, պատմում էի նրանց զանազան առակներ, ինչպէս ամեն մի որսորդ գիտէ պատմել: Բայց ինչ որ աւելի նշանաւոր էր... ախար դուք գիտէք—կինս ունեցաւ երրորդ երեխայ, աղջիկ,—ուրիշ տղամարդից: Դուք չէք հաւատայ, թէ որքան նման էր նա կնոջս, իսկ և իսկ կինս էր: Առհասարակ ասում են, թէ աղջիկը նման է լինում հօրը, իսկ տղան մօրը: Մեզ մօտ հակառակն էր պատահել: Մեծ որդիս յիշեցնում էր իր պապին, երկրորդը մինչև անգամ չը գիտեմ թէ ում նման էր դուրս եկել, շատ հաւանական է, դուրս էր հանվել մի որ և իցէ ռօմանից: Երկուսն էլ նման չէին իրանց մօրը, միայն աղջիկը, այդ ուրիշի երեխան, իսկ և իսկ մայրն էր: Արդեօք դա առաջ չէ՞ր եկած այն պատճառից, որ այն ժամանակ մօր միակ մտածմունքը իր մասին և իր վրէժխնդրութեան մասին էր: Եւ այսպէս, աղջիկը հասկանում էր, որ ես ատում եմ նրան, այսուամենայնիւ, ինձ դժուար է լիապէս արտայայտել, թէ որքան սիրում էր նա ինձ: Պատահում էր, երբ ես չատախօսութիւններ էի անում տղաների հետ, նա հազիւ լսելի ձայնով թոյլտուութիւն կը խնդրէր ականջ դնելու իմ պատմութիւններին,

կը քաշվէր մի մթին անկիւնում, կը թագնվէր աթոռի վրա, և ամենայն ուշադրութեամբ կը լսէր, իսկ աչքերը այդ միջոցին չարունակ կը փայլէին: Երբեմն ես այնպէս սաստիկ կը պոռայի նրա վրա, որ նա կը սոսկար: Երբ ես տանից դուրս էի գալիս, նա կանգնում էր և հեռուից նայում էր իմ վրա: Երբ ես վերադառնում էի, նա ամենայն արագութեամբ վազում էր իմ առաջ—և իսկոյն, գրեթէ, վախենում էր իր քընքշութեան սաստկութիւնից: Մի անգամ մեծ տղաս ասաց. գուցէ արջը կը սպանէ հայրիկին,—նա դուրս թռաւ և իսկոյն արտասուքը սկսեց թափվել աչքերից: Ինձ այնպէս երևաց, թէ ես տեսնում եմ իմ առջև կնոջս, թէ նա երկչոտ կերպով գրկում է ինձ և ներողութիւն է խընդրում: Վերջապէս, ես ասեցի աղջկան. եկ ինձ մօտ:—Նա բոլորովին շառագունած, փախաւ սենեակից: Փոքր առ փոքր մենք եղանք ջերմ բարեկամներ: Տղաներից ոչ մէկը և բնաւորութեամբ նման չէր ինձ:—Դու կուզէի՞ր հրացան արձակել: —Հա՛, պատասխանում է մեծը,—եթէ նա այնպէս չը տրաքէր:—Օրինակ, ես պատմում եմ նրան արջի մասին:—Ահա նա կամաց-կամաց գալիս է իմ հանդէպ, ի՞նչ ես կարծում, ես ի՞նչ եմ անում:—Դու չուտով փախչում ես,—պատասխանում է նա ինձ: Բայց աղջիկը ծիծաղում է: Երբեմն նա վեր էր առնում գայլի մորթի, փա-

թաթվում էր նրա մէջ և սկսում էր վախեցնել եղբայրներին,—երկուսն էլ թագնվում էին մօր շրջազգեստի տակ։—Միթէ դուք չէք ճանաչում ձեր քրոջը։—Մայրիկ, նա մոլիկ է տալիս, ինչպէս իսկական գայլ, աչքերը փայլատակում են, և նա գայլի նման մռնչում է։—Երբ ես տանը չէի լինում, այդ ժամանակ աղջիկը անհանգիստ կերպով թափառում էր սենեակի մէջ։—Եթէ յանկարծ հայրիկին կը տապալեն, դիմում էր նա որդուս։—Ի՞նչպէս կը տապալեն։—Օ՛հ, ես գիտեմ վալախեան սև ձիանները, նրանք վտանգաւոր են, կամ յանկարծ արջը...—Հայրիկը հրացանը կարձակէ ուղիղ դէպի սպիտակ բիծը, որը նրա կուրծքի վրա է լինում,—պատասխանում է որդիս, կարծես թէ, հասկանում է, թէ բանը ինչումն է։—Իսկ եթէ չի դիպչի։—Շատ հաւանական է, որ կը դիպչի։ — Աղջիկը մեծանում է, և այդ ժամանակ, երբ ես տանից դուրս էի գալիս, նա ընկնում էր յատակի վրա, թաւալվում էր և լաց էր լինում։ Եւ այսպէս, ես սկսում եմ նրան վեր առնել ինձ հետ։ Իմ փոքրիկ հրացանը դեռ փչացած չէր, որը մի ժամանակ բանեցնում էր կինս. ես գնում եմ աղջկայ համար փոքրիկ որսորդական մախաղ, և մենք միասին գնում էինք որսորդութեան։ Նա քաջ էր, համարձակ էր, ինչպէս ամեն մի հաւանած տղամարդ, ոչ, այս չէի ասում... Ի՞նչպէս բացատրեմ ձեզ։

Օրինակ, մենք լսում ենք ճայթիւն թաւ անտառի մէջ։—Ի՞նչ պէտք է անենք, եթէ մեզ վտանգ պատահի։—Նա ծիծաղելով ասում է. միթէ ես քեզ հետ չեմ։—Նա վախենում էր միայն իմ մասին։ Տանը երկիւղից տենդի մէջ էր ընկնում նա, բայց գայլից վախենում էր ոչ աւելի քան թզսամայրից, հաւատացէք ինձ։ Եւ այսպէս, մենք հասկանում էինք միմեանց։ Ինձ ամենևին պէտք չէր լինում հասկացնել նրան։ Նա իմ միտքը կարդում էր իմ աչքերի մէջ, հասկանում էր իմ երեսի ամենափոքր արտայայտութիւնը, նրա ամեն մի աննկատելի շարժումը։ Պատահում էր, երբ մենք որսում էինք երէ, Իրինէյը սկսում էր մաքրել նրան, իսկ մենք կարգով նստում էինք,—և ընդարձակ աշխարհը դառնում է մի գիրք զանազան պատկերներով, և այդ պատկերները մեծ բաւականութեամբ ես ցոյց էի տալիս երեխային, չը նայելով, որ դա իմ երեխան չէր։ Բայց նա ն ր ա երեխան էր, և ես ջերմ սիրով սիրում էի նրան։ Եւ կինս շատ սիրում էր աղջկան, և որքան աւելի ես կապվում էի նրա հետ, կինս աւելի սաստիկ էր սիրում։ Երբ ես տանում էի նրան ինձ հետ, կինս չոքած ծնկների վրա, մեղմ շշնջիւնով խնդրում էր նրան. մնացիր իմ մօտ։—Բայց աղջիկը բացասական կերպով թափ էր տալիս գլուխը։ Ես ծիծաղում էի, և մինչև անգամ տանից

հեռու գտնված ժամանակ, մթին անտառում, ես մի առանձին ուրախութիւն էի զգում, որ նա ինձ հետ է, իսկ նրա մայրը տխրութիւնից վհատութեան մէջ է ընկած։ Եթէ կինս տալիս էր նրան մի աշխատութիւն, նա փոքր ինչ կը նայէր, յետոյ գործը մի կողմ կը ձգէր, և կը վազէր մաքրելու իմ հրացանը։ Կամ երբ կինս մի որ և իցէ բան էր հրամայում նրան,—նա նայում էր իմ վրա և տեղից չէր շարժվում։ Մի անգամ կինս բարկացաւ և գոչեց. նա քո հայրը չէ։—Ուրեմն դու էլ իմ մայրը չես։ Այնօրից միշտ լուռ է, միայն երբեմն լաց է լինում։ Ի՞նչ յիմարութիւն է։ Արտասուք թափել։ Ի՞նչ հարկաւոր է։ Այս աշխարհում այնպէս էլ ուրախալի է...

Նա կուլ տուեց տօկայեան գինու վերջին բաժակը։

—Այո, այս աշխարհում այնպէս էլ ուրախալի է... Ահա ասում է. այն ո՞վ է ասում (նա ձեռքով չփեց ճակատը) հա, մտաբերեցի, երևի, կարամզինը, մեծ Կարամզինը։ Չե՞ք յիշում, ինչպէս է ասում նա։

Նա բռնեց իր մազերից, կարծես թէ, կամենում էր թափանցել իր գլխի մէջ։

—Յիշեցի, յիշեցի։

Դաւաճանեցի, ուրիշով հրապուրվեցայ,
Ցանցաւոր եմ ես քո առջև,
Բայց երկար սիրել չը կարողացայ—
Նրան էլ թողի, դէպ ուրիշն անցայ։

Ես հասկացայ, որ իզուր է
Երկար սիրահարված լինել,
Եւ վճռել վտանգաւոր է
Միշտ միայն մէկին սիրել։

—

Կը լինես հաւատարիմ—քեզ կը խաբեն,
Կը ծաղրեն, կը դաւաճանեն.
Կը դաւաճանես—բարկանալ կըսկսեն,
Քեզ կը յանդիմանեն, կը նախատեն։

—

Ուրեմն լաւ է չը սիրահարվել,
Այլ փոքր չափով բոլորին սիրել,
Բոլորին խաբել միայն աշխատել,
Ոչ ոքից խաբված երբէք չը լինել։

—Հիմա ես կարող էի պատմել ձեզ իմ արկածները։ Բոլոր կնիկները պատկանում են ինձ, բոլորը առանց բացառութեան, գեղջկուհիները, հրէուհիները, ստոր դասակարգի կնիկները և բարձր դասի տիկինները։ Բոլո՛րը։ Շիկահերները, սեւահերները, բաց-շէկագոյնները և թխամազները։ Ո՛րպիսի արկածներ, ասում եմ ձեզ, բոլորը անվերջ ռօմաններ են... Ինչ բանի հետ կարելի է համեմատել նրանց։ Ահա այժմ ես կապեր ունեմ մի մանկահասակ կնոջ հետ։ Ո՛րպէս սիրահարված է նա իմ վրա։—Դա մի տիկին է, նշանաւոր տիկին է... Կասես թէ գլուխս ցաւում է... Ունեմ այժմ մի ուրիշ սի-

բուհի ես—մի յանցաւորի կնոջ: Նրա ամուսին այրը մեռաւ կախաղանի վրա, նա ինքը… բայց ինձ ինչ փոյթ: Նա մինչև անգամ անգրագէտ է: Մենք ամենևին չենք խօսում միմեանց հետ, բայց գայլերի նման սիրում ենք միմեանց: Միշտ միանգամից պէտք է ունենալ տասն կնիկներ, կամ գոնէ, երեքը. մէկը իսկ ամուսնութեան համար, մէկը խելքի համար, իսկ երրորդը սրտի համար… Ոչ, ես սուտ խօսեցի: Սիրտը այստեղ գործ չունի, սիրտը բոլորովին դուրս է այդ հաշիւից, բոլորովին, հաւատացնում եմ ձեզ:

Նա ծիծաղեց, որպէս երեխայ, և ես հիացած էի Նրա հրաշալի սպիտակ ատամներով:

—Եւ ինչ պէտք է այստեղ սիրտը: Տղամարդին պէտք է սիրտը երեխաների համար, բարեկամների և հայրենիքի համար, իսկ կնոջ համար ինչ բանի է պէտք սիրտը:—Հա՛, հա՛, հա՛… Այն օրից ոչ մի կին չէ խաբել ինձ, քանի որ ես սկսել եմ խաբել նրանց բոլորին: Զուարճալի՜ կատակերգութիւն: Հարկաւոր է միայն ցոյց տալ նրանց, որ դու տղամարդ ես: Հա՛, հա՛, հա՛… Եւ այնպէս, նրանք սիրում են ինձ այն ժամանակից, երբ ես միայն խաղալիկ եմ շինել Նրանց: Նրանք բոլորը լաց էին լինում իմ շնորհիւ, բոլորը, առանց բացառութեան:

—Բայց ինչ յարաբերութիւնների մէջ էք գտնւում ձեր կնոջ հետ:

—Մենք քաղաքավարի ենք միմեանց հետ,—պատասխանեց Նա:—Պատահում է, երբ ես մտաբերում եմ այն ժամանակը և Նրա… այդ միջոցին գլուխս սկսում է մի տեսակ ցաւել, այո, գլուխս ցաւում է այդ ժամանակ… Բայց առհասարակ մենք ուրախ ենք… ուրախ…

Նա այնպէս սաստիկ կերպով զարկեց հիշը պատին, որ հրէան վախեցած բաց արեց աչքերը և մրմրթաց մէկը իր աղօթքներից:

—Եւ այսպէս ես ինձ լաւ եմ զգում,—աւելացրեց իմ խօսակիցը, կոճկելով իր քափթանը,—լաւ և ուրախ… Այսպէս է մեր կեանքը: Երբ որ մենք հասնում ենք մինչև այստեղ, այն ժամանակ լաւ է և ուրախալի…

Նա դուրս եկաւ սենեակի մէջ տեղը, ճարպիկ կերպով թևերը կանթեց և սկսեց խաղալ կազակի պար, եղանակելով մի ինչ-որ վայրենի-երեխայական, բաքոսական մեղեդի: Բայց շուտով դրանից յետոյ հանդարտւեցաւ, ձեռքերը խաչաձև դրեց կուրծքի վրա և տխուր կերպով շարժեց գլուխը: Յետոյ, կարծես թէ, յուսահատութեամբ բռնեց Նա իր գլուխը,—ինձ երևաց, որ Նա շատ ուրախ կը լինէր, եթէ կտրէր Նրան նոյն րոպէում,—բայց յանկարծ կրկին սթափւեցաւ Նա, և այժմ արդէն Նայում էր, որպէս մի արծիւ, երբ Նա վեհափառութեամբ սլանում է դէպի երկինքը:

Այդ միջոցին դուռը բացւեցաւ և պանդոկի մէջ

ներս մտաւ մի ծերունի չինական, ալեւոր մազերով, վհատած մօրուքով և ննջաւոր աչքերով, որը հագած ունէր կինամոնի գունով արխալ:

Դա չինական դատաւորը, Սեմեն Օստրօմն էր:

Տեսնելով մեզ, նրա ներս ընկած դէմքի վրա երևաց ցաւակցական ժպիտ:

—Պարոններ: Շա՞տ ժամանակ է, որ դուք այստեղ էք,—բարեսրտութեամբ հարցրեց նա,—երեւի, երկար ժամանակ: Բայց ես մեղաւոր չեմ:

—Ուրեմն, մենք կարո՞ղ ենք գնալ:

—Ի հարկէ, պատասխանեց դատաւոր Սեմենը:

—Բայց փոքր ինչ ուշ է,—նկատեց անծանօթը,—ես խօսում եմ իմ մասին, իսկ ձեզ համար, կարելի է, մի և նոյն է: Աստուած ձեզ հետ, դուք ողջ լինէք:

Նա ուրախ կերպով նայեց հրէուհու վրա: Նրա արիւնը զարկեց երեսին:

Նա արդէն մօտեցել էր դռանը, բայց կրկին յետ դարձաւ, և մի անգամ ևս սեղմեց իմ ձեռքը:

—Այլ ևս Երբ կը տեսնվենք,—գոչեց նա:—ինչպէս ասում են. սարը սարին չի մօտենայ, բայց մարդիկ—դա ուրիշ բան է:

Ես կանգնած էի պատշգամբի վրա, երբ նա կառքով գնում էր: Նա կրկին անգամ գլուխ տըւեց և անյայտացաւ իմ տեսութիւնից: Ես դարձայ դէպի հրէան:

—Օ՛հ, դա ուրախ մարդ է,—մնչաց Մօիշան,—վտանգաւո՛ր մարդ է: Նրան կոչում են կալօմէջայի Դօն-Ժուան:

II.

ՑՐԻՆԿՕ ԲԱԼԱԲԱՆ

ՑՐԻՆԿՕ ԲԱԼԱԲԱՆ

—

Նա, որին պատահել է լողալ թեթև գոնդոլի մէջ ծովի հայելու նման յստակ մակերևոյթի վրա, նա, որ տեսել է, թէ ո՛րպէս այդ միջոցին ամուր երկրի հովանաւոր ու գեղագրական եզերքը և գեղեցիկ կղզիները հետզհետէ անյայտանում են նրա աչքերից, և մի և նոյն ժամանակ նկատել է, որ մի այլ ծով լողացող ամպերով տարածվում է նրա գլխի վրա,—նա, շատ կարելի է, կը հասկանայ ինձ, երբ ես կը խօսեմ Գալիցիայի տափարակների մասին, ձմեռվայ ձիւնային ովկիանոսի մասին, և իմ ուղևորութեան մասին արագաթուիչ սահնակով: Ինչպէս ովկիանոսը, այնպէս և տափարակները ունեն մի առանձին հրապուրանք մարդկային թախծալի և ծարաւի սրտի համար: Միայն սահնակով սլանալը աւելի արծուաթուիչ արագութեամբ է կատարվում, քան թէ նաւակով

զբօսանքը ջրի վրա, ուր նաւակը օրօրվում է, որպէս բաղը օդի մէջ,—միայն անսահման տափարակի գունաւորութիւնը և նրա մեղեդին աւելի լուրջ է, աւելի մռայլոտ է և աւելի սոսկալի է: Այստեղ տեսնում ես բնութիւնը իր բոլոր մերկութեան մէջ. այստեղ աւելի հասկանալի է կռիւը գոյութեան համար և աւելի զգալի է մահուան մերձաւորութիւնը. շնչում ես քո մթնոլորտը, լսում ես ծանօթ ձայներ:

Ձմեռնային պարզ օրը—հրապուրեց ինձ դուրս գալ փողոցը: Ես վճռեցի սահնակով զբօսանք անել. իմ ձին առողջ չէր, և ամեն մի ձի չէ կարող լաւ վազ տալ ձիւնի վրա. ես հրամայեցի կանչել մեր տեղային կառապան Լէյբ Կատտունին, և նա լծեց իր յուսալի ձիաները իմ ոչ այնքան մեծ սահնակին: Եղանակը գեղեցիկ էր. օդի մէջ տիրում էր լռութիւն, բայց և ինքը լոյսը և արեգակի ալիքները խաղաղ, առանց ամենևին դողդոջման, ճառագայթել էին թեթև կերպով ղոլորշիացող երկրի վրա: Օդը և ձիւնը միախառնվելով, կազմում էին մէկ տարր: Ոչ պակաս լռութիւն էր տիրում և գիւղի մէջ: Համեստ խրճիթներում, կարծես թէ, կենդանի մարդիկ չը կային. աղաղակում էին միայն ճնճղուկները, թռչկոտելով ծառերի և ցանկապատերի վրա:

Գիւղի ետևում կանգնած էին փոքրիկ սահնակներ, բարձած վառելափայտերով, իսկ նրանց հան-

դէպ կանգնած էր մի ձի, ոչ բարձր քան լաւ քուռակից. մի ինչ-որ նորահարս աղջիկ ոտաբոբիկ թափառում էր խոր ձիւնի մէջ և հաւաքում էր կոտրած փայտերի կտորները:

Հազիւ թէ ցած էինք սահել մերկ լեռնից, արդէն նշմարեցինք անչափելի, անբովանդակելի, անսահման տափարակը: Նա աւելի փառահեղ էր երևում իր ձիւնային սպիտակ մուշտակի մէջ, որը մի առատութեամբ ծածկել էր նրան, և միայն տեղ-տեղ նրա տակից դուրս էին նայում ուռենիների մերկ բուները, բարձր խաչերը և երկու մրոտած խրճիթներ, որոնք նմանում էին սև թաթիկների ձիւնային սպիտակ մորթի վրա:

Լէյբ Կատտունը սուլելով ճիչ արձակեց: Առհասարակ տափարակի առաջին տեսքը նրա վրա տպաւորութիւն գործեց, ինչպէս արագ ներգործող թոյն. նրա պալեստինական երևակայութիւնը սկսել էր արտայայտվել բիբլիական ասացուածներով, և թևքերի միանգամ թափահարելով, նրա միտքը թռչում էր մաքուր գազանների աշխարհից դէպի արմաւենիների և եղևինների աշխարհը: Նա օրօրվում էր իր բազմոցի վրա, որպէս մի մարդ, որ տենդի մէջ է գտնվում. աշխատում էր որոնել իր ուղեղի մէջ մի մտապատկեր, որը կարող լինէր պարունակել իր մէջ տափարակի անսահմանութիւնը, բերում էր մի համեմատութիւն միւսի ետևից, երևի, տանջվում էր, որ ամենևին նմանու-

թիւն չէր գտնում, այդ անում էր նա, մինչև ես չը հրամայեցի նրան լռել։ Այժմ սկսեց նա ինքն իրան տրտնջալ։ Չը գիտեմ, շարունակում էր խօսել ինքն իր հետ, թէ մրթմրթում էր մի որ և իցէ աղօթք։ Արդեօք չէր համեմատում նա մեր տափարակը այն սպիտակ թղթի անվերջ թերթի հետ, որի վրա գրում էր իր անվերջ հաշիւները, և արդեօք չէր սկսել հաշուել և դարձեալ հաշուել նրանց։

Մենք շարունակում էինք սլանալ պինդ ձիւնի վրայով։

Մի կողմում երևում էր կալուածական տուն, իսկ նրա ետևում փոքրիկ գիւղ. ձիւնը առատութեամբ արծաթաջրել էր բոլոր շրջակայքը. կտուրները կարծես արծաթով պատած լինէին, փոքրիկ լուսամուտների վրա երևում էին արծաթեայ գեղեցիկ նկարներ, խրճիթների ամեն մի դուրս ընկած մասերը, ջրհորը և մրգեղէնների ամեն մի բազմաճիւղ ծառը զարդարված էին արծաթեայ փունջերով։ Բոլոր բնակարանները շրջապատած էին ձիւնային բարձր թումբերով, և նրանց միջից մարդը աղուէսի կամ փորսողի նման ծակ էր բաց արել իր համար։ Թեթև ծուխը, որ բարձրանում էր կտուրներից, կարծես թէ սառչում էր օդի մէջ։ Արծաթափայլ մեծ կաղամախիները բարձրանում էին բակի շուրջը։ Տեղ-տեղ վերանում էր գետնից ձիւնային փոշի, որը գալարվելով օդի մէջ, ձևացնում էր ալմաստեայ մօծակների մի ամբողջ կոյտ,—դա

փոթորիկ էր, միայն փոքրիկ կերպով, և կայծակի փոխարէն փողփողում էին ձիւնային փայլակներ։

Գիւղի մօտ, համարեա ձիւնի մէջ խորասուզվելով, վազվզում էին կիսամերկ երեխաներ սպիտակ գլուխներով և կարմիր թշերով։ Նրանք ձիւնից շինել էին մի արձան և կոխում էին նրա բերանը երկայն չիբուխը, որով ծխում են տեղային կալուածատէրները։ Նրանցից քիչ հեռու, փոքրիկ սահնակի վրա, նստած էր մանկահասակ պատանի երկու սիրուն աղջիկների հետ. այդ գեղեցկուհիների երկայն ու թուխ գիսակները իջած էին շքեղ կուրծքի վրա, որ ծածկված էր, ծալիկներով կարված, սպիտակ շապիկով։ Նրանք արշաւում էին դար ու փոսերի միջով։ Նրանց աչքերում նշմարվում էր կայտառութիւն, որպէս ուրախ արտուտի աչքերում։ Ի՛նչպէս բարձր ծիծաղում էին նրանք։ Իսկ պատանին ծիծաղում էր աւելի բարձր. նա մինչև անգամ կորցրել էր իր գլխարկը։

Մենք արագութեամբ անցնում էինք անտառի մօտով։

Ո՞ւր է նրա մեղեդին։ Խռպոտ ձայնով կաղկանձում է աղուէսը և կռնչում է ագռաւը։ Նրա բոլոր գոյնզգոյն տերևները ծածկված են ձիւնի տակ։ Անտառը և երկինքը ընկղմված են խոնաւ, բայց հոտաւէտ մթնոլորտի մէջ։ Ահա և ձիւնապատ բլուրները, իսկ և իսկ սպիտակ ծովի սառած ալիքների են նման։ Այնտեղ, ուր երկինքը

խորասուզվում է այդ ծովի մէջ, նա փայլում է, և միայն այն աչքը, որ ընդունակ է նայելու արեգակի վրա, կարող է դիմանալ նրա փայլին։ Շուտով կարմիր անտառը և մենաւոր ծառերը մնում են մեր ետևում, երևում են միայն մերկ լեռների պայծառ գագաթները, բայց դրանք էլ անյայտանում են աչքից։

Այժմ մենք գտնվում ենք անսահման տափարակի վրա, առջևում ձիւն, ետևում ձիւն, իսկ մեր գլխի վրա՝ ձիւնի նման սպիտակ երկինքը. շուրջանակի տիրում է լռութիւն, միայնակութիւն, մահ։

Մենք արշաւում ենք, որպէս թէ երազի մէջ լինենք։ Ձիաները լողում են ձիւնի մէջ, սահնակը սահում է առանց ձայն հանելու։ Մի կողմում վազ է տալիս փոքրիկ մոխրագոյն գազան. չէ երևում ոչ որ և իցէ խառոչ, ոչ որջ, բայց նա այնպէս փութով վազում է առաջ։ Ո՞ւր։ Բայց ահա նա էլ փոքրիկ կէտի ձև ստացաւ, մենք դարձեալ մնացինք միայնակ։ Այնպէս է թւում, որ մենք ամենևին դէպի առաջ չենք շարժվում։ Տեսարանը չէ փոխվում. ինչ որ մեր առջևումն է, ինչ որ մեր ետևումն է, մի և նոյնն է և երկինքը։ Նա անշարժ է, անամպ է, միակերպ է, ոչ ցածանում է և ոչ լոյսի ամենանուազ նշոյլներ է արձակում։ Փոխվում է միայն օդը. երեկոյեան պահուն նա աւելի թափանցում է մարմնի մէջ և կտրում է

մարդու երեսը, ինչպէս ապակու սուր բեկոր։

Կարծես մէկը կտրեց Լէյլի ականջը. զարհուրելով առնում է նա մի բուռն ձիւն և նրանով տրորում է իր ականջը, և դրանից յետոյ գլխարկի տակից դուրս է քաշում ականջակապերը։ Վերջապէս, մեր սահնակը կանգ է առնում, ինչպէս մի առագաստաւոր նաւակ խաղաղ ծովի մէջտեղում, և օրորվում է, առանց տեղից շարժվելու։ Մենք միայն երևակայում ենք, թէ առաջ ենք գնում,—թէ առջևում և թէ ետևում ոչինչ չէ երևում։ Երևակայութիւն չէ՞ և այն, որ կենդանի ենք մենք։ Իսկապէս, կենդանի՞ ենք արդեօք։ Մի՞թէ մի և նոյն նշանակութիւնը չունեն այդ խօսքերը՝ կեալ և կալ (ապրել և լինել)։ Իսկ չը լինելը մի և նոյնը չէ՞, ինչ որ է չը գիտենալը թէ ինչ է կեանքը։

Ահա թռչում է ագռաւը. նա արխաբար թիավարում է իր սև թևերով, և լուռ, կտուցը կիսաբաց կերպով սաւառնում է։ Յանկարծ նա պտոյտ եկաւ ձիւնային բլուրի վրա. արդեօք չէ՞ ծածկված նրա տակում աղբի կոյտ կամ կորած, ձիւնի մէջ թաղված, խոտի խուրձ, ուր նա կարող է դարան մտնել մկներին հսկելու համար։ Ագռաւը վերպտըտվում է, զննում է բլուրը ամեն կողմից, վերջը նստում է նրա վրա և սկսում է կտցահարել։ Նա գտաւ մի ինչ-որ բան։ Եւ ահա կամաց-կամաց գալիս է և գայլը. նրա ծօծրակի մազերը խը-

ճճված են. Նա բարձրացնում է իր դունչը, հոտ է քաշում և նոյնպէս մօտենում է բլուրին: Տեսնելով ագռավին, նա կաղկանձում է և ագին թափ է տալիս, որպէս մի շուն, որ գտնում է իր տիրոջ հետքերը: Ագռավը ուրախ նստած է բլուրի գագաթի վրա, և թևերը թափ տալով, կարծես թէ, իր խռպոտ ձայնով ասում է գայլին. դէ եկ, եղբայր, մեզ երկուսիս համար էս բավական կը լինի:—Ի՛նչպէս խորամանկ կերպով ծիծաղում են նրանք:

Նոյն չափով, որքան արեգակը դէպի ցած է խոնարհվում, նա, կարծես թէ, դառնում է մի փայլուն, շողխանման գունտ: Արեգակը ցած չէ խոնարհվում, այլ խորասուզվում է ձիւնի մէջ և հալվում է, որպէս կրակի մէջ լուծված ոսկի. Նրա փայլուն ալիքները ծփալով վազում են մինչև մեր մօտ, տարածելով արծաթեա ձիւնի վրա սքանչելի լոյս: Հետզհետէ հանգչում է նա. վերջին լուսաւոր ճառագայթները գունաթափվում են և մարում են. մի րոպէից յետոյ երևում է կարմիր շառավիղ, բայց դա էլ անհետանում է,—և կրկին ամեն ինչ անգոյն է, անկեանք է:

Անցնում է մի քանի րոպէ: Յանկարծ արևելքից բարձրանում է սաստիկ, սառցային քամի:

Մեզանից հեռու անցնում են սահնակներ. օդային ալիքները հասցնում են մեզ զանգակի ողորմելի ձայնը, բայց ոչինչ չէ երևում մոխրա-

գոյն մառախուղի ետևից, որը հետզհետէ բարձրանում է երկրի մակերևոյթից, ապա սկսում է կուտակվել և սարսափելի կերպով ալեկոծվում է: Սկսում է մթնանալ. բաց-մոխրագոյն թուխպերը, անորոշ ձևերով, ծածկում են երկինքը, ինչպէս մի սոսկալի նաւատորմ, առագաստը առագաստին կպած: Քամին ուղղում է նրանց, նրանք աւելի ևս սեղմվում են մէկը միւսի հետ, երբեմն լողում են մեր վրայով, երբեմն մենք ինքներս մտնում ենք նրանց մէջ: Գիշերային գոլորշիները շրջում են մեր շուրջը, որպէս թեթև ուրուականներ:

Հրէան կանգնեցնում է ձիաները:

—Բուք է բարձրանում,—դառնում է նա դէպի ինձ բազմահոգ դէմքով,—շատ կարելի է, որ կը տանէ մեզ. հիմա մենք Տուլային աւելի մօտ ենք գտնվում, քան թէ մեր տանը: Ի՞նչ էք հրամայում, պարոն:

—Եթէ այդպէս է, քշի՛ր դէպի Տուլա:

—Նա երկու անգամ մտրակում է ձիաներին: Մենք թռչում ենք դէպ առաջ: Մառախուղի առանձին պատառները, յոգնած թռչունների նման, մեծ թևերով պտըտվում են մեր մերձակայքում: Բայց ահա պատկերը, որ փռված է քարէ սիւնի վրա,—այստեղ ճանապարհը շուռ է գալիս դէպի աջ և տանում է դէպի Տուլա:

Քամին ճիշտ բռունցքներով զարկում է մեր

մէջքին. Նա մռնչում է սոսկալի, տխուր և խելագար ձայնով. իր բոլոր թափով դէպի ցած է յարձակվում, փորում է ձիւնը, խորտակում է խոշոր թուղպերը, և բամբակի պատառների նման ձգում է երկրի վրա, և սպառնում է նրանց կուտակութեան ներքոյ ծածկել ամեն ինչ, որ կը հանդիպի իր ճանապարհի վրա: Ձիաները, գլուխները քարշ գցած սկսում են փռնչալ: Սպիտակ մրրիկը փոթորկվում է, բարձրանալով մինչև երկինքը. Նա աւելում է տափարակը իր սպիտակ աւելով և դիզում է անհագին կոյտեր սպիտակ աւելածքի, որոնց մէջ մի ժամում թաղում է և՛ ձիաներ, և՛ անասուններ, և՛ ամբողջ գիւղեր:

Օդը կրակ է դարձել, այրում է, ինչպէս շիկացրած երկաթ. Նա համարեա թէ պնդացել է և փշրվում է առանձին բեկորներով, որոնք թափանցում են թոքերի մէջ և սրի նման կտրատում են:

Ձիաները վազել չեն կարողանում. Նրանք ընթանում են դանդաղ կերպով, աշխատելով ճանապարհ բաց անել ձիւնի միջով, օդի և հողմի միջով: Ձիւնը դարձել էր մի տարր, որը պատրաստ էր կլանել մեզ: Այդ ամենասարսափելի գործողութեան մէջ, բնութիւնը պաղում, սառչում է: Մենք ինքներս ուրիշ ոչինչ չենք, եթէ ոչ, առանձին մասնիկներ ընդհանուր սառնամանիքի և քարացման. դադարում ես ապրել, առանց

մեռնելու, առանց լուծվելու: Այդ րոպէներում հասկանալի է լինում, թէ ինչպէս ձիւնը կարող է իր տակին թաղել ամբողջ աշխարհը: Նրա սառցային կեղևի տակ անհագին փղերը, հսկայական մամոնտները պահվում էին ամբողջ դարերով, երևի մեր գիտնականների ճաշվայ խնճոյքի համար: Մտաբերում ես ցջրհեղեղեան խնջոյքները և ծիծաղելի է դառնում: Առհասարակ ձեզ տիրում է մի տեսակ ծիծաղկոտութիւն: Չէ՞ որ խտղանքը գրգռում է ծիծաղ, իսկ ցուրտը սարսափելի կերպով խտղեցնում է, անընդհատ և անգութ կերպով խտղեցնում է: Ասում են, խտղանքից կեղակարծ-մեռնողները փռչտում են, կենդանանում են:—Բոլորը սառչում է: Մտքերը փոխարկվում են սառցային լուլաների, սառցային կեղևով ծածկվում է հոգին, արիւնը ընկնում է, ինչպէս սնդիկ: Դադարում ես քեզ հաշիւ տալ քո մտքերի մասին, դադարում ես զգալ մարդկայնաբար. բարոյականութիւնը և քրիստոնէական առաքինութիւնը դառնում է նոյնպիսի մառախուղ, որը, սառչելով, կպչում է մազերին: Որքան բարկանում ենք մենք, երբ մեխը զարկում ենք պատի մէջ և նա չէ հնազանդվում մեզ, մենք պատրաստ ենք մուրճի մի հարուածով խորտակել նրա գլխարկը. մենք չպռտում ենք անկիւնի մէջ նեղ կօշիկը, կարդալով նրա վրա և ամենաեռանդոտ հայհոյանքներ: Իսկ այստեղ մենք մա-

քառում ենք կեանքի համար և այդ կռիւը կատարում ենք համբերութեամբ, լռութեամբ, հնազանդութեամբ և համարեա սառնասրտութեամբ: Այն կեանքը, որ այնքան թանգ էր մեզ համար, պաղել է մեր մէջ. մենք դարձել ենք քար, սառույց, և մէկ աւելորդ սառած պղպջակ տարերքի կռուի մէջ: Ականջ ես դնում քո սեփական բազկերակի զարկին, որպէս թէ ուրիշին լինէր: Սպիտակ վարագոյրը բաժանում է մեզ ձիաներից. այդ բուքի մէջ սահնակը նոյն բանն է, ինչ որ է նաւակը առանց ղեկի և առագաստի,—չը գիտես, ուր է տանում նա քեզ:

Գիշերային պահուն թուղպերը կամաց-կամաց կծկվում են: Ձիաները նորից սկսում են փռնչալ. ահա խորասուզվեցան նրանք—և նրանց մէջքը ծածկվեցաւ ձիւնի խաւով: Ձիւնի մեծ պատառները դեռ շարունակում են ցած ընկնել, թէև արդէն մի կանգնաչափ ծածկել են գետինը. բայց այժմ հնար կայ աչքերը բաց անելու և զգում ես, թէ որպէս շարժվում ես դէպի առաջ: փոթորիկը, երևի, մեղմանում է, միայն երբեմն կրկին ձայն է արձակում և ճչալով պտտվում է ձիւնի մէջ: Գորշագոյն մառախուղը, գորշագոյն մոխրի նըման, սփռվում է երկրի վրա: Ո՞րտեղ ենք մենք:

Ամեն ինչ ձիւնով ծածկված է, չէ երևում ոչ ճանապարհ, ոչ խոտի դէզ, ոչ փայտեայ խաչ, չես իմանում որտեղ ես ընկած. ձիաները, մինչև

կուրծքը թաղված ձիւնի մէջ, դանդաղ առաջ են գնում, իսկ հեռուից դեռ հասնում են մեզ անհետացած փոթորիկի հատուկոտոր ձայները: Մենք կանգ ենք առնում, հրէան մտրակով աւելում է ձիւնը իր ձիաների վրայից: Մեր մօտով թռչում են երկու ագռաւներ, հազիւ շարժելով իրանց սև թևերը: Նրանք կորչում են ձիւնի մէջ: Ձիաները գնում են աւելի արագութեամբ. ձիւնային տարափը նուազում է, օդի մէջ տիրում է աւելի խոնաւութիւն, բայց մեզանից հեռու դեռ ես ծածկված է ձիւնով: Մենք Լէյլի հետ խորհուրդ ենք անում:

Ժամանում է երեկոյեան մթին, ամպամած չամանդաղը, որը աւելի և աւելի շրջապատում է մեզ,—ահա և գիշերը: Հրէան մտրակում է ձիաներին, նրանք աքացի են տալիս և շտապեցնում են իրանց քայլերը: Հորիզոնի վրա նըշմարվում է կարմիր գօլ, մենք շուռ ենք տալիս դէպի այն կողմը: Կարծես թէ, կարմիր լուսինը ընկաւ գետնի վրա և հանգչում է ձիւնի մէջ. Նրա լոյսի մէջ երևան են գալիս մթին ստուերներ:

—Դրանք չինական պահապաններ են թղտենիների փոքրիկ անտառի մօտ,—ասում է Լէյլը,—իսկ անտառի միւս կողմն է և Տուլաւա:

Անտառը երևում էր ինձ մթին պարսպի նման. տեղ-տեղ լուսաւորված էր նա ահագին խարոյկով, որի կրակը պահպանում է պահապանին նրա ստորոտում:

Խարոյկը հեռուից երևում էր որպէս մի հրեղէն կիսաբոլորակ, հողմը, տատանելով թղտենիները, քշում էր բոցը դէպի անտառի կողմը. ծուխը դանդաղ կերպով մուտք էր գործում նրա մէջ, կախվում էր ծառերի վրա և անհետանում էր: Ջերմ և պայծառ գոլորշին սփռված էր խարոյկի շուրջը. մարդիկ ուրուականների նման պտըտվում էին նրա մէջ: Հրէան ձայն տուեց նրանց: Մէկը մօտեցաւ մեր սահնակին:

—Դա Ֆրինկօ Բալաբանն է,—ասաց ինձ Լէյբը:—Դուք չե՞ք ճանաչում նրան, նա պաշտօնաթող զինուոր է:

Բալաբանը դաշտային պահապան էր Ցուլաւեան համայնքի մէջ, որտեղ վայելում էր առանձին յարգանք և ընհանուր հաւատարմութիւն: Ինձ շատ անգամ էր պատահել լսել նրա անունը, բայց մինչև այդ ժամանակ չէր յաջողվել աւելի մօտ ծանօթ լինել նրա հետ, այդ պատճառով ես մի առանձին հետաքրքրութեամբ նայում էի նրա վրա: Նրա բարձր և վայելչակազմ հասակը, ազատ գըլուխը, հաւասարաչափ շարժմունքները իսկոյն իմ վրա ախորժելի տպաւորութիւն գործեցին: Ես հասկացայ, որ տեսնում եմ իմ առջև մի մարդ, որ ունի կամքի նշանաւոր ամրութիւն: Նա քաղաքավարի կերպով գլուխ տուեց ինձ, բայց առանց իրան որ և իցէ կերպով ստորացնելու:

—Երևում է, ոչ սակաւնեղութիւն էք կրել

բուքից,—հարցրեց ինձանից, նայելով ձիաների վրա:—Լա՛ւ կատարեց կառապանը իր պարտաւորութիւնը:

Նա խօսում էր, ինչպէս մի ասպետ, որի մօտ մտնում ես ուղեգնացութեան ժամանակ, խօսում էր նոյնքան քաղցրութեամբ, որքան և յարգանքով: Իր ձեռքի շնորհալի շարժումով հրաւիրեց ինձ մօտենալ խարոյկին:

—Ձեր ձիաները յոգնել են, քրտնել են,—ասաց նա,—իսկ գիշերը մթին է, ձեզ պէտք է հանգստանալ:

—Մենք այսպէս էլ մտադիր ենք անել,—պատասխանեցի ես, զգալով սաստիկ ցանկութիւն ծանօթանալու այն մարդիկների հետ, որոնք նըստած էին խարոյկի մօտ, և յատկապէս իրան, Բալաբանի, հետ: Երբ ինձ տանում էր նա ձիւնային կոյտերի մօտով, նրա առջև վազեց մի պատանի:

Բալաբանը վարվում էր նրա հետ փաղաքշանօք, քնքշութեամբ փայփայում էր նրա գլուխը, և այդ րոպէում նա ինձ երևաց մի բոլորովին ուրիշ մարդ: Ես հասկացայ, որ միանգամից դժուար էր նրան ճանաչել:

Խարոյկի մօտ նստողները, տեսնելով ինձ, վեր կացան:

—Ի՞նչ էք անում այստեղ, հարցրի նրանց:

Բոլորն էլ նայեցին Բալաբանի վրա:

—Այսօր նշանակված է ժողով Տուլաւայի պարոնի մօտ,—պատասխանեց նա բոլորի փոխարէն,—այնտեղ կը հաւաքվեն հարևան կալուածատէրները և ուրիշ լեհացիներ. անտարակոյս, առանց լրտեսների ևս չի լինի: Մէկ ուրիշն էլ կը յայտնվի առանց անցագրի: Շատ կարելի է, մի որ և իցէ բան լոյս կընկնի: Ահա ձեզ բոլոր պատմութիւնը:

—Մենք այստեղ հսկում ենք,—աւելացրեց պատանին:

—Այս բուքի մէջ:

—Կատարում ենք մեր պարտաւորութիւնը,—պատասխանեց զինուորը,—եթէ ձիւնի ետևում մէկին աչքից փախցնելու ևս լինենք, այսու ամենայնիւ գիտենք, որ մեր տեղում կանգնած ենք եղել:

Երևում էր, նա ամենևին չէր հասկանում, որ տարերքի կռիւը և վտանգը կարող էին արգելել նրան կատարելու այն, ինչ որ համարում էր նա իր պարտաւորութիւն: Այդ շատ զարմանալի էր:

Նա բռնեց ձիաների բաշից և նրանց բերեց կրակի մօտ, յետոյ սանձակից դուրս քաշեց տաք վերմակը, տարածեց աւազի վրա, հրաւիրելով մեզ նստել նրա վրա:

—Գետինը չոր է,—հաւատացնում էր նա ինձ,—սկսեալ առաւօտից մենք վառ ենք պահում այդ կրակը, որի վրա կարելի է խորովել մինչև անգամ մի ամբողջ եզ:

Իրաւ որ, խարոյկի շուրջը, մի քանի քայլ հեռաւորութեամբ, գետինը ծածկված էր տաք աւազով: Բոցը բարձրանում էր ուղիղ դէպի վեր և հազիւ դուրս էր հոսում այն շրջանակից, որի մօտ հանգստանալու համար նստած էինք մենք: Ձիւնային պատառները իջնում էին նրա վրա, ինչպէս արծաթեայ թիթեռներ քարշ ընկած թևքերով:

—Պարոնները Ցաւալէյից, շատ հաւանական է, որ կը գնան Տուլաւա,—նկատեց պատանին:

—Անտարակոյս,—ասեցի ես,—գեղեցիկ կնիկները միշտ հաճութեամբ են մասնակցում դաւադրութիւնների մէջ:

—Տիկինն էլ կը գնայ.—հարցրեց հրէան, մատներով զարկելով զինուորի ուսին:

—Ես ինչ գիտեմ,—պատասխանեց նա, և զըլխով մի այնպիսի շարժում գործեց, որ շատ նման էր ձիու, որ ցանկանում է քշել ձանձրացնող ճանճին: Այդ միջոցին նրա աչքերում փայլեց մի ինչոր գաղտնի, անսովոր բան, բայց նրանք իսկոյն յառեցան դէպի թղտենիները բարձրացող ծուխը, և նրա դէմքը մնաց անփոփոխ:

Ամեն ինչ լուռ էր, միայն քամին աղմուկ էր բարձրացնում կրակի մէջ: Ես թեք ընկայ, սկսեցի զննել ինձ շրջապատող մարդիկներին:

Ես ճանաչում էի այն գիւղացուն, որը իբրև պահապան կանգնած էր անտառի ստորոտում. երբեմն մօտենում էր նա կրակին, ոչ այնքան

ցուրտի պատճառով, որքան հետաքրքրութեան համար, որ լսէ, թէ ինչ բանի վրա են խօսում կրակի մօտ նստողները։ Նրան կոչում էին Մռայլ, և նրա դէմքը նոյնպէս լուրջ էր, համարձակ էր, որպիսին երբեմն պատահում է գիւղացիների մէջ։

Միւսը, որ ինձանից ոչ այնքան հեռու ցցված էր խարոյկի մօտ, անծանօթ էր ինձ։ Դա մի ողորմելի արարած էր մոխրագոյն կաբայի մէջ, որի գլուխը հովանու ձև ունէր՝ վերևից սուր, ներքևից լայն, և նրա վրա հագցրած էր տափակ գտակ, սպիտակ ոչխարի կեղտոտ մորթուց։ Կողքից նայելով նրա վրա, ինձ այնպէս էր թւում, որ նրա երեսը կտրած էր քարտօնի հին խուփից։ Առաւելապէս նշանաւոր էր նրա սուր, երկայն, բարակ և բազմերակ քիթը։ Բերանը, երևի, մնացել էր մկրատի մէջ, իսկ ծնօտը կորել էր վզի մէջ։ Նրա անգոյն երեսի ծալքերն անգամ այն աստիճան անճոռնի էին, որ ինձ երևում էր, թէ ամբողջ դէմքը կծկված լինէր։ Այդ բաւական չէր, նրա ստուերը աւելի խոշորացնում էր նրա գծագրութիւնը, և ձիւնի վրա նկարված էր նա սաստիկ ծիծաղելի կերպով։

Նրա կշտին մէկը պառկած էր երեսի վրա։ Իսկական, այդ կայտառ պատանին, միանգամ կոչեց նրան Մօնգօլ անունով, և կարելի էր գրաւ բռնել, որ նա ծագում էր այդ ցեղից։ Տուլաւայի

մերձակայքում գտնվում է այն կռիւի դաշտը, ուր մի ժամանակ թաթարները կրեցին սարսափելի ջարդ, և ասում են, որ յետոյ նրանց ձեռքով աւերակ դարձած գիւղերը բնակեցրին թաթար գերիներով։ Նա բաւական կարճ էր, քան թէ թըղթէ մարդը, բայց աւելի հաստ էր, իսկ նրա գլուխը խիստ ամուր կերպով նստած էր ուսերի վրա։ Նրա մերկ ծօծրակի վրա երևում էր սարսափելի ուժ։ Նա պառկած էր տաք մոխրի վրա, հագած ունէր քաթանի անդրավարտիք և քաթանի կիտէլ, բաց կուրծքով, իսկ մերկ ոտները հանգստանում էին ձիւնի մէջ։ Եւ քո մէջ, եղբայր Մօնգօլ, բոլորը շատ վատ կերպով է շինված. միայն դէպի դուրս են քարշված քո լայն կողքերը և ուժեղ կուրծքը։ Բայց ինչ որ վերաբերում է քո երեսին կամ այն բանին, որ դու կոչում ես երես, ես տեսնում եմ նրա վրա երկու ողորմելի, փոքրիկ ճեղքեր, որոնց մէջ զետեղված են քո չարժուն և սև աչքերը, տեսնում եմ և ինչ-որ անհաճելի կնճիռներ նրանց մօտ։ Աչքերդ նայում են շիլ կերպով, դէպի ցած, իսկ փոքրիկ քիթդ սեղմված է դէպի վեր, պնչերիդ հետ միասին, որոնց ծակերի մէջ կարող էին տեղաւորվել երկու աչքերդ էլ։ Դեղին ես դու, ինչպէս նախանձ, որի մասին խօսվում է հին առակների մէջ, իսկ գլուխդ պատած է մաֆթուլի նման ամուր, սև մազերով, որոնք իջնում են մինչև

քո սրածայր, երկայն, այլանդակ ականջները։

Անտարակոյս, գլխաւոր անձը այդ հասարակութեան մէջ էր Ֆրինկօ Բալաբանը։

Ո՞ր հասակումն էր նա։ Ոչ ոք հաստատապէս ձեզ չէր կարող ասել այդ, բայց նա լաւ տղամարդ էր ոտքից ցգլուխ։ Մի այսպիսի մարդ չէր կարող աննկատելի մնալ, որպէս զինուորների շարքում և համայնքի մէջ, այնպէս էլ այստեղ, չինական պահապանների խարոյկի մօտ։ Կինամոնի գոյնով, բայց այժմ գոյնից զրկված քաֆթանը, գոտևորած սև մէջքակապով, վայելուչ կերպով սեղմված էր նրա իրանի վրա և մինչև վերևը կոճկած էր. Նրանց բոլորի մէջ նրա պարանոցը միայն փաթթաթած էր թաշկինակով. հին կապտագոյն անդրավարտիքը, որ շատ հաւանական է զինուորի լինէր, քաղաքացու ձևով ցած էր թողած կօշիկների վրա։ Գօտիից քարշ էր ընկած մի քսակ խոտի փամփուշտից, իսկ նրա մէջ երևում էր փոքրիկ չիբուխ և երկայն դանակ։ Նրա ընկերները զինված էին կալ կալսելու շղթաներով և մանգաղներով, բայց նրա ուսից քաշ էր ընկած միափողանի հրացան։ Կուրծքի վրա երևում էին երկու պատուանշաններ և մի ինչ-որ ժապաւէն։ Ոչխարի մորթուց կարված բարձր և կլորիկ գըլխարկը տալիս էր նրա գլխին ռաբբիի արժանաւորութիւն և ենիչարիի վայրենութիւն, և ինչպէս գլխարկը, այնպէս էլ կարճ խուզած թուխ

մազերը գեղեցիկ կերպով պսակում էին նրա երեսը, որ արտայայտիչ էր նրա բնաւորութեան։ Այդ երեսը զանազանվում էր իր փափուկ գծերով, նուրբ քթով ու նուրբ բերանով, և մշտապէս բաց օդի մէջ գտնվելու պատճառով, ստացել էր պղնձի ախորժելի գոյն, որի ստուերը միախառնվելով բերանի ոլոր գծերի հետ, և կախ ընկած բակենբարդներով, տալիս էին նրա բոլոր դէմքին մի առանձին տպաւորութիւն։ Նրա առաքինի աչքերը, տամուկ, կարծես թէ արտասուքով լի, խորին կերպով ընկղմած կարծր յօնքերի ներքոյ, նայում էին մի առանձին հանդարտ և վշտակցական նայուածքով, այնպէս, որ ազդում էին տրտմութիւն։ Իսկ ձայնը,—ձեր առաջև կանգնած է մի այնպիսի ամրապինդ մարդ, զինուոր իր կատարեալ նշանակութեամբ, իսկ նրա ձայնի հնչիւնները լսելով, դուք զգում էք, որ ամէն ինչ խորտակված է նրա մէջ, և միայն ջարդուփշուր եղած հնչիւններ դուրս են հոսում նրա հզօր կուրծքից, իսկ նրա խօսքերի մէջ լսվում է մի ինչ որ միակերպ, բայց վսեմ բան։ Այսպէս խօսում էին քրիստոնէական նահատակները բոցավառ խարոյկների միջից կամ կրկէսի հրատապ աւազի վրա։

Այնտեղ կար և մի շուն, գիւղական հասարակ շուն, անորոշ գոյնով, թուխ գօլով վզի վրա և աղուէսանման փոքրիկ գլխով։ Նա քնած էր և

սրածայր դունչը դրած ունէր առջևի թաթիկների վրա, որոնց խրել էր ջերմ աւազի մէջ, և թեթև կերպով շարժում էր ագին, երբ զինուորի տխուր ձայնը հասնում էր նրա ականջներին։

Բոլոր ներկայ գտնվողները խօսում էին կամաց և լուրջ կերպով, միայն հրէան դուրս էր տալիս, ինչ որ պատահում էր։

—Ես գտայ ձեզ համար մի նշանած,—ջղրացնում էր նա պաշտօնաթող զինուորին,—մի գեղեցիկ այրի կին։ Ես գիտեմ, որ դուք գնահատում էք կնոջ գեղեցկութիւնը. ճշմարիտ, լաւ կին է նա, բացի դրանից, նա ունի մեծ տնտեսութիւն, որը նոյնպէս վատ չէ։ Ի՞նչ կասէք։ Նա արդէն տեղեկութիւններ է հաւաքում ձեր մասին։

Նա հերթով նայում էր բոլորի վրա, որ նստած էին խարոյկի մօտ, բայց ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց նրա վրա։ Իսկ Լէյբը, երևի, ցանկութիւն ունէր շատախօսելու։ Նա փաղաքշաբար ձեռքը զարկում էր Բալաբանի մէջքին։—Ողորմած Աստուած, դուք միշտ չէք կամենում ամուսնանալ,—գոչեց նա և նոյն միջոցին, աչքերից մէկը պլշացնելով, խորամանկութեամբ նայեց մուժիկների վրա։

—Նա երդվել է,—ախար այդպէս մարդ է,—երդվել է չամուսնանալ։

Զինուորը ուսի վրայից այնպէս նայեց դէպի նա, որ մեր հրէան հազալով հեռացաւ սահնակի մօտ,

ուր նստեց բազմոցի վրա, մէջքը դարձնելով դէպի մեզ։ Նա տատանում էր իր ոտները, ինչ-որ հաշիւներ էր անում, մրթ-մրթում էր իր աղօթքները և, վերջապէս, քնեց։ Իր կրունկներով սահնակի փայտին յանդով զարկելու ժամանակ, նա զարթեցրեց շանը։

—Լռիր, Լէհ,—սաստեց Իւրկան։

Շունը նայեց զինուորի վրա և, տեսնելով, որ նա լուռ է, վերկացաւ, մօտեցաւ ինձ, և ձգձգելով իր ետևի թաթերը, սկսեց հոտոտել ինձ, յետոյ մօտեցաւ սահնակին և սկսեց հոտոտել ձիաներին։ Նրանք մտերմաբար խոնարհեցրին դէպի նրան իրանց գլուխները, իսկ նա բարձրացրեց դէպի նրանց իր դունչը, թափ տուեց ագին և ուրախ կերպով կաղկանձեց։ Հերթը հասաւ և հրէային. շունը հանդիսաւոր կերպով մօտեցաւ նրան, բայց իսկոյն շտապով վերադարձաւ իր առաջին տեղը, ուր կրկին խրվեցաւ տաք մոխիրների մէջ։

—Մի մարդ ձիւնի վրայով վազ է տալիս դէպի մեր կողմը,—անսպասելի կերպով ձայն արձակեց Մռայլը։ Մենք ամենքս նայեցինք դէպի այն կողմը, որ նա ցոյց տուեց. միայն զինուորը մնաց հանդիստ, որպէս էր։

—Այդ ով կարող է լինել,—ասաց նա փոքր ինչ անցնելուց յետոյ և, գլուխը շուռ տալով, իսկոյն ժպտաց։—Միթէ դուք չէք ճանաչում նրան։

—Ա՛խ, ախար դա կօլանկօն է,—ասաց այդ ժամանակ Թղթէ մարդը իր ողորմելի ձայնով։

—Հէնց նա էր պակաս,—նկատեց խորամանկ իւրկան, մի առանձին վեհութեամբ խաչելով ձեռքերը կուրծքի վրա։

Ջլնոտը արհամարհանքով շարժեց ձեռքը և իսկոյն դարձաւ դէպի ինձ։

—Դուք պէտք է գիտենաք, պարոն,—լրջօրէն ասաց նա,—որ դուք շուտով կը տեսնէք մի ծերունու, որի հարիւր տարին վաղուց անցել է,—երևելի մարդ է, փորձված, խելացի մարդ է, միայն փոքր ինչ շատախօս է, ծերութիւնից սկսել է երեխայ դառնալ. երբեմն ծիծաղում է, երբեմն առանց պատճառի լաց է լինում։ Այդ բոլորը շատ բնական է, երբ մարդ ապրում է այդքան տարի։

Այդ միջոցին մօտեցաւ և ինքը Կօլանկօն և ազատեց Բալաբանին երկար բացատրութիւններ տալուց։ Դա մի փոքրիկ և ժիր արարած էր դողդոջուն ձեռքերով ու ոտներով, ներս ընկած կուրծքով, ցամաքած, դեղնագոյն վզով, ղառամեալ նոյնպէս դեղին երեսով, որի վրա կեանքի նշոյլը երևում էր միայն փոքրիկ մոխրագոյն աչքերում, որոնք խորին կերպով ընկղմված էին իրանց բոյների մէջ. դրանով աւելի սուր կերպով միջամուխ էին լինում նրանք ձեր մէջ, և կարծես, կամենում էին ծծել ձեզ։ Նրա ոտները կրում էին լաւ կօշիկներ

և տաք անդրավարտիք, մարմնի վրա հագած ունէր տաք, թէև խուղտատած Թուլուպ. գլխին դրած ունէր կատուի մորթուց գտակ, իսկ ձեռքերով բռնած ունէր, որպէս մի տղայի, կարմիր զօլ-զօլ բարձ, և իր անատամ բերանով այնքան արագ էր խօսում, որ դժուար էր լինում ջոկել նրա խօսքերը։

—Հիմա ես գտայ ռեխններին,—ամենից առաջ խնդալով աղաղակեց նա, յետոյ սկսեց գանգատվել, բայց թէ իսկապէս ինչ բանի վրա, դժուար էր հասկանալ, իսկ վերջը սկսեց գովել Բալաբանին։

Նա նստեց նրա մօտ և յետոյ հերթով մօտիկ տուեց ներկայ գտնվողների ամեն մէկի երեսին. երբ հերթը հասաւ ինձ, նա պարզեց իր ներս ընկած վիզը, բարձրացրեց յօնքերը, վեր կացաւ և երեք անգամ գլուխ տուեց ինձ։

—Ողորմած պարոնը դժուար թէ կը գիտենայ, թէ ինչ պէտք է անել ինձ հետ,—խնդալով ասաց նա և դարձեալ կուլ տուեց մի քանի խօսքեր։—Դուք տեսնում էք ձեր առջև մի ծերունու, որը իր բոլոր մերձաւորներից աւելի երկար է ապրել։ Հիմա ես մնացել եմ միայնակ, ինչպէս մի տղայ մօր արգանդում։ Անցեալ տարի ես դեռ ես ունէի մի հին քաւթառ, և յոյս ունէի, որ գոնէ այդ բարեկամս կը թաղէ ինձ, բայց ինձ վիճակվեցաւ նրան էլ ծածկել խոնաւ հողի տակ։ Այժմ իմ խրճիթում

չը կայ մի ուրիշ կենդանի արարած բացի ինձանից։ Ո՞վ կը համաձայնվի ապրել ինձ նման ծերուկի հետ։—Այդ բաւական չէ, ես ամենևին քնել չեմ կարողանում։ 'Դրան սովորում ես, նոյն չափով, որքան ծերանում ես։ Բայց երբ չես քնում, այդ ժամանակ շատ բաներ են անցկենում գլխիցըդ։ Եւ այդ պատճառով գիշերը ես վախենում եմ մնալ միայնակ, այո, այո, վախենում եմ... (Նա այնպէս ծիծաղեց, որ քթի մէջ օդը սուլել սկսեց)։—Յանկարծ ինձ այնպէս է թւում, թէ մառախուղը ոտներ ունի, իսկ ձիւնը ձեռներ, և թէ երկուսն էլ բաղխում են իմ լուսամուտը կամ դռները. իսկ լուսինը երես ու աչքեր ունի, մեծ աչքեր, ինչպէս խելագարներն ունեն, և այդ յիմարը տալիս է ինձ այնպիսի հարցեր, որ չես իմանում, թէ ինչ պէտք է պատասխանես նրա խենթութիւններին։

Նա թեքեց դէպի միւս կողմը։

—Տեսնո՞ւմ էք, ահա ես էլ շտապում եմ դուրս փախչել իմ տնակից և վազ եմ տալիս այնտեղ, ուր գիտեմ, որ կը հանդիպեմ մարդիկների։

Ծերունին հետաքրքրեց ինձ։

—Իսկ մարդիկների մէջ դուք ձեզ լա՞ւ էք ըզգում, հարցրի ես։

—Ճշմարիտն ասեմ ձեզ, ես երբեմն ձանձրանում եմ նրանցից։

Թղթէ մարդը տհաճութեամբ նայեց նրա վրա։

—Կարծեմ, ես վիրաւորական ոչինչ չասեցի,— շարունակեց ծերունին,—բայց չը կայ մի այնպիսի բան, որը ես լսած չը լինէի առաջուց։ Ես ամեն ինչ գիտեմ, բոլորովին ամենը։ Եւ եթէ պատահում է մի որ և է նորութիւն, դրանում ինչ մի զարմանալի բան կայ, թէ Մարտիրոսը փոքր ինչ յիմար կերպով վարվեց, քան թէ Կիրակոսը, երբ որ նա ցանկացաւ հրապարակել իր բարեկամի կնոջ։ Դուք նորեկներ էք, ձեզ ամեն ինչ զարմացնում է, իսկ իմ աչքը ամեն բանից կշտացել է։ Բալաբանը միակ մարդն է, որին արժէ լսել. ես էլ դրա համար վազեցի խարոյկի մօտ, գիտենալով, որ նա անպատճառ այստեղ կը լինի։

—Ուրեմն ձեզ ձանձրացրել է կեանքը, մի առանձին հետաքրքրութեամբ հարցրի նրանից։

—Ի հարկէ։

—Եւ դուք կը ցանկանայիք մեռնել։

—Իսկակա՞ն մահով։—Այո։

—Ի՞նչ էք կոչում դուք իսկական մահ։

—Մի մահ, որ մշտապէս կը ոչնչացնէ մարդուն, և ոչ այն մահը, որ տալիս է նրան հանգստանալ գերեզմանի մէջ, իսկ յետոյ ստիպում է նրան հաւաքել իր անդամները, և հրամայում է նորից ապրել։

—Նա վախենում է յաւիտենական կեանքից,— բացատրեց Թղթէ մարդը, գլուխը խոնարհեցնելով դէպի իմ կողմը։

Մենք ամենքս նայեցինք ծերունու վրա: Ես հետաքրքիր եղայ լսել նրան, որովհետև մեր գիւղացիները, ոչ մի անգամ գրքի մէջ չը նայելով և կարդալ-գրել չը գիտենալով հանդերձ, լինում են բնածին քաղաքագէտներ և փիլիսոփաներ: Նրանց մէջ կայ մի և նոյն արևելեան իմաստութիւնը, որը գտնվում է «Հազար ու մէկ գիշերների» աղքատ ձկնորսների, հովիւների և մուրացկանների մէջ, որոնց մօտ մտնում էր հռչակաւոր Հարուն-ալ-Ռաշիդը: Ես սպասում էի լսել մի այնպիսի բան, ինչ որ չէ պատահում լսել ամեն օր, և որը չես գտնի ոչ Հեգէլի և ոչ Մօլեշօտի մէջ:

—Իսկապէս ինչ է տալիս մեզ այդ կեանքը, —հանդարտ և պարզ կերպով խօսեց Կօլանկօն: —Դուք նորելուկներդ, ջահել մարդիկ էք, զարմանալի չէ, որ վազ էք տալիս կեանքի ետևից, բայց մի ծերունի, ինչպէս ես, ամեն ինչ տեսած, ամեն ինչ փորձած, ամեն տանջանք կրած, ինչ որ կարող է միայն կրել մարդը,—նա ի հարկէ...—Նա ընկաւ խորին մտածութեան մէջ:

—Յաւիտենական կեանքը պէտք է որ սարսափելի ձանձրալի լինի,—ասաց նա փոքր ինչ լռելուց յետոյ,—բայց ես գիտեմ մի ուրիշ բան, որը ինձ թւում է աւելի սարսափելի:

—Ի՞նչ բան:

—Վերստին ծնունդը:—Նա բարձր ձայնով ծիծաղեց:

—Այդ դեռ իմ գլխում չէր եկել,—զգուշութեամբ նկատեց Թղթէ մարդը,—բայց ծերունին, իրաւ որ ուղիղ է ասում:

Բալաբանը նայում էր կրակի վրա, Նրա աչքերը պաղել էին, ինչպէս սառած մարդու աչքեր: Կօլանկօն արմունկով խթեց նրան:

—Իսկ դու ինչ կասես այդ մասին, հարցրեց նրանից:

—Աստուած հեռու պահի,—լուրջ կերպով պատասխանեց Բալաբանը,—ես չեմ կամենում վերատին ծնվել:

—Տեսնում էք, պարոն, նորից սկսեց ծերունին, —ես այսպէս եմ մտածում իմ մասին. դու, եղբայր, բաւական տխրութիւն կրեցիր քո հարիւրամեայ կեանքում, չէ՞ որ պէտք է վերջ դրվի դրան: Բայց այդ միջոցին յանկարծ յաւիտենական կեանքըն ես մտաբերում: Գիտէք թէ, պարոններ, բոլորը այնպէս է, որպէս խօսվում է ապագայ երանութիւնների մասին: Լաւ: Ահա, օրինակ, ս. Սեբաստիանը կը պատմէ ինձ, թէ ինչպէս թիւրքերը արձակում էին նրա վրա իրանց նետերը, թէ ինչպէս բուի նման զամեցին նրան, և, այսու ամենայնիւ, ինչպէս նա գնաց կուապաշտ թագաւորի առջև և ասաց նրան. քո մէջ չան արիւն կայ.—կը պատմէ նա, թէ ինչպէս դըրանից յետոյ նրան բոլորովին սպանեցին: Յետոյ Պօղիկարպոս եպիսկոպոսը կը պատմէ ինձ, թէ որպիսի

խելացի խրատներ էր տալիս նա մի ինչ-որ կապիտան ֆելդ-մարշալի և ինչպէս դրա համար նրան խորովեցին խարոյկի վրա: Եւ, վերջապէս, ս. Սեբաստիանը հազար անգամ կը պատմէ նետերի մասին, իսկ ս. Վիկենտիոսը ապակու սուր բեկորների մասին,—բայց, ախար այդ ինչ բաներ են, աւելացրէք դրանց վրա և անքնութիւնը,—ամենեւին չը գիտենալ, թէ ինչ է բարերար քունը: Չէ որ երբ քնում ես, գոնէ կարճ ժամանակով մեռնում ես: Այստեղ, այս աշխարհում, եթէ չես քնում, գոնէ որքան կամենում ես, յորանջում ես, բայց ո՞վ գիտէ, կարող են արդեօք յորանջել երանելի հոգիները:

—Դուք դեռ ևս շատ առոյգ էք,—ասեցի ես ծերունուն,—երևի մտածում էք աւելի ևս ապրել քան թէ հարիւր տարի:

—Այո, ցաւելով մտածում եմ, որ կապրեմ: Երբ որ ամբողջ հարիւր տարի նայում ես կեանքի վրա և տեսնում ես, թէ ինչպէս է կատարվում ամեն ինչ, այդ ժամանակ, ճշմարիտ, աւելի ուրախ կը լինէիս միանգամից վերջացնել կեանքի հետ, միանգամից, մշտապէս: Որքան կը ցանկանայի երկար քնել, երկար, այսինքն միւս անգամ չը զարթնել:

Նա դարձեալ խորասուզվեցաւ մտածութիւնների մէջ և մեքենաբար օրօրում էր իր բարձը:

—Երկնքի հետ, պարոն, հանաք անել չի լինի,—դարձեալ սկսեց նա:

—Միթէ դուք հաւատում էք յաւիտենական կեանքին,—կամաց հարցրեց Բալաբանը. այդ միջոցին նրա ձայնը դողդողում էր աւելի սաստիկ սովորականից:

—Ես ոչինչ չեմ հերքում,—պատասխանեց Կօլանկօն,—սուրբ գիրքը գրել է ինքը Աստուածը, և այդ պատճառով ես չեմ կարող բացատրել բոլորը այնպէս, որպէս ես կը ցանկանայի: Բայց ես այն համոզմունքին եմ հասել, որ մարդու համար ամենից լաւն այն է, որ աշխատէ ուրախ սրտով: Մարդու նշանակութիւնը աշխատանքն է, և որպէս ես, այնպէս էլ ուրիշ ոչ ոք, չէ կարող որոշ կերպով ասել նրան, թէ ինչ կը լինի նրա մահից ետոյ:

—Դուք իրաւ էք ասում, ոչինչ չէ կարող լինել աշխատանքից բարձր, աշխատանքից և ուրախ սրտից,—ձայն տուեց Բալաբանը:—Բայց ամենից գերազանցն է իր պարտաւորութիւնը կատարելը: Էլ ուրիշ ինչ պէտք է ցանկանանք մենք այդ աշխարհում:

Դեռ ևս ես աւելի հետաքրքրվում էի ծերունիով, քան թէ Բալաբանով:

—Լսիր, բարեկամ,—դարձայ ես դէպի Կօլանկօն,—արդեօք ես կարողացայ լաւ հասկանալ քո ասածները: Դու ցանկանում ես մեռնել միանգամից և մշտնջենաւորապէս, բայց չես վախենում մահից:

—Ոչ, ոչ, պարոն,—խնդալով պատասխանեց նա,—ես սարսափելի կերպով վախենում եմ մահից:

—Ինչու այդպէս:

—Ահա ինչու. քանի որ ես կենդանի եմ, իմ մէջ դեռ կենդանի է և այն յոյսը, թէ մի օր կը հասնի իմ վախճանը, ճշմարիտ չէ:—Այդ խօսքերի միջոցին ես զգում էի, թէ նրա փոքրիկ աչքերը, կարծես, մխվում էին իմ սրտի մէջ:—Իսկ երբ կը հասնի մահուան ժամը—և յանկարծ կը յայտնվի, որ ես դարձեալ կենդանի պիտի մնամ, այն ժամանակ յոյսին էլ վերջ կը տրվի:

Բոլոր շրջապատողները բարձր ձայնով ծիծաղեցին:

—Ես խնդրում եմ ձեզ, պարոն,—շուտով սկսեց խօսել ծերունին,—նայեցէք իմ վրա, ես հօ յուսահատութեան մէջ ընկած մարդ չեմ, ես հօ որ և իցէ իր կայքը վատնած կալուածատէր կամ փողոցային քաղցած գրագիր չեմ, բայց կեանքը ատելի է դարձել, զզուացրել է ինձ: Գիտէք, որ այդ հետևանքին կը հասնի իւրաքանչիւր ոք, երբ նա նեղութիւն յանձն կառնի փոքր ինչ խորհել: Երբ որ մարդիկ գտնում են մի ինքնասպան կամ իրան կախ տուած մարդու, այդ միջոցին նրանք զարմանում են և հարցնում են. ինչպէս էր նրա ապրուստը:—Ի՞նչպէս:—Ախար նա ամենևին չէր ապրում:

Մի րոպէ բոլորը լուռ կացան: Կրակը հանդարտ վառվում էր խարոյկի մէջ, և ծուխը ծոյլ կերպով բարձրանում էր դէպի Թղտենիների անտառը: Քամին բոլորովին դադարել էր:

Հարիւրամեայ ծերունին կողմնակի կերպով նայեց Բալաբանի վրա և կամաց ասաց ինձ.—Նա այդ տեսակ մարդիկներից է:

Բալաբանը նստած էր գլուխը քարշ գցած, և լռում էր:

—Դէ, պատմիր մեզ որ և իցէ բան, Բալաբան,—ասաց Կօլանկօն:

—Պատմիր, բարեկամ,—խնդրեցի և ես:—Ասում են, որ դու լաւ պատմել գիտես:

Զինուորը տխուր կերպով ժպտաց:

—Ի՞նչ էք հրամայում պատմել,—քաղաքավարութեամբ հարցրեց նա,—հեքեաթ, թէ մի ուրիշ բան:

—Ոչ, ես աւելի լաւ կը համարէի լսել մի պատմութիւն քո կեանքից:

Կօլանկօն հաւանութեամբ շարժեց գլուխը:

—Այո, նա աւելի քան թէ միւսները փորձանքներ է հանդիպել,—աւելացրեց ծերունին:

Բալաբանը ձեռքով դանդաղ կերպով շօշափեց իր ճակատը:

—Ի՞նչ էք կամենում, որ ես պատմեմ ձեզ:

Թղթէ մարդը պարզեց վիզը և դժգոհութեամբ փայլեցրեց նրա վրա իր աչքերը:

—Այն ինչ բանի վրա էր ակնարկում հրէան մի քանի րոպէ առաջ,—խօսեց նա:

—Ա՛խ, դա այնպիսի մի պատմութիւն է...—կամաց պատասխանեց Բալաբանը, և իսկոյն նրա դէմքը բոցավառվեցաւ, և խաղաղ, անբացատրելի, սրտաշարժ տխրութիւնը պատեց նրա ամբողջ երեսը:

—Պատմութի՞ւն,—ագահութեամբ հարցրեց Կօլանկօն:

—Այո՛, պատմութիւն, որի նմանը շատ չէ պատահում այս աշխարհում,—մրմնջաց գլխաւորը:

—Այսպէս,—ասաց ծերունին:

—Ոչ ամեն պատմութիւնները զուարճալի են:

—Դա սիրային պատմութիւն է, մէջ մտաւ Թղթէ մարդը կիսաձայն և ամօթխած կերպով, կողքից երկչոտութեամբ նայելով գլխաւորի վրա:

—Երևի, շատ հետաքրքրական է,—ձայն տուեց Կօլանկօն:

—Ամենևին հետաքրքրական չէ,—նրան պատասխանեց գլխաւորը,—մի սովորական, համարեա ամեն օր պատահող պատմութիւն է: Եւ որովհետև պարոնը ցանկանում է լսել, ես աւելի յօժարութեամբ կը պատմէի վէնդերեան արշաւանքի մասին: Ահա գնացինք մենք...

—Միթէ կրկին մենք պէտք է քայլ առ քայլ հետևենք քեզ Գուկլայից մինչև Կօշաւա,—ընդմիջեց նրան ծերունին.—այդ կը լինէր եօթներորդ անգամ լսել քեզ: Ես կարծում եմ, որ դու կարող էիր պատմել մեզ մի ուրիշ բան:

—Աւելի լաւ կը լինի, եթէ պատմես մեզ այն պատմութիւնը,—թախանձում էր Թղթէ մարդը:

—Ո՞ր պատմութիւնը:

—Այն պատմութիւնը, Կատերինայի մասին, այն երևելի տիկնոջ մասին,—կամաց, բայց յայտնի զզուանքով ասաց Թղթէ մարդը:

—Դուք ճանաչո՞ւմ էիք նրան,—հարցրեց Բալաբանը, աչքերը վեր չը բարձրացնելով, և իսկոյն լռեց:

Ոչ ոք չը վստահացաւ խօսել:

—Ես ճանաչում էի նրան,—սկսեց գլխաւորը, և նրա ձայնը դողդողում էր նոյնպիսի տխրութեամբ, որպէս վերջին հնչիւնը մեր ժողովրդական երգի: Նա կամաց-կամաց բարձրացրեց գըլուխը: Նրա դէմքը երևում էր սովորականից աւելի գունաթափ, իսկ նրա աչքերը էին այնպէս մեծ, հանդարտ, որպէս լինում է տեսիլք տեսնողների մօտ:

—Հիմա նա կը սկսէ պատմել,—շշնջաց Մօնգօլը և թեթև կերպով խթեց Թղթէ մարդու կողքը:

Բոլորը ընդունեցին այնպիսի դրութիւն, որի մէջ ամեն մէկը յարմար էր համարում պատմութիւնը լսելու համար: Մռայլը, որ միշտ անցուդարձ էր անում յետ ու առաջ, որպէս պահապանի պարտաւորութիւնն էր, կանգնեց և յենվեցաւ իր մանգաղի վրա:

—Ի՞նչպէս պատահեց, որ ես առաջին անգամ հանդիպեցի նրան,—սկսեց Բալաբանը:—Այո, այդ պատահեց այնտեղ, կաղնիների անտառում, որը գտնվում է Ցուլաւայի մօտ: Նա որոնում էր սունկեր, և երկայն սուր փուշը, իմանո՞ւմ էք, մխուել էր նրա ոտի մէջ: Նա նստած էր կոպարի վրա և բարձր ձայնով լաց էր լինում: Հէնց որ տեսայ, որ մի գեղեցիկ աղջիկ նստած լաց է լինում, խղճացի նրա վրա: Ես իսկոյն կանգ առի և հարցրի նրանից. ինչ է պատահել, իմ նազելի:

—Նա չը պատասխանեց, կրկին բռնեց փուշը և աւելի սաստիկ սկսեց հեկեկալ: Այդ ժամանակ ես հասկացայ, թէ ինչ էր պատահել իմ թռչնիկի հետ: Ես նստեցի նրա մօտ և ասեցի. սպասիր, ես կօգնեմ քեզ:—Նա դադարեց լաց լինելուց, հանգիստ կերպով մեկնեց դէպ ինձ իր ոտը և կողքից նայում էր իմ վրա: Ես նոյն րոպէում դուրս քարշեցի փուշը: Երբ վերջացաւ, նա, կարծես թէ, մի առանձին շփոթութեան մէջ ընկաւ, արագութեամբ գլխի թաշկինակը ձգեց իր երեսի վրա, վեր թռաւ և փախաւ, առանց ինձ շնորհակալութիւն յայտնելու: Պատահում էր, երբ դրանից յետոյ նա տեսնում էր ինձ, իսկոյն սկսում էր բոլոր ուժով փախչել ինձանից, կարծես թէ, ես վայրենի գազան լինէի, կամ մի որ և իցէ աւազակ: Բայց ինձ առանձին հաճութիւն էր պատճառում հանդիպել նրան: Միանգամ ես գալիս էի բարձած

սայլակով,—ներկայ էի մի աճուրդի մեր հարևանութեան մէջ,—սայլը ծանր էր բարձած, և ես գնում էի ձիաների կշտով: Նա կանգնած էր ցանկապատի ետևում: Բայց հէնց որ նկատեց, որ ես տեսայ նրան, նստեց և ցանկապատի միջով սկսեց իր սև աչքերը փայլեցնել իմ վրա:—Ինչո՞ւ ես թագնվում դու, Կատա,—ձայն տուի նրան,—կարծեմ, ես ոչինչով չը վիրաւորեցի քեզ,—և այդ խօսքերը ասելու միջոցին ես կանգնեցրի ձիաները: Աղջիկը պատասխան չը տուեց:—Այդ ինչ բաներ ես սարքում,—շարունակեցի ես,—միթէ ես ընկած եմ քո ետևից: Ինչո՞ւ ես փախչում ինձանից, հէնց որ տեսնում ես ինձ:—Կատան այդ ժամանակ ցանկապատի միջով նայեց իմ վրա, ձեռքը տարաւ դէպի աչքերը և խորամանկ կերպով ծիծաղեց: Ա՛խ, այն ինչ երես էր, այն ինչ ատամներ էին, նրանց մօտ ինչ արժէք ունէին սպիտակ մարջանները:—Դուք վերադառնում էք տօնավաճառից, Բալաբան,—ամօթխածութեամբ ասաց նա,—ա՛խ, երանի թէ ես էլ ձեզ նման կարողանայի թափառել լոյս աշխարհում:—Բայց քեզ աւելի վայելուչ կը լինէր զբօսանքներ կատարել և ոչ թէ շրջմոլիկի նման թափառել:—Ես խօսում եմ միայն տօնավաճառի մասին, բայց ինչ չէի տալ նրա համար միայն, Որ տեսնեմ մի որ և իցէ քաղաք. Սև ծովը. իսկ ամենից առաջ ես կը ցանկանայի լինել Կա-

լօմէջայում։—Դու դեռ ոչ մի անգամ չես եղել այնտեղ։—Ոչ մի անգամ։ Ես դեռ ոչ մի քաղաք չեմ տեսել.—(այժմ նա վստահութեամբ նայում էր իմ աչքերի մէջ)—Ճշմարիտ է, որ Կալօմէջայում պարոնները ման են գալիս արկղների մէջ, որ դրած են չորս անիւների վրա, և թէ այնտեղ կայ տուն, լցված զինուորներով։—Ես բոլորը բացատրեցի նրան,—այդ ժամանակ նա ոչ մի բանի մասին հասկացողութիւն չունէր։ Ես ակամայ ծիծաղում էի, պատասխանելով նրա միամիտ հարցերին, որոնք իսկապէս յիմարութիւններ էին, և նա, կարծես թէ, վախենում էր և հաւի նման թաղցնում էր գլուխը թևքի տակ։ Արեգակը խոնարհվում էր դէպի իր մուտքը։ Ահա և այս րոպէում, կարծես, տեսնում եմ իմ առջև այն փողոցը, այն ցանկապատը և նոյն գեղեցիկ աղջիկը։ Նրա միւս կողմում երկինքը տարածվել էր, ինչպէս մի կարմիր շալ։ Այլ ես ես չը կարողացայ նայել դէպի այդ կողմը,—մի ձեռքով բռնեցի բարձած սայլակը, միւսով զարկեցի մտրակը գետնի աւազներին, և շարունակեցի իմ ճանապարհը։ Հետևեալ կիրակին հանդիպում եմ իմ Կատերինային եկեղեցում,—Ներեցէք, որ ասում եմ իմ Կատերինա,—այսպիսի յիմար սովորութիւն ունեմ ես։ Ես աղօթում էի և երբեմն նայում էի նրա վրա։ Ժամերգութիւնը վերջանում է, ժողովուրդը եկեղեցուց դուրս է գալիս. օրհնած ջրի աւազանի մօտ

տիրում է սարսափելի իրարանցում. ես բազմութիւնը ճեղքելով մօտենում եմ և ափերիս մէջ տալիս եմ սուրբ ջուրը իմ գեղեցիկ Կատերինային։ Նա ժպտում է, մատները թաթախում է իմ ափերի մէջ, երեսը խաչակնքում է, յետոյ ջուրը սրսկում է իմ երեսին ու փախչում է։ Այդ օրից ես ակամայ միշտ մտածում էի նրա վրա։ Այդ ինչ դժբախտութիւն էր։ Ես աշխատում էի իմանալ, թէ որտեղ կարող եմ հանդիպել նրան, բայց այնպէս, որ դա ունենար իբր պատահմամբ հանդիպելու ձև։ Ա՛խ Տէր Աստուած, սիրահարական պատմութիւն,—ինչպէս և բոլոր այդպիսի...

—Միանգամ,—շարունակեց Բալաբանը,—ես աշխատում էի մեր կալուածատէր պարոնի տան մէջ, և գտնում եմ նրան հէնց այնտեղ, համարեա երեկոյեան պահուն։ Կալուածատէրը խալաթը հագին նստած էր լուսամուտի մօտ և չիբուխ էր ծխում։ Կատերինան մի գործի պատրուակով մօտեցաւ ինձ, ես չէի նայում նրա վրա։—Ես դուրս եմ գալիս այստեղից, Բալաբան,—ասաց նա մի քանի րոպէից յետոյ։—Լաւ է, որ դուրս ես գալիս,—պատասխանում եմ նրան կիսաձայն կերպով,—այստեղ ինչ պիտի չինես, տիրոջ տնից խէր չի տանի՝ քեզ նման մանկահասակ և գեղեցիկ աղջիկը։—Կատերինան շառագունեցաւ, չը գիտեմ, բարկութիւնից, թէ ամօթից։—Ձեր ինչ գործն է,—ասաց նա, երեսը շուռ տալով։—Ես շփոթվեցայ,

բոլորովին չփոխվեցայ: Բայց խոկոյն ուշքս հաւաքելով, պատասխանեցի նրան. սատանան միշտ կարող է մոլորեցնել մեզ, և ես ափսոսում եմ, երբ տեսնում եմ, որ մարդկային հոգուն վտանգ է սպառնում:—Ես աղքատ աղջիկ եմ,—ասաց նա,—ով կը տայ ինձ մի որ և իցէ բան, ով կամուսնանայ ինձ հետ: Բայց ախար ես էլ ցանկանում եմ կեանք վայելել, և ինձ էլ ուրախացնում է այն, որով ուրախանում են ուրիշ կնիկները: Ես շատ ցանկանում եմ ստանալ պարոնի տան մէջ մի որ և իցէ սիրուն բան, գոնէ մի նոր Թաշկինակ գլխիս համար, կամ գեղեցիկ մարջաններ, կամ մի մուշտակ:—Ինչու են պէտք քեզ մարջանները,—հարցրի ես,—կամ…—Այսպէս ես ոչ ոքին գիւր չեմ գալիս,—ձայն տուեց նա:—Սուտ է խօսել, ով որ քեզ ասել է այդ…—պատասխանեցի ես յափշտակված կերպով: Ես բոլորովին սիրեցի նրան: Այդ ժամանակ ես յիշեցի հին հեքիաթները և այն երգերը, որոնց մէջ Թագաւորը տիրում է հպարտ Թագուհու սրտին հարուստ ընծաներով, իսկ ձկնորսը գրաւում է իր սիրուհու սիրտը գեղեցիկ զիգլիներով, և այդ մտքով, մինչև Ծնունդի տօնը ես յետ էի գցում իմ մի գրօշը միւսի ետեւից: Երբ, վերջապէս, հասաւ ցանկալի գիշերը, այդ ժամանակ գիւղի մէջ ես ամենից առաջ զարդարվեցայ: Ես օծեցի երեսս մուրով, արքայական մնոթծանայի փոխարէն ձգեցի իմ վրա եկեղեցու

սեղանի կարմիր ծածկոցը, որը խնդրել էի տիրացուից, իսկ գլխիս դրեցի մի պսակ ոսկեզօծ Թըղթից: Ես ներկայացնում էի սև Թագաւորին, իսկ իմ բարեկամ ընկերներս, Յովհաննէս Ստեփնեակը և Պացօրիկը, խաղում էին սպիտակ Թագաւորների դեր, և ինձանից վատ չէին զարդարված: Իմ հօր եղբօր որդի Իսուֆը, որը յետոյ մեռաւ ծաղկի հիւանդութիւնից, համաձայնվեցաւ լինել մեր սպասաւոր. նա խափշիկի կատարեալ դէմք էր չինել: Մենք ճանապարհ ընկանք արևելքի հին իմաստունների բոլոր արժանաւորութիւններով, և արիաբար սկսեցինք մեր երգը: Երբ մենք ներս մտանք Կատերինայի մօտ, այդ միջոցին բոլոր աղջիկները ճիչ բարձրացրին և կաքաւների նման դուրս Թռան: Բայց Կատերինայի հայրը քաղցրութեամբ բարևեց մեզ, և պատուհանից ցած բերելով գինին, սկսեց, ինչպէս հարկն էր, հիւրասիրել մեզ: Մինչև որ իմ ընկերները խմում էին նրա հետ, ես քաղաքավարութեամբ բռնեցի Կատերինայի ձեռքից, գլուխ տուի և ասեցի նրան. օրհնում եմ քեզ, ով արևմուտքի ծաղիկ, մենք արևելքի Թագաւորներ ենք, եկանք այդ երկիրը, հետևելով մեր ուղեցոյց աստղին: Այստեղ մեզ ձայնեց համբաւը քո գեղեցկութեան և առաքինութեան մասին, և մենք ցանկացանք ծունր իջնել քո առջև և մատուցանել քեզ մեր ընծաները:—Վերջացնելով այդ համառօտ ճառը, ես կանչեցի իմ խափշիկ

իւսուֆին և դուրս բերեցի նրա տօպրակից մի գեղեցիկ կարմիր թաշկինակ և ամէնապատուական ու խոշոր մարջանների երեք շարք, և մատուցի այդ բոլորը իմ ընտրեալին։ Ես այդ իրեղէնները գնել էի Կալօմէայի մէջ։ Իմ Կատերինան չփոթվելուց գլուխը ցած խոնարհեցրեց, շառագունեցաւ, ինչպէս խաշխաշի ծաղիկ, և ձեռքերը թագցրեց ծնկերի մէջ, բայց աչքերով, կարծես թէ, նա ուտում էր թէ թաշկինակը և թէ մարջանները։ Ես կամաց տարայ նրան աթոռի մօտ, որ դրած էր վառարանի կշտին, և քաղցրութեամբ ընծաները դրեցի նրա ծնկերի վրա։ Այստեղ մենք միմեանց խիստ լաւ բացատրում էինք մեր սրտերը։—Ամէնագեղեցիկ թագուհի,—ասում էի նրան,—մի տարուց յետոյ ես կը բերեմ քեզ համար սամոյրի մուշտակ կամ սկիւռի մուշտակ, որն որ կը հրամայես։—Ո՛վ սևերի մեծ հրամանատար,—պատասխանեց նա,—ես արքայազն աղջիկ չեմ, ես աղքատ, չինական աղջիկ եմ, և ոչխարի մուշտակը իմ համար բաւական կը լինի։—Այդ ժամանակ ես պատասխանեցի. դու գեղեցիկ ես, ինչպէս մի թագուհի, այդ մասին ոչ ոք հակառակել չէ կարող ինձ հետ. արևելքում բոլորովին ուրիշ աշխարհ է, ուրիշ ժողովուրդ է և ուրիշ սովորութիւններ կան. մեզ մօտ ամեն մի տղամարդ ունի հարիւրաւոր կնիկներ, իսկ թագաւորը ունի հազար։ Բայց ես ճանաչում եմ միայն մի կնօջ, որի

հետ կը ցանկանայի անցկենալ իմ երկրային ճանապարհը։—Ամենքը զուարճանում էին, թըռչկոտում էին և աղմուկներ էին բարձրացնում։ Պացօրիկը բռնեց իմ Կատերինային և պար էր գալիս նրա հետ, ինչպէս մի կապը կտրած գայլիկ. ես միայն հանդարտ նստած էի և նայում էի այդ ուրախ մարդիկների վրա, և այդ միջոցին առաջին անգամ իմ սիրտը սկսեց խիստ օտարոտի կերպով տանջվել։ Ամբողջ աշխարհը փոխվեցաւ իմ աչքում և ամեն ինչ երևում էր ինձ հրաշալի կերպարանքով։ Որպէս մի տեսակ մարդիկ գիշերը կորցնում են տեսնելու ընդունակութիւնը, այնպէս էլ ես, ընդհակառակն, կուրացայ ցերեկվայ լոյսի առջև։ Այն աշխարհը, որը մի ժամանակ պտըտվում էր իմ աչքերի առջև, ամենևին նման չէր այդ աշխարհին. ես ակամայ նայում էի նրա մէջ, և մանաւանդ գիշերային պահուն տեսնում էի ես հրաշալի երևոններ, երբեմն թուփերի մէջ, երբեմն դաշտում։ Ես սկսեցի տեսնել ջրի մէջ, օդի մէջ, լուսնի լոյսի մէջ այն, ինչ որ ոչ ոք բացի ինձանից չէր տեսած, լսում էի ձայներ, ոչ ոքից չը լսված, ոչ ոքից չը ըզգացված։ Այն օրից անցան շատ և շատ տարիներ, բայց ես դեռ ևս չեմ կարողացել խօսքեր գտնել, որոնցմով կարելի լինէր բացատրել այն, որ ես զգում էի այն ժամանակ։ Իմ սիրտը երբեմն լայնանում էր, երբեմն նեղվում էր, երբեմն թըռ-

չում էր դէպի ինձ անհասկանալի մի կողմ, երբեմն դադարում էր զարկելուց: Ա՛խ, այն ինչ անխելքութիւն էր:

Զինւորը տխրութեամբ ժպտաց և կամաց շարժեց գլուխը:

—Ծնունդի տօնից երկու օր յետոյ, ճանապարհին հանդիպեցի Կատերինային:—Լուսավնցա՞ր արդեօք մոխրաջրով,—հեռուից ինձ ձայն տուեց նա, և մի և նոյն ժամանակ սկսեց խորամանկ կերպով ծիծաղել: Ես կամեցայ բռնել նրան, բայց նա իսկոյն յետ դարձաւ: Դրանից յետոյ, ուր և պատահում էինք միմեանց, սկսում էինք երկար խօսակցութիւն: Ես սկսեցի ման գալ նրա խրճիթը: Դրացիները սկսեցին իրանց նկատողութիւնները անել:—Գիտես, ինչ են խօսում մարդիկ,—ասեցի ես Կատերինային:—Ես ինչ գիտեմ:—Ասում են, որ դու իմ սիրելին ես:—Այդ խօ սուտ չէ,—պատասխանեց խեղճ աղջիկը,—մինչ ես չընդունեցի քեզանից թաշկինակը և մարջանները,—Ես ոչինչ չը պատասխանեցի նրան: Իրաւ որ, մարդիկ խօսում էին մեր մասին, և ամենքը, կարծես թէ, աշխատում էին մեզնից հեռու մնալ: Շուտով յայտնվեցաւ, որ այդ ճշմարիտ էր... Վերջին խօսքերը Բալաբանը արտասանեց հազիւ լսելի ձայնով, ամօթխածութեամբ նայելով մոխիր դարձող կրակի վրա, որի հանդարտ փայլը լուսաւորում էր նրա դէմքը, իսկ աչքերը, կարծես, բոլորովին տարված էին ներքին կրակով:

Ես նայեցի իմ մօտ նստողների վրա: Կօլանկօն որսում էր պատմողի ամեն մի խօսքը. Նրա յօնքերը խոժոռված էին, իսկ շրթունքները ամուր կերպով սեղմված էին: Թղթէ մարդը և Իւրկան, խուրձերի նման, ընկած էին մինը միւսի վրա: Մօնգօլը պառկած էր տաք մոխրի մէջ, ինչպէս ձուկը աւազի վրա, մոռանալով շունչ քաշել, և միայն երբեմն մի կերպով օդ էր կուլ տալիս:

—Այդ Կատերինան գեղեցիկ և բարի աղջիկ էր,—շտապով նկատեց Թղթէ մարդը, դառնալով դէպի ինձ,—և յետոյ որպիսի կին դարձաւ, մի կատարեալ տիրուհի: Նրա ման գալը, ասում եմ ձեզ, իմ պարոն, կասես թագաւորի կնոջ ման գալ լինէր, իսկ գեղեցկացաւ նա, ինչպէս մի սատանայ:

—Հիմա՞ էլ:

—Հէնց այդ եմ ուզում ասել ձեզ:

—Ինձ պատահեց մի անգամ համբուրել նրա ձեռքը,—ձայն տուեց պատանի Իւրկան վառվռուն աչքերով,—նա յետ քաշեց ձեռնոցը և ձեռքը տուեց համբուրելու, կարծես, իսկ և իսկ տիկնոջ ձեռք լինէր, այնպէս սպիտակ, փափուկ և փոքրիկ:

—Նա գեղեցիկ և բարի աղջիկ էր,—կրկնեց զինւորը,—աշխատասէր էր և ուրախ. բանելու ժամանակ երգում էր, պար էր գալիս, ոչ ոք նրա նման լինել կարող չէր: Ամեն մի խօսքի համար նա պատրաստի պատասխան ունէր, իսկ նրա

մաքերը այնպէս էին, ինչպէս մի կատարեալ ջագուկի մաքեր: Նրա հասակը կարելի էր մինչև անգամ բարձր համարել. մազերը թուխ, իսկ աչքերը այնպէս բարի, մտայոյզ, երկնագոյն և, գիտէք, մի և նոյն ժամանակ վախկոտ, ամօթխած էին, որպէս մի որ և իցէ գազանի աչքեր: Երբ որ նայում էր նա իմ վրա, կարծես, աչքերը թափանցում էին իմ մէջ: Նրա գլուխը, ինչպէս բացատրեմ, խիստ աղավարի էր: Իմանում էք, պարոնի այգիում կանգնած էր մի կին, քարից կըտրած, ասում էին, դա հին աստուածուհի է: Իմ Կատերինան ունէր իսկ և իսկ այնպիսի գլուխ, մի և նոյն խիստ գծերով: Գեղեցիկ աղջիկ էր և ուրախ, ինչպէս գարնանային վարդը Սև լեռան վրա: Դժուար էր չը սիրել նրան: Ես նրանից աւելի թանգագին բան չէի ճանաչում այս աշխարհում: Ես կարող էի խօսել նրա հետ, ինչպէս մօր հետ, կարող էի ամեն բան ասել, ամեն բան հաւատալ նրան. նրանից ես երկիւղ չունէի, նրանից չէի ամաչում. Նրա հետ եղած ժամանակս մոռանում էի ամեն հպարտութիւն: Երբեմն նա նստած էր լինում եկեղեցում, կարծես, մի սուրբ լինէր, խաղաղ, ծանր,—այդ միջոցին իմ սրտում կատարվում էր մի անսովոր բան, մի ինչ-որ հանդիսաւոր բան, որպէս թէ ես աղօթում էի նրա առջև և խոստովանվում էի բոլորը, ինչ որ կար իմ սրտում: Նրան ծանօթ էին

իմ սրտի բոլոր խորշերը. միայն նրանից և Տէր Աստուծուց ես ծածուկ ոչինչ չունէի: Իսկ նա—նա, կարծես թէ, իմ զաւակը լինէր, իմ ձագուկը լինէր, վեր առած բոյնից և իմ ձեռքով մեծացրած: Ինձ հարկաւոր էր միայն նայել նրա վրա, և նա հասկանում էր իմ բոլոր մտքերն ու ցանկութիւնները: Երբեմն ես մտածում էի, չը լինի թէ մայրս իմ տղայութեան ժամանակ լողացրել է ինձ մեղրի ջրի մէջ, որովհետև այնպէս սիրով նա համբուրում էր ինձ,—համբուրում էր երբեմն բոլորը, եթէ ոչ, յանկարծ կը սկսէր կծել, ինչպէս օձ: Ես երջանիկ էի—(նա ժպտաց)—այսինքն, երբ ես մտաբերում եմ այն ժամանակը, կարող եմ ասել, որ երջանիկ էի, բայց այն ժամանակ ես չէի հասկանում իմ բախտաւորութիւնը: Միայն երբէք ես երևակայել չէի կարող, թէ այդ բոլորը կարող էր մի օր փոխվել... Սկսվեցաւ գարունքը: Մի քանի ժամանակից յետոյ ես սկսեցի նկատել փոփոխութիւն: Կատերինան, կարծես թէ, հպարտացած լինէր: Ահա, մի անգամ, երեկոյեան ես գնում էի ջրելու ձիաներին: Այդ այնտեղ էր, այծերի աղբիւրի մօտ, ուռիների ետևում, դուք իմանում էք այդ տեղը: Այդ առաջին անգամն էր, որ ինձ պատահեց սպասել նրան: Վերջապէս, ես նշմարեցի նրան մարգագետնի վրա ինչպէս մի չինարի, ջուր կրելու լծակը ուսի վրա դրած. ջրամանները թեթև կերպով շարժվում էին, և նա երգում էր մի զըւարճալի երգ.

Ես եկեղեցի գնացի ոչ թէ աղօթելու,
Գնացի սիրելիս տեսնելու.
Պատկերները համբուրել եմ ցանկանում,
Յանկարծ նրա պատկերն եմ տեսնում:

—Այսպէս ուրախ երգում էր նա, ճլվլում էր, ինչպէս մի արտոյտ, իսկ իմ սիրտը տխուր էր: Ես քնքշութեամբ համբուրում եմ նրան, գրկում եմ և չեմ ասում ոչ մի վատ խօսք: Նա չէ խօսում, թեքւում է, լցնում է իր ջրամանները, գնում է նրանց լծակի մօտ և նստում է:—Դրանից ինչ դուրս կը գայ,—ասում է նա, իր ոտների ծայրերը խաղացնելով ջրի մէջ.—չէ՞ որ ես պէտք է ասեմ քեզ այդ: Պարոնը միշտ վազ է տալիս իմ ետևից:—Պարոնը,—համարեա վախեցածի պէս կրկնում եմ ես: Նա թեթև կերպով գլխով է անում:—Նա կոչում է ինձ իր սիրելի, բռնում է ինձ իր գրկի մէջ և արդէն մի անգամ համբուրեց ինձ:—Ես բարկացայ և ոտքս խփեցի գետնին:
—Տես, չը ծեծես ինձ,—գոչեց նա,—պարոնը խոստանում է ընծայել ինձ թանգագին հագուստներ, թանգագին քարեր, բայց հիմա ես մի գրոշ էլ չունեմ, մինչև անգամ չեմ կարողանում ինձ համար ժապաւէններ գնել: Ես կարող կը լինէի մանգալ նրա կառքով, չորս ձիաներ լծած, ինչպէս մի նշանաւոր տիկին, բայց ես չեմ կամենում:—Նա դեռ ես չէր վստահանում աչքերը բարձրացնել դէպի ինձ:—Նայի՛ր ինձ վրա,—ասեցի

նրան: Նա հնազանդվեցաւ, բայց նրա աչքերում երևում էր մի ինչ-որ օտարոտի ամօթխածութիւն:—Ես ականջ չեմ դնի նրան,—իսկոյն շարունակեց նա,—մինչև անգամ ես սպառնացի, որ կը խփեմ նրան, եթէ նա դարձեալ կը մօտէ համբուրել ինձ:—Բայց, այսուամենայնիւ, նա համբուրեց քեզ, և դու չը խփեցիր նրան:— Ես չեմ կամենում,—դարձեալ գոչեց նա,—նա գիտէ այդ և դրա համար էլ ինձ վրէժխնդիր է լինում: Իմ հայրը արդէն ոչինչով չէ կարողանում գոհացնել նրան. նա կամենում է խլել մեզանից մեր վարելահողը և մեզ մուրացկանի նման արտաքսել գիւղից:—Նա ձեզ արտաքսելու իրաւունք չունի,—ասեցի ես միամիտ աղջկան,—դու միայն մի վախեցիր նրանից: Եթէ մի օր Աստուած կօրհնէ մեր ամուսնութիւնը, այն ժամանակ մեզ չէ կարող վնաս տալ ոչ մի մինիստր անգամ, եթէ նա ինքը սատանան լինէր: Մի վախիր, հոգիս, դու իմ փոքրիկ լոլիկ: Չէ՞ որ դու սիրում ես ինձ: Ցոյց տուր, որ դու հաստատամիտ և քաջ աղջիկ ես:—Այդ միջոցին սկսեց նա լաց լինել, այնպէս ցաւալի կերպով լաց լինել, որ նրա վրա նայելով, իմ սիրտը կտոր-կտոր էր լինում:—Ես այնքան ուժ չունեմ, որ կարողանամ ընդդիմանալ,—գոչեց նա: Այդ րոպէում կանաչ դաշտից սլացաւ արտոյտը և ուրախ կերպով ճախրում էր երկնքի մէջ:—Արտոյտը թռչում է,—ասաց նա,—թռչում

է օդի մէջ. ա՛խ, եթէ ես էլ կարողանայի այնպէս թռչել, որպէս նա:—Խնդրում եմ, մի խօսիր այսպիսի յիմարութիւններ,—երկիւղով ձայն տուի ես,—մնացիր ինձ հետ:—Այնպէս չի մնայ, ինչպէս էր առաջ,—պատասխանեց նա և հառաչանքով սրբեց աչքերի արտասուքը,—ես կարողութիւն չեմ ունենայ ընդդիմանալու:—Այդ միջոցին ձին այնպէս քարշ տուեց ինձ, կարծես, կամենում էր ինչ-որ ասել ինձ. ես տխրութեամբ փայփայեցի նրան, և իմ աչքերը լցվեցան արտասուքով:—Եւ ինչ պէտք է քեզ կռուել նրա հետ,—ասեցի ես.—ոչ ոք չէ կարող բռնանալ իր բնաւորութեան վրա: Այդ միջոցին կատերինան ուշադրութեամբ նայում էր իրան վտակի մէջ: Ա՛խ, որքան գեղեցիկ էր նա: Հեզիկ կերպով օրօրվող վտակի միջից նայում·էր ջրային յաւերժահարս, որին ընդդիմանալ չէր կարող ոչ մի մարդկային սիրտ:—Հաւատարիմ կը մնաս ինձ, թէ ոչ,—կամաց հարցրի նրանից: Ես վախենում էի: Իմ սրտին տիրում էր մի անբացատրելի սարսափ, երբ մտածում էի, թէ կարող է պատահել, որ կը կորցնեմ նրան, կամ կը բաժանվեմ նրանից: Ես պատրաստ էի ընկնել նրա ոտները և խնդրել նրանից, որ խնայէ ինձ:—Աստուած, ներիր իմ մեղքը…— Ես քեզ չեմ թողնի,—բացականչեց նա և քնքշութեամբ գրկեց ինձ:—Ա՛խ, եթէ ես այնպէս գեղեցիկ լինէի, որպէս առաւօտեան արշալոյսը, եթէ ես լոյս

տայի ցերեկով և չը հանգչէի գիշերը, բայց ես, ճշմարիտ, չեմ հասկանում, թէ ինչ բան կայ իմ մէջ, որ այնքան ախորժելի եմ թւում նրան: Մենք աւելի շատ յարմար ենք միմեանց, մենք լաւ զոյգ ենք, ես և դու, ուղիղ չէ՞ Բալաբան:—Ես պատասխանեցի գլխիս շարժումով և հեռացայ ձիաների մօտ,—այլ ես խօսել չը կարողացայ:

Ջինուորը կանգ առեց: Պատմելու միջոցին նրա չիբուխը հանգել էր, և նա լռութեամբ կրկին լցրեց նրան, կրակ զարկեց, վառեց ծխախոտը և սկսեց կամաց-կամաց ծխել:

—Ես միանգամ ևս խօսակցութիւն ունեցայ նրա հետ,—շարունակեց նա:—Այդ պատահեց նրա տնակում: Նրա ծերունի հայրը գնացել էր դրսում աշխատելու, և մենք մնացել էինք միայնակ: Մինչդեռ ես բռնած ունէի նրան իմ գրկի մէջ, նա դողդողում էր և այնպէս պինդ համբուրում էր ինձ, որ իմ շրթունքներից արիւն էր դուրս գալիս: Յանկարծ ժպտելով ասաց նա. մտածիր, եթէ պարոնը, այն երեկի պարոնը, այժմ գտնվելու լինէր քո տեղում, եթէ նա այսպէս հոգւոց հանէր ու աչքերը պտտացնէր, ինչպէս դու, միթէ այդ լաւ չէր լինի:—Նա ձեռքերով յենվեցաւ իմ գլխի վրա, դէպի յետ մղվեցաւ, և սկսեց նայել առաստաղի վրա, կասես թէ, քնի մէջ լինէր: Դա մի հպարտ զուարճասէր է,—այդպէս է պարոնը: Նա մորակով ծեծում է ուրիշ կնիկներին, ինչպէս

չներին, բայց իմ ձեռքերը համբուրում է, դու չես հաւատում։—Ոչ, չեմ հաւատում։—Նա նկատեց, որ ես պատրաստ էի լաց լինել, և խղճաց իմ վրա։ Նա իմ ճակատի վրա թափված մազերը մի կողմ դարձրեց, և սկսեց ժպտալ։ Ես շարունակում էի լուռ մնալ։ Նա վեր կացաւ և յարդարեց իր ծամերը։—Ի՞նչ պատահեց քեզ։ Ի՞նչու ես լուռ,—անսպասելի կերպով ձայն տուեց նա,—մի՛ բարկացրու ինձ, թէ չէ... Նրա աչքերը փայլում էին բարկութիւնից։—Կատերինա,—ասեցի նրան,—մըտածիր յաւիտենականութեան վրա...

Կօլանկօն անհանգիստ կերպով շարժվում էր դէպի յետ ու առաջ և ցաւակցութեամբ նայում էր գինուորի վրա։

—Հէնց դրա վրա էլ ես մտածում եմ արդէն,—ձայն տուեց աղջիկը,—այստեղ մենք երկար չենք մնայ, իսկ այնտեղ կը մնանք մշտապէս։

—Բայց դու չը հաւատացիր նրան, ընդհատեց Կօլանկօն գինուորի պատմութիւնը։

—Նա նստեց իմ մօտ,—շարունակեց Բալաբանը,—և դարձեալ սկսեց իր խօսքը։—Դու ինչ կատէիր, Ֆրինկօ, եթէ այս աշխարհում ես պատկանէի պարոնին, իսկ գալոց աշխարհում քեզ, միայն քեզ։ Այնտեղ մենք ամենքս կը լինէինք մաքուր հոգիներ. այնտեղ ես էլ կը լինէի մաքուր հոգի, բայց այստեղ ես մեղաւոր հոգի եմ, նոյնպիսի կին եմ, ինչպէս և ուրիշները։ Այդ միջոցին

նա խոժոռեց աչքերը, և նրա բաց-կարմիր բերանը մի այնպիսի խորամանկութեամբ ծիծաղում էր, որ իմ կաշու տակով, կարծես, սառսուռ էր անցնում։—Եթէ դու ունենայիր մի ագարակ,—շարունակեց նա,—դու կարող կը լինէիր վարձել ինձ համար աղախիններ, ծառաներ, կառք չորս ձիաներով, դու կարող կը լինէր բերել ինձ համար քաղաքից թանգագին քարեր, սամոյրներ, որպիսիները հագնում են տիկինները, կամ մինչև անգամ եթէ դու լինէիր հարուստ գիւղացի, որը ունենար բաւական փողեր սև օրվայ համար,—իմանում ես, ես, այսուամենայնիւ, չէի սիրի քեզ աւելի, որքան այժմ սիրում եմ. ես ոչ ոքին չեմ կարող սիրել այնպէս, ինչպէս սիրում եմ քեզ. դու միայն թանգագին ես ինձ համար այս աշխարհում, քան թէ բոլոր տղամարդները։—Նա ձեռքերը փաթաթեց իմ պարանոցին, լաց էր լինում և համբուրում էր ինձ։ Ցրտութիւնից ամեն ինչ լռել էր իմ կուրծքի մէջ։ Ես գտնվում էի այնպիսի մարդու դրութեան մէջ, որը կաշկանդված է լինում շղթաներով, որը դատապարտված է լինում կախաղանի, և որը ազատութեան ոչինչ միջոց չէ տեսնում։—Գիտես ինչ կայ,—վերջապէս ասեցի ես,—կը գնամ գայտամակների *) մօտ,

*) Գայտամակ նշ. աւազակ, որ մեծ ճանապարհների վրա յափշտակութիւններ է անում։

միայն թէ կարողանամ բերել քեզ համար ոսկի և արծաթ, սամոյրներ և թանգագին քարեր։

—Ի՞նչու, պատասխանեց նա գլուխը շարժելով. —դա կը վերջանայ նրանով, որ քեզ կը բռնեն, բայց պարոնից ես բոլորը կը ստանամ այնպէս, որ մի մազ էլ չի պակսի նրա գլխից։ Ի՞նչպէս ես կարծում, այսպէս աւելի լաւ չի լինի։—Դու շատ բարի ես,—պատասխանեցի նրան։—Իսկապէս բարի եմ,—ասաց նա,—ես չեմ ցանկանում, որ դու մեռնես ինձ համար։—Այդ միջոցին նա դարձեալ գրկեց իմ պարանոցը և քնքշութեամբ համբուրում էր իմ արտասուալի աչքերը։ Այդ ժամանակ նրա հայրը ներս մտաւ, նայեց մեզ վրա, և դրեց իր կալ ծեծելու շղթան մի անկիւնում։ Քաղաքավարութեան համար ես խօսեցի նրա հետ մի քանի խօսքեր և դուրս եկայ խրճիթից։ Խաղաղ գիշեր էր, երկինքը փայլում էր. Կատերինան գալիս էր իմ կշտով. մենք երկուսս էլ լուռ էինք. յետոյ ես քայլերս շտապեցրի, և նա յետ մնաց. ես շուացնում էի, բայց ոչ սրտիս ուրախութիւնից։ Այդ բոլորը կատարուեցաւ նախ քան 1848 թւականը։ Այն ժամանակ դեռ գոյութիւն ունէր ճորտատէրութեան իրաւունքը, աղայութիւնը, և գիւղացին կրելու շատ ցաւեր ունէր։ Այդ ժամանակ ինձ ուղարկեցին աղի սայլի հետ, և ես մի քանի օր բացակայ էի գտնվում։ Դա հրովարտակի հակառակ էր և ընդդէմ ամեն իրաւունքների. ես այդ

գիտէի, բայց այնուամենայնիւ հնազանդուեցայ։

—Բայց ի՞նչ կարող էիր դու անել այն ժամանակ,—ասաց թզթէ մարդը մրմրթալով և ուսերը ժաժ տալով։

—Ծանր ժամանակ էր,—բացականչեց Կօլանկօն, ողբալի ձայնով հառաչելով։—Պատահում էր, երբ կը խօսէիր իրաւունքի վրա, իսկոյն կալուածատէրը քեզ կը պատասխանէր փայտով։ Վատ ժամանակներ էին, վատ։ Դուք, ծծկերներդ, դեռ շատ բան չէք տեսել։

—Ի՞նչ պատահեց, երբ դուք գնացիք աղի սայլի հետ,—շուտով հարցրի ես Բալաբանից, իմանալով, որ երբ մեր գիւղացիները սկսում են խօսել կալուածատէրների մասին, այլ ևս նրանց խօսակցութեանը վերջ չի լինի։

—Ես երկար բացակայ էի գտնվում, բայց երբ վերադարձայ, այդ ժամանակ պարոնի հաւատարմատարը ինձ համար միշտ ուրիշ գործ էր գտնում զբաղեցնելու համար։ Իսկ Կատերինան, որպէս նկատում էի, խոյս էր տալիս ինձ հանդիպելուց։ Ես իսկոյն հասկացայ, թէ քամին ո՞ր կողմից էր փչում։ Վերջապէս, ես հանդիպեցի նրան եկեղեցում, և մենք մուտքի մօտ պատահմամբ ընդհարվեցանք միմեանց հետ։ Ես նկատեցի նրա հագին ոչխարի մորթուց նոր թուլուպ, որի հոտը զգալի էր լինում քսան քայլ հեռաւորութիւնից. գլխին կապած ունէր մետաքսեայ նոր թաշկինակ, իսկ

պարանոցին բազմաթիւ մարջաններ: Նա այժմ այնպէս սպիտակացել էր, որպէս հէնց նոր մաքրած ժանգոտ աման:—Ի՞նչ լաւ զարդարված ես դու,—նկատեցի ես նրան,—բայց ո՞ւր է իմ թաշկինակը:—Գտիր, եթէ ուզում ես,—ձայն տուեց նա թէ բարկանալով և թէ վախենալով: Ես նայեցի ուղիղ նրա աչքերի մէջ:—Դու հօ ինձ վիրաւորելու միտք չունես,—զարձեալ ձայն տուեց նա:—Ամենևին ոչ,—հանգիստ կերպով պատասխանեցի ես,—գնա քո ճանապարհով:—Յետոյ սկսեցին ուղարկել ինձ անտառը, որտեղ ծառեր էին կըտրում: Այստեղ իմ սրտի ուզած տեղն էր: Երբ որ քամին աղմուկով անցնում էր ծառերի կատարների վրայով և նրանց ճիւղերը հառաչելով թեքվում էին, կամ երբ կոցահարը հանգիստ կերպով բաղխում էր ծառերի բուները, և արծիւը սլանում էր իմ գլխի վրայով, թեթև կերպով թափահարելով իր թևքերը, և երբեմն արձակելով վայրենի հնչիւններ,—այդ ժամանակ, պառկած քամակիս վրա, ես նայում էի դէպի երկինքը, և սրտիս ցաւը հանդարտվում էր: Ուրիշ ժամանակ ես չէի իմանում, թէ ինչ անեմ ինձ հետ: Ես սաստիկ ցանկանում էի ունենալ մի հրացան, և այդ մըտքով փորեցի մի առանձնացած կաղնիի տակ մի փոքրիկ փոս և սկսեցի հետզհետէ հաւաքել այնտեղ իմ վաստակած գրօշները: Երկար պէտք էր սպասել, մինչև կը կարողանայի հրացան գնել:

Անտառում ես հանդիպեցի Բրիգեատայի հետ. դա մի պառաւ կին էր, որը բնակվում էր Տուլաւայի մերձակայքում. Նա եկել էր անտառը ծոթրին քաղելու: Տեսնելով ինձ, ձեռքերով ծափահարեց նա:—Դու այստեղ զբաղված ես փայտ կտրելով, Բալտրան,—ձայն տուեց նա,—իսկ քո բացակայութեան ժամանակ պարոնը առեց իր մօտ քո Կատերինային:—Ի՞նչ ես ասում,—ընդմիջեցի ես,—միթէ Կատերինան տեղափոխվեցաւ նրա մօտ, նրա տանը:—Այո, ուղիղ նրա տանը: Տէր Յիսուս, այդ ինչ խաղ էր: Պարոնի տան մատակարար կինը իսկոյն ստիպվեցաւ հեռանալ. պարոնը վռնդեց նրան: Հիմա Կատերինան փառաւոր կերպով տան մէջ ամեն կարգադրութիւն ինքն է անում: Այնօրից շատ ժամանակ չէ անցել, որ ես տունկեր էի տարել պարոնի խոհանոցը, տեսնում եմ, Կատերինան մտնում է այնտեղ. ամբողջ գըլուխը պատած էր կտաւի փաթոթներով, հագած ունէր ամենաերկայն հագուստ, գլանակը բռնած ունէր ատամների մէջ, ինչպէս մի տիկին: Ես նայում եմ նրա վրա, և չեմ համբուրում նրա ձեռքը: «Միթէ դու չես իմանում, թէ ինչ պիտի անես իմ ձեռքի հետ», իսկոյն բղաւում է նա իմ վրա., դէ, առ. քեզ»: Եւ զարկեց ուղիղ իմ բերանին և աւելացրեց մի երկրորդ անգամ ևս:—Այն ես իմացայ ես պառաւից, որ Կատերինան ուտում է արծաթէ դանակով ու պատառաքաղով, որպէս

թէ, իշխանուհի ծնված լինէր, ման է գալիս ձիով, և հրամայում է պատժել սպասաւորներին, ինչքան որ սիրտը ուզում է։—Այսուամենայնիւ, նա մի հարճ է,—ասեցի ես պառաւին։ Անտառում, առանձնութեան մէջ, ոչ սակաւ անգամ մտածում էի ես լինել աւազակ։—Թող Աստուած ների իմ մեղքը,—լինել գայտամակ, որը կրակ է ձգում, հրդեհում է աղաների տները, որոնք շինված են ագարակների վրա, և որը երբեմն մեխերով գամում է իրան, աղային, ամբարանոցի դռան վրա, ինչպէս մի գիշակեր թռչունի։ Բայց իմ խիղճը լուռ չէր մնում, և որտեղ որ ես կանգնած էի լինում, կամ որտեղ որ ես գնում էի, մի ինչ-որ ներքին ձայն միշտ ասում էր ինձ. ինչ ես կամենում դու, ով շինական և շինականի որդի։ Քեզ ինչ կը վայելէ հրացանը։ Կարող ես դու միայնակ պատերազմել մարդիկների հետ։—Ես հանգստացայ և մնացի գիւղում, միայն հաստատ վճռեցի այլ ևս չը համբերել ոչ մի բռնաբարութեան իմ իրաւունքների վերաբերութեամբ, և բաւականանալ միայն իմ պարտաւորութիւնները կատարելով։ Լաւ, այսպէս։ Մի անգամ ես հանդիպեցի Կօլանկօին, նա թաւալվում էր ձիւնի մէջ, ինչպէս շղթայով կապած մի շուն։ Իմ Կատերինան հրամայել էր նրան պատժել, միայն նրա համար, որ նա գլուխ էր տուել նրան ոչ այնպէս, որպէս վայել էր, և նա ինձ պատմեց...

—Երևակայեցէք,—ժիր կերպով ընդմիջեց զինուորի պատմութիւնը ծերունին,—Կատերինան այնտեղ թագաւորում էր, ինչպէս մի թագուհի, եթէ աւել չը լինէր։ Մենք գիտենք, թէ այն ժամանակ ուրիշ կալուածատէրները ինչպէս էին պահում իրանց կնիկներին։ Երկու վարժապետներ գալիս էին Կատերինայի մօտ քաղաքից, մէկը նրանցից ֆրանսիացի էր։ Նա սովորում էր այն ամենը, ինչ որ կարող էր միայն սովորել մի գրագիր կամ հոգևորական մարդ։ Ամեն շաբաթ փօստայից բերում էին նրա համար մի արկղ լի գրքերով. նա բոլորը կարդում էր. կարդում էր և լրագիրները, մի ամբողջ հակ. նրա սենեակում կանգնած էր մի մեծ արկղ կարմիր փայտից, նա սովորում էր ածել զանազան մուզիկաներ. երեկոյեան մարդիկ կանգնում էին նրա լուսամուտի ներքոյ և լսում էին։

Մօնգօլը խորամանկ կերպով ժպտաց և վառելափայտով քրքրում էր խարոյկը։

—Ի՞նչու այդպիսի մարդիկ չեն մտածում Աստուծոյ արդարադատութեան վրա,—մրմրթաց նա։

Ծերունին սաստիկ հազաց և բարկացած կատուի նման սկսեց մռմռալ։

Ջինուորը մռայլված դէմքով նայում էր կրակի մէջ. նրա դէմքը առաջվայ նման մնացել էր անտարբեր, անշարժ, անապատացած և անմխիթար։

Պատանին սաստիկ զարմացած նայեց Մօնգօլի վրա։

—Ի՞նչ ես այդպէս մտիկ անում,—կասկածանքով հարցրեց նա պատանուց, և այդ միջոցին նրա դեղին երեսը, վեր ցցված քթի հետ, բոլորը կուչ եկաւ։

—Մտիկ եմ անում, եղբայր Մօնգօլ, որ տեսնեմ, թէ ինչպէս է լինում, որ անձրևը չէ թափվում քո քթի մէջ։

Ամբողջ խումբը հռհռալով սկսեց ծիծաղել։ Մօնգօլը բռնեց պատանու ականջից, կամաց քաշ տուեց նրան դէպի ինքը և կրկին կամաց յետ մղեց իրանից։

—Տխրում էիք դուք ձեր հարսնացուի համար,—հարցրի ես Բալաբանից,—շատ տանջվեցաք այն ժամանակ։

—Չեմ կարող հաստատ ասել ձեզ այդ,—պատասխանեց նա, դանդաղ կերպով ներս ծծելով ծուխը իր չիբուխից։—Ես չէի մտածում վրէժխնդրութեան վրա, բայց մի և նոյն ժամանակ ես չէի կարող հեռացնել ինձանից բարկութեան զգացմունքը, երբ պատահում էր ինձ ընդհարումներ ունենալ պարոնի տան ծառայողների հետ։ Ես ցանկանում էի բարձրանալ նրանց վրա, այդ մտքով ես սովորեցի կարդալ, գրել և հաշուել։ Իմ հասակը շատ մեծ էր դպրոց գնալու համար, և այդ պատճառով ես սկսեցի սովորել տիրացուի մօտ, և նրան վարձատրելու համար, երբեմն տանում էի մի զոյգ ճտեր, երբեմն մի պարարտ սագ կամ լաւ ծխախոտ։ Ագահութեամբ կարդում էի

ես բոլորը, ինչ որ իմ ձեռքն էր ընկնում, կարդում էի սուրբ գրքեր, վարք սրբոց, Յովհան Գրօզնիի պատմութիւնը, Մարիա Թերեզա կայսրուհու և Յօվսէփ ու Ֆրանց կայսրների հրովարտակները, կարդացի և մի քանի օրէնքներ, և այն ժամանակ սկսեցի գրել խնդիրքներ գիւղացիների համար, որոնք այդ խնդիրքներով գնում էին նահանգային վարչութիւնը։ Ոչ ոք մեր բոլոր շրջակայքում չէր կարող այնպէս քըչ-քիչ տալ մուժիկներին ազնուականների վրա, այսինքն, այդ լեհական աղաների վրա, ինչպէս ես։ Ամբողջ Գալիցիայում չէր կարելի գտնել այնքան դատեր, որքան դատեր կային մեր գիւղում, և ես միայն գրում էի բոլոր թղթերը։ Երբ որ նահանգային դատաւորը շրջագայում էր իր վիճակում, մարդիկ կանգնած էին լինում ճանապարհների վրա, գանգատների թղթերը ձեռքներին բռնած, իսկ ես միշտ նրանց մօտ էի գտնվում։ Եթէ ես հնար էի գտնում սահմանափակելու կալուածատէրների կամայականութիւնը, միւս կողմից, երբէք չէի խնայում բացատրել շինականներին նրանց իրաւունքները, երբ յարմար առիթներ կային։ Այդ միջոցներում իմ սիրտը աղաւնու նման ուրախութիւնից մնչում էր։ Ազնուականները, ի հարկէ, դրա համար անուանում էին ինձ խռովարար, և սպառնում էին իրանց հաշիւները վերջացնել ինձ հետ, բայց վախենում էին, և չէին վստահանում որ և իցէ միջոցներ գործ դնել իմ դէմ։

—Ոչ սակաւ անգամ ծեծ էին ուտում դրա ձեռքից աղաների կազակները,—գոչեց Մօնգօլը:—Դա առանց պատճառի ծեծում էր նրանց, երբեմն գինետան մէջ, երբեմն ճանապարհի վրա, ուր և հանդիպելու լինէր:—Ես խփում եմ ձեզ նրա համար, որ դուք այսպէս ցած կերպով սարկացնում էք ձեզ,—յանդիմանում էր նրանց շատ անգամ:—Բայց մտածիր, եղբայր...—Էլ ինչ պէտք է մտածել, չէ՞ որ դուք աղայի դռան ծառաներ էք:—Այդ իրաւ է, բայց...—Կամենում էք հրաժարվել, թէ չէ:—Ոչ:—Ուրեմն ձեզ հէնց պէտք է ծեծել, դուք արժանի էք դրան:—Բայց եթէ ամեն մի մտրախներին ծեծելու լինէին, աղաղակում էին կազակները, այլ ևս մի տարուց յետոյ, ամբողջ պետութեան մէջ ընկուզենիների անտառներն անգամ չէին բաւականանայ, որ տեղից պէտք էր այն ժամանակ այնքան փայտեր գտնել ծեծելու համար:

Ջինուորը ծիծաղեց:

—Վերջապէս, միանգամ պարոնի հաւատարմատարը ինձ կանչեց իր մօտ,—նորից պատմել ըսկսեց նա,—անուանեց ինձ գրգռիչ, խռովարար, ապստամբ, աւազակ:—Պառկեցրէք դրան նստարանի վրա,—այնպէս աղաղակեց նա, որ ամբողջ դէմքը լըջացած գոյն ստացաւ, բայց ինքը թագնվեցաւ մարդիկների ետևում:—Մենք ինչ գործ ունենք,—պատասխանեցին կազակները,—դրա հա-

մար նա անպատճառ մեզանից մէկին մահուան չափ կը ջարդէ,—և ոչ ոք չը համարձակվեցաւ մօտենալ ինձ: Այդ միջոցին հաւատարմատարը փոքր էր մնում, որ տրաքվի բարկութիւնից, նրա մազերը խառնված էին, աչքերում երևում էին միայն սպիտակուցները, նա ինքը յարձակվեցաւ և սկսեց չարժել իմ վրա ձեռքի փայտը: Ես բռնեցի փայտը և կամաց ոլորում եմ նրա ձեռքը այնպէս, որ ձեռքը ճռնչաց, ինչպէս մի չիբուխ, երբ լուանում են նրա ծխհանը: Կամաց դուրս եմ կորզում փայտը նրա ձեռքից, և դնում եմ մի անկիւնում,—այդ բոլորը կատարում եմ շատ քաղաքավարութեամբ, ինչպէս ինքն ըստ ինքեան հասկացվում է, ախար, այսուամենայնիւ, մեծաւոր է: Դրանից յետոյ ինձ հանգիստ էին թողնում, մինչև մի անգամ սատանան հանդիպեցրեց ինձ մեր ողորմած հարճ-տիրուհու հետ: Նրա կառքը խըրվել էր ցեխի մէջ, կառապանը իր բազմոցի վրա նստած, իզուր մտրակում էր ձիաներին: Հէնց որ նա տեսաւ ինձ, իսկոյն կուչ եկաւ մի անկիւնում, կատուի նման կծկվեցաւ, և ամբողջ մարմնով դողդողում էր: Ես կանգնած նայում էի:—Ա՛յ ղօչաղ, օգնիր,—ձայն տուեց ինձ կառապանը: Ես մօտեցայ, փոքրիկ կառքը դուրս քարշեցի ցեխից, մի կողմ հրեցի, յետոյ խլեցի կառապանի ձեռքից մտրակը և երեք անգամ նրան զարկեցի, նրա համար, որ նա այնպէս վատ էր տանում

տիկնոջը։ Այդ օրից նա հանգստութիւն չունէր,— ես այդ լաւ էի հասկանում,— և այդ պատճառով նա վճռեց, որ ինձ տան զինուորութեան։

—Նա ամաչում էր, երբ տեսնում էր դրան,— աւելացրեց Կօլանկօն,— այդ պատճառով մտածեց իրանից հեռացնել։

—Այն ժամանակ ամեն մի կալուածք պարտաւոր էր իր կողմից տալ զինուորներ,— շարունակեց Ցրինկօն։— Կազակները քարշ տուեցին ինձ բակը, այստեղ տնկած էր մի փայտեայ ցից. ինձ մերկացրին, կանգնեցրին նրա մօտ, հասակս չափեցին, բժշկապետը բաղխելով քննեց իմ կուրծքը, նայեց բերանիս մէջ, յետոյ ինձ գրեցին,— և ամեն ինչ վերջացաւ դրանով։ Իմ մայրը թաւալվում էր հաւատարմատարի ոտքերի տակ, հօրս արտասուքը կամաց-կամաց գլորվում էր թշերի վրա, իսկ տիկինը այնտեղ, վերևում, նայում էր լուսամուտից, տեսնում էր, երբ ես կանգնած էի նոյնպէս դըժբախտ, որպէս Աստուած ստեղծել էր ինձ, և նրա սիրտը չէր խղճում իմ վրա։ Ես բարկութիւնից լաց եղայ։ Բայց միթէ այդ օգնեց։ Փող չը կար։ Իսկոյն ստիպեցին ինձ երդում տալ և դրեցին իմ գլխին արքունական գլխարկ։ Ես դարձայ զինուոր։ Երբ մենք դուրս էինք գալիս, ամենքը արտասուքով ճանապարհ էին դնում մեզ և իրանք, նոր ընտրված զինուորներն ևս, լաց էին լինում։ Նրանցից ամեն մէկը իր կուրծքի վրա կրում էր

խաչ և մի փոքրիկ քսակ, լցրած հայրենիքի հողով, որը վեր էին առել իրանց տների չէմքից։ Թմբուկը ածեցին, տասնապետը հրամայեց ընթանալ, մենք գնում էինք, ինչպէս միմեանց չաթած չներ, և միասին եղանակում էինք երգ, խիստ տխուր մի երգ։ Ես ինձ հանգիստ էի պահում։ Բաւական տարածութիւն անցնելուց յետոյ, երբ գիւղը, անտառը, եկեղեցին և բոլորը, ինչոր հայրենական էր, չքացաւ իմ տեսութիւնից, ես այդ ժամանակ աւելի հանգիստ դարձայ, խորհեցի և ինքս ինձ ասեցի. լաւ, դու ծառայում ես կայսրին, այժմ գոնէ դու գիտես, թէ ումն ես պատկանում։

—Բայց ինչպէս էիք դուք զինուորութեան մէջ,— հարցրի ես լարված դրութեամբ։

—Լաւ էի, պարոն,— պատասխանեց նա, և նրա աչքերում փայլեց մի զարմանալի բարութիւն։— Ինձանից չէին պահանջում ոչինչ աւելորդ բան, բացի նրանից, որ իմ պարտաւորութիւնն էր կատարել, իսկ իմ պարտաւորութիւնը ես հաճութեամբ կատարում էի։ Այժմ իմանում էի, որ ես մարդ եմ։ Մենք նախ եկանք Կալօմէա, և այստեղ ես սկսեցի զբաղվել հրացանի վարժութիւններով։ Երբ առաջին անգամ ես համոզվեցայ, որ կարող եմ իմ հրացանը գործածել, այդ ժամանակ ես փոքր ինչ հպարտացայ և մտածում էի. եթէ մի պատե-

րա՛զմ լինէր։ Մինչև անգամ Կալօմէայի մէջ ես տեսայ, որ կայ եղել կարգ այս աշխարհում. մեզ պահում էին թէև խստութեամբ, բայց արդարութեամբ։ Անարժան պատիժներ և անարժան պարգևներ չէին լինում, իսկ բնակիչները բաւականութեամբ էին նայում մեզ վրա։ Բայց երբ պատահում էր ինձ պահապան լինել նահանգային վարչութեան տան մօտ, երբ ես լսում էի մուժիկների միմեանց հետ ունեցած խօսակցութիւնը, և հասկանում էի, որ այդ տան մէջ նրանք պաշտպանութիւն են գտնում լեհացիների հարստահարութիւնից, այդ ժամանակ ես աչքերս բարձրացնում էի դէպի այն արծիւը, որը դրած էր դռների վրա, և մտածում էի. թէև դու այնքան խոշոր թռչուն չես, և ոչ ունես այստեղ բաւականաչափ թևքեր, բայց այսու ամենայնիւ այնքան մեծ ես, որ կարող ես պաշտպանել մի ամբողջ ժողովուրդ։ Երբ դրանից շատ յետոյ, մենք գնում էինք զօրահանդէս կատարելու, և դեղին դրօշակը սև արծիւի հետ ծածանվում էր մեր գլխի վրա, այդ ժամանակ ինձ հարկաւոր էր միայն նայել նրա վրա, և ես արդէն բաւականացած էի մնում։ Մենք սիրով էինք ապրում գունդի մէջ, նոյնքան սիրով ինչպէս մեր համայնքի մէջ. բոլորը պաշտպանում էին միմեանց. ազնիւ մարդիկներին օգնում էին, իսկ անպիտաններին պատժում էին իրանց մէջ։ Գիշերը, երբ օֆիցէրները տուն էին գնում

հանգստանալու, իսկ ֆելդֆեբելները գնում էին իրանց կանանց մօտ, մենք հաւաքվում էինք, ժողով էինք կազմում և աւելի օգուտ էինք բերում, քան ուրիշ իսկական դատաւորներ, կամ իրաւաբաններ։ Այսպէս անցաւ մի տարի, և ահա մի գեղեցիկ օր մենք կարգի դրեցինք մեր զինուորական մախաղները և գնացինք Վենգրիա, այնտեղից Բօհեմիա, յետոյ դիմեցինք դէպի Շտէյրեմարկ։ Երբեմն զինուորին պատահում է տեսնել ոչ միայն այն երկրները, որ պատկանում են իր կայսրին, այլ տեսնում է և օտար երկրներ, և ծանօթանում է զանազան մարդիկների և սովորութիւնների հետ։ Ես համոզվեցայ, թէ ոչ միշտ տանը լաւ է, և իմ սիրտը աւելի հանգստացաւ։ Ես նըկատում էի ուրիշ երկրներում աւելի բարօրութիւն, արդարութիւն, մարդասիրութիւն և կրթութիւն։ Ես սովորեցի յարգել գերմանացուն և չեխին. այդ վերջինը խօսում է այնպիսի բարբառով, որ նման է մերին։ Ես տեսայ սուրբ Նեպոմուկային իր արծաթեայ դամբարանի մէջ, տեսայ և այն քարաժայռը, որի մէջ նրան փակեց թագաւորը, և այն քարէ կամուրջը, որտեղից նրան գահավիժեցին ջրի մէջ. ինձ ցոյց էին տալիս այն տեղը, ուր հինգ պայծառ աստղներ լողում էին ալիքների մէջ արդար նահատակի գլխի վրա։ Շտէյերմարկի մէջ կան մարդիկ, որ կրկնակի պարանոց ունեն։

Ես ակամայ ծիծաղեցի, լսելով իմ խօսակցի միամիտ տեղեկութիւնները: Նա իսկոյն նկատեց այդ և լուռ կացաւ:

—Ես դեռ լաւ յիշում եմ, երբ դուք առաջին արձակուրդը խնդրելով, վերադարձաք գիւղը,—նկատեց Կօլանկօն մի առանձին բաւականութեամբ:—Սպիտակ համազգեստը կապոյտ օձիքով սաստիկ սազ էր գալիս ձեզ: Կնիկները հէնց վազ էին տալիս ձեր ետևից և միշտ շշնջում էին միմեանց հետ: Իմ պառաւն էլ էր ասում. հիմա Ֆրինկօ Բալաբանը մեր բոլոր շրջակայքում ամենագեղեցիկ տղամարդն է, և յայտնի է, որ այդ բանում նա հասկացողութիւն ունէր: Բայց Ֆրինկօն չէր կամենում կնիկների անունն անգամ լսել:

—Պարոնը հօ իմանում է,—դարձաւ դէպի ինձ զինուորը,—որ այն ժամանակ, երբ զինուորը արձակուրդ էր ստանում, նա փոխանակ ուրախանալու, պատրաստ էր լաց լինել: Իսկ իր տնից բաժանվելով, նա ազատվում էր ստրկութիւնից, աղաների կամայականութիւնից և չքաւորութիւնից, բայց զինուորական ծառայութեան մէջ ընտելանում էր կարգի, արդարութեան և պատշաճաւորութեան. նրան դժուար էր նորից համբերել չքաւորութեան և հարստահարութեան: Երբ որ սկսեցին դուրս կանչել մեր միջից նրանց, ով որ արձակուրդ ստանալու իրաւունք ունէր, այդ մի-

ջոցին ոչ ոք ձայն չը տուեց մեր զօրախումբի միջից: Միայն ես—մինչև անգամ չը գիտեմ, թէ ինչու յանկարծ այդ միտքը իմ գլուխը մտաւ—դուրս եկայ և յայտնեցի իմ ցանկութիւնը, թէ կամենում եմ արձակուրդ ստանալ: Ամենքը զարմացած նայեցին իմ վրա: Ինձ, ի հարկէ, արձակեցին: Ես եկայ տուն: Երբ ես իմ զինուորական վերարկուով և գլխարկով մտայ մեր խրճիթը, այդ միջոցին հայրս ուշադրութեամբ նայեց իմ վրա և դողդոջուն ձեռքով շօշափեց իր ճերմակ մազերը: Ես համբուրեցի նրա ձեռքը:—Լաւ եղաւ, որ եկար դու, Ֆրինկօ,—ասաց նա: Յետոյ յայտնվեցաւ մայրս, ճչաց, ծիծաղեց, և պայծառ արտասուքը թափվեցաւ նրա երեսի վրա: Ես սկսեցի պատմել, թէ որպիսի կեանք էի վարում մեր զօրագնդի մէջ կամ այն տեղերում, որտեղ ես կանգնած էի որպէս պահապան, իսկ նրանք հաղորդեցին ինձ այն բոլորը, ինչ նոր բան որ պատահել էր մեր գիւղում այդ միջոցներում: Եկան հարևանները և իմ առիթով խմեցին ոչ սակաւ գինի: Ամեն ինչ լաւ էր ինձ համար: Ոչ ոք մի խօսք անգամ դուրս չը փախցրեց նրա մասին, ես էլ չը վստահացայ հարցնել, լուռ էի և մտածում էի իմ մէջ. շատ կարելի է, որ պարոնը արտաքսել է Կատերինային, որովհետև ոչ ոք չէ տալիս նրա անունը: Յետոյ դարձեալ մտածեցի. բայց եթէ դեռ նա չէ արտաքսել, շատ հաւանական է, որ շուտով կարտաք-

սէ։ Ինքս էլ չեմ իմանում, թէ ինչու այդ ցանկանում էի ես։ Ինչ գործ ունէի նրա հետ։ Երբեմն ցանկանում էի ես տեսնել նրան կարօտութեան և նախատինքի մէջ, բայց այսուամենայնիւ, չատ կարելի էր, որ կօգնէի նրան։ Կիրակի օրը ես գնացի եկեղեցի և պատարագի վերջանալու ժամանակը պատահմամբ նայեցի դէպի կանանց վերնատունը։ Ո՞ւմն եմ տեսնում։ Իմ Կատերինան նստած էր, որպէս մի յարգելի տիրուհի։ Ա՛խ, որքան գեղեցիկ երեւաց նա ինձ, աւելի գեղեցիկ, քան թէ էր առաջ։ Բայց երեւում էր նա խիստ գունաթափ, հիւանդոտ, յոգնած, իսկ աչքերի ներքև նշմարվում էին մեծ, սևագոյն, բոլորակ գծեր, որպիսին ունենում են հանգուցեալները։

Զինուորի հանդիստ դէմքի վրա փայլում էր մի անհամեմատ խաղաղ արտայայտութիւն։

—Արիւնը սկսեց ալեկոծվել իմ մէջ։—Ո՞վ է այդ գեղեցիկ տիկինը,—հարցրի ես մի անծանօթ երիտասարդից։ Նա յիմար կերպով նայեց իմ աչքերի մէջ և պատասխանեց. դա մեր տիրուհին է, կալուածատիրոջ ամուսինն է։—Եւ այսպէս, կալուածատէրը իրաւ որ պսակվել էր նրա հետ սուրբ տաճարի մէջ, և այդ լաւ էր. այժմ իսկապէս դարձել էր նա իմ տիկինը։

Զինուորը ժպտաց։

—Ես ամեն օր կարող էի հանդիպել նրան։ Բայց ծեր կը տանէր այդ։ Ես աւելի բարւոք համարեցի

գնալ աշխատելու մի ուրիշ գիւղում։ Դրանով էլ ամեն ինչ վերջացաւ։

Զինուորը լռեց։ Նրա ձեռքերը թուլացան, գլուխը դէպի ցած խոնարհվեցաւ, և նա յամառ կերպով նայում էր կրակի մէջ. Նրա դէմքի պղնձեայ գծերը նորից խաղաղ ձև ստացան, իսկ աչքերը վառվում էին, որպէս հանդարտ բոց։ Ամբողջ մթին դաշտավայրը ընկղմած էր խորին, սրբազան լռութեան մէջ։—Դուք, կարծեմ, վերջացրիք ձեր պատմութիւնը,—նկատեցի ես, փոքր ինչ սպասելուց յետոյ։

—Այո,—կարծես թէ ամաչելով պատասխանեց նա ինձ։

—Դուք ուղիղ էիք ասում, ձեր պատմութեան մէջ չը կայ ոչինչ նշանաւոր, ոչինչ առանձին բան։ Այդպիսի դէպքեր սակաւ չեն պատահում, բայց ամենից նշանաւորը նրա մէջ—դուք ինքներդ էք։ Միթէ դուք երբէք չէիք մտածում վրէժխնդրութեան կամ որ և իցէ կերպով բաւականութիւն ստանալու մասին։

—Ո՛չ,—հանգիստ կերպով պատասխանեց նա, չը նայելով իմ վրա։—Եւ ինչու համար։ Նրա բնաւորութեան մէջ կար այդ։ Ո՞ւմից պէտք է ես վրէժխնդիր լինէի այն բանի համար, որ ե ս մարդ էի, իսկ ն ա կին։

Նրա պատասխանը զարմացրեց ինձ և աւելի ևս գրգռեց իմ կարեկցութիւնը։

—Ուրեմն, դուք երբեք չը փորձեցիք գոնէ ամենափոքր բաւականութիւն ստանալ,—կրկին հարցրի ես։

—Այդ ես չեմ ասի,—պատասխանեց նա փոքր ինչ մտածելուց յետոյ։—1848 թիւն էր, երբ ես, կրկին անգամ արձակուրդ ստանալով, վերադարձայ տուն, և երբ լեհական խռովութիւնը այնքան սարսափելի դժբախտութիւն բերեց Գալիցիայի վրա։ Սաստիկ ձմեռ էր, և մի անգամ գիշերը, փետրվարի վերջերում, եկաւ թանձր ձիւն. բոլոր փողոցները և ճանապարհները ծածկվեցան... Փոքր ինչ համբերեցէք, յետոյ կը լսէք այն, ինչ որ կամենում էք գիտենալ, բայց այժմ բոլորը խիստ օտարոտի կերպով պտըտվում է իմ գլխում, հարկաւոր է ինձ նախ պատմել մի ուրիշ հանգամանք։—Վաղուց արդէն զգացվում էր մի ինչ-որ չար բան. կալուածատէրները անցուդարձ էին տանում այս կողմ և այն կողմ, ձայներ էին պտըտում, թէ մի տեղում կազմված է զէնքերի մթերանոց։ Գիւղացիները խումբով հաւաքվում էին Տուլճւայի պանդոկի մօտ, որոնց թւում լինում էր և չինական դատաւորը։ Յանկարծ մեր կալուածատէրը ձիով մօտենում է պանդոկին և հարցնում է գիւղացիներից. կամենում էք լինել ձեր աղաների կողմը թէ ուրիշների կողմը. եթէ կամենում էք լինել մեր կողմը, պէտք է այսօր գիշերը ամենքդ հաւաքվէք եկեղեցու մօտ, ես կը բաժանեմ ձեզ զէնքեր

և ինքս կը գամ ձեզ հետ։—Բայց չինական դատաւորը պատասխանում է. մենք չենք համաձայնվի լինել ձեր կողմը, մենք կը մնենք կայսրի և Աստուծոյ կողմը։—Կալուածատէրը իսկոյն հեռացաւ, ձգելով ամբոխի մէջ լեհական պրօկլամացիա, իսկ դատաւորը դարձաւ դէպի ժողովուրդը, ասելով. եղբայրներ, մտիկ տուէք, որ ոչ ոք ձեզանից չը համարձակվի միանալ այդ լեհական կեղեքիչների հետ և անցնել նրանց կողմը։—Յետոյ բոլորը նայեցին պրօկլամացիայի վրա, բայց ոչ ոք չը կարողացաւ կարդալ նրան։ Այդ ժամանակ դատաւորը առաջարկեց կանչել ինձ։—Նա հին զինուոր է,—ասաց նա,—և շատ կարելի է, որ գիտենայ, թէ ինչ պէտք է անենք մենք այդ թղթի հետ։—Ինձ ձիով տարան, և ես սկսեցի կարդալ պրօկլամացիան։ Վերևում գրած էր. «Առ ամենայն լեհացիս, որ գիտեն կարդալ»։—Այստեղ ես ակամայ ծիծաղեցի, որովհետև, նախ, այնտեղ ոչ մի լեհացի չը կար, իսկ երկրորդ, ոչ ոք, բացի ինձանից, չը գիտէր կարդալ։ Դուք, պարոն, երևի յիշում էք այն ժամանակվայ կատակերգութիւնը։ Ահա ինչ էր գրված ներքևում. «Ստրկութիւնը և աղայութիւնը հետևանք է բռնաբարութեան և անարդարութեան, որովհետև առաջին ժամանակներում բոլոր մարդիկը հաւասար էին, թէ ազնուականները և թէ չինականները։ Եւ այժմ բոլորն էլ այնպէս կը լինի, եթէ մենք կազատվենք։ Բայց

մեզ վրա տիրեցին և վաճառեցին մեր երկիրը մոսկովացիներին, պրուսացիներին և կայսրին: Գերմանիայի կայսերական աստիճանաւորները խառնվեցան կալուածատէրների հետ և միասին այնպէս կեղեքում են չինականին, որ նա հազիւ կարողանում է յագեցնել իր քաղցը և ծածկել իր մարմինը ցնցոտիներով: Կայսրը ինչ հոգ ունի լեհական չինականների մասին, նա վաճառում է նրանց թանգ գնով աղ և ծխախոտ, նրա համար, որպէս զի ինքը կարողանայ լաւ ապրել Վիեննայում: Միայն Աստուած կարող է օգնել մեզ, բայց դրա համար անհրաժեշտ է, որ ամենքը միասին ապստամբվէին Գալիցիայում և զէնք բարձրացնէին: Ազնուականները խոստովանվում են իրանց յանցանքը և հիմա կամենում են միանալ չինականների հետ և միասին արտաքսել գերմանական աստիճանաւորներին»: Պրօկլամացիայի մէջ կար ճշմարտութեան փոքր մաս, որը մեր սրտին հաճոյ թուեցաւ, բայց մենք վճռեցինք մեր մէջ, որ նրանում աւելի ստութիւն կայ և որ այդ նման է խաբէութեան: Ո՞վ է հարստահարում մեզ, եթէ ոչ ազնուականները, բայց ո՞վ է իր կարողութեան չափ պաշտպանում մեզ, եթէ ոչ կայսրի գերմանական աստիճանաւորները,—և ոչ ոք չը կամեցաւ համաձայնվել լեհացիների հետ:—Եթէ դուք կը հետևէք ազնուականներին,—ասեցի ես, երբ հերթն ինձ հասաւ,—տարակոյս չը կայ, որ ապա-

գայում նրանք կը լծեն ձեզ իրանց արօրին այնպէս, որպէս դուք լծում էք ձեր եզներին: Բայց այսուամենայնիւ, ոչինչ չէ արգելում մեզ այսօր գիշերը հաւաքվել պանդոկի մէջ:—Ահա գիշեր եղաւ: Մենք ամենքս հաւաքվեցանք պանդոկի մօտ, չինականներից իւրաքանչիւրը բերեց իր կալ ծեծելու շղթան և մանգաղը: Մօտ կէսգիշերային պահուն ես ընտրեցի քանի չափ չինականներ և նրանց հետ գնացի գիշերապահութեան շրջագայութիւն գործելու: Նրանք երկնչում էին, վախենում էին, չը լինի թէ բանը վատ վերջանայ: Ես քաջալերեցի նրանց, հաւատացնելով, որ եթէ մենք արիաբար ընդդիմադրութիւն ցոյց կը տանք, այլ ևս վախենալու պատճառ չենք ունենայ խռովարարներից: Շուտով մենք նշմարեցինք մի քանի սահնակներ, որոնցով գնում էին հարևան կալուածատէրները, կապալառուները և զանազան ստորին ազնուականներ մեր աղայի մօտ: Պատահելով մեզ, նրանք կանգ առին, և մէկը նրանցից աղաղակեց, որ մենք անյապաղ միանանք նրանց հետ, աւելացնելով, որ յեղափոխութիւնը արդէն իր բորբոքման մէջն է, թէ չինականներին ազատութիւն կը շնորհվի, կալուածատէրների աղայութիւնը կը խափանվի, և թէ մենք կարող ենք տիրապետել կայսերական գանձարանին և ձեռք գցել բոլոր հրէաներին:—Մեր մէջ դաւաճաններ չը կան,—ձայն տուի ես,—մենք կանգնած ենք Աստուծոյ

և կայսրի համար։ Նա իմ խօսքը դեռ չէր վերջացրել, լեհացիները անմիջապէս իրանց հրանօթներին կրակ տուին, մի քանի կոտորակներ դիպան իմ ձեռքին, մի գնդակ անցաւ չինականներից մէկի ոտի մէջ, իսկ ես աղաղակում եմ. տըղերք, յառաջ։ Մենք յարձակվում ենք լեհացիների վրա, դուրս ենք քարշում նրանց սահնակներից և նրանց գերի ենք վեր առնում։ Միայն մէկի գլխին ես զարկեցի, որովհետև նա պաշտպանվում էր, բայց ուրիշ ոչ ոքի չը վիրաւորեցինք։ Դրանից յետոյ, լսում ենք, որ հրացաններ են արձակում պանդոկի մօտ։ Ես ամենայն արագութեամբ վազում եմ այնտեղ, բայց մինչև իմ հասնելը ամեն ինչ վերջացած էր։ Ազնուական Բրօդօսկին արիւնաշաղախ ընկած էր ձիւնի վրա, իսկ մեր աղան կանգնած էր չինականների մէջտեղում, և նրանք ամեն կողմից ծեծում էին նըրան, և անտարակոյս կը սպանէին, եթէ ես այդ ժամանակ հասած չը լինէի։ Արիւնը շարունակ հոսում էր նրա գլխից։ Ես ազատեցի նրան մահից

—Դու՞ք։

—Այո՛, պարոն։ Ես պէտք է խոստովանվեմ, որ ես ափսոսեցի, թէ ինչու չինականները առաջուց չը սպանեցին նրան, բայց հէնց որ ես հասայ, այլ ևս այնուհետև անյարմար էր։ Լեհացիները անպատճառ կասէին, թէ նրան սպանեցին վրէժխնդրութեան համար, Կատերինայի համար,

և այդ վատ ստուեր կը ձգէր մեր գործի վրա։ Մենք նրա ձեռքերն ու ոտքերը պինդ կապեցինք, և բոլոր ազնուական խառնիճաղանճը լցրինք հէնց նրա սահնակի մէջ, և տարանք Կալօմէյայի նահանգային վարչութիւնը, որտեղ ես ինքս հասցրի բոլոր ժամացոյցները, փողերը և մատանիները, որ գտնվեցան թւով քսան ազնուականների մօտ։ Ա՛խ, դա գեղեցիկ ժամանակ էր, պարոն։ Խըղճուկները պատերազմում էին իրանց հարստահարիչների հետ և ամեն տեղ թագաւորում էր սուրբ կարգապահութիւն. չինական պահապանները կանգնած էին բոլոր ճանապարհների վրա. գիւղացիները պատառոտած ցնցոտիներով մտնում էին նահանգային վարչութիւնը, դուրս էին բերում իրանց ծոցից հազարներ և պատուաւոր կերպով դնում էին սեղանի վրա։ Մենք հաճութեամբ մեր անձը ենթարկում էինք հրացանների գնդակներին, բայց համարեա միշտ զինաթափ էինք անում լեհաց ազնուականներին, և մեզանից ամեն մէկը պատրաստ էր հաճութեամբ թափել իր արիւնը։ Ամեն ոք յոյս ունէր, որ բոլոր տարբերութիւնները կը ոչնչանան, որ բոլորը ազատ կը լինեն և հաւասար իրանց իրաւունքների մէջ։ Մեզանից յետոյ արևմտեան լեհական գիւղացիները սկսեցին սպանել իրանց կալուածատէրներին. այն ժամանակ ուղարկեցին մեծ զօրք և դուրս եկաւ ոչ այն, ինչ որ մենք սպասում էինք։ Այսուամե-

Նայնիւ, երկու տարի անցնելուց յետոյ, բոլորին ազատութիւն շնորհեցին, աղայութիւնը ոչնչացաւ, և այժմ շինականը դարձաւ ազատ մարդ։

—Ի՞նչով վերջացաւ գործը ձեր կալուածատիրոջ հետ,—հարցրի ես։

—Նրան շղթայակապ տարան բերդը,—ձայն տուեց Կօշանիկօն,—իսկ նրա բացակայութեան ժամանակ նրա կինը բարեկամացաւ մի զինուորի հետ, բայց 1848 թւականին բոլոր ապստամբներին ներումն շնորհվեցաւ, և նա վերադարձաւ իր տեղը։

—Նրանից յետոյ, ես վերադարձայ իմ ծառայութեան տեղը,—ասաց Բալաբանը։—Մենք գնացինք Վենգրիա, ձմեռը անցանք Կարպատեան լեռները, մասնակցեցինք մի քանի կռիւների մէջ, երբեմն յաղթում էինք, երբեմն յաղթվում էինք, իսկ վերջը սաստիկ ցրտերի պատճառով ստիպված էինք մնալ։ Մարդիկ ժպիտը երեսին ընկնում էին և սառչում էին ճանապարհների վրա։ Գարունքին նորից սկսեցին հետամուտ լինել մաջարներին, մինչև Կօշուտը, որպէս մի սկիւռ, չը փախաւ անտառից։ Նշանաւոր ժամանակ էր, պարոն։ Մարդիկ ճանճերի նման ընկնում էին, ոմանք գնդակներից, ոմանք սրերից, ոմանք ևս կամ ջըրասոյզ էին լինում կամ ճանապարհի վրա սառչում էին, համբուրելով մահուան վերջին րոպէում փոքրիկ քսակը, որ լցրած էր հայրենիքի հողով.—

նրանց բոլորին դեռ խիստ ցանկալի էր կեանքը, բայց ինձ ոչինչ չէր գրաւում։ Այն ժամանակ ինձ սկսեց տիրել մի երկմտութիւն։—Ո՞րտեղ էր արդարութիւնը։ Վենգերեան պատերազմից յետոյ ես դուրս եկայ ծառայութիւնից, որովհետև հայրս վախճանվեցաւ։

—Բայց ոչ նրա համար։

—Ի՞նչպէս,—պատասխանեց Բալաբանը, ուսերը շարժելով,—ինչ յարմարութիւն մի պաշտօնաթող զինուորի և մի տիկնոջ մէջ։ Եւ այսպէս, ես եկայ տուն, և հօրս ու մօրս մեռած գտայ։ Այժմ ես մենակ մարդ էի։ Հօրս թողած հողը մնաց ինձ, բայց մնացած բոլորը վաճառված էր, մինչև անգամ խրճիթը և երկու, երեք մրգի ծառեր։ Հիմա ինչպէս է թւում ձեզ այդ։—Այո, ինչ կարելի էր անել այնուհետև։ Ես միշտ սիրում էի անասուններին և մեղուաբուծութիւնը։ Ահա ես սովորեցի մեղուների պահպանութեան եղանակը, ծանօթացայ նրանց սովորութիւնների հետ և տան մօտ շինեցի ինձ համար մի փառահեղ մեղուանոց,—դուք գիտէք այդ. յետոյ մեծացրի երկու շներ, որոնք կատարեալ գայլերի նման էին, գեղեցիկ շներ, գիշերը նրանց մոխրագոյն աչքերը շիկացրած ածուխի նման փայլում էին,—դուք դրանց նոյնպէս գիտէք,—և վարձվեցայ դաշտային պահապանի պաշտօնում։ Պատահմամբ գտայ ինձ համար և մի կատու (այդ միջոցին նա

ծիծաղեց, որպէս ամէն մի գալիցիացի շինական, երբ նա խօսում է կատուների մասին),—ես դուրս հանեցի նրան ջրից· դուք, կարծեմ, տեսել էք իմ Մացիկ անունով կատուին։

—Դուք մէկ տեսնէիք դրա շները, պարոն,—նկատեց Թղթէ մարդը մի առանձին հրճուանքով, որի մէջ նշմարվում էր նախանձի խառնուրդ։

—Ախար նա կարժէ իր շներին,—ձայն տուեց Կօլանկօն։—Այսպիսի դաշտային պահապան երբէք չէ եղել։ Համայնքը պէտք է շնորհակալ լինի Աստուծուց։

—Խնդրում եմ ձեզ,—նկատեց գլխաւորը,—մի անհանգստացրէք պարոնին այսպիսի տեղեկութիւններով։

—Դուք սխալվում էք,—ասեցի ես,—ինձ հետաքրքրական է բոլորը, ինչ որ վերաբերում է ձեզ։

—Այդ արդէն շատ մեծ պատիւ է։

—Հա, այդ մարդը կատարում է իր պարտաւորութիւնը,—ծանր կերպով ասաց Թղթէ մարդը, ցոյց տալով Բալաբանին։—Ես չեմ սիրում գովել մարդկանց, բայց ինչ որ ասում եմ, կատարեալ ճշմարտութիւն է։ Գողերը վախենում են դրանից, արբեցած մարդիկ իսկոյն զգաստանում են, հէնց որ հանդիպում են դրան։ Եթէ յանձնում են դրան հաւաքել որ և է տուրք, դա աւելի շուտով կը հաւաքէ, քան Թէով քսան ձեր հաւանած հարկահաններ։

—Ընտրութիւնների ժամանակ գիւղացիները աւելի դրան են լսում, քան թէ դատաւորին կամ վերակացուին,—աւելացրեց Մօնգօլը։—Եթէ դուք, պարոն, ցանկանում էք, որ ձեզ ընտրեն մի որ և իցէ պաշտօնի մէջ մեր վիճակում, բաւական է, որ դուք ասէք Բալաբանին, նա ամէն ինչ կարող է անել մեր ժողվրդի հետ։

—Բայց խնդրում եմ ձեզ, դրացիներ, դադարեցէք,—հանդարտ կերպով խօսեց գլխաւորը։—Իսկապէս ինչ պէտք է լինի մեր գործը, եթէ ոչ, կատարել մեր պարտաւորութիւնները։

—Ախար ես ոչինչ չեմ ասում,—մռմռաց Կօլանկօն։—Բայց կնիկները... Դա մեզանում բարոյականութեան կատարեալ ուսուցիչ է, պարոն։ Ահա, օրինակ, մեր գիւղում կայ մի գեղեցկահեր աղջիկ· գեղեցիկ է նա, որպէս մի պայծառ աստղ երկնքում. նա կարող էր կամուսնի լինել, բայց շատ թեթեւամիտ է։ Դա գիշերը պատահում է նրան և տեսնում է, որ նա զբօսնում է լուսնի լուսով։—Դարձեալ, երեւի, մէկի ետեւից ես ընկած,—սկսում է իմ Բալաբանը։—Քեզ ինչ։—Այսպէս աւելի հեշտ կը դժբախտացնես քեզ, երբոր նա քեզ կը ձգէ. աւելի լաւ է, որ մարդու գնաս։ Աղջիկը ծիծաղում է,—Ես չեմ գնայ, ասում է, ամէն մի պատահածին. դու ինքդ ուզիր ինձ, ես իսկոյն կը համաձայնվեմ պսակվել։

—Իսկ նա ինչ է ասում։

—Նա միայն գլուխը շարժում է և շարունակում է խրատներ տալ աղջկան։

—Նա չէ կամենում ամուսնանալ,—նկատեց Մըռայլը, որը, որպէս գիշերապահ կանգնած, ուշադրութեամբ ականջ էր դնում։

—Ա՞խ, նա դեռ ևս սիրում է այն առաջինին,—անսպասելի կերպով ձայն տուեց Հրէան և ուրախ մօտեցաւ մեր խումբին։ Նրա յիմար և մի և նոյն ժամանակ նենգաւոր դէմքի վրա երևաց մի զզուելի ժպիտ։

—Իմ սիրելի,—խօսեց զինուորը, չը փոխելով իր դրութիւնը,—քո գլուխը իսկ և իսկ գոլորշիացրած բաղանիք է, քո լեզուն քթոլինքի մէջ է, ինքդ էլ չը գիտես, թէ ինչ է նրանից գոլորշիանում։

Մենք ամենքս ծիծաղեցինք։ Հրէան գլխաւորապէս վիրաւորվեցաւ նրանով, որ ես էլ ծիծաղեցի։ Նա նայեց իմ վրա, յետ քաշեց հագուստի թևքերը, ափերով մաքրեց ծնկերը, բարկացած գնաց ձիաների մօտ, և առանց պատճառի, սկսեց քարշ տալ նրանց կամ այս կողմ, կամ այն կողմ, այնպէս որ ձիաները ողորմելի կերպով նայում էին նրա վրա։

—Ճշմարիտ է,—ծանր կերպով հարցրեց Կօլանկօն զինուորից, իր ուսով խթելով նրան։

—Միթէ, իրաւ, դու չես կարող մոռանալ նրան,—երկչոտութեամբ հարցրեց Թղթէ մարդը։

Զինուորը ոչինչ չը պատասխանեց։

Մենք միայն կարող էինք տեսնել նրա խաղաղ և հեզ դէմքը։ Նրա աչքերում նշմարվում էր առաջվայ արտասուալի, գիտակցական արտայայտութիւնը, որը ազդում էր իմ մէջ խորին տըրտմութիւն։ Իմ սրտում կատարվեցաւ մի ինչ-որ անբացատրելի բան։ Բնութեան խորին լռութիւնը աւելի ևս տիրում էր նրան, և որպէս կիսալառ խարոյկից ծուխը բարձրանում էր դէպի վեր, նոյնպէս հանդարտ կերպով յարութիւն էին առնում իմ մէջ տխուր յիշողութիւնները անցեալի մասին։ Մոխրի միջից նայում էր իմ վրա մի հրաշալի, գունաթափ դէմք, գեղեցիկ, որպէս մի յաւերժահարսի դէմք, կամարած սև գիսակներով, և կիսախուփ աչքերով, որոնք քնքոյշ էին և ամօթխած...

—Յիմարութիւն։ Սարսափելի յիմարութիւն,—ձայն տուեց Մօնգօլը, և իսկոյն բոլորը անյայտացաւ, բայց կլանեց իմ նաղելի ուրուականին։

—Պէտք է թքել քեզ Ցաւալէի մեծաշուք տիկնոջ վրա,—ձայն տուեց Թղթէ մարդը։

—Դէ, այսպէս պէտք չէ բարկանալ,—սառնասրտութեամբ նկատեց զինուորը, և նա, ինչպէս երևում էր, գունաթափվեցաւ, և նրա մռայլատ յօնքերը խոժոռվեցան։—Դուք ինքներդ մտածեցէք, միթէ այդ բոլորը բնական չէր։ Խեղճ աղջկան սպառնում էր չքաւորութիւն, և այդ միջոցում դէպքը յաջողեցնում է նրան լինել աղայի կին։ Ես լաւ էի նրա համար մինչև այն ժամանակ,

քանի որ դեռ չը կար ինձանից լաւ փեսայ։ Դա մի և նոյն բանի նման է, ինչպէս եթէ ես թողնէի ծառայութիւնս մի աննշան իշխանի մօտ, երբ հնար կը գտնէի ծառայելու կայսրի մօտ։ Այդպիսի դէպքերը չէ կարելի քննել սրտով։ Կնոջ և տղամարդի մէջ սիրտը առանձին նշանակութիւն չունի, և համարեա թէ այնպէս է։ Քննենք այդ աւելի խոհականութեամբ։ Սիրո՞ւմ ես դու սրտով, բարեկամ, երբ որ կամենում ես կնոջ հետ միասին մի առագաստ ունենալ։ Ցանկանո՞ւմ ես արդեօք, որ նա սիրէր քեզ, թէ՞ բաւականանում ես միայն նրանով, որ նա դառնար քո կինը։ Արդեօք ախորժելի՞ է քեզ, որ նա, իր ցանկութեան հակառակ, դառնար քո կինը, թէ աւելի լաւ ես համարում դու, որ նրա սիրտը պատկանէր քեզ, իսկ ինքը լինէր մի ուրիշի կին։ Ես այդ բոլորը կարողացայ քննել. ես բաւական ժամանակ ունէի քննելու։ Եւ այդ բոլորից այն հարցն է ծագում, թէ ի՞նչ նմանութիւն կայ մարդու և անասունի մէջ։ Ի՞նչպէս ամեն տեղ, այնպէս էլ տղամարդի և կնոջ մէջ կանգնած է լինում ինքը կեանքը։ Հասկանո՞ւմ էք իմ ասածը։

—Ոչ։

Ես սկսեցի հասկանալ, թէ ինչով պիտի յանգէին նրա դատողութիւնները, և զարմացած նայում էի նրա վրա։ Նա գրգռուած դրութեան մէջ էր գտնվում, նրա աչքերը փայլատակում էին, և

այժմ խօսում էր նա լաւ, իր բոլոր համոզմունքով, որը յատուկ է մեր ժողովրդին։

—Դուք գիտէ՞ք, թէ ինչ սովորեցի ես, երբ գինւոր էի։—Արհամարհել մահը։ Աւելի լաւ ես կը լինէի, եթէ ես սովորէի ցանկանալ և որոնել մահը։ Մեր բոլոր դժբախտութիւնը կեանքի մէջն է, ինչպէս և կանանց հետ պատահած դժբախտութիւնը յառաջ է գալիս մեր ունեցած սէրից դէպի կեանքը։ Որքան էլ և դժբախտ է այդ կեանքը, այսուամենայնիւ, մենք չենք խնայում ամեն ջանքեր նրա համար միայն, որպէս զի կեանք վայելենք։ Եթէ ես ասում եմ գոնէ մէկ անարդար խօսք, դուք գնդահարեցէք ինձ հէնց իմ տեղում։ Իսկ կինը ապրում է սէրով, կամենում եմ ասել—տղամարդի սէրով։ Հասկանո՞ւմ էք արդեօք։

Կօլանկօն եռանդով շարժեց գլուխը։ Մենք ամենքս լարված ուշադրութեամբ լսում էինք, մինչև անգամ շունը բարձրացրեց իր աղուէսային դունչը և նայեց գինուորի վրա։

—Ինձ թւում է, որ նա խօսում է ճշմարիտը,—ասեցի ես։—Ամեն ինչ հպատակում է անհրաժեշտութեան. երկրի վրա բոլոր ապրողները հասկանում են, թէ որքան անմխիթար է իրանց կեանքը, այսուամենայնիւ, բոլորն էլ կատաղի կերպով մաքառում են այդ կեանքի համար թէ բնութեան հետ և թէ մարդիկների հետ։ Մի այսպիսի գոյութեան կռիւ ներկայացնում է մեզ այ-

րը, որ գտնվում է տղամարդի և կնոջ մէջ: Երկուսն էլ կամենում են երկարացնել իրանց կեանքը իրանց զաւակների մէջ. զաւակների մէջ երկուսն էլ ցանկանում են նորից տեսնել իրանց գծագրութիւնը, իրանց աչքերը, իրանց հոգին: Երկուսն էլ ձգտում են, մէկը միւսի միջոցով, դառնալ աւելի կատարելագործված էակներ, և երկուսն էլ կամենում են տիրապետել հակառակ սեռի գերազանցութիւնները: Բացի դրանից, կինը փափագում է ապրել թէ իր համար և թէ իր երեխայի համար իր ամուսնի միջոցով:—Ես չը գիտեմ, արդեօք կարողացայ իմ միտքը արտայայտել:

—Գեղեցիկ կերպով,—կարծես նախազգեցութեամբ ձայն տուեց ամբողջ խումբը:

—Եթէ պարոնը թոյլ կը տայ,—դարձեալ խօսեց գլխաւորը,—ես կասէի, թէ ինչպէս եմ ես հասկանում այդ իմ կերպով:

—Թոյլ տուեցէք ինձ ես ասել մի խօսք,—աղաղակեց Կօլանկօն և սպառնալի կերպով բարձրացրեց իր բարձը:—Դուք ամենքդ խօսում էք, բայց ինձ չէք թողնում մի բառ էլ խօսել:

—Դէ խօսիր:

—Հա, ինչ էի ուզում ասել:

—Հիմա նա չը գիտէ, թէ ինչ պիտի ասէր:

—Հա...—ծերունին դարձեալ կանգ առեց:

—Ինչքան ուզում էք, ծիծաղեցէք, հիմա ես յիշեցի,—ասաց նա, իրանից բոլորովին գոհ կեր-

պով:—Այդ այդպէս է: Կինը, որպէս և տղամարդը, պէտք է մաքառի իր գոյութեան համար: Նա կրում է շատ բաներ, որոնցից ազատ է տղամարդը: Օրինակ, ինչպէս նա պէտք է անդադար աշխատէ, երբ նա տղայ ունի, որին պէտք է մեծացնել: Իսկ այդպիսի դէպքեր երբեմն կըրկնվում են մի քանի տարի շարունակ: Նա չէ կարող տղամարդի նման աշխատել, նրա նման բանել և այն ժամանակ, երբ նա երեխայ չունի: Նրա բնաւորութեան մէջ հաստատամտութիւն չը կայ,—այդ ուղիղ է. և այդ պատճառով նա մի որ և իցէ օգտաւէտ բան չէ սովորում, չէ իմանում ոչ մի արհեստ: Արդեօք դրանից յետոյ շատ բնական չէ՞, որ նա աշխատում է ապրել տղամարդի միջոցով, կամ, որպէս սովորաբար ասվում է, իր բախտը որոնում է գտնել նրա մէջ: Ի՞նչ աշխատութիւններ ասես գործ չէ դնում տղամարդը, որ բարձրանայ իրան հաւասարների վրա, բայց կինը, այդ գեղեցիկ արարածը, ցոյց կը տայ ձեզ իր հրապուրիչ երեսը—և կով պահելուց կը դառնայ մի աղայի տիրուհի: Ուղիղ է իմ ասածը, թէ ոչ:

—Բոլորովին ուղիղ է, ծերունի:

—Այժմ թոյլ տուեցէք ինձ վերջացնել,—նորից սկսեց գլխաւորը:—Ես դադարեցի մաքառել կեանքի հետ և մեղանչել, ինչպէս ուրիշները: Ես միանգամ տանուլ տուի,—և այդ բաւական էր իմ

կողմից: Աւելի լաւ չէ՞, եթէ ես կարող եմ ասել ինձ, որ իմ աչքերը մշտապէս հանգան և թէ ես գտայ հոգեկան խաղաղութիւն: Ես այն կարծիքի եմ, որ տղամարդի համար աւելի լաւ է, երբ նա կին չունի: Ոչ թէ կինը այր է որոնում, այլ այրը կնոջը: Հէնց դրանում կայանում է կնոջ բոլոր գերազանցութիւնը, և ահա ինչու կինը հանգիստ կերպով տանում է իր հաշիւները ամուսնի հետ: Էլ ուրիշ ինչ բանի վրա պէտք է մտածէր կինը, եթէ նա չաշխատէր օգուտ քաղել ամուսնի այդ ծիծաղելի դրութիւնից: Երբ որ մէկը մինչև կոկորդը խորասուզուել է ջրի մէջ, և նրա ոտները կաշկանդուել են տղմի մէջ, իսկ դուք կանգնած էք եզրի վրա, միթէ նա յօժարութեամբ չի ձգի դէպի ձեզ այն ոսկին, որ կը գտնէ իր գրպանում, նրա համար, որ դուք ազատէք նրան: Բայց խելացի կինը չէ բաւականանում միայն ոսկով, նա քարշ է տալիս տղամարդին և դէպի տաճարը: Այժմ հասկացա՞ք դուք ինձ: Այդ պատճառով էլ մենք տեսնում ենք կանանց մէջ նոյնպիսի նախանձ, ինչպէս դերձակների և զամբիւղագործների մէջ. նրանցից ամեն մէկը աշխատում է քարշ տալ իր զամբիւղը տղամարդի վրա, որքան կարելի է ամուր կերպով,—և միթէ իրաւացի չէ՞ նա, որ այդպէս է վարւում: Չէ՞ որ կինը գնահատւում է իր տղամարդի դրութիւնով: Միթէ կոմսուհի չէ՞ հասարակ գիւղացի կինը, երբ որ նրա ամու-

սին այրը կոմս է: Եւ ընդհակառակն: Տղամարդի պատիւը—նրա պատիւն է, և այդ պատճառով կինը միշտ աւելի է պարծենում տղամարդի դրութեամբ և կարողութիւնով, քան թէ նա ինքը: Հասկանում էք դուք:

—Իսկ ես տակաւին չեմ կարողանում հասկանալ,—խօսեց Մռայլը,—թէ ինչպէս դու դեռ ես կարող ես սիրել Ցաւալէի փեսաչուք տիկնոջը, քո սիրուն Կատերինային, որը այնպէս ցած կերպով դաւաճանեց քեզ:

—Դու և ոչ մի ժամանակ չես հասկանայ այդ, —սառն կերպով պատասխանեց զինուորը:

—Այսուամենայնիւ, ոչ մի կին չի արժի այն տանջանքներին, որ կրում է նրա համար տղամարդը,—կամաց աւելացրի ես:

—Դա ուղիղ է, պարոն,—համաձայնվեցաւ զինուորը,—նրանցից ոչ մէկը արժան չէ տղամարդի կապակցութեանը, բացի մօրից: Բայց վերջացնենք խօսակցութիւնը իմ Կատերինայի մասին: Իսկապէս ինչ արեց նա ինձ: Միթէ յանցաւո՞ր է նա, որ ես ծնվեցայ մի թշուառ ժամում:—Ես երկար հետազօտել եմ կեանքը: Միթէ համարեա ամեն օր մենք չենք տեսնում, որ երկու սիրող սրտեր միանում են ամուսնութեամբ, սկզբից բախտաւոր են, բայց փոքր ինչ անցնելուց յետոյ, էլ չեն նայում միմեանց վրա: Տեսնում էք, եթէ նա դառնար իմ կինը, շատ կարելի է, ես շուտով կը

սկսէի ծեծել նրան: Բոլորովին զանազանութիւն չունի, այսպէս թէ այնպէս, բոլորովին մի և նոյն է: Այսպիսի դէպքերում, տղամարդի սէրը շուտով ցնդում է: Իմ կարծիքով, կինը իրաւունք ունի ապահովելու իրան, քանի որ դեռ մանկահասակ է նա և գեղեցիկ, և քանի որ տղամարդի գլուխը դեռ չէ սառել: Նրա տաքութիւնը շուտով է անցնում, իսկ կինը ևս առաւել շուտով թառամում է:

Ես բացասականաբար շարժեցի գլուխս:

—Ի՞նչ բանի մէջ համաձայն չէք ինձ հետ, պարոն:

—Ինձ զարմացնում է այն, թէ ինչու դուք գտնում էք այսպիսի սէրը շատ բնական, երբ որ ինքներդ ներկայացնում էք մի բոլորովին ուրիշ սիրոյ օրինակ:

—Իմ խօսքերը չեն հակառակում ձեր ասածին: Տղամարդը կարող է սիրել սրտով, և ինչու պէտք է նա այնպէս չը սիրէ, եթէ այդ հաճոյ է նրան: Բայց այսպիսի սէր անկարելի է կնոջ մէջ: Ես աւելին կասեմ. կարելի է, որ մի կին շատ կը ցանկանար սիրել իր տղամարդին այնպէս, որպէս նա սիրում է նրան,—բայց այսպիսի զգացմունքը որտեղից պէտք է առնէր նա: Իմ սիրած ձին երբեմն այնպիսի քնքշութեամբ է նայում իմ վրա, համարեա մարդու նման, և ես մինչև անգամ մտածում եմ, որ նա ցանկանում է խօսել ինձ

հետ, բայց նա այնքանը միայն կարողանում է, որ փաղաքշում է ինձ և կարծես, ինքն էլ տխուր է, որ աւելին անել չէ կարող: Բայց տեսնում ես, միւս օրը նա նոյնպիսի ուրախութեամբ տանում է իր վրա մի ուրիշ նստողին: Հիմա ումից պէտք է գանգատաւոր լինել:

- Կօլանկօն խորամանկութեամբ ժպտաց, ատամները ամուր կերպով սեղմված պահելով:

—Այո, հրէան իմանում է,—ասաց նա,—թէ ինչու դա իւրաքանչիւր օր աղօթելով ասում է. գոհ եմ քեզանից, ով Ստեղծող, նրա համար, որ դու կին չը ստեղծեցիր ինձ:

—Նա, որ տանջվում է այսպիսի սիրով, այսպիսի սրտագին սիրով,—շարունակեց զինուորը,—նա իր ժամանակին պէտք է հաշտվի իր վիճակի հետ և սովորի զոհաբերութեան, եթէ ոչ, նա կընկնի խիստ ծիծաղելի ծուղակի մէջ:

—Առհասարակ,—հանդարտ կերպով ասաց նա,—վերջ ի վերջոյ մեր բոլոր իմաստութիւնը կայանում է բացասութեան, համբերութեան և լռութեան մէջ: Եւ եթէ դուք զարմանում էք դրանով, որ ես մինչև այժմ սիրում եմ Կատերինային, ասացէք խնդրեմ, միթէ մաքուր սէրը պահանջում է՝ անպատճառ տիրապետել իր առարկային: Ախար սիրում ես կնոջը ոչ նրա համար միայն, որ նա գեղեցիկ է, բարի է, չար է, կամ առաքինի է: Ա՞խ, չէ... Ես սիրում եմ

կատերինային ոչ թէ նրա համար, որ նա սիրուն է կամ վատ վարվեց ինձ հետ, բայց միայն այն պատճառով, որ ես պէտք է սիրեմ նրան, որովհետև բնութիւնը ամեն մարդու չէ տուել ազատ ընտրութեան կամք, և ոմանց, հակառակ նրանց կամքի, հրապուրում է միայն դէպի մի անձնաւորութիւն: Միայն այսպիսի սէրը կարող է տանել բոլորը այս աշխարհում—ծաղրածութիւն, հարուածներ, վիրաւորանքներ և բռնութիւններ: Այսպիսի սէրը ուշադրութիւն չէ դարձնում համակրութեան վրա, և ինքը ժամանակը, որ կլանում է բոլոր անաջողութիւնները, անկարող է սպանել նրան մարդու մէջ:

—Դուք կարող էիք լինել ամենալաւ ամուսին,—նկատեց ծերունին մի քանի րոպէ լռելուց յետոյ:—ինչո՞ւ չէք ամուսնանում դուք: Ամեն ոք ուրախութեամբ կը հաւատար ձեզ իր պաւակը և նրա վրա, որպէս օժիտ, կը տար և հող և դրամ:

—Անքաղաքավարի կը լինէր հրաժարվել մի այդպիսի առաջարկութիւնից,—պատասխանեց գլխաւորը,—բայց միթէ ձեզանից մէկին ես խնդրել եմ այդ մասին:—Ի՞նչպէս կարելի է ամուսնանալ ինձ: Ես առաջին անգամ պարզ կերպով խօսեցի ձեզ հետ, և այժմ դուք պէտք է հասկանաք ինձ: Եթէ միանգամ ես սիրել եմ անկեղծաբար, իմ բոլոր սրտով, միթէ կարո՞ղ եմ այնուհետև սիրել մի ուրիշ կնոջ: Իսկ եթէ իմ սրտում չը կայ մի

ուրիշ այսպիսի սէր, ուրեմն էլ ինչ հարկաւոր է ինձ կինը: Միթէ ես անասո՞ւն եմ:

—Իրաւ, ձեր ասածը ուղիղ է,—աւելացրեց Կոլանկօն,—մանաւանդ, որ բոլորը կանցնի ժամանակով:

—Ոչ բոլորը,—հոգւոց հանելով պատասխանեց գլխաւորը,—բայց դուք ճշմարիտ ասեցիք: Այո՛, մեր բոլոր զգացմունքները փոքր առ փոքր տկարանում են, և մի ժամանակ մինչև անգամ այն, որ մեզ սաստիկ ցաւ էր պատճառում, կը ծառայէ մեզ որպէս մխիթարութիւն: Անհետացած զգացմունքների մասին կը յիշէ մարդ, որպէս հանգուցեալների մասին: Ի՞նչ կասէ՞ք դրա համար, ընկերներ: Ո՛րպիսի տրտմութիւն է տիրում մեր սրտին, երբ հասնում ես այն գիտակցութեան, թէ մինչև անգամ այն բոլորը, որ դու այնպէս սաստիկ զգում ես, մի ժամանակ կանցնի: Որքան ցաւում էր իմ սիրտը, երբ ես թաղեցի իմ ծնողներին, իսկ այժմ երբեմն երազումս տեսնում եմ, որ ես խմում եմ օղի հօրս հետ և նա բոլորովին հարբած է: Ձեզ ինչպէս է երևում այդ:—Արդեօք անխորժելի է գիտենալ, թէ ինչ որ այսօր շահաւէտ է ձեզ համար, մի տարուց յետոյ կը կորցնէ իր բոլոր նշանակութիւնը: Բոլորը անցնում է իբրև մառախուղ, որը առաւօտեան ցրւե է գալիս, իսկ երեկոյեան դարձեալ միախառնվում է: Միայն կամքի համար ամեն ինչ կարելի է, բայց և դա

անզօր է հիւանդութեան և մահուան առաջն առնելու։ Պատահում էր, երբ ֆելդֆեբելը շաբաթ օրը, զեկուցում տալուց յետոյ, ջնջում էր մի եօթնեակ օրացոյցի միջից, ես միշտ տխրում էի, բայց ինչ էր նշանակում այդ։ Արդեօք կեանքի և ժամանակի արագընթացութիւնից աւելի ևս տխրագոյն չէ այն անյարատեւութիւնը, որ մենք նկատում ենք հէնց մեր մէջ, մեր մտքերի և զգացմունքների մէջ։ Ահա ինչումն է իսկական մահը։ Եւ միթէ այդ անբնական է։—Իւրաքանչիւր օր դու տեսնում ես նոր պայմաններ, ամեն ինչ փոխւում է քո չորս կողմում։ Դու ինքդ երբեմն երեխայ ես, երբեմն պատանի, երբեմն տղամարդ, բայց եթէ դու ինքդ փոփոխւում ես, ինչպէս կարող ես պահանջել ուրիշներից, որ նրանք չը փոխվէին։

Մի րոպէ ամեն ինչ լռեց, և այդ ժամանակ հեռուից լսելի եղան զանգակի թոյլ, դողդոջուն և ողբալի ձայներ։

—Երևի, հանգուցեալ է,—ասաց Կօլանկօն և խաչակնքեց երեսը։

—Այդ որտեղից մտաւ ձեր գլուխը,—ձայն տուեց Մռայլը,—շատ հաւանական է, որ ազնուականները վերադառնում են Ցուլաւայից։ Հիմա պէտք է արթուն լինել։

Զինուորը վերկացաւ, զգուշութեամբ հանգցրեց իր չիբուխը, դրեց նրան իր քսակի մէջ և սկսեց

կամաց—կամաց դիմել դէպի ճանապարհը։ Այստեղ նա գլխարկը հանեց, թարմ օդ շնչեց և պարզեց իր ձեռքը։

Զանգակը աւելի և աւելի մօտենում էր։

Զինուորը կրկին ծածկեց գլխարկը։

—Ցուրտը նուազում է, քամին փոխվեցաւ,—ասաց նա, և վերադառնալով խարոյկի մօտ, առեց իր հրացանը։—Հիմա, եղբայրներ, կատարեցէք ձեր գործը։

Բոլորն էլ տեղներիցը վերկացան, վեր առին շղթաները և մանգաղները, և հաւաքվեցան զինուորի շուրջը։

—Սահնակ է,—իր պահնորդութեան տեղից աղաղակեց Մռայլը։

Զանգակի յուսահատ ձայնը հնչվում էր հէնց մեր ականջների մօտ, մտրակի հարուածը յիշեցնում էր ատրճանակի շառաչիւն, ձիաները փնչում էին։

—Կանգնի՛ր,—աղաղակեց Մռայլը։

—Կանգնի՛ր։ Կանգնի՛ր,—կրկնեցին միւսները, և վազեցին սահնակի մօտ։

Սահնակը կանգ առեց, և մի գեղեցիկ, վայելչահասակ տիկին բարձրացաւ իր տեղից. այդ միջոցին թանգակին մուշտակը ցած ընկաւ նրա ուսերից։ Նա յետ ձգեց երեսի քօղը, և ես, չը նայելով նրա դէմքի ապշեցնող գունաթափութեանը, կարողացայ համոզվել նրա հազուագիւտ գեղեցկութեան մասին։ Նրա զայրացած երկնագոյն աչքերը վառվում էին տենդային կրակով։

—Ո՞վ էք դուք։ Ի՞նչ էք ուզում,—աղաղակեց նա մի այնպիսի ձայնով, որ կտրատվում էր բարկութիւնից։

—Անցաթուղթը,—լակոնական կերպով պատասխանեց պահապանը։

—Անցաթուղթ չը կայ ինձ մօտ։

—Թոյլտուութեան թուղթ։

—Չը կայ։

—Ուրեմն մենք կը վերառնենք քեզ գերի,—և Մռայլը բռնեց ձիաների սանձից։

Բալաբանը հրացանը ուսին, առաջ գնաց և Մռայլին մի կողմ հեռացրեց։

Ամենքը մօտեցան զինուորին։

—Թող գնայ իր համար,—ասաց նա կիսաձայն կերպով։

—Թո՛ղ տալ, առանց անցաթղթի, ինչո՞ւ...

—Ես ճանաչում եմ նրան,—պատասխանեց նա,—թո՛ղ տուեցէք...

—Ես հաւատում եմ, որ դու ճանաչում ես նրան,—ասաց ծերունին և խորհրդաւոր կերպով նայեց զինուորի վրա։—Թո՛ղ գնայ իր համար։

Զինուորը վերադարձաւ խարոյկի մօտ և սկսեց ձգել կրակի մէջ կիսավառ փայտերը։

Միւսները առանց յապաղելու հետևեցին նրան։

—Գնա՛,—ծաղրական կերպով ձայն տուեց Մռայլը։

Տիկինը նստեց իր տեղը, փաթաթվեցաւ իր թանգագին մուշտակի մէջ, կառապանը զարկեց մտրակով և սահնակը սկսեց առաջ սլանալ։

Հրէայի դէմքի վրա երևաց մի հեգնական ժպիտ։

—Ո՞վ է այդ տիկինը,—կամաց հարցրի նրանից։

—Դա նա է։

—Նա՞ է։

Թղթէ մարդը հեռուից գլխով շարժեց դէպի ինձ և շարունակեց զբաղվել խարոյկով Բալաբանի հետ։

—Դա Ցաւալէի տիրուհին էր,—շշնջաց ինձ ծերունին,—մի և նոյն կինը, որին նա սիրում էր և այժմ ևս սիրում է։

Մենք երկար լուռ մնացինք։

—Ասում են, որ նա անբախտ է իր ամուսնի հետ,—յանկարծ Մռայլը ընդհատեց մեր մտախոհութիւնը,—յաճախ նրա մօտ այցելում են բժըշկներ, դուք նկատեցիք, թէ որպէս սարսափելի գունատ էր նա։

—Ա՛խ, ինչ մարդիկ էք,—ձայն տուեց զինուորը,—աւելի լաւ կը լինէր, որ դուք զմայլվէիք նրա սահնակով և կամ նրա ամենագեղեցիկ ձիաներով։ Ինչ է պակաս նրան, չունի՞ արդեօք շքեղազգեստ ըսպասաւորներ ու կազակներ։ Նշանաւոր պարոնները համբուրում են նրա ձեռքերը, իսկ թանգագին մուշտակը ծածկում է նրա մարմինը։ Էլ ինչո՞ւ պէտք է նա բախտաւոր չը լինի...

III.

ԼՈՒՍՆԿԱՅ ԳԻՇԵՐ

ԼՈՒՍՆԿԱՅ ԳԻՇԵՐ

—

Գեղեցիկ ամառնային գիշեր էր։ Հրացանը ուսիս գցած, ես ցած էի իջնում սարից, իսկ անգլիական յոգնած և մեծ ջրասուզիկ շունը, լեզուն դուրս պարզած, քայլ առ քայլ հետևում էր ինձ։ Մենք մոլորվել էինք ճանապարհից։ Այդ պատճառով, շատ անգամ կանգ էի առնում ես, նայում էի դէպի ամեն կողմ և աշխատում էի մտաբերել ճանապարհի ուղղությունը։ Այդ միջոցին իմ շունը ամեն անգամ պառկում էր և հարցական հայացքով նայում էր իմ վրա։

Մեր հանդէպ տարածված էր սխտորժելի, ալիքաւոր շրջակայք, տեղ-տեղ ծածկված անտառով։ Մութ-կապտագոյն ծառերի վրա երևում էր կարմիր, լրացած լուսինը և պայծառ կերպով լուսաւորում էր մթին երկինքը։ Աստղերը փառահեղ ու հան-

դարտ կերպով սահում էին արևելքից դէպի արևմուտք, և հիւսիսային հորիզօնի վրա փայլում էր Մեծ Արջային համաստեղութիւնը: Մերձակայ ուռիների միջից բարձրանում էին թափանցիկ շոգիներ, որոնք թռթռում էին բաց-կանաչագոյն լոյսի մէջ: Ճախնային սարեակը հառաչում էր շամբուտի մէջ: Որքան աւելի մենք հեռանում էինք լեռներից, այնքան աւելի առատութեամբ լուսինը լուսաւորում էր դաշտավայրերը: Ծառերի մթին շարքերը կամաց-կամաց մնացին մեր ետևում, և մեր աչքերի առջև ներկայացաւ մի տափարակ, որ կատարելապէս նման էր աղօտափայլ ծովի, որի վրա, ինչպէս մի նաւ, բացարած առագաստներով, լողում էր կալուածատիրոջ տունը իր մթին կաղամախիներով: Ժամանակ առ ժամանակ թեթև քամին անցնում էր հասկերի ու տերևների վրայով և հասցնում էր մեզ խիստ հրաշալի ձայներ, որոնք տխուր և մի և նոյն ժամանակ գեղեցիկ մեղեդիի հնչիւնների փոխվեցան, երբ ես մօտեցայ տանը: Այդ լաւ երգեհոնի հնչիւններ էին. հմուտ ձեռքեր ածում էին Բեթհօվէնի լուսնային սօնատը: Ինձ այնպէս էր թւում, որ երգեհոնի լիահնչիւն և հնազանդ կլաւիշների միջից լսում էի մարդկային վիրաւորված սրտի ձայնը. յանկարծ դրան հետևեց սարսափելի դիսսոնանս —և ապա բոլորը լռեց: Ես մի քանի քայլով միայն հեռու էի գտնվում կալուածատիրոջ

տնից: Ինձ լսելի էր լինում մթին կաղամախիների տխուր սօսափիւնը: Բակում շունը տրտում կերպով շարժում էր իր շղթան: Հեռուից լսվում էր ջրի միակերպ և ողբալի ձայնը:

Կալուածատիրոջ տան պատշգամբի վրա երևաց մի կին. նա ձեռքերով յենվեցաւ մուհաջարի վրա և մտածութեան մէջ ընկաւ: Նրա հասակը բարձր էր և վայելչակազմ, բայց գունաթափ դէմքը լուսնի լոյսի առջև արտափայլում էր ֆօսֆօրային շողքերով: Նրա չքեղ, թուխ գիսակները, մեծ հանգոյցներով, օղակ-օղակ իջնում էին նրա ուսերի վրա: Հազիւ թէ լսել էր նա իմ քայլերի ձայնը, իսկոյն գլուխը վեր բարձրացրեց և յառեցաւ դէպի ինձ իր մեծ, սևորակ և տամուկ աչքերով: Ես պատմեցի նրան, թէ ինչ էր պատահել ինձ հետ և խնդրեցի, որ գիշերը օթևանելու տեղ տա ինձ:

—Բոլորը, ինչ որ ունենք մենք, պատրաստ է ձեզ ծառայելու,—ասաց նա իր ախորժելի և փափուկ ձայնով,—մենք խիստ հազիւ անգամ բաւականութիւն ենք ունենում մեզ մօտ հիւր ընդունելու: Խնդրում եմ, ներս համեցէք:

Ես բարձրացայ փայտեայ փտած սանդուղքների վրայով, սեղմեցի տանտիկնոջ փոքրիկ, դողդոջուն ձեռքը և բաց դռնով ներս մտայ տունը:

Մենք յայտնվեցանք մի մեծ, քառանկիւնի սենեակում, որի պատերը սպիտակացրած էին կրով,

իսկ նրա բոլոր զարդարանքը կացուցանում էին՝ թղթախաղի հին սեղանը և հինգ փայտեայ աթոռներ: Սեղանի ոտներից մէկը պակաս էր, որի փոխարէն դրել էին կասկածաւոր աթոռներից մէկը, որը այնքան ցածր էր, որ շնորհիւ իր վրա դարսած աղիւսների, հազիւ կարողանում էր համապատասխանել իր նոր նշանակութեանը: Սեղանի չուրջը նըստած էին չորս տղամարդիկ և թուղթ էին խաղում: Տանտէրը, տեսնելով ինձ, իր տեղից վերկացաւ, և, չիբուխը պինդ բռնած ատամների մէջ, ձեռք տուեց ինձ: Դա մի բարձրահասակ տղամարդ էր, չէկ մազերով, դէմքի բութ և կոշտ գծերով, խորին կապտագոյն աչքերով, կարճ խուզած գլխով, և նոյնպէս կարճ ու կարծր բեխերով: Մինչդեռ ես կրկնում էի նրան ինձ հետ պատահած արկածը և իմ խնդիրքը, նա չը սպասեց մինչև վերջը, այլ կարեկցութիւն ցոյց տալու համար շարժեց գլուխը, յետոյ նորից նստեց իր տեղը, իր խաղաթղթերը կրկին բաց արաւ սեղանի վրա, և այլ ևս ուշադրութիւն չէր դարձնում իմ վրա:

Տանտիկինը հարևան սենեակից քարշ տուեց ինձ համար մի բազկաթոռ և յետոյ դուրս գնաց սպասաւորներին հարկաւոր պատուէրները տալու համար· այդ միջոցին ես ժամանակ գտայ ուշադրութեամբ զննել ինձ անծանօթ հասարակութիւնը:

Ամենից մօտիկ դէպ ինձ նստած էր հարևան գիւղի

ծխական քահանան· դա իր կազմվածքով և մկնակների ուժով մի կատարեալ վիթխարի էր, և աւելի ահռելի էր թւում իր եղան ծոծրակով ու հարբած դէմքով, որի վրա օղին դրել էր բազմաթիւ տեսակ-տեսակ գոյներ: Նա միշտ ժպտում էր մի ինչ-որ անբացատրելի կարեկցութեամբ, երբեմն բաց էր անում իր քթափոշու մեծ ու երկայնաձև տուփը, լցնում էր էնֆիայով իր տափակ քթի լայն պնչերը, յետոյ դուրս էր քարշում ծոցից կապոյտ թաշկինակը, նախշած ֆանտաստիկական նկարներով, և նրանով սրբում էր իր բերանը: Նրա կողքին նստած էր մի ալեոր կապալառու, ունգարական սև հագուստով, որը իր քթով անխոնջ կերպով շըշշացնում էր և ծխում էր ամենաթունդ սև սիգարներ: Երրորդը մի հուսար էր, կակուղ մազերով և կոշտ սև բեխերով: Նա բընակվում էր այդ տան մէջ և, որպէս երևում էր, սիրում էր լաւ ապրել: Նրա կիտելը կօճկած էր, իսկ վզին ամենևին փողպատ չունէր: Խաղի ժամանակ նրա երեսը անշարժ էր մնում, միայն երբ տանուլ էր տալիս, սկսում էր բերանից դուրս թողնել ծխի սարսափելի կոյտեր և աջ ձեռքը զարկում էր սեղանին: Ինձ առաջարկեցին մասնակցել խաղին, բայց ես պատճառ բերելով իմ յոգնածութիւնը, հրաժարվեցայ: Շուտով տուեցին մեզ գինի և սառն նախաճաշիկ:

Տանտիկինը վերադարձաւ, նստեց փոքրիկ, կի-

նամոնի գոյնով բաղկաթոռի մէջ, որ ներս բերեց նրա համար մանկահասակ կաղակը, և սկսեց գըլանակ ծխել։ Նա իմ բաժակը նախ մօտեցրեց իր շրթունքին, յետոյ մի առանձին քաղցր ժպիտով տուեց ինձ։ Մենք խօսում էինք նրա հետ այն սօնատի մասին, որը նա ածում էր այնքան խորհըրդաւոր կերպով, խօսում էինք Տուրգենևի վերջին գրքի մասին, խօսում էինք ռուս դերասանների խմբի մասին, որը մի քանի ներկայացումներ էր տուել Կալօմէյայում, խօսում էինք հունձքի մասին, համայնքի ընտրութիւնների մասին, և մեր գիւղացիների մասին, որոնք արդէն սկսել էին ղահվէ խմել, և այն մասին, թէ ինչպէս բազմացաւ խաբեբաների թիւը ճորտատէրութեան իրաւունքը ոչնչացնելուց յետոյ։ Նա ծիծաղում էր և ընկնում էր իր բաղկաթոռի վրա։ Լուսնի լոյսը ուղիղ թափվում էր նրա երեսի վրա։

Յանկարծ, անսպասելի կերպով լռեց նա, աչքերը խփեց, և մի քանի րօպէից յետոյ սկսեց գանգատվել գլխի ցաւի վրա և հեռացաւ։ Ես չուշացնելով կանչեցի իմ շանը և ինքս նոյնպէս գնացի հանգստանալու։

Փոքրիկ կաղակը առաջնորդում էր ինձ դէպի ինձ համար պատրաստված սենեակը։ Բակում կանգ առեց նա և կոպիտ ժպիտով նայեց լուսնի վրա։

—Որպիսի ազդեցութիւն ունի լուսինը մար-

դիկների և անասունների վրա,—ասաց նա, դառնալով դէպի ինձ,—ահա կը տեսնէք, այսօր բակի շունը ամբողջ գիշերը կը սկսէ թռչկոտել և կաղկանձել, իսկ կատուն մլաւելով կը վազվզէ կտուրի վրա։ Բայց երբոր նրա լոյսը ընկնում է մեր խոհարարուհի պառաւի երեսի վրա, այդ ժամանակ նա քնի մէջ սկսում է խօսել և նախագուշակութիւններ անել։ Աստուած վկայ, սուտ չեմ ասում։

Իմ սենեակից մի դուռ բացվում էր դէպի այգին, իսկ այդու միջից փոքրիկ թումբը հասնում էր մինչև իմ լուսամուտը։ Ես բաց արի լուսամուտը և արմունկներովս յենվեցայ պատուհանի վրա։

Լրացած լուսինը իր փառահեղ բարձրութիւնից թափում էր իր հանդիսաւոր լոյսը ամբողջ դաշտավայրերի վրա. նա լողում էր ուղիղ իմ գլխի վրա խիստ պարզ և պայծառ լուսով։ Մուգ-կապտագոյն երկնքի վրա չէր երևում ոչ մի պատառ մառախուղ, և ոչ սքօղում էր նրան թեթև գոլորշիների խորհրդաւոր ու թափանցիկ ծածկոցը։ Տեղ-տեղ աստղները պլպլում էին, որպէս հանգչող կայծեր։ Անսահման տարածութեամբ սփռված էր հայրենի տափարակը դէպի արևելք. նա գտնվում էր լուռ մտախոհութեան մէջ։ Սպիտակ սիմինդրը բարձրանալով, կախ էր ընկած ցանկապատից, իսկ այդու ետևում տարածվում էր ըն-

դարձակ դաշտ, որ նման էր ահագին շախմատեան տախտակի, որի վրա սպիտակ հաճարի փոխարէն կանգնած էին ցորենի չիկագոյն արտեր և մոյգ արօտամարգեր: Տեղ-տեղ երևում էին դէզեր, որ նմանում էին չինականների փոքրիկ խրճիթների: Հորիզոնի վրա երևում էր մի խարոյկ, որը հանդարտ կերպով վառւում էր, և նրա արծաթագոյն ծուխը կամաց-կամաց բարձրանում էր դէպի վեր. Նրա շուրջը յայտնվում էին և կրկին անհետանում էին անորոշ ստուերներ, իսկ ժամանակ առ ժամանակ իմ մերձակայքից լսելի էին լինում բոժոժների թոյլ ձայներ, և երբեմն երևում էին ձիաներ, որ թողած էին գիշերային արօտի համար: Իսկ այնտեղ, ուր պարզ լսվում էր մանգաղի ձայնը, խոնաւ մառախուղի մէջ, բարձրանում էին ահագին խուրձեր, և աղօտ լոյսի մէջ տարածվում էր մարգագետինը: Աւելի հեռու, այստեղ ու այնտեղ, նշմարվում էին նիհար ու սև կոճղներ և խլուրդների բոյների մթին բլրակներ, որոնք հեռաւոր բերդերի էին նմանում: Այրադավող և պայծառ լուսնային գետակը, ապակու փշրված բեկորների նման, գեղագրական կերպով կտրում անցնում էր դաշտերի միջով:

Սպիտակ կատուն, առանց շշնջիւնի, իր թաւիշեայ թաթիկներով ման էր գալիս այգու մէջ և ձիւնի նման փայլում էր մթին դալարների վրա: Խոտը ծածանվում էր և երբեմն արձակում էր ջերմ,

մեղմական հառաչանքներ, որոնք յիշեցնում էին՝ ոչ բոլորովին աղաւնու մնչիւնը, և ոչ բոլորովին լացը մի յամառ և կիսաքուն երեխայի: Կատուն թռաւ ցանկապատի վրայով և շուտով խորասուզվեցաւ ջրի պատնէշի մօտ, որ թուղթէ քանդված ամբարտակի նման ձգվում էր կալուածատիրոջ տնից մինչև գիւղը: Նա առանց ձայն հանելու դարձեալ դուրս թռաւ պատնէշի վրա, և նստելով աւազանի մօտ, կարծես թէ, լուռ գանգատվում էր իր վիճակի վրա, և նայում էր իր պատկերի արտացոլմանը ջրի գունաթափ, արծաթեայ հայելու մէջ: Լայնատերև նունուֆարները տարածել էին աւազանի վրա իրանց կանաչ ցանցը, որը նման էր գեղեցիկ հիւսուածքի, որի տակից տեղ-տեղ դուրս էին նայում սպիտակ և դեղին ջրային շուշաններ, որոնք լուսնի կապտագոյն լոյսի մէջ այնպէս էին թւում, որպէս թէ մառ բոցեր լինէին: Յանկարծ այդ սիրահարված քնաշրջիկը, կատուն, ձգձգեց իր փափուկ անդամները և կամաց անցաւ բարձր, ճերմակ շամբուտի մօտով, անցաւ նախշուն շուշանների մօտով և նաւակի մօտով, որը շղթաներով կապված հառաչում էր, անցաւ և քնած կարապի մօտով, որ գտնվում էր մթին եղէգների մէջ, որոնք լուսնի լոյսի առջև կանգնած էին որպէս մի հարթած և կոկած պատ: Չորս կողմում, դալար թուփերի մէջ, որոնք պսակի նման շրջապատել էին թէ աւա-

ղանը և թէ գետը, երգում էին սոխակներ, բայց նրանցից մէկը, որ աւելի մօտ էր ինձ, այնպէս տխուր ձայնով գեղգեղում էր, որ բոլորովին այրում էր իմ սիրտը։ Մրգեղէնների անհագին ծառերը իրանց սաղարթախիտ տերևներով մասամբ կլանում էին լուսնի պայծառ լոյսը, բայց այնուամենայնիւ, ամեն մի առանձին-խոտ հրապուրիչ կերպով փայլում էր, և ամեն մի ծաղիկ վառվում էր մոգական բոցով։ Ամեն անգամ, երբ թեթև քամին անցնում էր այգու միջով, ցօղը, արծաթափայլ մողիկլի նման, սփռվում էր կանաչ բուսականութեան վրա, սփռվում էր աւազապատ ծառուղիների և ելակների թփերի վրա, իսկ կարմիր մեկոնը իմ լուսամուտի ներքոյ այրվում էր։ Կանաչ ածուների վրա, ոսկեայ ռումբերի նման, թեք էին ընկած սեխերը։ Թանթրուենին, ծածկված լուսափայլիկ միջատներով, վառվում էր, ինչպէս Մովսէսի մորենին, իսկ երբ նրա վրայից թռչում էին լուսատտիկ բզէզները, այդ միջոցին այնպէս էր թւում, թէ այնտեղից դէպի ամեն կողմ կայծեր էին սփռվում։ Հովանոցը, ծածկված սաղարթախիտ պատատուկների հիւսուածքով, և մէջը լուսաւորված լուսնի լուսով, նմանում էր այն մատուռներից մէկին, որոնց մէջ մշտապէս վառվում է անշիջանելի կանթեղը։ Երբեմն փչում էր հասմիկի արբեցուցիչ անուշհոտութիւնը, երբեմն հասնում էր ինձ դալար խոտերի զուարթացուցիչ հոտը։

Ամբողջ բնութիւնը խաղաղ և աղօտափայլ կերպով վառվում էր գեղեցիկ լուսնկայ գիշերի ողջախոհական լուսով, և կարծես թէ աշխատում էր արտայայտել իր զգացմունքները։ Ջուրը երգում էր իր միակերպ երգը. երբեմն լսելի էր լինում տերևների սօսափիւնը. սոխակները հեծեծում էին, ճպուռները չըխչըխում էին. տեղ-տեղ կռկռում էին գորտերը. լուսամուտի փեղկերի մէջ մեծ ջանքով բախում էր փայտակեր միջատը, իսկ իմ գլխի վրա, բոյնի մէջ, ճլվլում էին ծիծեռնակները։ Եւ յանկարծ լուսնկայ գիշերը սկսեց նուաղել. լոյսը, անուշհոտութիւնը և մեղեդին միախառնվեցան մի ներդաշնակութեան մէջ. տանտիկինը ածում էր լուսնային սոնատը։ Իմ սրտում տիրում էր սքանչելի խաղաղութիւն. ես երկար լսում էի, իսկ երբ երգեհոնի հնչիւնները լռեցին, ինձ այնպէս երևաց, որ ամեն ինչ լռեց և բնութեան մէջ. միայն փայտակեր միջատը անխոնջ կերպով շարունակում էր բախել։

Տիրում էր սաստիկ անշարժութիւն, իսկ հեռաւոր դաշտավայրերում՝ խորին լռութիւն,—բայց ահա փչեց զով քամին և հասցրեց ինձ մալօրոսեան երգի տխուր հնչիւնները։

Երգում էին հնձւորները, որոնք օգուտ քաղելով թարմ և պարզ գիշերից, եռանդով աշխատում էին։ Լուսնի լուսով ես կարողանում էի լաւ տեսնել, թէ ինչպէս մրջիմների նման վրժվրժում էին նրանք դեղին արտերի մէջ։

Ամեն ինչ հանգստանում է, բացի մարդից. Նա միայն անքուն աշխատում է, քրտինք է թափում իր վշտալի և ծիծաղելի գոյութեան համար, որը նա մի և նոյն ժամանակ և՛ սիրում է և՛ արհամարհում է:

Որպիսի կոյր յամառութեամբ, սկսեալ վաղ առաւօտից մինչև խորին գիշեր, աշխատում է մարդը իր գոյութեան համար: Նրա սիրտը սաստիկ ցնցումներով նեղանում է, խեղճ գլուխը տենդային դրութեան մէջ բաբախում է, հէնց որ մի փոքրիկ վտանգ է սպառնում նրա կեանքին, կամ նկատում է, որ նրանից խլում են իր զուարճութիւնը կամ այն, որ նրա աչքում այնպիսի մեծ արժէք ունի իր կեանքի համար: Եւ քնի մէջ նրա ուղեղը շարունակում է գործել երկրորդ, երրորդ և չորրորդ օրերի համար, և քնի մէջ անհանգստացնում են նրան կեանքի մի և նոյն հոգսերը: Անդադար ջանք է անում նա, մի կերպով ապահովացնել, հաստատ հիմքի վրա դնել իր գոյութիւնը, բայց այսուամենայնիւ, նա գործում է ոչ թէ իր համար, այլ յաւիտենականութեան համար, —թէ հերկում է նա արօրով փխրուն հողը, որը ծածկում է իր ներքոյ նրա կեանքի մշտական օջախը, թէ լողում է նա յուսալի նաւով անսահման ծովի վրա, թէ հետազօտում է աստղների ընթացքը երկնքի վրա, կամ հմուտ կերպով և երևակայական աշխատասիրութեամբ արձանագրում

է մարդկութեան անցեալ գործերը,—այդ բոլորը յաւիտենականութեան համար է: Նա ուսանում է, խորհում է, ծրագիրներ է ստեղծում և ամեն ինչ հնարագործում է միայն նրա համար, որ կանգնեցնէ օրհասական ընթացքը իր կեանքի տխուր մեքենայի, և, մի՛ կտոր հացի համար, ամեն րոպէ պատրաստ է զոհել իր ամենասուրբ խորհուրդները: Նա, ինչպէս էլ որ լինի, կամենում է ապրել, և իր բոլոր ուժով վազ է տալիս սնունդի ետեւից՝ պահպանելու կեանքի այն ողորմելի կանթեղը, որը, այնուամենայնիւ, մի օր պիտի հանգչի յաւիտեան:

Այստեղից ծագում է և նրա ձգտումը շարունակել իր կեանքը նոր արարածների մէջ, որոնց կտակում է նա իր ուրախութիւնները և որոնք իսկապէս ժառանգում են նրանից միայն զրկանք, կռիւ և տանջանք: Որպէս սիրում է նա իր ժառանգներին, որպէս խնամքով հոգս է տանում և մեծացնում է նրանց: Նրան այնպէս է թւում, որ իր թանգագին եսը կրկնապատկվեցաւ, տասնապատկվեցաւ իր սերունդի մէջ:

Ինչ չափով նա հնարագէտ է, երբ որ նա հոգս է տանում իր գոյութիւնը շարունակելու համար և իր նպատակի համեմատ ապահովացնում է նրան, նոյն չափով անգութ է նա դէպի ուրիշների գոյութիւնը: Անխատակելի կերպով խաբում է, կողոպտում է և ոչնչացնում է նա բոլորը, ինչ որ պատահում

է Նրա ճանապարհի վրա։ Նա ինքը ստեղծում է ընդարձակ և անմիտ թէօրիաներ Նրա համար, որպէս զի հպատակեցնէ իր եսականութեանը իր անպաշտպան եղբայրների ամբողջ սերունդները։ Առանց վարանելու, Նա մերժեց իրանից անասուններին, անպատվեց մարդիկներին, որոնք տարբերվում էին Նրանից միայն կաշու ուրիշ գոյնով և ուրիշ լեզուով,—և այդ բոլորը միայն Նրա համար, որ ինքը ապրի ուրիշ ապրողների հաշուով։

Այդ մշտական արիւնահեղ պատերազմը մղվում է երբեմն լուռ կերպով երկու օջախների մէջ, երկու ծուխերի մէջ, իսկ երբեմն յայտնի կերպով՝ կռիւի դաշտում կամ օվկիանոսի վրա, և միշտ սրբազան և մի և նոյն ժամանակ կեղծ դրօշի ներքոյ,—և չը գիտէ Նա ոչ գթութիւն, և ոչ վերջ։ Եւ այսուամենայնիւ, դու խիստ դառն ես թւում, ով սուրբ հրաժարումն կեանքից, թէև քո ճշմարիտ խաղաղութիւնը միակ բախտաւորութիւնն է, որը մեզ համար նախասահմանված է երկրի վրա,-խաղաղութիւն, լռութիւն, և քուն յաւիտեան։ Ի՞նչու մենք այնպէս վախենում ենք մահից, որը լուծում է մեր բոլոր տարակուսանքները և հանգստացնում է մեր բոլոր տխրութիւնները։ Ի՞նչու այնպէս ողբալի կերպով դողդողում է սիրտը մեր կուրծքի մէջ, հէնց որ Նա զգում է եղծման սառցային շունչը։ Ո՛րպէս մենք աշխատում ենք վերադարձնել մեր

յիշողութիւնները, ո՛րքան փափագում ենք՝ ապրել ինքներս մեր մէջ։ Ի՞նչու։ Չը մտաբերել իր մասին, չը խորհել կանխապէս, ոչինչ բանի մասին չը ըղձալ։—Այդ միտքը սարսափ է բերում մեր խեղճ սրտի վրա. այդ միտքը մեզ յուսահատութեան մէջ է ձգում, և այն ժամանակ անքուն գիշերներում մենք դառնում ենք անբժշկելի երկիւղի զոհը։

Անբժշկելի՞։—Ոչ, այդ երկիւղը կը բժշկվի, եթէ մարդը կը դիմէ խ ո ր հ ր դ ա ծ ո ւ թ ե ա ն։ Այստեղից ծագող լոյսը կարող է պահպանել Նրան. այդ լոյսը սառն է, բայց պարզ է. Նա միայն կարող է լուսաւորել Նրա անմխիթար գիշերները և, փոքր առ փոքր, կը մտնէ Նրա հոգու մէջ, կը ցրուէ սոսկալի ստուերները, որոնք վախեցնում են Նրան, և կը բնակեցնէ Նրա մէջ հեզութիւն, խոնարհութիւն և հանգստութիւն։

Երբ որ լուսնկայ գիշերի խաղաղ ու փափուկ փայլը միջամուխ էր լինում իմ հոգու մէջ, այդ ժամանակ իմ երևակայութեան մէջ, սպիտակ ու մեծ ամպերի նման, պտըտվում էին անցեալի իդէալները, և որպէս արտաքսեալ աստուածութիւններ, կրկին ամբոխվում էին ինձ համար միշտ թանգագին եղած դէմքեր, էակներ, որոնց բաժանեց ինձանից ատելութիւնը, սառնութիւնը, իսկ ոմանց վաղուց ծածկել էր հողը։ Ես յիշեցի մտածմունքները անվեհեր ոսկեայ մանկութեան, Նրա՛, որը Սէնա-

յեան լեռան վրա, կայծակների և ամպերի միջից, խօսում էր իր ժողովրդի հետ, և Նրա, որ փշեայ պսակ կրելով, տանում էր մարդկութեան խաչը իր արիւնաշաղախ մէջքի վրա:—Մառախուղի բաժանված բեկորները պտըտվում էին լուսնի լոյսի մէջ, ինչպէս հին, վաղուց պատառոտված դրօշակներ, ինչպէս Թառամած ծաղիկներ և Թարշամած պսակներ: Եւ ահա, իր անկեղծ, հեզ աչքերով նայում է իմ վրա ինձ համար միշտ Թանգագին եղած կինը, չքեղ ու չիկագոյն գիսակներով և կուսական նազելի դէմքով, իսկ Նրանից յետոյ երևում են ուրիշ տեսիլքներ, և նոր սրբազան մտքեր յարութիւն են առնում իմ յիշողութեան մէջ: Լուսնեակի լոյսը վառվում է, ինչպէս բոցը զոհաբերված. մոմի. անուշհոտութիւնը լուսնկայ գիշերի, խունկի նման, բարձրանում է դէպի երկինքը. անտառի աղաղակների մէջ լսվում են երգեհօնի խորին, հանդիսաւոր հնչիւնները...

Ես երեսս դարձնում եմ այդ բոլոր առաչօք տեսիլքներից և անմիտ, կատաղի մանկութեան խարուսիկ իղձերից:

Իրականութիւնը խիստ է, բայց արդար է: Բոլորովին սուտ է, որ բնութիւնը չէ կամենում ճանաչել քեզ: Իր մշտական փոփոխութիւնների մէջ նա մնում է անփոփոխ, և, որպէս ամբողջ հազար տարիներ դրանից առաջ, այնպէս էլ այժմ, դու տեսնում ես Նրա միշտ

մի և նոյն սառն, մռայլոտ, բայց մայրական դէմքը: Բայց դու ինքդ հեռացար Նրանից և սկսեցիր անտարբերութեամբ վերաբերվել դէպի Նա, դու ինքդ սկսեցիր արհամարհել Նրա զաւակներին, հէնց քո կրտսեր եղբայրներին, դու կամեցար բարձրանալ Նրա վրա և ինքդ կախված ես այժմ, որպէս լեհական Ֆաուստը *), երկնքի և երկրի մէջ տեղում: Եւ այսու ամենայնիւ Նա կերակրում է իր կուրծքով իրան չը սիրող որդուն և միշտ պատրաստ է բաց անել Նրա համար իր գիրկը: Նրա խիստ օրէնքները գծագրված են պղնձեայ տախտակների վրա, եթէ որդին կը կամենայ սովորել այդ օրէնքները, կարող է միշտ և ամեն տեղ կարդալ Նրանց:

Կրկին աշխատասէր հնձուորների երգի ձայնը սկսեց լսելի լինել ինձ. խոտը ծածանվում էր, անտառը վեհափառութեամբ ձայն էր արձակում. օդը աւելի զովացաւ:

---

*) Տվարդօվսկի: Յափշտակված լինելով սատանայից, նա լողում էր Նրա հետ երկնքի օդային տարածութեան մէջ, բայց, Կրակօվի վրա լըսելով, որ Ave Maria-ի զանգակները հարում են, աղօթք կարդաց դէպի Տիրամայրը, որ մի ժամանակ սովորացրել էր նրան իր մայրը: Սատանան իսկոյն Թողեց նրան իր ձեռքից, և նա մնաց կախված երկնքի ու երկրի մէջտեղում, և այդ դրութեան մէջ մնում է մինչև այսօր: Ժամանակ առ ժամանակ Նրա մօտ բարձրանում է սարդը և Նրան կերակուր է տանում երկրից:

Ես դանդաղ կերպով հանվեցայ, հրացանս զըննեցի, դրեցի նրան բարձիս մօտ և ընկայ մահճակալի վրա, որ դրած էր մերկ պատի մօտ։ Իմ շունը իր մշտական սովորութեան համեմատ ձըգվեցաւ իմ մահճակալի մօտ, միանգամ ևս իր բարեխիտ և խելացի աչքերով նայեց իմ վրա, և յետոյ գլուխը դրեց առաջի թաթիկների վրա։ Նրա շնչառութիւնը աւելի և աւելի մեղմանում էր, յետոյ լսելի եղան հառաչանքներ,—երևում էր, որ լաւ երազներ չէր տեսնում նա։ Լուսամուտը բաց մնաց։

Իսկ ինձ դեռ ևս տիրում էին ցնորքներ. առաջ արթնութեան մէջ, բայց շուտով և քնի մէջ։ Ես յոգնած էի և ընկայ այն բարերար ինքնամոռացութեան մէջ, որը մահուան աւետաբեր կարապետն է։

Չը գիտեմ, արդեօք երկա՞ր էի քնած ես, երբ մի օտարոտի խշխշոցի ձայն զարթեցրեց ինձ. ես աչքերս բաց արի և աւելի յայտնի կերպով լսեցի այդ ձայնը։ Շունը կամաց շարժվեցաւ, բարձրացրեց իր գեղեցիկ գլուխը, շունչ քաշեց և կցկըտուր ու խռպոտ ձայնով հաչեց, կարծես թէ երէի վրա լինէր։ Ես յուշի եկայ և մեքենաբար ձեռքս տարայ դէպի հրացանը։

Բնութեան մէջ տիրում էր կատարեալ խաղաղութիւն. հազիւ լսելի էր լինում նրա տխուր շնչառութիւնը։ Բայց ահա դարձեալ լսվում է

մի և նոյն օտարոտի անախորժ խշխշոցը, որ նըմանում էր գերեզմանից դուրս եկած մեռելի քայլերին, կամ հագուստի ձայնի, որը քարշ է գալիս գետնից։

Եւ յանկարծ բաց լուսամուտից երևաց մի բարձըր ու սպիտակ ուրուական. այնտեղ կանգնած էր մի կին, որի շքեղ կազմուածքը հազիւ ծածկված էր թեթև ու ծածանվող գործուածքով. Նրա դէմքը նայում էր դէպի այգին, բայց լուսնի պայծառ լոյսի առջև նրա հասակը ամբողջապէս երևում էր թափանցիկ կերպով։ Մեկնած ձեռքի վրա երևում էր կարմրագոյն ստուեր։

Շունը սարսափեց, երևում էր, որ վախեցաւ, նա շուտով սեղմվեցաւ մահճակալին, սկսեց կաղկանձել։ Ես բռնեցի հրացանը և կամենում էի կրակ տալ։ Եւ այժմ չեմ հասկանում, թէ ինչու այդ միտքը մտաւ իմ գլուխը, երևի ինադդմամբ։ Մի անախորժ սարսուռ անցաւ իմ ամբողջ մարմնով։

Հրացանի չախմախը քաշեցի։

Այդ րոպէում սպիտակ ուրուականը դէմքը դարձրեց դէպի ինձ, և ես ճանաչեցի իմ տանտիկնոջը։ Նա աւելի գունաթափ էր, քան թէ առաջ. արձակված սև ծամերը սփռված էին նրա գիշերային հագուստի վրա. նա փայլում էր, որպէս լուսնի բոլորակը, և միայն այժմ տեսայ ես, որ նրա աչքերը պինդ խփած էին։ Սաս-

կալի սարսափը տիրեց ինձ: Խփած աչքերով զըննում էր նա սենեակի շուրջը, նայում էր իմ վրա, և կարծես թէ, տարակուսութեան մէջ էր ընկնում: Ես կամենում էի վեր կենալ, բայց նա մատը դրեց շրթունքին և այդ նշանով կանգնեցրեց ինձ. մի անգամ ևս նայեց դէպի այգին, յետոյ մտաւ սենեակը և առանց իմ վրա մտիկ տալու, առանց ձայն հանելու, բայց ամուր քայլերով, և գլուխը տխուր կերպով խոնարհեցրած, անցաւ սենեակի շուրջը: Յետոյ նա չոքեց ծնկների վրա և, գլուխը դնելով մահճակալի ամուր թիկունքի վրա, սկսեց մեղմ կերպով լաց լինել:

Կնոջ արտասուքները երբէք մի առանձին ազդեցութիւն չեն ունեցել իմ վրա, բայց նա մի այնպիսի դառն կերպով էր լաց լինում, որ ես խիստ ցաւեցայ նրա արտասունքներից և կարեկցութեամբ թեքվեցայ դէպի նա:

—Նա մեռաւ, ես գիտեմ այդ,—կամաց սկսեց նա մի այնպիսի ձայնով, որը կտրատում էր իմ սիրտը,—նրանք թաղեցին նրան եկեղեցու շրջապարսպի ետևում, ինչպէս մի ինքնասպանի, և ես այժմ որքան ցանկանում եմ գնալ նրա մօտ:—Նա բարձրացրեց գլուխը, դրեց իր ձեռքի վրա և խորին կերպով հոգւոց հանեց:—Գերեզմանատունը խիստ հեռու է, հեռու,—կրկնեց նա տրտմութեամբ լի ձայնով:—Ես երբէք չեմ կարող այնտեղ հասնել: Բայց մի և նոյն է, ես այստեղ եկայ հէնց նրա մօտ:

Այդ խօսքերը ասելով, նա վերկացաւ և խարխափելով անցաւ սենեակի դատարկ պատերի մօտով, կարծես թէ վախենում էր, որ ոտները կը դաւաճանեն նրան: Յանկարծ նա շուռ եկաւ դէպի ինձ, երկար ուշադրութեամբ նայեց իմ վրա և շարժեց գլուխը:—Նա չը կայ,—կարճ և ամուր կերպով ասաց նա,—նա մեռաւ:—Այդ միջոցին նա ամբողջ մարմնով դողաց և նրա ատամները սկսեցին բաբախել: Յանկարծ խուլ հառաչանքով ընկաւ նա յատակի վրա, և երեսը դէպի գետին դարձրած, սկսեց բարձր ձայնով հեկեկալ, ձեռքերով բռնած ունենալով իր գլուխը. որ ծածկված էր սքանչելի ծամերով: Նրա հեկեկանքը հետզհետէ մեղմացաւ, վերջը նա լռեց և բոլորովին անշարժ մնաց:

Ես արդէն վճռել էի վեր բարձրացնել նրան, բայց այդ րոպէում նա ինքը վերկացաւ: Նրա դէմքի վրա երևում էր մի նշանաւոր հեզութիւն, և մի զարմանալի ժպիտ ներսից լուսաւորում էր դէմքը: Վերկենալու միջոցին, կարծես թէ, նա հանդիսաւոր կերպով համբառնում էր օդի մէջ, և այնպէս էր թւում, որ նրա ոտները չէին դիպչում յատակին: Առանց ձայն հանելու, անցաւ նա սենեակի միջով, յետոյ հանդարտ ու հանդիստ կերպով կանգնեց, երեսը դարձնելով դէպի լուսինը, որի ճառագայթները լուսաւորում էին նրան, և անսպասելի կերպով խօսեց ինձ հետ:

—Ի՞նչ կը մտածի Լէօպօլդը Օլգայի մասին,—տխրագին հեգնութեամբ ասաց նա:

Նա խօսում էր թէ իր և թէ իմ մասին երբորդ դէմքով և մեր երկուսիս էլ կոչում էր խնկական անուններով: Իմ սիրտը դադարեց խռովվելուց, և ես լուռ նայում էի նրա վրա: Ինձ համար այժմ պարզ էր, որ ես տեսնում էի իմ առջև մի լուսնահար կին կամ, ինչպէս ասում են մեր գիւղացիները, լուսնից հիւանդացած կին: Ես դեռ ես մեքենաբար բռնած ունէի ձեռքումս իմ հրացանը: Նա մօտեցաւ ինձ և ձեռքը մեկնեց, որ առնէ ինձանից հրացանը: Ես վախենալով, յետ քաշվեցայ: Նրա շրթունքի վրա երևաց մի ծաղրական ժպիտ:

—Լէօպօլդը կարող է հանգիստ լինել,—ասաց նա,—նա կարող է իր հրացանը տալ Օլգային, ախար Օլգան աւելի լաւ է տեսնում, քան թէ նա:

Բայց երբ ես չը վստահացայ տալ նրան հրացանը, այլ տարայ նրան պատի մօտ, այդ միջոցին նա յօնքերը խոժոռեց և ղայրացած կերպով խլեց հրացանը իմ ձեռքից, ինչպէս մի մարդ, որ բարկանում է, թէ ինչու չեն հաւատում նրան, և կամենում է ապացուցանել, թէ սխալվում են նրա մասին: Նա խիստ գիւրաշարժ կերպով հեռացաւ ինձանից և բռնած ունէր հրացանը այնպէս, ինչպէս բռնում են որսորդները:

—Էլ ինչ վտանգ կայ դրանում, ասաց նա և զգուշութեամբ ցած թողեց չախմախը, յետոյ դրեց հրացանը անկիւնում:

Ես այժմ սկսեցի ազատ շունչ քաշել:

—Լէօպօլդը թող չը համարձակվի մտածել մի որ և իցէ վատ բան Օլգայի մասին, ես մինչև անգամ խնդրում եմ նրան դրա համար,—գոչեց նա. և արտասուքը արդէն դուրս ցայտեց նրա թերթերունքի տակից: Նա չոքեց ծնկների վրա և ձեռքերը մեկնեց դէպի ինձ:—Նա ոչ ոքին թող չը համարձակվի հաղորդել այն, ինչ որ կը լսէ,—կամաց և խորհրդաւոր կերպով շարունակեց նա,—մինչև անգամ հէնց իրան՝ Օլգային ևս թող չը յայտնէ, եթէ ոչ, Օլգան ամօթից կը սպանէ իրան:

—Ոչ ոքին չեմ ասի,—պատասխանեցի ես: Իմ ձայնը դողում էր:

—Ոչոքին,—ուրախացած կրկնեց նա:

Խորին սրտաշարժութեամբ ես թեքվեցայ դէպի նա և կամենում էի բարձրացնել նրան: Նա իր գեղեցիկ գլուխը շարժեց և կամաց խոնարհեցրեց նրան կուրծքի վրա:

—Հիմա պէտք է Լէօպօլդը բոլորը գիտենայ, բոլորը,—ասաց նա հանդարտ կերպով:

—Ոչ,—ձայն տուի ես,—ոչինչ մի պատմիր, եթէ այդ կարող է դառնացնել քեզ: Ինձ պէտք չէ գիտենալ քո գաղտնիքները:

—Լէօպօլդը սխալ կարծիք կունենայ այն ժամանակ Օլգայի մասին, նա և այժմ տարակուսութեան մէջ է նրա մասին, տխրութեամբ պատասխանեց նա։—Հարկաւոր է, որ Օլգան պատմէ նրան բոլորը։ Օլգան թեթևամիտ կին չէ, ոչ, նա միայն սարսափելի անբախտ է։ Բայց նա առաջ թող երդում տայ Օլգային, որ լուռ կը մնայ։ Կը երդվի՞ արդեօք նա։—Հարցնում էր նա, չը նայելով իմ վրա։

Այո՛,—պատասխանեցի ես։

Յանկարծ իմ շունը մօտեցաւ նրան, հոտ քաշեց նրանից, խռպոտ ձայնով հաչեց և ատամները ցոյց տուեց։ Օլգան թեքվեցաւ դէպի շունը, որ փայփայէ նրան, բայց շունը դողաց, և վախենալով, թաքնվեցաւ մահճակալի տակ։

—Ես պէտք է, պէտք է բոլորը պատմեմ նրան, —հոգւոց հանելով ասաց նա,—եթէ ոչ, դա լաւ վախճան չի ունենայ։ Ես չեմ կամենում, որ Լէօպօլդը վատ կարծիք ունենար Օլգայի մասին, որը այնքան խղճալի դրութեան մէջ է։

Նա ծնկերի վրա սողալով մօտեցաւ ինձ, գլուխը խոնարհեցրեց մահճակալի սիւնի վրա, և մի առանձին երկիւղած հեզութեամբ ձեռքերը դրեց իր կուրծքի վրա։

—Ես գիտեմ, որ նա կը հասկանայ Օլգային, և այդ պատճառով ես կամենում եմ բոլորը պատմել նրան։

Ես զգացի մի թեթև սոսկում։

—Լէօպօլդը թող հանգիստ լինի,—մտերմութեամբ շշնջաց նա,—ոչինչ չի խօսվի կատարված յանցանքի մասին։ Օլգան իր յօժարութեամբ ոչոքին վնաս չի տուել։ Նրա պատմութիւնը մի տըխուր պատմութիւն է միայն, և աւելի ոչինչ։ Լէօպօլդը թող չը համարձակվի լաց լինել։

Ես թիկն տուի պատին և նայում էի նրա վրա, իմ աչքերը վառվում էին, կոկորդս չորացել էր։

—Ես յօժարութեամբ պիտի պատմեմ նրան։ Նա գիտէ կանանց բնաւորութիւնը…

Ես ակամայ շարժեցի գլուխս։

—Օլգան չէ ընդունում իր վրա մի ուրիշ մեղք, բացի նրանից, որ ինքը կին է և կրթված է այնպէս, որպէս կրթում են կանանց, միայն զուարճութեան առարկայ լինելու համար, բայց ոչ թէ աշխատանքի համար.—Կինը բոլորովին առանձին էակ է,—շարունակեց նա, և խօսքերը կարծես հոսում էին նրա շրթունքից,—կինը աւելի հեռու չը գնաց այն սահմանից, որ նշանակել էր նրա համար բնութիւնը, և որքան լաւ է նա, այնքան էլ վատ է քան թէ տղամարդը։ Ես ասում եմ—լաւ և վատ, որպէս այդ խօսքերը հասկանում են մարդիկ։

Նա ժպտաց։

—Իր բնութեան համեմատ, ամեն ոք մտածում է միայն իր մասին, և այդպէս էլ և կինը սիրոյ

մէջ ամենից առաջ խորհում է իր օգտի ու իր մնափառութեան համար: Չէ որ պէտք է նրան ապրել, բայց նա կարող է ապրել առանց աշխատանքի, միայն ծառայելով որպէս մի միջոց տղամարդի զուարճութեան համար, և դրա մէջն է կայանում նրա բոլոր զօրութիւնը և նրա բոլոր դժբախտութիւնը: Ուղիղ չէ՞: Սէրը մի չռայլութիւն է, որ կարող է կինը մատակարարել տղամարդին, իսկ կնոջ համար դա օրեկան հացի միջոց է: Բայց նա, որ սկզբում վարել է ողորմելի կեանք, ժամանակով կը պահանջէ կեանքից աւելի շատ բան: Նրա մէջ զարթնում է այն ցանկութիւնը, որքան կարելի է աւելի բարձրացնել ուրիշների վրա իր ե ր ե ս ը, որով նա այնքան պարծենում է: Որպէս տղամարդի մէջ, այնպէս էլ կնոջ մէջ մնափառութիւնը միակերպ է, բայց կնոջը հարկաւոր է միայն իրան ցոյց տալ, և արդէն սարուկները ու երկրպագուները նրա ոտների մօտ ընկած կը լինեն: Նրան հարկաւոր է միայն գեղեցիկ լինել, և այնուհետև էլ ինչ պէտք է նրան մի բան սովորել, էլ ինչ պէտք է աշխատել: Բայց գալիս է մի ժամանակ, երբ կինը պարզ հասկանում է, թէ ինչ է տղամարդը և ինչ է նշանակում տղամարդի սէրը, և այդ ժամանակ, իր հերթում, նրան եւս տիրում է մի անբացատրելի ծարաւ սիրելու և սիրված լինելու,—այն ժամանակ, երբ այդ այլ եւս անկարելի է: Նա այդ-

պէս, նրա դառն ճակատագիրը ծանրանում է նրա վրա: Դա մի դժբախտութիւն է առանց կարիքի, առանց աճելու, առանց փրկութեան: Օլգան կարող էր լինել լաւ կին. նա ունէր խելացի գլուխ և բարի սիրտ, բայց... Պէտք է կրթել կնոջը այնպէս, ինչպէս կրթում են տղամարդին, այն ժամանակ նա կը լինի իր ամուսնի ընկերը: Լէօպօլդը կասկածում է այդ խօսքերի մէջ:

—Մեզ համար լաւ չէ հեռանալ բնութիւնից,—պատասխանեցի ես, արտայայտելով այն, ինչ որ վաղուց իմ սրտումն էր:—Կինը պէտք է սովորի լինել լաւ մայր: Բոլոր մնացածը ցնորք է, խաբէութիւն է կամ...

—Ժամանակները փոխվելով, տղամարդը նոյնպէս փոխվեցաւ,—պատասխանեց նա հեզութեամբ,—նա թողեց անասնականութիւնը, և այժմեան տղամարդը, որը խորհում է, դատում է և գիւտեր է անում, որը պարապվում է արհեստներով ու արուեստներով, պահանջում է ուրիշ տեսակ կին, քան թէ այն տղամարդը, որը, մի քանի հազար տարի առաջ, առանց ցանելու, կերակրվում էր երկրի պտուղներով, կամ գայլի նման խեղդում թռչուններին ու գազաններին:—Բայց ես կամենում եմ պատմել Լէօպօլդին իմ պատմութիւնը: Ես բոլորը կը պատմեմ նրան, կը պատմեմ, թէ ինչպէս այդ ամենը պատահեց: Ես խիստ պարզ կերպով տեսնում եմ իմ առջև անցեալը. բոլոր

հանդամանքները կատարելապէս պարզվել են իմ աչքում, և ես ազատ կարող եմ կարդալ, թէ ինչ կայ ամէն մի մարդու սրտի մէջ. տեսնում եմ և Օլգային, կարծես թէ օտար մէկը լինէր նա, և չեմ զգում դէպի նա ոչ սէր և ոչ ատելութիւն:

Նա տխուր կերպով ժպտաց:

—Ես տեսնում եմ Օլգային երեխայական հասակում: Նա փոքրիկ, սիրուն աղջիկ էր, գողտրիկ և արևից այրված ձեռիկներով, և սևորակ, խիտ թերթերունքներով պատած, հարցասէր աչքերով: Ծերունի դռնապան Օհաննէսը, որից միշտ գինու հոտ էր փչում և որը միշտ կարմիր աչքեր ունէր, կասես թէ, շատ լաց լինելուց, այդ մարդը ամէն անգամ նրա մօտից անցնելով, կը վեր առնէր նրան իր ձեռքերի վրա և մատներով փաղաքշաբար կը փայփայէր նրա թշերը: Մի անգամ փոքրիկ աղջիկը կանգնած էր պատշգամբի վրա, իսկ հիւրերի սենեակում նրա մօր մօտ նստած էր մեր երիտասարդ հարևանը, որին տիկինները միշտ հաճութեամբ էին ընդունում իրանց մօտ: Լուսամուտները բաց էին, և Օլգան լսեց, որ երիտասարդը ասում էր նրա մօրը. այո, դա, ճշմարիտն ասած, մի փոքրիկ Վեներա է, դուք կարող էք պարծենալ այդ աղջիկով, որպիսի լաւ կին կը դուրս գայ դրանից:—Օլգան հասկացաւ, որ խօսում էին իր մասին, նա ամօթից շառագունեցաւ և փախաւ այգին: Այստեղ նա հանդարտ զբօս-

նում էր ծաղիկների մէջ, քաղում էր վարդեր, շահպրակ և մեխակներ, զարդարում էր նրանցով իր ծամերը և յետոյ սկսում էր ուշադրութեամբ ու հպարտ կերպով նայել իր պատկերին լճակի մէջ: Լճակի մօտ կանգնած էր սիրոյ աստուածը մարմարիոնից. նա նայում էր նրան, և իր մէջ մտածելով, ասում էր. Երբ ես կը մեծանամ, կը լինեմ այդպէս գեղեցիկ, ինչպէս դու: Ձմեռնային երեկոները, վերջալոյսի ժամանակ, պառաւ դայեակը, Կայետանօվնան, կը նստէր կանաչագոյն մեծ բազկաթոռի մէջ, որտեղ մեռել էր պապը, և որը այն օրից ազդում էր երեխաների մէջ յարգանք, խառն երկիւղի հետ, և կը պատմէր նրանց հեքիաթներ: Որքան աւելի մթնում էր և որքան աւելի մռայլվում էր Կայետանօվնայի փաղաքշական դէմքը, այնքան աւելի հետաքրքրութեամբ հաւաքվում էին նրա շուրջը երեխաները, և այնքան աւելի կամաց էին շշընջում միմեանց հետ: Օլգան սովորաբար դնում էր իր գլուխը դայեակի ծնկերի վրա, աչքերը խըփում էր,—և նրան այնպէս էր թւում, որ բոլորը, ինչ որ պատմում է պառաւը, իսկապէս կատարված բան է: Նա միշտ երևակայում էր իրան մի գեղեցիկ թագուհի, որը նաւով լողում է Սև ծովի վրա, կամ թևաւոր ձիու վրա նստած, բարձրանում է երկինքը: Բայց մի անգամ, լսելով Գրիժ—Օհանիկի արկածները, որը ազատեց թագաւորի աղջկան,

Օլգան, իսկոյն գլուխը բարձրացնելով, տհաճութեամբ աղաղակեց. ես Թագաւորի աղջիկ չեմ, կայետանօվնա:—Իսկ ամառը, երբ մանր ազնուականների երեխաները խաղում էին սօսիների ներքոյ, Օլգան ևս վազում էր նրանց մօտ, և երբեմն միասին խաղում էին հարսանիք: Տղաներից մէկը իրան ներկայացնում էր քահանայ: Օլգան դնում էր գլխին մի պսակ, հիւսած կաղնու տերևներից, և կատարում էր հարսի դեր: Բայց նա միշտ ասում էր իր փեսային. իմ փեսան պէտք է լինի գոնէ դուքս, բայց ես շատ գեղեցիկ եմ մանր ազնուականի համար:—Օլգան մեծացաւ, բարձրահասակ և վայելչակազմ օրիորդ դարձաւ: Մի ժամանակ փոքր ինչ հազում էր նա. մէջքը փոքր ինչ կորանում էր: Որպիսի ծանր հոգս էր այդ մօր համար:—Օլգա,—շատ անգամ ասում էր մայրը,—դու կորաքամակ կը դառնաս, այլ ևս քեզ համար ամուսին չես գտնի, և ստիպված կը լինես ապրել աշխատանքով, ինչպէս ապրում է սապատող Ցէլէստինան:—Երբ հարևանները հիւր էին լինում նրա մօր մօտ և նստած էին լինում թէյի սեղանի շուրջը, Օլգան ամենի հաճոյքը կատարում էր և ինքն էր բերում նախաճաշելիքներ ու պակսիմաթներ: Նա դեռ. ման էր գալիս այն ժամանակ անդրավարտիքով, որ ասղնեգործած էր նուրբ հիւսուածքով, և թանձր գիսակները իջնում էին մէջքի վրա: Հէնց որ տիկինները ըս-

կսում էին խօսել իրանց դուստրների մասին կամ ուրիշ աղջիկների մասին, երբ դատում էին նրանց ապագայի մասին, այդ ժամանակ ամբողջ խօսակցութիւնը միայն այն բանի վրա էր լինում, թէ ինչպէս պէտք էր տնօրինել նրանց ապագան, այսինքն՝ նրանց ամուսնութիւնը,—այդ բոլորը կատարվում էր իսկ և իսկ նոյն ձևով, որպէս տղամարդները խօսում են, թէ ինչպէս պէտք է ծառայութեան մէջ մտնեն: Տեղային քահանայի աղջիկը ուսում էր առնում մայրաքաղաքում և պատրաստվում էր լինել մի տան մէջ մանկանց դաստիարակուհի:—Դա շատ բնական է,—ասում էին տիկինները,—խեղճ աղջիկը չափազանց տգեղ է, նրան պակասում են մինչև անգամ առջևի ատամները. նրան ուրիշ ոչինչ չէ մնում անելու:—Պատահեց որ, ամառը եկաւ նա անցկացնելու իր ծնողների մօտ, և այն ժամանակ բոլորը զարմանում էին նրա հմտութիւնների վրա աշխարհագրութեան մէջ, պատմութեան մէջ, բնական գիտութիւնների մէջ և օտարազգի լեզուների մէջ: Բայց Օլգային սովորեցնում էին միայն պար գալ, ձիով ման գալ, երգել, երգեհոնի վրա ածել, նկարել, ասղնեգործել և ֆրանսիական լեզու—բոլոր այն բաները, որոնք կարող են միայն զուարճութիւն պատճառել կնոջ ամուսնին, բայց երբէք չեն տալ մի կտոր հաց: Այդ բոլորի հետ միանում էին նաև մօր բարի խրատները:—Աչքերդ մի

խաղացրու,—ասում էր նա Օլգային,—երբ որ քեզ հետ խօսում է մի տղամարդ. պատասխանիր նրան քաղաքավարութեամբ ու կարճ կերպով, և շուտով կտրիր խօսակցութիւնը: Որքան աւելի դու թանգ կը ծախես քեզ, այնքան աւելի բարձր կը գնահատեն քեզ:—Միթէ այսպէս չեն խօսում և զանազան ապրանքների մասին: Անդադար ասում էին Օլգային, թէ նա ամենագեղեցիկ աղջիկն է ամբողջ շրջակայքում, և երբ ծնողները առաջին անգամ տարան նրան պարահանդէս, ամենքը միաձայն կոչեցին նրան գեղեցկուհի: Ամեն անգամ, երբ նրան հիւր էին տանում մի տեղ, կամ կիրակի օրերը եկեղեցի էին տանում, միշտ, որքան կարողանում էին, զարդարում էին նրան, նոյնպիսի խնամքով, որպէս ժապաւէններով հիւսում են ձիաների բաշը, որոնց տանում են տօնավաճառում վաճառելու համար: Մայրը երբէք փողեր չէր խնայում, երբ պէտք էր զարդարել իր գեղեցիկ աղջկան: Երբ Օլգան հասարակութեան մէջ էր մտնում, նա նկատում էր, թէ ինչպէս բոլորը շշնջում էին միմեանց հետ. նա տեսնում էր երիտասարդների փայլող աչքերը, որ յառած էին լինում իր վրա, լսում էր նրանց խօսքերը, որ լի էին քաղցրութեամբ, և փոքր առ փոքր սառցային կարծր կեղևը պատռում էր նրա ջերմ ու մանուկ սիրտը:

—Տեղային դպրոցի վարժապետը սովորեցնում

էր Օլգային գեղագրութիւն, թուաբանութիւն, քերականութիւն և ստիպում էր նրան բարձր ձայնով կարդալ: Այդ անում էին անհրաժեշտութեան պատճառով, որովհետև նա դեռ չը գիտէր ուղղագրութիւն, երբ ստացաւ առաջին սիրահարական նամակը, և երբէք չը սովորեց անսխալ գրել: Այդ պարապմունքների համար վարժապետին սենեակ որոշեցին փոքրիկ տնակի մէջ, որը գտնվում էր այգիում, և այնտեղ կերակուր էին ուղարկում իրանց սեղանից: Վարժապետին կոչում էին Տուբալ: Ես այս րոպէում էլ տեսնում եմ նրան: Դա մի ամօթխած երիտասարդ էր, խոշոր, բոլորակ ու կարճատես աչքերով և չափազանց երկայն ձեռքերով, հագին ունէր լայն կարմրագոյն բաճկոնակ, որը գնել էր նա մի դուքսի սենեկապետից: Բայց կարմրագոյն բաճկոնակի տակ բաբախում էր մարդկային ազնիւ սիրտ, լցված սիրով ու բարութեամբ: Ամեն ժամանակ պատրաստ էր նա զոհել իր կեանքը, մինչև անգամ նրա համար, երբ պէտք էր ջրից դուրս քաշել մի խեղդվող կատուի ձագ: Երբ Օլգան մտնում էր նրա փոքրիկ տնակը, նա շատ անգամ գտնում էր երիտասարդին իր հին սպիտակեղէնները կամ կօշիկները կարկատելիս և այդպիսի դէպքերում վարժապետը շփոթված կերպով վրա էր պրծնում, որոնում էր սենեակի մէջ մի որ իցէ այլ բան և ձգում էր այդ առարկաները մի անկիւնում: Միայն

այդ ժամանակ նրա դէմքի վրա երեւում էր մի նուրբ կարմրութիւն, իսկ ուրիշ ժամանակներում նա շատ գունաթափ էր, մինչեւ անգամ դեղնած երեսը պատած սաւգիւլով: Բայց հէնց որ Օլգան նստում էր նրա գրասենեակի մօտ, նա դառնում էր բոլորովին ուրիշ մարդ, վեր էր առնում ձեռքում մեծ քանոնը եւ բռնում էր նրան մի այնպիսի վեհութեամբ, որպէս հեծելազօրը, նստած ձիու վրա, բռնում է իր սուրը: Նրա ձայնը դառնում էր զօրաւոր, իսկ աչքերի մէջ վառվում էր լուրջ եւ հանդարտ բոց, որը Օլգայի սրտին խիստ ախորժ էր,—եւ նա ինքը չը գիտէր թէ ինչու: Բայց երբ Օլգան թեքվում էր իր տետրակի վրա, այդ ժամանակ նա զգում էր, որ երիտասարդի աչքերը քնքշութեամբ նայում էին իր վրա: Երբեմն, երեկոյեան վերջալոյսի պահուն, նա դուրս էր հանում իր բարձի տակից մի հին, կեղտոտած տետրակ եւ Օլգայի համար կարդում էր ոտանաւորներ: Նրանց խիստ ճաշակով ու հասկացողութեամբ ընտրել էր նա ամենալաւ բանաստեղծներից, եւ կարդալու ժամանակ մի ինչ-որ ոգեւորութեան ու գեղեցկութեան ճառագայթ կենդանացնում էր նրա ցամաքած դէմքը, եւ նրա ձայնը թափանցում էր օրիորդի հոգու մէջ: Օլգայի ծննդեան օրը նրա ծնողները հրաւիրեցին երիտասարդին իրանց մօտ ճաշելու: Գիշերը սպասում էին հարեւաններից մի քանի ընտանիքների եւ նպատակ ունէին պար սարքելու:

Կէսօրից յետոյ Օլգան գնաց այգին, որ ծաղիկներ քաղէ եւ ճաշի սեղանը զարդարէ մի լաւ փունջով: Յանկարծ նրա առջեւ յայտնվեցաւ Տուբալը սպիտակ անդրավարտիքով, սպիտակ բաճկոնակով, սպիտակ փողպատով եւ թափանցիկ սեւ ֆրակով: Նրա փափուկ սեւորակ մազերը կոկ կերպով սանրված էին, եւ նրանից բուրում էր մուշկի հոտ: Նա մրմրթաց ինչ-որ ոտանաւորներ եւ, ամբողջ մարմնով դողդողալով, տուեց Օլգային մի փոքրիկ ծրար, որ երկչոտ կերպով դուրս հանեց իր կուրծքի վրայից: Օլգան չը վստահացաւ նայել նրա վրա, նա շփոթվեցաւ, շնորհակալութիւն յայտնեց նրան եւ վազեց դէպի տուն, որտեղ գրկեց իր մօր պարանոցը եւ ուրախ ժպիտով ասաց նրան. Տուբալը շնորհաւորեց ինձ եւ մի ինչ-որ բան ընծայեց. խեղճ եւ բարի Տուբալ:—Ի՞նչ բան ընծայեց,—հարցրեց մայրը, յօնքերը խոժոռելով: Օլգան համարեա թէ վախեցաւ:—Ես յոյս ունեմ, որ քաղցրաւենիք կը լինի, կամ մի այլ այսպիսի բան,—աւելացրեց մայրը:—Էլ ուրիշ ինչ պէտք է լինի,—ասաց Օլգան եւ երկիւղով նայում էր փոքրիկ ծրարի վրա: Մայրը առեց ծրարը նրա ձեռքից, բաց արեց եւ տեսաւ երկու զոյգ ձեռնոցներ: — Ձեռնոցնե՜ր, — աղաղակեց նա: — Իրաւ, ձեռնոցներ է,—կամաց կրկնեց Օլգան եւ արիւնը խփեց նրա երեսին:—Յետ ուղարկիր,—հրամայեց մայրը,—եւ գրիր նրան...—Գրե՜լ նրան,—պատաս-

խանեց Օլգան, վեր բարձրացնելով իր հպարտ
գլուխը:—Դու իրաւ ես ասում: Մի գիր, բայց
հէնց այս րոպէիս յետ ուղարկիր այդ ձեռնոցնե-
րը: Նա արդէն չափն անցնում է: Ի՞նչ էչ մարդ է
եղել: Նա ինչ է երեւակայում իրան, չը լինի թէ
ուզում է հաճոյանալ քեզ, բաներ ընծայել և յե-
տոյ քեզ հետ պսակվելու առաջարկութիւն անել:
Նա փչացրեց իմ ամբողջ օրը:—Օլգան կնքեց
ձեռնոցները և յետ ուղարկեց Տուրալին: Նա չե-
կաւ մեզ մօտ ճաշելու, ներողութիւն խնդրեց, որ
տկար է, և իրաւ հիւանդ էր. արդէն մի քանի
տարի էր, որ նա տանջվում էր կուրծքի ցաւով:
Մեր տանը ուրախութեան բաժակները միմեանց
էին զարկվում և Օլգան բաքոսուհու նման թռթռ-
ռում էր դահլիճի մէջ, բայց այդ միջոցին Տուրա-
լը պառկած էր իր յարդեայ դօշակի վրա և հա-
զից հառաչում էր: Երբեմն, երբ նա ընկղմված էր
լինում խորին մտածութիւնների մէջ և կամաց
լաց էր լինում, այդ ժամանակ քաջասիրտ մկներից
մէկը վազում, մօտենում էր նրա մահճակալին,
և նա կերակրում էր նրան փշրանքներով, որ մնա-
ցած էին լինում նրա սեղանի վրա:

Գեղեցիկ կինը, որ գտնվում էր իմ առջև յա-
տակի վրա, շարժվեցաւ, առանց քնից զարթնելու.
Նրա կուրծքը ալեկոծութեան մէջ էր:—Ես չեմ
կարող կարգով պատմել Լէօպօլդին բոլորը, ինչ
որ եղաւ,—շարունակեց նա,—ես տեսնում եմ

խիստ շատ բան միանգամից, տեսարանները ան-
դադար փոխվում են, նրանք անցնում են նոյն-
քան արագութեամբ իմ աչքերի առջևից, ինչ-
պէս անցնում են ամպերը մրրիկի ժամա-
նակ: Ես տեսնում եմ բոլորը, ինչպէս որ
կար, տեսնում եմ ամեն մի ստուեր, ամեն
մի լոյս և գոյն, լսում եմ ամեն մի ձայն:—Դե-
րասանների մի տարաշրջիկ խումբ, Մօլդավիայից
Լեհաստան գնալու ժամանակ, ճանապարհին մը-
նաց կալօմէյայում, մի քանի ներկայացումներ տա-
լու համար: Այդ լուրը արագութեամբ տարածվե-
ցաւ բոլոր շրջակայքում, և հետևեալ կիրակի նշա-
նակված էր առաջին ներկայացումը: Այդ օրը հա-
մարեա բոլոր կալուածատէրները հրամայեցին լը-
ծել իրանց փոքրիկ ձիաներին և իրանց կանանցը
և աղջիկներին տարան թատրոն: Բեմը շինված
էր հիւրանոցի մեծ, բայց բաւական ցած դահլի-
ճում, այնպէս որ, դերասաններից մի քանիսի գըլ-
խարկների մաղէ բարձր ցցունքը դիպչում էր ամ-
պերին: Բայց այսուամենայնիւ բոլոր հանդիսական-
ները շատ ուրախ էին: Ներկայացնում էին «Վար-
վարա Ռադզիվիլլօվա» անունով ողբերգութիւնը:
Մինչև ներկայացման սկսելը մանկահասակ երի-
տասարդները շրջապատել էին մի կալուածատի-
րոջ, միջին տարիքով, որը բաւական անփոյթ
կերպով նստած էր լուսամուտի մէջ և ոտները
խաղացնում էր:—Հիմա ո՞ւր է ձեր այնքան գովա-

սանած գեղեցկուհին,—հարցրեց նա, իր բեխերը ոլորելով: Նրա խօսակիցներից մի քանիսը բարձրացան ոտների մատների վրա և սկսեցին նայել դէպի դուռը: Վերջապէս Օլգան մտաւ դահլիճը:

—Անտարակոյս, դա այն օրիորդն է,—ասաց կալուածատէրը մի քանի րոպէից յետոյ,—էլ ուրիշ ով կարող է լինել: Որպիսի հրաշալի արարած է:

—Յետոյ նա մօտեցաւ Օլգայի ծնողներին և իրան ծանօթացրեց նրանց հետ: Նրա անունը մեր բոլոր շրջակայքում յայտնի էր, այդ պատճառով նրան շատ լաւ ընդունեցին: Օլգայի մայրը, նրա հետ խօսելիս, քաղցրութեամբ ժպտում էր, իսկ Օլգան ուշադրութեամբ լսում էր, թէ ինչ էր խօսում այդ մարդը: Հէնց առաջին անգամից նրա ինքնավստահութիւնը զարմացրեց օրիորդին, բայց նա երբէք չէր կարող մտածել, որ կարող էր սիրել այդ մարդուն և թէ նա կարող էր լինել իր ամուսին: Բայց այսուամենայնիւ, այդ ամուսնութիւնը կատարվեցաւ ոչ ուշ, քան հինգ շաբաթից յետոյ: Իսկապէս, նա ամենևին հաճոյ չէր թւում օրիորդին, բայց նա ազդում էր օրիորդի մէջ մի առանձին յարգանք, իսկ այդ աւելի մեծ արժէք ունի կնոջ աչքում: Միշէլը ուսեալ էր, շատ ճանապարհորդութիւններ էր արել, և սեպհականացնելով իրան մի առանձին զուարճախօսութիւն, վերադարձել էր իր կալուածքները, ապրում էր գիւղական տնտեսութեամբ: Նա ծաղրով էր վերաբերվում թէ դէ-

պի դերասանները, թէ դէպի պիեսան և թէ դէպի բոլոր մնացածները: Նա ընդունակ էր ծիծաղել ներկայացման ամենասրտաշարժ տեսարանների ժամանակ, և, տեսնելով, որ Օլգան լաց է լինում, նա միայն նկատեց. ես ուրախ եմ, որ ձեր դէմքը կարմիր դեղով քսված չէ, նայեցէք մեր տիկինների արիւնախառն արտասուքներին:—Եւ իրաւ, այն ընդհանուր ողբակցութեան մէջ, տիկինների երեսի կարմիր ներկը արտասուքից ողողվում էր, ցած էր հոսում, ներկայացնելով մի ողորմելի և մի և նոյն ժամանակ ծիծաղելի տեսարան:

Մի հեգնական ժպիտ շարժեց Օլգայի շրթունքը և երևան հանեց նրա հիանալի ատամները:

—Թատրոնից յետոյ,—շարունակեց նա,—այդ մարդը ճանապարհ դրեց մեզ մինչև մեր կառքի մօտը և թոյլտուութիւն խնդրեց այցելել մեզ: Նա շուտով եկաւ, և յետոյ աւելի յաճախ սկսեց գալ մեր տունը: Օլգայի մայրը միշտ պատրաստ ունէր անթիւ ներողութիւններ. կամ նրան պէտք էր մրտիկ տալ ծնեբեկներին, կամ մառանը կարգի դընել, այնպէս որ, Օլգան միշտ նրա հետ միայնակ էր մնում: Միշէլը այդ ժամանակ խօսում էր օտար երկրների մասին, Գերմանիայի, Իտալիայի և Ֆրանսիայի մասին: Նա եղել էր Բերլինում, Վենետիկում, Ֆլորենցիայում և Փարիզում, բարձրացել էր Վեզուվի վրա և նաւով շրջել էր ծովերի վրա: Նա երկար խօսում էր, թէ ինչ յառաջադի-

մութիւն են արել ուրիշ ազգերը, մի և նոյն ժամանակ չը ստորացնելով իր սեպհական ազգի ընդունակութիւններն ու ձգտումները։ Բոլորի մէջ, ինչ որ խօսում էր նա, երևում էր խիստ օգտաւէտ պարզութիւն և ջերմութիւն։ Նրա կանխատեսութիւնը սահման չունէր։ Ուրիշ կանայք նրան անքաղաքավարի էին համարում, բայց եթէ Օլգան վայր էր գցում իր թելի կծիկը, այդ ժամանակ նա, կայծակի նման, վրա էր պռծնում և վեր էր առնում կծիկը։ Եւ միանգամ, երբ նա ծնկների վրա չոքեց օրիորդի առջև և հագցրեց նրան տաք կօշիկները, այդ ժամանակ բաւականութիւնից արիւնը խփեց Օլգայի երեսին։ Միշէլի մասին շատ բաներ էին խօսում։ Անուանում էին նրան դաժան, խստասիրտ և հպարտ մարդ, բայց նրա սուր խելքը, ընդարձակ հմտութիւնները, բազմակողմանի ուսումը և նիւթական լաւ կարողութիւնը գրաւել էին դէպի նա անհամեմատ յարգանք ամբողջ շրջակայքում։ Գիտէին, որ նա վարում է իր տնտեսութիւնը նոր սիստեմայով, որ նա պարտքեր չունի, և համարում էին նրան ամենալաւ փեսացու։ Որքան երկչոտութեամբ էին նայում նրա վրա ուրիշ տիկինները, այնքան ախորժելի էր Օլգային տեսնել, թէ որպէս այդ զօրաւոր և գործունեայ մարդը գիշեր ու ցերեկ զբաղված էր նրանով, և որպէս նա տանջվում էր նրա պատճառով։ Օլգան կատարելապէս բաւականութիւն

էր տալիս իր բոլոր սնափառութեանը և իր բոլոր խստասրտութեանը։ Բայց միայն այն ժամանակ, երբ օրիորդը տեսաւ, որ արտասուքը թափվում էր նրա աչքերից, իր ձեռքը տուեց նրան և ասաց. ես. թոյլ եմ տալիս ձեզ համբուրել իմ ձեռքը։

—Բակում կար մի չար շուն, որը կծող էր, դա միշտ խաղ էր անում Օլգայի հետ, իսկ յետոյ բարկանալով, պատառոտում էր նրա հագուստը։ Օրիորդը միշտ հեռացնում էր իրանից այդ շանը և ամեն անգամ ծեծում էր նրան, մինչև, վերջապէս, ինքն էլ սկսեց սիրել նրան։ Այսպէս եղաւ և նրա ամուսնի հետ։ Օրիորդը այնքան երկար տանջում էր նրան, մինչև, վերջապէս, ինքը գրկեց նրա պարանոցը, և սիրոյ առաջին համբոյրը դողդողաց նրա շրթունքի վրա։ Հետևեալ օրը Միշէլը եկաւ. մեր տունը քառաձի կառքով և սև ֆրակ հագած. նա սովորականից աւելի գունաթափ էր։ Մի քանի րոպէից յետոյ ամեն ինչ վերջացաւ, և Օլգան դարձաւ նրա հարսնացուն։ Օրիորդը մտածում էր, որ ամեն ինչ կատարվեցաւ այնպէս, որպէս հարկն էր, թէ ինքը փառաւոր կերպով տնօրինեց իր ապագան, և թէ ուրիշները նրան նախանձվում էին, և այդ բաւական էր։ Միանգամ երեկոյեան նա նստած էր Միշէլի հետ բաց լուսամուտի հանդէպ և լսելով, թէ ինչ դատողութիւններ էր անում նա սլաւօնական ցեղերի ապագայի մասին, մի և նոյն ժամանակ կա-

րում էր մի բան իր օժիտի համար։ Յանկարծ նրանց առջև յայտնվեցաւ Տուբալը, գունաթափ, որպէս մի ուրուական. Նրա աչքերը դուրս էին վազում իրանց շրջանակից, իսկ արիւնը առատութեամբ հոսում էր նրա կոկորդից։

—Ա՛ղ, ա՛ղ,—վերջապէս ձայն տուեց նա, և աւելի ոչինչ ասել չը կարողացաւ։ Օլգան շտապով բաց արեց դեղերի պահարանը և նրան աղ խմացրեց։ Միշէլը լուսամուտից դուրս թռաւ վարժապետին օգնելու։ Տուբալը անյագ կերպով և դըժուարութեամբ կուլ էր տալիս աղը։ Միշէլը տարաւ նստացրեց նրան մերձաւոր նստարանի վրա։ Օլգան ջուր բերեց. փոքր առ փոքր արեան հոսումը դադարեց։ Տուբալը փակված աչքերով պառկած էր, ինչպէս մի ննջեցեալ։—Հրամայեցէք նրան հանգստացնել անկողնի մէջ,—ասաց Միշէլը.—դրա համար բժիշկ է հարկաւոր։—Նա ինքը թռաւ ձիու վրա և շտապեց դէպի ամենամօտ քաղաքը։ Գիշերը նա վերադարձաւ բժշկի հետ։ Տուբալին տարան նրա փոքրիկ տնակը այգու մէջ. և նա շուտով մեռաւ։ Մեռնելուց առաջ նա ցանկացաւ տեսնել Օլգային։ Նա արդէն չէր կարողանում խօսել, երբ Օլգան եկաւ, միայն նրա շրթունքները կամաց շարժվում էին և կուրծքը երբեմն խախտում էր։ Բացի Օլգայից այնտեղ ոչ ոք չը կար. Նա միանգամ ևս նայեց իր շուրջը, յետոյ խոնարհվեցաւ դէպի հիւանդը և համբուրեց

նրա ճակատը, որը արդէն պատած էր օրհասական սառն քրտինքով։ Նրա աչքերը փառվեցան, ձեռքերը տարածվեցան, և երջանկութեան ժպիտը երևեցաւ նրա նուաղած դէմքի վրա։ Նա մեռաւ այդ ժպիտով։ Նրա բարձի տակ գտնվեցաւ ոտանաւորների դեղնած տետրակը և երկու զոյգ կանացի ձեռնոցներ, փաթաթած պատառոտած թղթի մէջ։ Օլգան վեր առեց իր մօտ թէ այդ և թէ այն։ Ձեռնոցները նրա մօտ ամբողջութեամբ պահված են. նա միայն մէկ զոյգը հագաւ իր հարսանիքի օրը։ Տուբալին թաղեցին, ափսոսացին և մոռացան։ Հողը չը ծանրացաւ նրա վրա։ Դրանից յետոյ շուտով Օլգան թողեց ծնողական տունը և եղաւ Միշէլի կինը, որը քառաձի կառքով հպարտութեամբ բերեց նրան այստեղ։ Այս ժամանակ Օլգան բաւական բաղդաւոր էր։ Գոնէ բոլորը այսպէս էին կարծում, և նա ինքը այսպէս էր կարծում։ Ինչպէս ամեն կանայք, այնպէս էլ նա երևակայում էր, թէ աշխարհը ստեղծված է միայն իր բաւականութեան համար. Նրա համար է և լաւ սեղանը, և գեղեցիկ հագուստները, և ձիաներ ու կառքերը. Նա կարող է հանդարտ պառկել թախտի վրա, ծխել և ռոմաններ կարդալ,—իսկ տղամարդիկը։—Ա՛խար նրանք հէնց դրա համար են,—մտածում էր Օլգան ինքն իրան,—որ հոգ տանեն մեր զուարճութիւնների համար, որ օգնեն մեզ ախորժելի կեր-

պով վարելու մեր ժամանակը և, ի վերա այսր ամենայնի, հրճվեն մեր գեղեցկութեամբ և, ծըղկների վրա խոնարհված, աղօթեն մեզ համար:—Մոտաւորապէս այս եղանակով, օրըստօրէ, անցնում էր նրա կեանքը: Ծնվեցան նրա համար և զաւակներ, որոնք շատ զբաղեցնում էին նրան, և մի քանի տարի նա իրան բաղդաւոր էր համարում: Նա հօ չէր ճանաչում մի այլ երջանկութիւն. նրա սիրտը հանդարտ էր և մեռած: Միայն երբեմն—բայց այդ հազիւ էր պատահում—երբ նա անձնատուր էր լինում բանաստեղծութեան, մի ինչ-որ բան շշնջում էր նրա հոգու մէջ. նրան սկսում էր տանջել մի աղօտ ցանկութիւն, զգում էր մի բղձի անբացատրելի ծարաւ: Անհասկանալի վրդովմունքը ալեկոծում էր նրա արիւնը, և տենդային տապը զգացվում էր մինչև անգամ նրա մատների ծայրում: Եւ այսու ամենայնիւ, ամեն ինչ կը մնար իր կարգին, եթէ նըրա ամուսինը հասկանալու լինէր, թէ անհրաժեշտ է՝ ժամանակ առ ժամանակ նրա մենաւորութեանը տալ նոր սնունդ:—Լէօպօլդը այդ ասածներիս չէ հաւատում:

Նա խորամանկութեամբ ծիծաղեց և դարձաւ դէպի ինձ: Նրա կոպերը շարժվում էին. ձայնը նմանում էր մեղմ երեխայի ձայնի, և, չը նայելով նրա խփած աչքերին, ինձ այնպէս էր թւում, որ նա սրատես կերպով նայում էր իմ վրա, այնպէս

որ, ես ակամայ աչքերս դէպի ցած խոնարհեցրի:

—Օլգան վերկացաւ, դանդաղ կերպով անցաւ սենեակի միջով, կարծես թէ՝ ոտները չէին դիպչում յատակին, յետոյ կանգնեց բաց լուսամուտի մօտ, և երեսը դարձրեց դէպի լուսինը: Այստեղ նա նազելի կերպով գլուխը մի կողմ թեքեց և ձեռքերը ցած թողեց: Փափուկ լոյսը, անուշհոտութիւնը և գիշերային բոլոր ներդաշնակութիւնը շրջապատել էր նրան: Քամու թեթև հոսանքը ցրուեց նրա ծամերը և կանգ առեց սպիտակ ու նուրբ գործուածքի վրա, որ ծածկում էր նրա հասակը:

—Ես շատ կը ցանկանայի թռչել,—ասաց նա փոքր ինչ լուռ մնալուց յետոյ, մի այնպիսի եղանակով, կարծես թէ, ամաչում էր իր սաստիկ ցանկութիւնից:—Որ և իցէ ժամանակ թռչել է արդեօք Լէօպօլդը:

—Ե՞ս:

Նա երեխայի նման ծիծաղեց:—Քնի մէջ, թէ արթնութեան մէջ:

—Ի հարկէ, քնի մէջ:

—Ուրեմն, Լէօպօլդը վայելել է երանելի զգացմունքներ, թռչելով խաղաղ ու պայծառ օդի մէջ, երբ վերևում լողում են ամպերը, իսկ ներքևում՝ ծովը և երկիրը ընկղմված են ախորժելի մռայլի մէջ: Ես շատ կը ցանկանայի թռչել:

Նա իր ձեռքերը տարածեց, և նրա գիշերային հագուստի սպիտակ ու լայն թևքերը տատանվեցան նրա ուսերի վրա, որպէս սերովբէի լուսափայլ թևքեր։

Այդ րոպէում ամենաանկարելին երևաց ինձ կարելի։ Եւ ես պատրաստ էի հաւատալ։

—Էլ ինչու չես թռչում,—հարցրի նրանից։

—Ես կարող կը լինէի թռչել,—պատասխանեց նա խորին տխրութեամբ,—բայց Օլգան թոյլ չէ տալիս ինձ։

Ես զգում էի սոսկում։

—Ահա անտառի միւս կողմում,—յանկարծ արագութեամբ ձայն տուեց Օլգան,—շաւիղի վրայով ծածուկ գնում է մի գիւղացի և կամենում է թակարդ սարքել սև սարեակների համար, որոնց Օլգան շատ սիրում է։ Լէօպօլդը չէ՞ լսում։

—Ոչ։

—Դա շատ հեռու է, բայց այնպէս է, ինչպէս ասում եմ։

—Պիտի շարունակե՞ս դու քո պատմութիւնը,—հարցրի նրանից փոքր ինչ լռելուց յետոյ։

—Այո։ Ինձ ախորժելի է պատմել։ Սիրտս թեթևանում է։ Եւ որքան լաւ կարդում եմ ես, թէ ինչ կայ նրա սրտում. իմ շրթունքները հէնց այնպէս շարժվում են և իրանք հաղորդում են նրան այն, ինչ որ տեսնում է հոգիս։

—Ի՞նչպէս կարող ես դու,—հարցրի ես,—պատ-

մել այսպէս կարգով և այսպէս հանգամանօրէն և հաղորդել այսպիսի ուշադրութեամբ ամենափոքր մանրամասնութիւնները,—ամեն մի խօսք, ամեն մի հնչիւնը ձայնի, ամեն մի շարժում,—և այնուամենայնիւ, մնալ այսպէս սառնասիրտ, կարծես թէ ոչինչ չէ խօսվում քո մասին։

Օլգան շարժեց գլուխը։ Նրա դէմքի վրա երեւաց ժպիտ։ Ախար իսկապէս այստեղ իմ մասին չէ խօսվում,—պարզմտութեամբ պատասխանեց նա,—այլ Օլգայի մասին է խօսվում։ Ես տեսնում եմ նրան նոյնպէս, ինչպէս և ուրիշ մարդիկներին, և ինչ բանի մասին որ այժմ խօսում եմ, բոլորը տեսնում եմ այնքան պարզ կերպով, կարծես թէ, դա կատարվում է հէնց այս րոպէում։ Լէօպօլդը չէ՞ հասկանում ինձ։—Տարածութիւն և ժամանակ ինձ համար գոյութիւն չունեն. իմ աչքում թէ անցեալը և թէ ապագան նոյնն է, ինչ որ է և ներկան, և ամեն ինչ միանգամից ներկայանում է ինձ։ Երբ ես նայում եմ Օլգայի վրա, ընկղմած իր թախտի բարձերի մէջ, ֆրանսերէն ռոմանը ձեռքում, այդ միջոցին ես մի և նոյն ժամանակ տեսնում եմ, թէ ո՛րպէս նրա շնչառութիւնից բարձրանում է նրա կօֆտայի կզնաքիսի մօրթուց կարված օձիքը, և կամ ո՛րպէս ոսկեգոյն-կանաչ ճանճը թռչում է նրա գլխի շուրջը, նկատում եմ և սարդին, որը, դարան մտած, առաստաղից հսկում է ճանճի վրա։

Օլգան թիկն տուեց լուսամուտի պատուհանին և ձեռքերը փակեց իր ծոծրակի վրա:

—Շարունակեմ պատմել:

—Խնդրում եմ պատմեցէք:

—Այն, որ այժմ տեսնում եմ, շատ տխուր է: Օլգան դադարեց իրան բախտաւոր զգալ: Նրա ամուսին այրը սիրում է նրան որպէս իր երջանկութիւնը, բայց պահպանում է նրան անսահման կասկածամտութեամբ: Նա ցանկանում է, որ նրա կինը ամբողջապէս պատկանէր իրան, միայն իրան: Նա հեռացրեց տնից իր առաջվայ բոլոր բարեկամներին և ծանօթներին: Նա համբերել չէ կարող տեսնել իր տան մէջ և օտար կանայք: Նա ատում է երկար դատողութիւններ անել մարդկների և իրերի մասին, գրքերի և քաղաքականութեան մասին, այն անձանց հետ, որոնց հասկացողութիւնները համաձան չեն նրա հայացքների հետ: Նա ապրում է միայն կնոջ համար և իր երեխաների համար. ինքը սովորեցնում է երեխաներին և խաղում է նրանց հետ: Բայց նրա մանկահասակ կինը զգում է տխրութիւն մռայլոտ տան մէջ, շրջապատած մթին սօսիներով: Նշտարը միջամուխ եղաւ Օլգայի հպարտ և մնափառ սրտի մէջ, և նա ինքը աւելի խոր կերպով ներս է ցցում նրան. նրա վէրքը օրըստօրէ աւելի վտանգաւոր է դառնում: Նրան կոչում էին ամենալաւ պարող, և այդ գովասանքը ախորժում էր

նա լսել, բայց այժմ, երբ նրան յիշեցնում են այդ մասին, նա տխրում է, նրա սիրտը ցաւ է զգում: Ո՞ւմ հետ պէտք է նա պար գայ: Երբեմն նա վեր է առնում ձեռքերի վրա իր կրտսեր երեխային, նրա հետ պտոյտներ է գործում սենեակի մէջ, երգում է,—և յանկարծ արտասուքը դուրս է ցայտում նրա աչքերից: Նա նկարում է պատկերներ բնութիւնից, նմանեցնում է և գծագրում է զանազան տեսարաններ այն գրքերից, որ կարդացել է իր ամուսնի հետ: Ամուսինը ուշադրութեամբ նայում է նրա պատկերների վրա, յետոյ ասում է այսքանը միայն. այդ մէկը լաւ է, եթէ ես նկարէի, դրանից լաւը չէր լինի:—Եւ որքան խրատացի են լինում նրա նկատողութիւնները, այնքան աւելի վիրաւորական են թւում կնոջը: Նա նստում է նրգեհոնի մօտ, ածում է Մօցարտից, Բեթհօվէնից և Մենդելսօնից,—ում համար: Նա երգում է Շուբերտի երգերը, երգում է նրա հիանալի սերենադը,—ո՞վ է սքանչանում նրանով: Միայն երբեմն չինականը, հունձքից վերադառնալու ժամանակ, կը կանգնի նրա լուսամուտի ներքոյ, կամ ամուսինը, դաշտից յոգնած վերադառնալով, նստած կը լինի դիւանի վրա և անուշադրութեամբ կը ծխէ: Օլգան գեղեցիկ է, իսկ ամուսնանալուց յետոյ աւելի գեղեցկացաւ: Նրա դէմքը դարձաւ աւելի կենդանի, աւելի խելացի, աւելի արտայայտիչ բնաւորութեան և աւելի ներդաշնակաւոր.

Նրա մարմնի կազմուածքը դարձաւ իսկապէս ար-
քայավայել:—Ո՞ւմ համար:—Միայն հայելին ա-
սում է նրան այդ բոլորը, և ուրիշ ոչ ոք: Նրա
ամուսնի մտքին անգամ երբէք չեն գալիս կնոջ
գեղեցկութիւնները: Միթէ Օլգայի համար բաւա-
կան չէ՞ նրա սէրը, հաւատարմութիւնը և յարգան-
քը: Օլգան ճաշակով հագնւում է:—Ո՞ւմ համար:
—Գեղջկուհու համար, որը սունկեր է բերում նը-
րան, որսորդի համար, որը իր պարոնի ետևից
քարշ է տալիս գնդակահարված բադերը, ծծմայրի
և դայեակի համար: Իր ամուսնի համար:—Ամուսի-
նը բոլորովին բնական է գտնում այդ: Ամուսինը
հօ տուեց նրա համար բարձր գին, և գնեց նրան
իր կարողութեան և իր ազատութեան գնով: Նա-
կամենում է, որ իր կինը միշտ գեղեցիկ լինի, և
նա սիրում է տեսնել միշտ հաճելի կարգ ու սարք
այն բոլոր բաների մէջ, ինչ որ պատկանում է ի-
րան: Կնոջ պարտաւորութիւնն է լինել հրապու-
րիչ. էլ դրանով ինչ մի ծառայութիւն է անում
նա, եթէ կարողանում է բարձրացնել իր գեղեց-
կութիւնը ճաշակով հագնվելով: Օլգան վայելուչ
կերպով պահում է իրան ձիու թամբի վրա, քաջու-
թեամբ թռցնում է իր ձին խրամատների և ցան-
կապատերի վրայով,—ո՞ւմ է զարմացնում այդ:—
Ի հարկէ, ոչ ամուսնին. նա կը սկսէր արհամար-
հել կնոջը, եթէ նա երկչոտ լինէր: Օլգան նոյն
դրութեան մէջ է գտնվում, որպէս մի դերասան,

որը սովոր է խաղալ դատարկ դահլիճի մէջ,
և, վերջապէս, բարկութիւնից նրա ատամները
բաբախվում են և անքուն գիշերներում նրա
արտասուքը թաց է անում բարձերը: Միանգամ
նրա ամուսինը նկատում է, որ նա տխուր է, և
թէ նրա ճակատը միշտ պատած է լինում խո-
ժոռներով:—Դու տրտում ես,—ասում է նրան մի
քանի օրից յետոյ.—ես մտածել եմ քեզ համար
մի նոր զբաղմունք, որը կարող է բաւականու-
թիւն պատճառել քեզ,—և ժպտելով տալիս է
Օլգային մի գեղեցիկ հրացան, որը նոր էր բերել
տուել քաղաքից:—Սովորիր արձակել և միասին
կը գնանք որսորդութեան: Ի՞նչպէս է թւում քեզ
այդ միտքը:—Այդ րոպէում ամեն ինչ մոռացվե-
ցաւ: Օլգան հրճուանքով գրկեց նրա պարանոցը
և համբուրեց նրա կարմր թշերը:—Ես հէնց այս
րոպէիս կամենում եմ սկսել վարժութիւնը,—
ձայն տուեց նա,—հէնց այսօր:—Թող հէնց այս
օր լինի, եթէ դու ցանկանում ես:—Միշէլը միշտ
շատ քաղաքավարի էր:—Եթէ կարելի է, ճաշից
առաջ,—խնդրեց Օլգան:—Մեծ ուրախութեամբ,
միայն հագնվիր:—Ոչ, հիմա, հիմա,—շտապելով
ասաց կինը,—բայց հիմա դու ժամանակ չունես:
—Ես քեզ համար միշտ ժամանակ ունեմ,—պա-
տասխանեց ամուսինը, համբուրելով նրա ճակատը:
Օլգան իր այգային սպիտակ հագուստը գնդասե-
ղով ամրացրեց իր ալեկոծվող կուրծքի վրա, և

և բռնելով ամուսնի ձեռքից, վազելով ցած իջաւ պատշգամբից։ Յուլիսեան տաք առաւօտ էր. չոր օդը տոգորված էր խոտերի բալասանային անուշհոտութեամբ. երկիրը լուսաւորված էր արեգակի ջերմ-ոսկեգոյն ճառագայթներով, և երբեմն միայն վազում էր նրա վրայով սպիտակ ու թեթև ամպերի ստուերը։ Ճանապարհի վրա, որ անցնում էր տան մօտով, փոշիների մէջ թաւալվում էր ճնճղուկների ամբողջ երամ։ Միշէլը գննեց փոքրիկ հրացանը, լցրեց նրան, նախ ինքը ուղղեց դէպի նպատակը ու յետոյ, որպէս պէտք էր, բռնել տուեց Օլգային, և ապա մօտեցրեց հրացանը նրա թշին և նրա մատը քնքշութեամբ սեղմեց չախմախի վրա։ Օլգան նշան դրեց նախ խնձորը, որ նայում էր խիտ ու կանանչ տերևների միջից, յետոյ ծիծեռնակին, որը ճախրում էր գետնի վրայով։—Դու հասկացար, թէ ինչպէս պէտք է նշան դնել,—ասաց նրա ամուսինը,—հիմա սովորիր լցնել հրացանը։ Օլգան ուշադրութեամբ հետևում էր, թէ որպէս էր դնում նա փամփուշտը և կոտորակները։—Հիմա դի՛ր փիստոնը։ Զգո՛յշ կաց։ Բարձրացրու չախմախը... Լաւ։ Ուղղիր դէպի այն խնձորը։—Օլգան մօտեցրեց հրացանը իր թշին։—Փոքր ինչ բարձր բռնի՛ր։—Հրացանը արձակվեցաւ։ Տերևները թռան դէպի զանազան կողմեր։—Հիմա ինքդ լցրու։ Երկրորդ անգամին աւելի յաջող կերպով կարձակես։—Օլգան վեր առաւ փոքրիկ փամ-

փուշտը, ածեց վառօդը և մանր կոտորակները հրացանի փողի մէջ, սումբայով պինդ սեղմեց և փիստոնը դրեց իր տեղը։—Տեսնո՞ւմ ես այն ճնճղուկներին, որ նստած են ճանապարհի վրա,—հարցրեց Միշէլը, որը այդ ժամանակ միշտ նայում էր իր չուրջը։ —Տեսնում եմ։—Դէ, հիմա փորձիր քո բախտը։ Օլգան առանց երկար մտածելու, նշան դրեց ճնճղուկներին։ Փոքրիկ արարածները, ճլվլալով, իրանց թևերը թռթռացնելով, անհոգ կերպով թաւալվում էին փափուկ, սպիտակ և տաք աւազի մէջ, խորասուզվում էին նրա մէջ, և ճչալով կրկին բարձրացնում էին իրանց փոշեթաթախ գլուխները, կռւում էին, այս կողմ ու այն կողմ էին ընկնում, և չարաճճի ու անկարգ կերպով ճռճռում էին միմեանց հետ։ Հրացանը արձակվեցաւ։ Աւելի քան քսան փոքրիկ թռչնիկների աղաղակը տարածվեցաւ օդի մէջ. Նրանց թանձր երամը ճչալով բարձրացաւ ճանապարհից, թռաւ դէպի կենդանի մացառներով հիւսված ցանկապատը և խմբով իջաւ նրա վրա, այնպէս որ, մացառների ոստերը թեքվեցան նրանց ծանրութեան ներքոյ։ Օլգան մեծ ուրախութեամբ նետվեցաւ դէպի ճանապարհը։ Հինգ փոքրիկ վիրաւորներ ընկած էին գետնի վրա, նրանց արիւնը խառնվում էր փոշիների հետ. Նրանցից մէկը դեռ թըրփթփում էր, պտոյտ էր գալիս, և յետոյ մեռաւ իր ընկերների մօտ։ Օլգան արագութեամբ

հաւաքեց նրանց իր գոգնոցի մէջ և յետ վազեց։ —Ես վայր գցեցի հինգ ճնճղուկներ, հինգ,—աղաղակեց նա երեխայական ուրախութեամբ,—ահա նրանք։—Օլգան թռաւ պատշգամբի վրա, շարեց իր որսերը մէկը միւսի մօտ մուհաջարի վրա, նոյն կարգով, որպէս կռիւի դաշտում դնում են միմեանց մօտ սպանված զինուորների դիակները, նրանց թաղելուց առաջ։ Օլգան խորին բաւականութեամբ նայում էր իր զոհերի վրա։—Մէկ անգամ արձակելով հինգը վայր ընկաւ,—անդադար կրկնում էր նա,—դա շատ յաջող հրացանաձգութիւն էր։ Միշէլը նորից սկսեց լցնել հրացանը։ Այդ միջոցին Օլգան գտնվում էր լռութեան մէջ։ Գլուխը խոնարհեցրած կուրծքի վրա, տխրութեամբ նայում էր նա սպանված թռչնիկների վրա, և յանկարծ պայծառ արտասուքի խոշոր կաթիլները գլորվեցան նրա թշերի վրա։—Ի՞նչ պատահեց քեզ,—ձայն տուեց նրա ամուսինը,—դու լաց ես լինում։—Օլգան սկսեց հեկեկալ։—խեղճ թռչուններ,—բացականչեց նա,—ինչպէս տխուր կերպով ընկած են այստեղ. նրանց փետուրները շաղախված են արեան մէջ, նրանց աչքերը խաւարել են, նրանք դեռ չեն սառել. ինչ վնաս էին տուել նրանք մեզ։ Շատ կարելի է, որ դրանք իրանց բոյներում ճուտեր ունեն, որոնք սպասում են իրանց ծնողներին, բայց հիմա կը մեռնեն սովից, իսկ ես զրկեցի նրանց կեանքից,

որը վերադարձնել չեմ կարող։ Եւ այդ բոլորի պատճառը մեր անիծված կեանքն է, մեր առանձնակեցութիւնն է։ Կեանքից ձանձրանալուց մարդը պատրաստ է դառնալ գիշակեր գազան։—Նրա ամուսին այրը ծիծաղեց։ Այդ րոպէում նրա ծիծաղը զզուելի երևաց կնոջը։—Դու չես կամենում հասկանալ ինձ,—աղաղակեց Օլգան,—և ես ստիպված եմ աւելի պարզ կերպով բացատրել քեզ իմ միտքը։ Այդ բոլորը վաղուց հաւաքված էր իմ սրտում. դա չէ կարող երկար շարունակվել, եթէ դու ցանկութիւն չունես դարձնել ինձ քո զոհը։ Դու բոլորին հեռացրիր մեր տնից. դու արգելանի մէջ ես պահում ինձ. ամեն մի գեղջկուհի վայելում է աւելի մեծ ազատութիւն, քան թէ ես։ Ես չեմ կարող տանել այսպիսի կեանքը. ես կամ հալումաշ կը լինեմ, կամ կը խելագարվեմ։—Նա սաստիկ հեկեկում էր։ Նրա ամուսին այրը լուռ մնաց. նա հրացանը արձակեց և յետոյ հանդարտ կերպով մտաւ սենեակը։ Օլգան գնաց նրա ետևից և կանգնեց լուսամուտի մօտ, ձեռքերը խաչաձև փակելով իր կուրծքի վրա։—Դու ոչ մի խօսք չես պատասխանում,—հարցրեց նա մի քանի րոպէից յետոյ,—երևում է, որ ես մինչև անգամ պատասխանի ես արժանի չեմ։—Ես երբէք չեմ խօսում, առանց իմ խօսքերը կշռելու,—պատասխանեց նրա ամուսինը։—Դու ինքդ լաւ մտածել ես այն, ինչ որ ասեցիր ինձ։—Ա՛խ,—ձայն տուեց

Օլգան,—ամբողջ գիշերներ անդադար լաց եմ եղել ես և աղօթել եմ Աստուծուն, որ նա ազատէ ինձ մեղք գործելուց:—Ուրեմն, պէտք է օգնել քեզ,—սառնութեամբ պատասխանեց ամուսինը:—Դէ՜, օգնիր ինձ:—Դու քեզ բախտաւոր չես զգում քո տան մէջ, մեր առանձնացած կենցաղավարութեան պայմանների մէջ:—Ո՛չ:—Դու չես կարողանում տանել այսպիսի կեանքը:—Ոչ:—Ուրեմն դու կարող ես ապրել, ինչպէս քեզ հաճելի է: Հիւրեր ընդունիր, հրաւիրէ քեզ մօտ քո բարեկամուհիներին, գնա հարևանների մօտ, պար եկ, ձիով զբօսանքներ կատարիր, գնա ուրիշների հետ որսորդութեան: Ես չեմ արգելում քեզ:—Շնորհակալ եմ քեզանից,—ամաչելով ասաց Օլգան:—Շնորհակալութիւն մի արա ինձ,—լուրջ կերպով պատասխանեց նրա ամուսինը:—Դու բարկացած ես իմ վրա,—տխրութեամբ հարցրեց կինը և սրբեց իր արտասուքները:—Ոչ, բարկացած չեմ,—պատասխանեց ամուսինը և, բռնելով նրա գլուխը, համբուրեց նրա ճակատը, յետոյ նստեց ձիու վրա և գնաց փայտ կտրողների մօտ:

—Կարճ ժամանակում Օլգան տակնուվրա արեց ամբողջ տունը: Շուտով Կալօմէյայի ամբողջ վիճակը, մէկ հասարակութեան մէջ միացած, մէկ դահլիճում հաւաքված, բոլորը անխտիր կերպով զուարճանում էին, և նրանց միջնակէտը էր մանկահասակ գեղեցկուհին, Օլգան, որը անյագ կեր-

պով վայելում էր իր նոր կեանքի քաղցրութիւնը: Նրա ամուսնի առանձնացած կալուածական տունը այժմ անճանաչելի էր դարձել, նա լցված էր կեանքով և լուսով. այնպէս էր թւում, որ մինչև անգամ շրջապատող կաղամախիները այժմ աւելի ուրախ կերպով էին տատանվում: Մարգագետինը վառվում էր խաղասէր կանանց գոյնզգոյն հագուստներով. խաղի խայտաճամուկ օղակները և գնդակները թռչում էին օդի մէջ. այգիում լսելի էին լինում բարձր ուրախաձայն ծիծաղներ: Ծառերի տերևները կամաց-կամաց կարմիր գոյն էին ստանում: Քամին աղմուկով անցնում էր հնձած արտերի վրայով: Սարդի ոստայնը, որպէս մի դրօշակ, ծածանվում էր մերկացած թփերի վրա: Կռունկները թռչում էին դէպի հարաւ: Օլգան, նստած իր կաթնի նման սպիտակ և գեղեցիկ ձիու վրա, արշաւում է որբացած դաշտերում. Նա հագած ունէր ամազօնեան երկար շրջազգեստ, գլխին կրում էր փոքրիկ փետրազարդ գլխարկ, որ ծածանվում էր քամուց: Նրա ետևից, նոյնպէս ձիաների վրա նստած, արշաւում են մանկահասակ կալուածատէրներ և տիկիններ, ֆանտաստիկական զգեստներով: Ահա եղջերափողը ածեցին: Դաշտում յանկարծ պատահած նապաստակը սրում է իր երկայն ականջները, զարմացած նայում է իր շուրջը և նետվում է անտառի մէջ: Աղուէսը խռպոտ ձայնով կաղկան-

ձում է և թփերի միջով դուրս է գնում դէպի մի այլ կողմ:—Այնուհետև երկինքը հետզհետէ մոխրագոյն է դառնում և մառախլապատ: Ագռաւները պտըտւում են հին կաղամախիների շուրջը: Գիշերը ցանկապատի ետևում, խսկ և խսկ կանաչագոյն կրակի նման, փայլում են գայլի աչքեր: Եւ մի պարզ արեգնային առաւօտ ձիւնային սպիտակ սաւանը արդէն պատել է լայնատարած տափարակը. մանր ալմաստները կպչում են լուսամուտներին. ծառերից և տանիքներից կաթկթում է հալվող ձիւնը. ճնճղուկները ճվվում են ախոռատան մօտ: Անցնում է երկու շաբաթ ևս, ձիւնը դադարում է հալչել. ամբարանոցից դուրս են քարշում փոշեպատ սահնակը, որը կարապի գլխի նմանութիւն ունէր և թափ են տալիս նրա արջի մորթով պատած ներքսակողմը: Կրակը վառվում է ահագին բուխարիների մէջ: Սահնակներ թռչունների նման ամեն կողմից սլանում են դէպի հիւրընկալ տունը. տափարակի վրա հեռուից լսվում է նրանց զանգակների սուր ձայնը. Նախասենեակում մուշտակները անկարգ կերպով ընկած են միմեանց վրա: Մի կողմ ձգելով իրանց վրայից տաք մուշտակները, տիկինները մտնում են փոքրիկ դահլիճը և ծխում են գլանակներ. երիտասարդները դժուարութեամբ են քարշում կաշեայ ձեռնոցները ցրտից ուկրացած ձեռքերի վրա: Մէկը նստում է երգեհոնի հանդէպ, սկսում է ածել, և պարող զոյ-

գերը դասաւորվում են: Այսպէս անցնում է մէկ շաբաթը միւսի ետևից. անդադար թռչում են կալուածատէրների մէկ գիւղից դէպի միւսը: Զարմէ անգամ ծածկել խաղաթղթի սեղանները, նրանց վրա միշտ գործ կայ. երկայն չիբուխները ծխվում են. մառանում դատարկ շիշերը կանգնած են քառակուսի մեծ խումբով, որպէս հին գվարդիան Վատերլօօի մօտ: Իսկ երբ Օլգան առաւօտեան լուսաբացին վերադառնում է տուն, փաթաթված սամոյրի մուշտակի մէջ և սահնակում ծածկված արջի թանձրամազ մորթով, այդ ժամանակ նրա առջևից արշաւում են մի խումբ ձիաւորներ, ձեռքներին ջահեր բռնած. վառվող ձիւթը կաթկթում է ջահերից և թըշ-թըշում է սառը ձիւնի վրա: Ձիաւորները այն բոլոր հիւրերն են, որ ճանապարհ են դնում նրան, ինչպէս մի թագուհի: Օլգան անսահման կերպով թագաւորում է այդ ուրախ շըրջանի մէջ. Նա փայլում է և յաղթանակ է տանում և երջանիկ է: Արդէն անուններով ցոյց էին տալիս նրա պաշտողներին, ասում էին, որ մէկը խիստ ճարպիկ և ինքնուրոյն կերպով տարփածուի դեր է խաղում նրա շուրջը և մինչև անգամ արտօնութիւն է ստացել հագցնելու և հանելու նրանից տաք կօշիկները և բռնելու նրա ձիու սանձը,—թէև Օլգան ոչ խօսքով և ոչ մի հայացքով չէր դաւաճանել իր ամուսնին: Ընդհակառակն, նա երբէք չէր եղել իր ամուսնի հետ այնքան սիրով, որպէս

այժմ, որին աշխատում էր վարձատրել իր անթիւ քնքշութիւններով։ Բայց հասարակական կարծիքը հարևանների և սպասաւորների միջոցով հասնում է նրա ամուսնու ականջին։ Նա հաւատում էր իր կնոջը, բայց մի և նոյն ժամանակ բարձր էր գնահատում իր պատիւը, և չարախօսութեան ամէն մի կաթիլը, որ ընկնում էր Օլգայի վրա, թոյնի նման ծծվում էր ամուսնու սրտի մէջ։ Նա հետզհետէ դառնում էր աւելի լուռ և սառն։ Հէնց որ հիւրեր էին գալիս, նա կամաց տանից դուրս էր գնում։ Օրըստօրէ աւելի և աւելի հազիւ անգամ էր պատահում, որ նա իր կնոջը առաջնորդէր նրա զբօսանքների ժամանակ։ Գարունքին, մի քանի ռուս կալուածատէրների աջակցութեամբ, նա հիմնեց անտեսական ակումբ, և սկսեց զանազան բարեկարգութիւններ անել իր կալուածքների մէջ, սկսեց ստանալ մի քանի լրագիրներ, գնեց շատ գրքեր, սկսեց մօտենալ շինականներին, այցելում է գիւղական գինետները, որովհետև ի նկատի ունէր ընտրութիւնների ժամանակ ներկայացված լինել որպէս ընտրելիներից մէկը։ Հունձքի վերջանալուց յետոյ, երբեմն նա միայնակ իր շան հետ գնում էր որսորդութեան։ Երբեմն նա վերադառնում էր տուն շատ ուշ, գիշերով։ Օլգան իր անկողնի մէջ պառկած, աչքերը չէր փակում և ալեկոծված սրտով սպասում էր նրա վերադարձին, բայց նա կարծում էր, թէ կինը ար-

դէն քնած է և կամաց գնում էր իր սենեակը։ Ոչ երբէք ամուսինը այնպէս չէր գրաւել նրա սիրտը, որպէս այժմ... Բոլորը, ինչ որ անում էր ամուսինը, ունէր մեծ նշանակութիւն կնոջ աչքում։ Երբ նա տանը չէր լինում, Օլգան աչքից անց էր կացնում այն լրագրները, որ նա կարդացել էր, և թերթում էր նրա գրքերը։ Միայն այժմ նա սկսեց հասկանալ, թէ ինչ է սէրը, և նա զգում էր, որ ինքը կարող կը լինէր սիրել իր ամուսնին։ Նա ջերմ փափագով որոնում էր ամուսնի սէրը այն ժամանակ, երբ, որպէս երևում էր, ինքը կորցրել էր իր նշանակութիւնը նրա սրտում։ Նա վրդովվում էր, տեսնելով, որ ամուսինը կարող էր ամբողջ ժամերով խօսել իր մօտ եկող շինականների հետ, որոնք տարածում էին սենեակում իրանց ձիւթով օծած կօշիկների սարսափելի հոտը, բայց իր հետ մի խօսք անգամ չէր գտնում խօսելու։ Երբ նա գիշերի երկարութիւնը անց էր կացնում ամուսնի մօտ նստելով, և այրը ոչ մի անգամ աչքը չէր բարձրացնում իր գրքից, երբ նա յետոյ գնում էր քնելու, առանց համբուրելու իր կնոջը, այդ ժամանակ կինը մի առանձին բորբոքմամբ սկսեց փափագել նրա սիրոյն։ Նա հնարում էր խիստ սքանչելի անոյշ զգեստներ և աշխատում էր հաճոյանալ իր ամուսնին աւելի, քան թէ իր խելագար երկրպագուներին։ Նա պէտք է սիրէր իրան, նա ցանկանում

էր, որ ամուսինը սիրէր իրան: Կինը ամեն ինչ փորձեց և յետոյ վճռեց գործ դնել մի նոր յուսահատական միջոց ևս: Նա մտածեց գրգռել ամուսնի խանդոտութիւնը: Բայց որտեղից գտնել մի մարդ, որը կարող լինէր խանդոտութիւն յուզել նրա սառնասիրտ, խելացի և հաստատամիտ ամուսնի մէջ: Իզուր որոնում էր Օլգան, նա ոչոքին գտնել չը կարողացաւ, որ արժան լինէր այդ դերը կատարելու: Անհանգիստ կերպով թափառում էր նա թէ տանը և թէ հասարակութեան մէջ: Մի անգամ երեկոյեան պահուն նրա ամուսինը կանգնած էր այգու վանդակապատի մօտ և տըխրութեամբ նայում էր արեգակի վրա, որը արդէն անտառի ետևում մայր էր մտնում, նայում էր դէպի հասկերը, որ մնացել էին դաշտերի վրա, նայում էր խոտերի և տերևների վրա, որոնք, կարծես թէ, օծված լինէին հալած կարմիր մետաղով: Յանկարծ Օլգան գրկեց նրան և բռնեց նրա տաք ձեռքից,—բայց այդ ձեռքը իսկոյն պաղեց, որպէս սառոյց:—Ի՞նչու դու չես նստում ինձ հետ,—խօսեց նա, կատարելապէս անկեղծութեամբ,—դու միշտ խոյս ես տալիս ինձանից: Երևում է, որ ես այլ ևս հաճելի չեմ թւում քեզ: Ի՞նչպէս կը ցանկանայիր, որ ես լինէի: Կամ դու այլ ևս չես սիրում ինձ:—Միշէլը ձեռքով գգուեց նրա թուշը և կրկին սկսեց նայել դէպի դաշտավայրը: Օլգան սիրաբորբոք ջերմութեամբ գրկեց նրան և

իր շրթունքները սեղմեց նրա շրթունքների վրա: Նրա ամուսինը կամաց ազատվեցաւ նրա գրկից: —Դու պատրաստվում ես էգուց շներով որսորդութեան գնալ Ցաւալէ և ցանկանում ես, որ ես առաջնորդեմ քեզ.—հանդարտութեամբ ասաց նա: Օլգան երկչոտ կերպով նայեց ամուսնի վրա:—Դու չը հասկացար ինձ,—ասաց նա:—Ոչ, հասկացայ,—ժպտելով պատասխանեց ամուսինը,—բայց այստեղ ցուրտ է, մտնենք սենեակը:—Սենեակում նա գրկեց Օլգային և սկսեց համբուրել նրա գըլուխը, շրթունքը և կուրծքը. կնոջ սիրտը հանգստացաւ ցնծութիւնից: Յանկարծ ասաց նա. վառիր լամպան և բեր ինձ լրագիրը:—Նրա կինը, ձեռքերը փակած, լաց եղաւ ամբողջ գիշերը: Նրա արտասունքը դեռ չէր ցամաքել և այն ժամանակ, երբ առաւօտեան ամուսինը օգնում էր նրան նըստել ձիու վրա: Օլգան համարեա չը նայեց նրա վրա, մտրակեց իր ձիուն և անցաւ առաջ: Պարզ և տաք օր էր: Խոզանների վրա լսելի էր լինում որսորդների ուրախաձայն աղաղակը: Հրացանակիրները դարան մտան անտառի զանազան տեղերում: Նրա ամուսնին պատահեց կանգնել անտառի թաւուտներում: Գեղեցիկ, յաղթանակող կինը, արիւնով լցված սրտով և արտասուալի աչքերով, կառավարում էր որսորդութիւնը: Բոլորից առաջ նա տեսաւ մի նապաստակ, որը, դէպի դաշտը փախչելով, ազատութիւն էր որոնում: Նա իր փոք-

րիկ և դողդոջուն ձեռքով ցոյց տուեց նապաստակին: Իսկոյն բաց թողին բարակներին, և որսորդները վայրենի աղաղակներով վազեցին անբախտ անասունի ետևից: Անփոյթ կերպով, արհամարհելով կեանքը, Օլգան վազեցնում էր իր ձին, թռցնում էր խրամատների, փոսերի և ցանկապատների վրայով, և նրա իւրաքանչիւր ջիղը դողդողում էր այդ սոսկալի զուարճութիւնից: Նա ծիծաղում էր, ինչպէս մի երեխայ, որ նայում է, թէ որպէս գունդը թռչում է օդի մէջ: Այդ միջոցին, վերջապէս, բարակները շրջապատեցին խեղճ նապաստակին, որը անխուսափելի ու սարսափելի մահից առաջ արձակում էր ողբալի հառաչանքներ: Բոլորի դէմքերը արտայայտում էին զարմացք, նայելով կատաղի ձիաւոր կնոջ վրա. Նրա սնափառութիւնը տօնում էր մի նոր և մոլեգին տօն, որի առարկան ուրիշ ոչինչ չէր, բայց միայն խղճալի նապաստակը, որը հոգին փչում էր նրա ոտների մօտ: Երիտասարդները համբուրում էին նրա թաց ձեռնոցները և հրճուանքից ձգում էին իրանց գլխարկները դէպի վեր: Շառագունած դէմքով և փայլուն աչքերով նայում էր Օլգան իրան շրջապատող որսորդների վրա: Յանկարծ մի կողմում տեսաւ նա մի երիտասարդի, որին առաջ չէր նկատել: Նա լուռ և սառն ուշադրութեամբ նայում էր Օլգայի վրա:—Յարգելի պարոն,— գոռոզաբար ձայն տուեց նա երիտասարդին, որ-

քան հաճելի եմ թւում ձեզ:—Ինձ դուք ամենևին հաճելի չէք թւում,—սառն կերպով պատասխանեց նա: Օլգան արագութեամբ դարձրեց ձիու գլուխը և մօտեցաւ նրան:—Ի՞նչու,—հարցրեց նա, աւելի հետաքրքրութիւնից շարժված, քան թէ բարկութիւնից:—Մի կին, որ զուարճանում է մի ողորմելի անասունի օրհասական տագնապով, վարվում է կամ շատ անգթաբար, կամ շատ անխորհուրդ կերպով:—Այդ րոպէին մի առանձին զգացմունք, որ նման էր ատելութեան, տիրեց խեղճ և փառասէր կնոջ սրտին,—մի դիւական սարսափելի զգացմունք, բայց դա ատելութիւն չէր: Նա միայն լռութեամբ նայում էր համարձակ երիտասարդի վրա: Նա այն աստիճան նշանաւոր էր երևում, որ կարող էր տանջել նրա ամուսնին: Օլգան իսկոյն հասկացաւ այդ, և աւելի ոչինչ պէտք չէր նրան այն րոպէում: Բացի այդ, երիտասարդը համարձակվեցաւ այնքան սառնասիրտ կերպով վերաբերվել դէպի նրա գեղեցկութիւնը, և նա պարտաւոր էր քաւել այդ մեղքը: Օլգան այլ ևս ուրիշ բան չը հարցրեց նրանից: Նա առաջին տղամարդն էր, որ այդ եղանակով խօսեց նրա հետ, և սառն, համարեա թշնամաբար վարվեցաւ նրա հետ: Այսուամենայնիւ, նրա աչքերում փայլում էր մի առանձին բարութիւն: Վրէժխնդրութեան ծարաւը ձգել էր Օլգային տենդային դրութեան մէջ, թէև երիտա-

մարդը ամենևին ուշադրութիւն չէր դարձնում նրա վրա, ոչ ճաշելու ժամանակ և ոչ պարերի ժամանակ։ Բայց այդ միջոցին նա տաք կերպով խօսում էր ուրիշների հետ և, որպէս երևում էր, նա դեր էր խաղում հասարակութեան մէջ։ Նա իմացաւ, որ երիտասարդը մի և նոյն Վլադիմիր Պօղօսեան է, որի մասին այն ժամանակ շատ էին խօսում, որպէս մի մարդու մասին, որ յարգանքի արժանի է։

—Վլադիմիրը դէպի ձեզ անքաղաքավարի գըտնվեցաւ,—ասաց Օլգային տանտիկինը, մի խելացի և գեղեցիկ կին, որ առաջ չինականի աղջիկ էր,—դա նրա խօսելու ձևն է. առհասարակ նա բաւական ինքնուրոյն մարդ է, և այդ պատճառով էլ հազուագիւտ մարդ է, ամեն բանի վըրա նայում է ուրիշ տեսակէտից, ամեն բանի մէջ աւելի խոր թափանցել գիտէ. ոչինչ չէ կարող խուսափել նրա սուր դիտողութիւնից։ Մի ժամանակ գուցէ դուք ձեր կարծիքը կը փոխէք նրա մասին, փորձեցէք խօսել նրա հետ։—Եւ հպարտ կինը, որը իր երկրպագուների խոստովանութիւնները լսելու ժամանակ միշտ արհամարհանքով շարժել գիտէր ուսերը և միշտ կը խաղացնէր յօնքերը, այժմ ինքը մօտեցաւ նրան և սկսեց խօսել նրա հետ։—Դուք վիրաւորեցիք ինձ,—ասաց նա դողդոջուն և գունաթափ շրթունքներով, յետոյ կանգ առեց շունչ առնելու համար։—Ուղիղ խօս-

քը միշտ անախորժ է թւում,—պատասխանեց նրան Վլադիմիրը,—բայց նա կենդանացուցիչ է և պարունակում է իր մէջ բուժիչ միջոցներ հիւանդոտ հոգու համար։—Այդ խօսքերի միջոցին նրա աչքերը միջամուխ եղան ուղիղ Օլգայի սըրտի մէջ։—Դուք այնպէս էք համարում, որ ես անխոհեմ վարվեցայ,—շարունակեց Օլգան ճնշված ձայնով,—ես արդէն մտածեցի ձեր խօսքերի վրա, բայց ինձ անհասկանալի են մնում նրանք։—Ուրիշ ինչպէս կարող էի բացատրել ձեզ իմ ասածը,—սառնութեամբ պատասխանեց Վլադիմիրը։ Դուք կարծում էք, որ մարդը իրաւունք չունի ըսպանել անասուններին,—հարցրեց Օլգան, ծաղրական կերպով նայելով երիտասարդի վրա։ Վլադիմիրը ժպտաց։—Ահա այդպէս է կնոջ լօգիկան,—պատասխանեց նա.—ես ամենևին չեմ ասել սպանել, այլ ասել եմ շներով խեղդել կամ չարչարել։ Առհասարակ այս աշխարհում բոլորովին իզուր է խօսել իրաւունքի վրա, այստեղ կարող է խօսք լինել միայն անհրաժեշտութեան մասին, որը իշխում է ամեն բանի վրա։ Մարդը, անհրաժեշտութիւնից ստիպված, պէտք է որ սպանէ, որպէս զի կարողանայ ապրել։ Նա սպանում է և այն ժամանակ, երբ կերակրվում է միայն բոյսերով, որովհետև և բոյսերը վայելում են կեանք։ Նա ստիպված է սպանել գազաններին, բայց չի պիտի անէ նրանից

աւելի, քան թէ անհրաժեշտ է։ Նա իրաւունք չունի չարչարելու նրանց, որովհետև անասունները, ինչպէս և մարդիկ, ունեն կամք, զգացմունք և խելք. նրանք մտածում են, որպէս և մենք, թէև նրանց խօսելու ընդունակութիւնը շատ զարգացած չէ։ Այդ պատճառով նրանց տանջանքների տեսարանով զուարճանալը ոչ աւելի լաւ է, քան գլադիատորների խաղերի կամ մենամարտութիւնների վրա նայելը։ Կինը, որ ընդունակ է չներով կեղեքել անասունին, իմ աչքում մի և նոյնն է, ինչ որ է մի վեստալկա, որի ձեռքից կախված էր մարդու կեանքը և մահը, նայելով այն բանին, թէ այդ կոյսը շարժեց իր մատը, թէ ոչ։ Մի այդպիսի կինը պատահած ժամանակ չի խնայի զոհել և մարդուն, որովհետև առանց դրան էլ, իմացականութեան այն աստիճանը, որը զանազանում է մեզ անասունից, չունի մեծ նշանակութիւն կնոջ աչքում։—Շնորհակալ եմ ձեզանից,—ասաց Օլգան, յառած աչքերով նայելով իր առջև,—հիմա խօսենք ուրիշ բանի վրա։
—Նա անպատշաճ կերպով բռնեց Վլադիմիրի ձեռքից և հարկադրեց նրան, որ իրան տանէ դահլիճը։ Այստեղ երիտասարդը նստեց դռների մօտ, իսկ Օլգան, գրկված ուրիշների հետ, սկսեց պարելով թռչել նրա մօտով, և ամեն մի շրջան կատարելու ժամանակ արձակում էր դէպի նա իր տխտաբորբոք և սևորակ աչքերի ջերմ ճառա-

ճայթները։ Ամեն անգամ, երբ նրան պէտք էր ընտրել իր համար պարընկեր, նա մօտենում էր երիտասարդին և ամեն կերպով աշխատում էր հրապուրել նրան խօսակցութեան մէջ, բայց նա չէր դուրս գալիս իր սովորական համդարտութիւնից և լակօնականութիւնից։ Տուն վերադառնալու ժամանակ, Օլգան գտնվում էր բաւական վատ տրամադրութեան մէջ. նա փաթաթվեցաւ իր մուշտակի մէջ և սահնակում զալարվեցաւ, ինչպէս սարդը իր պատառոտված ոստայնի մէջ։
—Իսկապէս ով է այդ երիտասարդը, այդ Վլադիմիր Պօղօլեվը,—փոքր ինչ անցնելուց յետոյ, խորին արհամարհանքով հարցրեց նա իր ամուսնից։—Նա մարդ է այդ բառի լիակատար նշանակութեամբ,—պատասխանեց Միշէլը, (բայց այդ բաւական չէ, Միշէլը անընդունակ էր նախանձոտ լինելու),—գիտեմ, որ բացի սրանից նա ունի կալուածքներ մեր հարևան նահանգի սահմանի վրա, և որ նա վարձով վեր է առել մի ուրիշ մեծ կալուածք։ Նա չէ բաւականանում նրանով, ինչ որ ունի, բայց միշտ ձգտում է դէպի առաջ. եղել է արտասահմանում, շատ սովորել է, ծոյլ չէ, խաբեբայ շահախնդիր չէ, մնապարծ չէ և կանանց հաճոյամոլ չէ, ինչպէս մեր երիտասարդ պարոնների մեծ մասը։—Այդ միջոցին նա նայեց Օլգայի վրա։—Նա լեհացի չէ՞։—Ո՞րտեղից քո գլխումը մտաւ այդ միտքը։ Ինքն ըստ ին-

քեան հասկանալի է, որ նա ռուս է:—Հէնց նոյն գիշերը խեղճ մեծամիտ կինը սկսեց մտածել, թէ ինչպէս պէտք էր ձեռք բերել այդ մարդուն, որ ցոյց էր տուել դէպի ինքը այնպիսի արհամարհանք: Առաւօտեան Օլգան վճռեց, որ ինքը կաշխատէ որսալ նրան: Նա չէր մտածում հետեւանքների մասին, և այն մասին, որ իր վարմունքով կարող էր նրան տանջանքներ պատճառել: Նրան միայն զուարճացնում էր այն միտքը, թէ ինչպէս պէտք էր որոգայթներ լարել նրա առջև և որսալ նրան, ինչպէս մի նապաստակ կամ աղուէս:

—Բայց դա այնքան հեշտ չէր,—շարունակեց պատմող կինը:—Մի քանի օրից յետոյ, Վլադիմիրը եկաւ նրա ամուսնի մօտ: Օլգան ընդունեց նրա այցելութիւնը իր հաշւին և հանդիպեց նրան հանդիսաւոր ժպիտով:—Իմ ամուսինը գիւղումն է և ուշ կը վերադառնայ տուն,—ասաց նա և սպասում էր, որ Վլադիմիրը կը յայտնէ նրան իր բաւականութիւնը միասին ժամանակ անցկացնելու: Բայց նա սառն կերպով պատասխանեց. երբ որ այդպէս է, ես կը գամ էգուց:—Ի՞նչու չէք կամենում դուք մնալ ինձ մօտ,—հարցրեց Օլգան զարմանալով:—Ես եկայ նրա համար, որ տեսնեմ ձեր տնտեսութիւնը, դուք, ի հարկէ, չէք կարող այդ ցոյց տալ ինձ:—Ուրեմն մնացէք ժամանակ անցկացնելու համար:—Այդ մասին ես բոլորովին անընդունակ եմ: Դուք կը ձանձրանաք ինձանից, բայց ինձ համար ժամանակը շատ թանգ է, չեմ կարող վատնել դատարկախօսութիւններով: Կեանքը այնպէս էլ կարճ է, այսուամենայնիւ, մեզ պէտք է շատ սովորել և աշխատել:—Հետևեալ օրը նա կրկին եկաւ: Օլգան կարդում էր մի նոր ռոման և չը վերկացաւ իր փափուկ բազկաթոռից, որ ողջունէ նրան: Նա խօսում էր նրա ամուսնի հետ կից սենեակում: Օլգան չէր կամենում ցոյց տալ թէ ականջ է դնում նրանց խօսակցութեանը և ուշադրութեամբ նայում էր գրքի վրա, բայց ոչ մի բառ անգամ չէր թռչում նրա լսողութիւնից: Նա իր բոլոր սրտով համոզվեցաւ թէ որքան խելացի և պարզ կերպով խօսում էր Վլադիմիրը, և որպէս նա միշտ հասնում էր խօսակցութեան նպատակին: Նա խօսում էր միայն այն բաների մասին, ինչ որ հաստատ գիտէր, և այդ պատճառով, որպէս մարդիկը, այնպէս էլ անշունչ առարկաները, որոնց մասին նա դատողութիւններ էր անում, բոլորովին կենդանի կերպով պատկերանում էին նրա խօսակցի առջև: Օլգայի ամուսինը մի քանի անգամ ասաց նրան. քեզանից կարելի է մի բան սովորել, բարեկամ:—Եւ Օլգան գիտէր, թէ ինչ էին նշանակում այդ խօսքերը ամուսնի բերանում: Արդէն մթնել էր, երբ Միշէլը կանչեց Օլգային. նա շուտով վերկացաւ և կանգնած մնաց շէմքի վրա.

այստեղից միայն նշմարեց նա երկու տղամարդերի սիգարները, որոնք լոյս էին տալիս մթութեան մէջ, ինչպէս հրեղէն գնդակներ: Օլգան նկատեց, որ Վլադիմիրը, տեսնելով նրան, վերկացաւ, որովհետև նրա սիգարը արագութեամբ բարձրացաւ դէպի վեր, որպէս մի ու և իջէ լուսափայլիկ բըզէզ: Միշէլը խնդրեց թէյ տալ: Երբ փոքրիկ կազակը պատրաստեց թէյի սեղանը, դրեց նրա վրա սառը ընթրիք և եռացող սամօվարը, այդ ժամանակ միայն Օլգան ներս մտաւ և իր գլխի թեթև շարժումով պատասխանեց Վլադիմիրի երկրորդ անգամ գլուխ տալուն: Ածելով թէյի բաժակները, Օլգան լամպայի վրա վառեց իր գլանակը, և թիկըն տալով բազկաթոռի մէջքին, սկսեց ծխել: Տղամարդիկը անփոյթ կերպով շարունակում էին իրանց սկսած խօսակցութիւնը, իսկ Օլգան իր երկայն թերթերունքների տակից և ծուխի դանդաղ կերպով բաժանվող կոյտի միջից նայում էր Վլադիմիրի վրա: Նա աւելի դուրեկան էր, քան գեղեցիկ, բայց տգեղ չէր, մանկահասակ էր, կարծես, աւելի մանկահասակ, քան թէ Օլգան, միջին հասակ ունէր, աւելի նիհար, համարեա տկար կազմուածքով և նուրբ ձեռքերով ու ոտներով: Բայց նրա կերպարանքի և շարժողութիւնների մէջ երևում էր մեծ եռանդ: Նրա փոքր ինչ երկայնաձև երեսի վրա կարմրութեան ամենևին հետքեր չը կային, բայց նա դունաթափ ևս չէր, այլ արևից այրվե-

լով, աւելի գորշ—դեղնագոյն էր դարձել: Ոչ այնքան բարձր ճակատի վրա կային ինչ-որ առանձին բարձրութիւններ, որ տարածվում էին աչքերի վրա և կորացած քթի վրա: Օլգան վճռեց անպատճառ նայել Գալլի խորագիտակութեան գրքի վրա այդ բարձրութիւնների բացատրութիւնը հասկանալու համար: Փոքր ինչ դէպի վեր բարձրացած, լիաշուրթ բերանը նշանաւոր էր փայլուն ատամներով, իսկ սուր ծնօտքի վրա մօրուք չը կար: Գլխի խիտ և սևորակ մազերը հարթ կերպով սանդրված էին դէպի ետևի կողմը, ինչպէս անում են գերմանացի քահանաները կամ վարժապետները: Քանի որ դեռ Օլգան զննում էր նրան, մի և նոյն ժամանակ խորշում էր նայել նրա աչքերի մէջ, թէև այդ աչքերը ունէին մի առանձին հրապուրիչ զօրութիւն, մի առանձին հանդարտ, մեղմական հայեացք: Դրանք էին խոշոր և խորախորհուրդ աչքեր, որոնց արտայայտութիւնը անդադար փոխվում էր: Երբեմն կիսախուփ կոպերի միջից նշմարվում էր կծու հեգնութիւն, երբեմն նրանք փայլում էին, շարժվելով երկայն մետաքսանման թերթերունքների ներքոյ, երբեմն թափանցում էին հոգու մէջ իրանց սառն սրամտութեամբ, բայց ամեն ժամանակ արտայայտում էին նրանք այն ազնիւ հասկացողութիւնը և այն մտերմական ճշմարտութիւնը, որոնք փարատում են ամեն կասկածանքներ: Բայց այսուամենայնիւ, չը

նայելով այն բոլոր արթնութեանը և ողջամտութեանը, որոնք դրոշմված էին նրա ամբողջ գոյութեան վրա, նրանից չնչում էր մի առանձին պօեզիա: Այսպէս էր այն տղամարդը, որը ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում մանկահասակ գեղեցկուհու վրա, կարծես թէ, նա մի աւելի նշանակութիւն չունենար, քան այն գեղեցիկ աթոռներից մէկը, որ դրած էին նրա հիւրանոցում: Նա լուրջ կերպով խօսում էր Օլգայի ամուսնի հետ դաշտերի պարարտացնելու մասին, ձիապահութեան մասին, անտառային անտեսութեան մասին, և յետոյ անցաւ սկսեց խօսել տեղային համայնքի շահերի մասին: Օլգան դադարեց ծխելուց և ուշադրութեամբ լսում էր:—Դուք ձանձրանում էք, տիկին,—հեգնութեամբ ասաց նա, դառնալով դէպի Օլգան:—Ոչ,—պատասխանեց Օլգան,—ձեր խօսակցութիւնը ինձ մեծ բաւականութիւն է պատճառում, քան թէ այն, որը ես միշտ լըսում եմ հասարակութեան մէջ: Այնտեղ բոլորովին մոռանում ես, թէ որքան դիւրաբեկ է մեր գոյութիւնը և որքան ծանր աշխատանք, որպիսի տխուր մաքառումն նախասահմանված է մեզ կեանքի մէջ: Իսկ ձեր լուրջ դատողութիւնները բարեբար ազդեցութիւն են գործում իմ վրա: Ես զգում եմ,—ինչպէս բացատրեմ ձեզ,—կարծես թէ, ես դուրս եկայ իմ հեղձուցիչ առանձնասենեակից և մտայ եղևինների անտառը, և կուրծքս ընդար-

ձակվում է նրա թարմ և կազդուրիչ անուշհոտութեան մէջ:—Անափառ կինը այդ բոլորը խօսեց առանց հպարտութեան, պարզ և անկեղծ կերպով: Առաջին անգամ Վլադիմիրը ուշադրութեամբ երկար նայեց նրա վրա և գնալու ժամանակ նրան ձեռք տուեց. բայց այն ինչ ձեռք էր,—սառն, ամուր և երկաթեայ ձեռք էր:

Օլգան այսպէս ինքնաբերաբար պատմում էր. նրա ձայնը նուագարանի նման երբեմն սաստկանում էր, երբեմն մեղմանում էր, և երբեմն ինձ այնպէս էր թւում, որ նա ախորժելի առոգանութեամբ կարդում է մի գեղեցիկ գիրք, կամ անգիր սերտել է իր պատմութիւնը և բառ առ բառ կրկնում է իմ առջև: Շատ պարզ էր, որ նա նորից վերափոխվում էր այն կեանքի մէջ, որի մասին պատմում էր, և թէ ամենափոքր մանրամասնութիւնները, ամեն մի ձայն և գոյն, ամեն մի շարժումը նորից կենդանանում էին նրա յիշողութեան և սրտի մէջ: Ես աչքերս խփեցի, աշխատում էի կամաց շունչ քաշել և ամբողջապէս դարձայ լսողութիւն:

—Այդ օրից Վլադիմիրը աւելի յաճախ սկսեց գալ մեզ մօտ,—շարունակեց նա:—Օլգան բոլորովին այլ կերպ էր վարվում նրա հետ, քան ուրիշ տղամարդկերի հետ: Նրա մօտ Օլգան համեստ էր պահում իրան, մեծ կարծիք չունէր իր մասին, լսում էր, երբ նա խօսում էր, հարցմունքներ էր անում այս և այն բանի մասին, ինքը սակաւ էր

խօսում, բայց նրա աչքերը չէին կարող բաժանվել երիտասարդի աչքերից: Օլգայի զարդարանքները այժմ միշտ պարզ և վայելուչ էին. Նա աւելի յաճախ հագնում էր մետաքսեայ մոյգ գունով հագուստ, բոլորովին կոճկված, և կրում էր փոքրիկ սպիտակ օձիք: Փառաւոր սևորակ գիսակները պսակում էին նրա գլուխը հաստ հիւսերի ամբողջ շրջանակներով: Այն ժամանակ, երբ ուրիշ տղամարդիկ իզուր խմում էին նրա կօշիկներով,—նա ինքը ցոյց էր տալիս անսահման ուշադրութիւն դէպի Վլադիմիրը և կատարելապէս աշխատում էր հաճոյանալ նրան: Մի անգամ նա ինչ-որ ասաց կօրսէտի հակառակ: Հետևեալ գիշերը Օլգան դուրս եկաւ նրա մօտ սև թաւիշից կարված լայն կրկնոցով, որ պատած էր կղնաքիսի մորթով:—Ո՛րքան լաւ է այդպէս,—ասաց Վլադիմիրը, առաջին անգամ մի առանձին բաւականութեամբ հրճուելով Օլգայով:—Ես այլ ևս երբէք կօրսէտ չեմ հագնի,—շուտով պատասխանեց Օլգան:—Ինչո՞ւ չէք հագնի:—Միթէ դուք չէիք, որ երէկ դատապարտեցիք կօրսէտը, իսկ դուք ամեն ինչ գիտէք աւելի լաւ, քան թէ միւսները: Փոքր ինչ անցնելուց յետոյ, Օլգան իր թևքի մազեղէն հաշխայով պատահմամբ դիպաւ նրա ձեռքին և տեսաւ, թէ որպէս այդ շօշափումը էլեկտրապէս ներգործեց նրա վրա: Խեղճ կնոջ կուրծքը բարձրացաւ և աչքերը ներքին ուրախութիւ-

նից փայլատակել սկսեցին: Բայց երիտասարդը իսկոյն հասկացաւ և սկսեց աւելի զգոյշ լինել, որքան կարող էր, խոյս էր տալիս նրա հասարակութիւնից և աւելի սերտ կերպով մտերմացաւ նրա ամուսնի հետ: Հետևեալ օրը խօսվում էր մի հաճոյամոլ կնոջ մասին, որի պատճառով մի երիտասարդ օֆիցեր սպանվել էր մենամարտութեան մէջ:—Կարելի է արդեօք մի կնոջ մէջ, որը չէ վախենում արիւնից, ենթադրել պատուի զգացմունք և սէր դէպի իր զաւակները,—ասաց Միշէլը:—Ա՛խ, այս տեսակ կանա՞նց պատիւը հաւասարվում է մի աշխարհակալի պատուին, որը միշտ գնահատվում է նրա յաջողութեան համեմատ,—ծաղրածութեամբ պատասխանեց Վլադիմիրը.—այսպիսի կինը, փառասիրութիւնից դրդված, զոհում է իր բախտը, յարգանքը և ամեն ինչ այս աշխարհում: Բայց մի տղամարդ, որ հաստատ բնաւորութեան տէր է, որ պատուասիրութիւն ունի, երբէք չի հրապուրվի այս տեսակ կնոջով, և այդ պատճառով նրա որսը լինում են միայն թեթևամիտները, յիմարները և անպիտանները: Այս տեսակ կինը գործում է, ինչպէս մի կատու, որը, անկարող լինելով մղել բացարձակ և ազնիւ պատերազմ, սկսում է որսալ ճանճեր և մկներ տանը: Բայց սակայն, այս տեսակ անձինք այժմ հազուագիւտ, չեն որովհետև մեր կրթված կանայքը վատնում են իրանց բոլոր ժամանակը

դատարկութեան մէջ, և այդքանը միայն գիտեն,
որ ռօմաններ են կարդում և ածում են երգեհոնի
վրա։—Դուք արհամարհում էք գեղարուեստը,—
նկատեց Օլգան։—Ամենևին ոչ,—իսկոյն պատաս-
խանեց Վլադիմիրը,—ես միայն պնդում եմ, որ
առանց աշխատանքի չը կայ ճշմարիտ բաւակա-
նութիւն։ Մարդիկ, որ ստեղծել են գեղարուեստի
անմահ տիպարներ, սակաւ չեն աշխատել նրանց
վրա և ոչ սակաւ անգամ թաթախել են իրանց
վրձինը կամ գրիչը իրանց սրտի արեան մէջ։
Միայն նա կարող է գնահատել ուրիշի աշխա-
տանքը և զուարճանալ նրանով, ով որ ընդունակ է
իր հերթում ինքն էլ մի բան անել։—Դուք ուղիղ էք
ասում,—տխրութեամբ ասաց Օլգան,—որքան յա-
ճախ զգում եմ ես իմ կուրծքի մէջ սարսափելի
դատարկութիւն և զզուանք դէպի կեանքը։—Սկը-
սեցէք աշխատել,—խստութեամբ նկատեց Վլադի-
միրը,—դուք դեռ առոյգ էք հասակով և, շատ կա-
րելի է, տակաւին կարող կը լինէք ազատել ձեզ։
—Օլգան չը վստահացաւ նայել նրա վրա։

—Անցան շաբաթներ։ Կալուածատիրոջ տունը
ընկղմված է մոխրագոյն մառախուղի մէջ. Նո-
րից թանձր ձիւնը ծածկում է ընդարձակ տափա-
րակը, և լճակի վրա տարածվում է փայլուն սա-
ռուցը, իսկ ամբարանոցում փոշիների մէջ ան-
գործ ընկած է սահնակը, և նրա արջի մորթով
պատած փառաւոր ներսոյքի մէջ ցեց է գոյացել։

Օլգան խորասուզված իր թախտի փափուկ բար-
ձերի մէջ, տանջվում է մտածութիւններով։ Որ-
քան սակաւ Վլադիմիրը ուշադրութիւն է դար-
ձնում նրա բորբոքված դէմքի վրա, այնքան ան-
խուսափելի կերպով նրա հպարտ սիրտը փափա-
գում է տարկացնել երիտասարդին։ Նա զգում է
իրան անպատուած, վիրաւորված և ստորացրած։
Օլգան անհրաժեշտ էր համարում տեսնել նրան
իր ոտների մօտ ընկած և յետոյ յաղթական ու-
րախութեամբ կոխ տալ նրան։ Նրա մտքին ամե-
նեւին չէր գալիս, որ իրան ես կարող էր վտանգ
պատահել։ Առաջին անգամ տեսնում էր նա մի
մարդու, որին արժէր յաղթել, միթէ այս անգամ
նրա գեղեցկութիւնը, նրա թովչութիւնը և բոլոր
կանացի վարպետութիւնը անզօր պիտի յայտնվէր։
—Ոչ, ինչ էլ որ լինի, Օլգան պէտք է տիրապետէ
նրան։ Այդ բաւականութեան համար նա չի խնա-
յի վճարել ամենաբարձր գին։ Իմանալով, թէ
որքան նա յարգում է աշխատանքը, Օլգան ըս-
կսում է աշխատել։—Դու մեծ ազդեցութիւն ունես
իմ կնոջ վրա,—մի անգամ գիշերը ասում է նրա
ամուսինը Վլադիմիրին, տեսնելով, թէ որպիսի
ջանասիրութեամբ կինը նստած է իր ձեռագործի
դազգահի առջև,—մի քանի ժամանակ է, որ նա միշտ
պարապվում է։—Վլադիմիրը նայում է նրա վրա։
—Միթէ ես խորհուրդ եմ տուել ձեզ փչա-
ցնել ձեր աչքերը և ճնշել ձեր կուրծքը,

—սառն կերպով նկատեց նա, դառնալով դէպի Օլգան,—այս րոպէիս թողեցէք ձեր պարապմունքը:—Օլգան հնազանդւում է նրան: Դուք կարող էք ուրիշ գործով զբաղվել, բացի ձեռագործի պազգահից,—շարունակում է Վլադիմիրը,—որքան էլ հաճելի լինէր ինձ ձեր տնտեսութիւնը, այնուամենայնիւ, ես չեմ նկատում ձեր տան մէջ այն փառաւոր մաքրութիւնը, որով յայտնի են Հօլլանդիան և Գերմանիայի մի քանի տեղերը: Ահա ձեզ մի խորհուրդ, որով կը պահպանէք դուք ձեր առողջութիւնը և գեղեցկութիւնը:—Առաջին անգամ այդ գովասանքը դուրս պրծաւ երկաթեայ մարդու շրթունքներից: Օլգան դարձաւ դէպի նա, և նրա բորբոքված դէմքը արտայայտում էր շփոթութիւն, զարմացում և շնորհակալութիւն: Մի քանի օրից յետոյ Վլադիմիրը մտաւ սեղանատունը այն ժամանակ, երբ Օլգան առաստաղից աւելում էր սարդի ոստայնը: Երիտասարդը առեց նրա ձեռքից աւելը և դրեց անկիւնում:—Այդ ձեր գործը չէ,—մեղմութեամբ ասաց նա,—ես ամենևին չէի ցանկանայ, որ ձեր քնքոյշ, և արինով զեղուն թոքերը կլանէին այսքան փոշի:—Բայց ինչ պէտք է արած, երբ որ իմ սպասաւորները հօլլանդացիներ չեն:—Դուք կարող էք դարձնել նրանց հօլլանդացիներ,—ասաց երիտասարդը,—եթէ դուք կը վարվէք նրանց հետ խստութեամբ և մի և նոյն ժամանակ արդա-

րութեամբ, եթէ դուք ցոյց կը տաք նրանց իրանց անելիքը, ի հարկէ, ոչ թէ մէկ անգամ, այլ հարիւր անգամ, ամեն օր, ամբողջ տարվայ ընթացքում: Երբէք մի մոռացէք, որ դուք տանտիկին էք, և հէնց որ դուք ինքներդ կը սկսէք կառավարել ձեր ծայլ սպասաւորների գործը՝ դուք կանէք մի և նոյնը, ինչ որ արեց Նապօլէօնը, երբ որ նա քնած պահապան զինուորի փոխարէն ինքը կանգնեց պահնորդութեան տեղը: Ձեր գործն է կարգ պահպանել և հրահանգներ տալ սպասաւորներին:—Պատշգամբից երիտասարդը ցոյց տուեց նրան այգին:—Երբ կը սկսվի գարունքը, այդ ժամանակ դուք կարող էք տնկել և ցանել ծաղիկներ ու բանջարներ, կարող էք բրել հողը, ջրել և քաղհան անել ածուները, այդ բոլորը կընպաստէ ձեր առողջութեանը: Այդ գործում դուք կարող էք լինել մինչև անգամ խստասիրտ, որովհետև իւրաքանչիւր կին, ժամանակ առ ժամանակ, ըղձում է այդ պահանջը. վարւեցէք անխնայ պատերազմ որդերի և այլ միջատների հետ: Այդ բոլորից յետոյ ձեր հովանաւորութեանն եմ յանձնում փեթակները իրանց աշխատասէր բնակիչների հետ: Իսկ այժմ,—աւելացրեց նա, երբ Օլգայի հետ ման եկաւ ամբողջ տունը,—ածեցէք ինձ համար մի բան. դուք ածում էք խիստ իմաստալից կերպով և զգացմունքով: Օլգան դողում էր ամբողջ մարմնով: Աչքերը խոնարհեցրած, նստեց

նա երգեհոնի հանդէպ, և նրա մատները սկսեցին սահիլ կլաւիշների վրա։—Նայելով ձեր մատների վրա, ես հասկանում եմ ձեր խաղը. որպիսի նուրբ, թափանցիկ, կարծես թէ, չնչաւոր մատներ են։—Օլգան գունաթափվեցաւ, նա մի րոպէ ձեռքը դրեց կուրծքի վրա և ածեց Բեթհովէնի լուսնային սոնատը։ Հէնց առաջին մեղմ հնչիւնների ժամանակ, Վլադիմիրը ձեռքով ծածկեց իր աչքերը։ Լուսնկայ գիշերի բոլոր թովիչ ազդեցութիւնը և նրա ախորժելի ստուերը երկուսին ևս յափշտակութեան մէջ էր ձգել, և նրանց սրտերը հանգչում էին մոգական թախծալի լոյսի մէջ և երգեհոնի տրտում մեղեդիի մէջ, որը մարելու վրա էր։ Երբ վերջին հնչիւնը մարեց օդի մէջ, Օլգան կամաց ցած թողեց իր ձեռքերը։ Երկուսն էլ լուռ էին։—Ինքնաուրացութիւն և հնազանդութիւն, —վերջապէս ասաց երիտասարդը,—ահա ինչ է քարոզում մեզ հրաշալի սոնատը, մի և նոյն քարոզը, որի մասին խօսում է մեզ և բնութիւնը, խօսում է և մեզ շրջապատող ամբողջ աշխարհը։ Ամենից առաջ սրտի հնազանդութիւն և ինքնաուրացութիւն։ Եթէ լինի այդ խաբված սէր, որը դատապարտում է մարդուն մշտական լռութեան, բայց այսուամենայնիւ, մենք ամենքս պէտք է ընտելանանք ինքնաուրացութեան։ Նա նայեց Օլգայի վրա։ Նրա աչքերը տամկացել էին, և նա զարմանալի հեզ էր դարձել։

—Այդ օրից երիտասարդը սկսեց խիստ հազիւ անգամ յայտնվել։ Օլգան հասկացաւ նրա միտքը։ Բայց ահա մի օր նրա ամուսինը գնաց Կալօմէա զանազան բաներ գնելու։ Օլգան մնաց միայնակ և գիտէր, որ Վլադիմիրը կը գայ։ Ամեն րոպէ նրա սիրտը մարելու վրա էր. երեկոյեան վերջալոյսի ալմհուն նա հագաւ իր մաղեղէն կրկնոցը և նստեց երգեհոնի հանդէպ։ Համարեա ակամայ սկսեց ածել նա սոնատը, բայց յանկարծ վերջացրեց նրան դիսօնանսով։ Նա զգաց անտանելի տաքութիւն իր թաւամազ կրկնոցի մէջ, այդ պատճառով արձակեց նրա կօճակները, և ձեռքերը խաչաձև դընելով ալեկոծվող կուրծքի վրա, սկսեց լայն քայլերով անց ու դարձ անել սենեակի մէջ։ Այդ միջոցին տեսաւ նրան սենեկի մէջ տեղում։ Արիւնը զարկեց խեղճ կնոջ երեսին։ Նա արագութեամբ կօճկեց իր կրկնոցը և ձեռք տուեց նրան։—Ո՞րտեղ է Միշէլը,—հարցրեց նա։—Կալօմէայումն է։—Ուրեմն ես...—Միթէ կամենում էք գնալ։—Վըլադիմիրը տարակուսութեան մէջ ընկաւ։—Սկսեալ առաւօտից ես ուրախ էի ամուսնիս բացակայութեան դէպքով, որ միջոց կունենամ խօսելու ձեզ հետ, խօսելու մեր առանձնութեան մէջ,—ասաց Օլգան ճնշված ձայնով,—մնացէք, խնդրում եմ ձեզ։—Վլադիմիրը ցած դրեց գլխարկը և նստեց կինամոնեգոյն փոքրիկ բազկաթոռներից մէկի վրա։ Օլգան երկրորդ անգամ պտոյտ եկաւ սենեակի

մէջ և կանգնեց նրա առջև։— Որ և իցէ ժամանակ արդեօք սիրե՞լ էք դուք մէկին, Վլադիմիր,—հարցրեց նա կցկտուր, բայց սուր ձայնով.—այ, շատ հաւանական է, որ սիրած լինէք։—Նրա շրթունքները արհամարհական կերպով ձգձգվեցան։

—Ոչ,—պատասխանեց երիտասարդը խորին լրջութեամբ։ Օլգան լռութեամբ նայում էր նրա վրա։—Բայց ընդունա՞կ էք դուք սիրելու,—դարձեալ հարցրեց նա երկբայութեամբ,—ես կարծում եմ, որ չէք կարող։—Դուք կրկին անգամ սխալվում էք,—պատասխանեց Վլադիմիրը,—այն բնաւորութիւնները, որպէս իմն է, որոնք պատառ-պատառ չեն սպառել իրանց սիրտը, որոնք հակումն չունեն դէպի զգայականութիւն, և որոնք կատարելապէս հասունացած են. այսպիսի բնաւորութիւնները, շատ հաւանական է, որ միայն կարող են ճշմարտապէս սիրել։ Այսպիսի սէրը հասկանալի լինել կարող չէ մի պատանու կամ դեռ չը հասունացած աղջկայ. միայն կատարելապէս զարգացած տղամարդը ընդունակ է խորին զգացմունքի, և երբեմն կինը, բայց կանանց մեծ մասը կեանքի այդ ժամանակում արդէն սպառած են լինում իրանց սիրտը։—Իսկ ո՞րպիսի կին կարող էիք դուք սիրել,—շարունակում էր հարցնել Օլգան։—Վլադիմիրը լուռ էր։—Այդ հարցը վերին աստիճանի հետաքրքրում է ինձ,—քրթմնջաց Օլգան։—Իսկ ինձ անպատճառ հարկաւոր է պատասխանել

ձեզ։—Խնդրում եմ։—Ահա, այնպիսին, որը ամեն քանի մէջ լինէր ձեր հակապատկերը,—ասաց երիտասարդը ցամաք ու ճնշված ձայնով։—Օլգան սկզբում գունաթափվեցաւ, որպէս կտաւ, յետոյ կարմրեց, և արտասուքի կաթիլները փայլել ըսկսեցին նրա գեղեցիկ աչքերում։ Նա լռութեամբ խոնարհեցրեց աչքերը։—Դէ՛, հիմա ծիծաղեցէք,—ասաց Վլադիմիրը սառն և մի և նոյն ժամանակ տխուր հեգնութեամբ,—իմ ասածը պէտք է ձեզ սաստիկ ծիծաղելի թւի։—Դուք անքաղաքավարի էք,—պատասխանեց Օլգան արտասուախառն հեկեկանքով։—Բայց ճշմարտախօս եմ,—աւելացրեց երիտասարդը, ուշադրութիւն չը դարձնելով նրա վրդովմունքի վրա։—Դուք զգում էք մի առանձին հակակրութիւն դէպի ինձ,—պինդ ձայնով ասաց Օլգան, հպարտութեամբ բարձրացնելով գլուխը,—ես վաղուց նկատել էի այդ։—Վլադիմիրը սկսեց ծիծաղել, կցկտուր, խռպոտ և չափազանց տխուր ձայնով։—Ուրեմն, ես բարւոք կը համարեմ ասել ձեզ բոլոր ճշմարտութիւնը,—բացականչեց նա բորբոքված ջերմութեամբ,—ես ունեմ աւելի ըզգացմունք դէպի ձեզ, քան դէպի մի այլ որ և իցէ կին այս աշխարհում։—Օլգան երկիւղած կերպով նայեց նրա վրա, նրա սիրտը բաբախում էր. արիւնը շառաչում էր նրա ականջներում։—Ես կարող կը լինէի սիրել ձեզ,—հանդարտ կերպով շարունակեց երիտասարդը, դարձնելով նրա վրա

իր հայեացքը, որ լի էր տանջող ինքնազոհութեամբ։ —Ուրեմն սիրեցէք,—աղաղակեց Օլգան։—Ոչ,— կամաց ասաց երիտասարդը,—դրա համար ամենից առաջ հարկաւոր է յարգանք։—Օլգան սկսեց տատանվել։—Խնդրում եմ, չը սխալվել իմ խօսքերի իմաստի մէջ,—շարունակեց երիտասարդը,—ես ամենևին նպատակ չունեմ ձեզ վիրաւորելու, այլ կարող եմ միայն բացատրել ձեզ իմ միտքը։ Իսկապէս, մի և նոյն բնական շարժառիթը զուգաւորում է միմեանց հետ որպէս անասուններին, այնպէս էլ մարդիկներին, բայց վերջինները անձնատուր չեն լինում նրան առանց ընտրութեան։ Այդ դէպքում, գործը չէ վերաբերում միայն մեզ և մեր ուրախութիւններին, այլ մեր սերունդին և մի նոր կեանքի տնկարկութեանը, որովհետև աշխարհի ստեղծագործութիւնը անդադար կերպով շարունակվում է։ Տղամարդը և կինը բնազդմամբ որոնում են միմեանց մէջ այն յատկութիւնները, որը իրանք ևս չունեն և որը նրանք ամեն բանից աւելի բարձր են գնահատում ու յարգում մինը միւսի մէջ, իսկ որքան աւելի զարգացած է լինում մարդու մէջ բանականութիւնը, այնքան աւելի նա պահանջող է լինում և այնքան աւելի դժուարանում է նա իր ընտրողութեան մէջ։ Դրանով բացատրվում է, թէ ինչու ճշմարիտ սէրը, որը ծագում է բնական ուժգին շարժառիթներից կամ մագնիսական ձգողումից, չէ կարող

երկարատև լինել, եթէ դրա հետ կապված չէ և փոխադարձ յարգանք սիրող էակների մէջ։ Եթէ ես չափը անցայ իմ դատողութեան մէջ, կարող էք նախատել ինձ։—Ես չեմ նախատում ձեզ,— մռայլված կերպով պատասխանեց Օլգան,—բայց ես հասկանում եմ, որ դուք չէք տածում դէպի ինձ այն զգացմունքը, ինչ որ կոչում էք անհրաժեշտ յարգանք։—Այո, ես չունեմ դէպի ձեզ այն լիակատար յարգանքը, որը կը ցանկանայի ունենալ դէպի մի կին, եթէ ես կը տայի նրան իմ բոլոր կեանքը և իմ հոգին։—Դուք արհամարհում էք ինձ,—զայրացած կերպով ձայն տուեց Օլգան, և նրա ծամերը շառաչմամբ տատանվեցան։—Ոչ, ես ափսոսում եմ ձեզ և անկեղծաբար ցաւակցում եմ ձեզ. ես ոչինչ չէի խնայի ձեր փրկութեան համար։—Ի՞նչու դուք արհամարհում էք ինձ,— կրկին աղաղակեց նա կապտացած և դողդոջուն շրթունքներով.—դուք այդ իրաւունքը չունէք, ես չեմ կամենում, որ դուք արհամարհէիք ինձ։ Ձեզ ինչ փոյթ իմ կարծիքի մասին,—ասաց Վլադիմիրը, —երբ որ ամբողջ աշխարհը երկրպագում է ձեզ։ —Ի՞նչու դուք արհամարհում էք ինձ։ Պատասխանեցէք, ես պահանջում եմ այդ,—խորին վրդովմունքով հարցրեց Օլգան և անզսպելի բարկութեամբ դրեց մէկ ոտը նրա աթոռի վրա։ Նրա աչքերում փայլեց ատելութիւն և արեան ծարաւը։—Լաւ, ուրեմն ականջ դրէք ինձ։ Բնու-

թիւնը պարգեւել է ձեզ հազուագիւտ գեղեցկութիւն, նշանաւոր խելք, փափուկ ու քնքոյշ սիրտ, և դուք ընդունակ էք ստրկացնելու տղամարդկերից ամենալաւին, բայց արդեօք բաւականանում էք դուք այդ բոլոր գերազանցութիւններով, —ո՛չ։ Դուք ամէն օր ցանկանում էք տօնել մի նոր յաղթութիւն և ամէն գիշեր կամենում էք հանգստանալ թարմ դափնիների վրա։ Ձեր սնափառութիւնը անսահման է, և այդ սնափառութիւնը, արծուի նման, կրծում է ձեր սիրտը, բայց այդ խեղճ փոքրիկ սիրտը չէ աճում, ինչպէս աճում էր յայտնի տիտանի սիրտը, և այդ պատճառով ձեզ սպասում է մի վախճան միայն, այն է՝ զզուանք դէպի կեանքը, ատելութիւն դէպի մարդիկ և արհամարհանք դէպի իր անձը։—Օլգան հեծութեան մէջ էր, նրա ատամները բաքախում էին, և, ձեռքերը մտցնելով իր ծամերի մէջ, բարձր ձայնով հեկեկում էր նա։ Այդ միջոցին նրա կրկնոցի օձիքը բացուեցաւ, և նա կանգնած էր Վլադիմիրի առջև, որպէս մի Մեդէա, ալեկոծեալ կուրծքով, մոլորված աչքերով և արձակված ծամերով։ Վլադիմիրը կանգնեց։ Օլգայի կուրծքից դուրս պրծաւ մի ցաւալի աղաղակ, և նա ցնցողապէս վեր բարձրացրեց իր փակված ձեռքերը։ Երիտասարդի դէմքը մռայլուեցաւ, և նա ուշադիր կերպով նայեց խեղճ կնոջ վրա, որի ձեռքերը այժմ թուլացան, ցած ընկան, և գլու-

խը խոնարհվեցաւ կուրծքի վրա։ Այդ վայրկեանում երիտասարդը անհետացաւ, իսկ Օլգան ընկած էր գորգի վրա և բարձր ձայնով հեկեկում էր։—Անցնում են օրեր, շաբաթներ և մի ամիս։ Վլադիմիրը չէ յայտնվում։ Նա իրան հեռու է պահում և Օլգայի ամուսնից։ Խեղճ կինը սարսափելի կերպով տանջվում է։ Այժմ նա իմանում էր, որ Վլադիմիրը սիրում է և մի և նոյն ժամանակ արհամարհում է իրան, և նրա կրքերը աւելի բորբոքվում են, թէ առաջին և թէ երկրորդ պատճառներից։ Օլգան նամակ է գրում նրան և յետոյ պատառոտում է իր նամակները. հրամայում է թամքել իր համար ձին, բայց չէ գնում նրա մօտ։ Ամբողջ ժամերով կանգնած է լինում նա խոհանոցում և նայում է բոցավառվող կրակի վրա։ Նրա ամբողջ էութեանը տիրում է մի բոլորովին նոր և երբէք չը փորձած զգացմունք։ Նա մշտապէս մտածում է նրա վրա։ Երբ, երեկոյեան վերջալուսի պահուն, նա նստած է լինում լուսամուտի մօտ, այդ ժամանակ նրան ամէն րոպէ այնպէս է թւում, որ լսում է նրա ձիու ոտնաձայնը, նրա քայլերը և նրա ձայնը։ Ամբողջ գիշերը նա իր անկողնի մէջ շուռումուռ է գալիս և քունը տանում է միայն առաւօտեան լուսաբացի ժամանակ։ Միայն այժմ հասկանում է նա բանաստեղծներին և մուզիկան։—Մթնեց։ Նա նստած է երգեհոնի հանդէպ, ածում է լուսնային

սոնատը, և նրա տխուր հնչիւնների հետ կամաց-կամաց հոսում են նրա արտասուքները։ Նրա ամուսինը, ուշիկ-ուշիկ մօտենալով, կանգնում է նրա աթոռի ետևում և գրկում է նրան։ Նա ոչինչ չէ հարցնում իր կնոջից, իսկ Օլգան իր գլուխը սեղմում է ամուսնի կուրծքի վրա և լուռ լաց է լինում։

Օլգայի ձայնը շշնջիւնի փոխվեցաւ։ Նա ամօթխածութեամբ երեսը շուռ տուեց ինձանից. Նրա բոլոր հոգին դողդողում էր մաքուր և անկեղծ սէրից։

—Ծննդեան ճրագալոյցի գիշերը,—նորից շարունակեց նա,—Օլգան իր ամուսնի հետ վերադառնում էին Տուլաւայից, ուր Միշէլը յանձնեց ինչ-որ թղթեր քահանայի տանը, և նրանք պէտք է անցնէին Վլադիմիրի կալուածական տան մօտից։ Խորին սարսափը տիրեց Օլգային, երբ նրա ամուսինը հրամայեց կանգնեցնել ձիաները դռների մօտ։—Մտնենք նրա մօտ և վեր առնենք նրան մեզ հետ,—ասաց Միշէլը։ Օլգան ոչինչ չը պատասխանեց։—Դու չես ուզում մտնել։—Օլգան բացասական կերպով շարժեց գլուխը։ Նրա ամուսինը միայնակ ներս մտաւ և շուտով վերադարձաւ Վլադիմիրի հետ, որը յարգանքով գլուխ տուեց Օլգային և յետոյ նստաւ նրանց հետ սահնակի մէջ։ Ճանապարհին ամենքն էլ լուռ էին։ Օլգան անշարժ նստած էր Վլադիմիրի կշտին և

մի անգամ միայն ցնցվեցաւ, երբ երիտասարդը պատահմամբ դիպաւ նրան։ Բակը մտնելու ժամանակ Վլադիմիրը մի առանձին ժպիտով նայեց դէպի ծանօթ տունը։ Միշէլը ցած բերեց Օլգային սահնակից, վեր առեց նրա հագից ծանր մուշտակը և մտնելով սենեակը, ուրախութեամբ ասաց.—ահա կունենանք փառաւոր ծննդեան գիշեր. գնում եմ տեսնելու, ինչ են շինում երեխաները։ —Նա դուրս եկաւ դահլիճից և թողեց Վլադիմիրին միայնակ իր կնոջ հետ։ Օլգան անփոյթ կերպով թեք ընկաւ բազկաթոռի մէջ, գլանակ էր ծխում և յանկարծ սկսեց սուր ձայնով ծիծաղել։—Ձեր հակակրութիւնը և արհամարհանքը մինչ այն աստիճան են հասնում, որ դուք չէք կարողանում ինձ հետ մի և նոյն ծածկի տակ մնալ,—ասաց Օլգան, դառնալով դէպի նա։—Դուք չէք կամենում հասկանալ ինձ,—սառնութեամբ պատասխանեց Վլադիմիրը։—Ա՛խ,—ձայն տուեց Օլգան,—դուք ընդունակ չէք հասկանալ, թէ ինչ է խորին զգացմունքը, եթէ ոչ, աւելի ներողամտութեամբ կը դատէիք իմ մասին։—Այս անգամ երիտասարդը զունաթափվեցաւ։—Դուք այսպէս էք կարծում,—հարցրեց նա փոքր ինչ անցնելուց յետոյ.—ուրեմն ականջ դրէք ինձ մի անգամ ևս։ Ես սիրում եմ ձեզ։—Օլգան մի կողմ ձգեց իր գլանակը և խռպոտ ձայնով սկսեց ծիծաղել։—Եւ դուք առաջին կլինն էք, որ ազդում էք իմ մէջ

սէր,—հանդարտ կերպով շարունակեց նա,—ես այնքան սաստիկ սիրում եմ ձեզ, որ տանջվում եմ իմ սէրից և տանջվում եմ ոչ թէ նրա համար, որ դուք չէք կարող պատկանել ինձ, բայց այն պատճառով, որ ես չեմ համարձակվի սիրել ձեզ։ Իմ սիրտը կտրատվում է, երբ մտածում եմ, որ մի այդպիսի ամենագեղեցիկ անձնաւորութիւն միացած է այնպիսի վատ բնաւորութեան հետ։—Օլգայի անհանգիստ շարժումը արտայայտում էր նրա նոյն րոպէի տանջանքը. նա երկչոտ և աղաչաւոր հայեացքով նայեց երիտասարդի վրա։—Այդպէս մի նայէք իմ վրա,—աղաղակեց նա,—ես գիտեմ, որ ձեզ ցաւ եմ պատճառում, և չեմ զգում դէպի ձեզ ոչ մի ցաւակցութիւն։ Դուք ինքներդ ունեցա՞ք ցաւակցութիւն դէպի երիտասարդ Բօղդանը, որին Ցաւալէի տիրապետողը ձեր պատճառով սպանեց հրացանով Թըղտենինների անտառում, Տուլաւայի մօտ։ Արդեօք խղճացիք դուք Դիմիտրի Լիտվինի վրա, երբ հասցրիք նրան մինչև խելագարութիւն և ինքնասպանութիւն։ Արդեօք մտածեցիք դուք ձեր ամուսնի և ձեր զաւակների վրա, խրախուսելով Ջաւատսկօի և դուքսի սիրահարութիւնները...—Ե՞րբ եմ արել ես այդ բոլորը,—աղաղակեց Օլգան, սարսափած կերպով վեր ցատկելով իր նըստած տեղից.—ո՞վ է ասել ձեզ այսպիսի բաներ։—Ամբողջ աշխարհը խօսում է այդ,—հեգնական

կերպով պատասխանեց Վլադիմիրը։—Ուրեմն, ամբողջ աշխարհը սուտ է խօսում և բամբասանք է անում իմ վրա,—տաքացած կերպով ասաց Օլգան, և հպարտ ինքնավստահութեամբ վեր բարձրացրեց իր գլուխը։ Նրա թշերը և աչքերը վառվում էին։—Ես ասում եմ ձեզ ճշմարիտը, Վլադիմիր, ես յանցաւոր չեմ այդ արեան մէջ, նրա ոչ մի կաթիլը չէ ընկել իմ վրա։—Մի՛ աշխատէք արդարանալ,—պատասխանեց երիտասարդը,—ես ձեզ չեմ հաւատում։—Օլգան ձգեց նրա վրա իր վշտացած և մի և նոյն ժամանակ քնքշութեամբ լի հայեացքը. նա լաց չեղաւ, այլ դանդաղ կերպով և գլուխը կորացրած գնաց իր սենեակը։ Վլադիմիրը հետևեց նրան։—Հիմա կը հաւատա՞ք այդ նամակներին,—ասաց Օլգան, դուրս հանելով իր գրասեղանից մի ծրար, որ կապած էր վարդագոյն ժապաւէնով։—Ձեր ամուսինը ամեն րոպէ կարող է վերադառնալ,—ասաց երիտասարդը։—Թող նա էլ գայ,—պատասխանեց Օլգան վստահ անմեղութեամբ,—ես չեմ կարող թոյլ տալ, որ նախատէին ինձ։ Ահա Լիտվինի նամակը, որ գըրված է նրա մահից երկու օր առաջ։ Արդեօք այդպէս կը գրէ մի մարդ, որը սիրոյ համար անձնասպանութիւն է գործում։—Օլգան արհամարհանքով ձգեց նամակը դէպի երիտասարդը։ Վլադիմիրը բաց արաւ նամակը և տենդային յուզմունքով սկսեց կարդալ։—Ահա Բօղդանի նամակները, կար-

դացէ.ք: Արդեօք նման են դրանք սիրականի նամակների, որը մի կնոջ համար կռւում է մենամարտութեան մէջ: Լիովինը անձնասպանութիւն գործեց նրա համար, որովհետև նրա պարտքերը աւելի շատ էին, քան թէ կարժէին նրա կալուածքները, իսկ Բօղդանը մենամարտութիւն ունեցաւ Ցաւալէի իշխանի հետ մի վիճաբանութեան պատճառով, որ ունեցել էին թղթախաղի ժամանակ: Ահա Զաւադսկօի և դուքս Մնիշեկի նամակները և բոլոր իմ, այսպէս կոչված, պաշտօղների նամակները: Միթէ այսպէս կը գրեն տղամարդիկը մի կնոջ, եթէ նա նուիրած լինէր նրանց իր բարի յօժարութիւնը: Ես խոստովանվում եմ, որ ես հաճոյամոլ եմ, բայց ես վատ և ընկած կին չեմ: Հէնց նրա համար, որ ես ախորժելի եմ թըւում տղամարդերին, կանայ.ք բամբասում են ինձ և բարձում են իմ վրա ամեն տեսակ մեղադրանքներ, ինչ որ կարողանում են հնարել: Ես մեղաւոր եմ, բայց ոչ այնպէս, որպէս դուք կարծում էք: Ես երբէ.ք չեմ մեղանչել ամուսնական հաւատարմութեան դէմ:—Նա երեսը դարձրեց դէպի փայտեայ խաչելութիւնը, որ քարշ էր ընկած նրա մահճակալի վրա, բայց կանգ առեց:—Ոչ,—ձայն տուեց նա,—աւելի լաւ է, որ ես երդվեմ իմ զաւակներով: Այժմ դուք բոլորը գիտէ.ք, այժմ նախատեցէք ինձ:—Վլադիմիրը դեռ շարունակում էր նայել նամակների վրա:—Ես անիրաւացի կեր-

պով դատապարտեցի ձեզ,—ասաց նա, և նրա ձայնը դողդողում էր սրտի ալեկոծութիւնից,—ներեցէ.ք ինձ, եթէ կարող է.ք:—Երիտասարդը չափը անցել էր և այժմ կանգնած էր նրա առջև, կորած, մոլորված, անօգնականի նման:—Մի ծաղրէ.ք ինձ,—ասաց Օլգան, որի հայեացքը արտայայտում էր այժմ մի անվստահ ու տխուր քընքշութիւն,—ես իսկապէս յանցաւոր եմ, որովհետև ես զգում եմ, որ կորչելու վրա եմ: Մինչև այժմ ես այնպիսի կին չէի, որպէս դուք համարում էիք ինձ, իսկ հիմա ես ամեն մի րոպէ կարող եմ դառնալ այնպիսի կին: Զունենալով ոչ մի նեցուկ, ես անպատճառ պէտք է ընկնեմ: Ես չը գիտէի, թէ ինչ նշանակութիւն ունի տղամարդը, թէ ինչ արժէ.ք ունի նրա սէրը, բայց այժմ զգում եմ, որ կնոջ կեանքում դա—ամեն ինչ է: Ինձ մնում է կամ ընկնել, կամ յուսահատութիւնից մեռնել: Դուք միայն կարող է.ք ազատել ինձ. հիմա մերժեցէ.ք ինձ ձեզանից:—Վլադիմիրը մէկ ձեռքը դրեց սրտի վրա, միւսով չփեց իր ճակատը: Օլգան ընկաւ նրա գիրկը, և յուսահատութեան բոլոր ուժով գրկեց նրա պարանոցը, սկսեց հեկեկալ: Երկաթեայ մարդը լաց եղաւ, ողջագուրեց խեղճ կնոջը և, յաղթահարված նրա կրքերից, հանգաւ նրա շրթունքների վրա: Բոլորը անհետացաւ նրանց աչքերից, նրանք միայն զգում էին, որ իրանց սրտերը բաբախում են մինը միւսի մօտ, տանջանքներով

վի երանութեան մէջ։ Մերձակայ սենեակում լսելի եղան քայլերի ձայներ. նա բաց թողեց Օլգային և մօտեցաւ լուսամուտին։ Օլգան, ոչ կենդանի և ոչ մեռած, յենվեցաւ իր գրասեղանի վրա։ Նրա ամուսինը ներս մտաւ և երկուսի վրա ես ձգեց իր քննական հայացքը, և յետոյ յայտնեց, որ ճրագալոյցի սեղանը պատրաստ է։ Նա ոչ մի նկատողութիւն չարեց, բայց ամբողջ գիշերը լուռ էր և վատ տրամադրութեան մէջ։ Իսկ Օլգան, ընդհակառակն, խմում էր մի բաժակ միւսի ետեւից և կատաղի կերպով թռչկոտում էր իր երեխաների հետ. յետոյ վառեց եղևնիկը *) և կանչեց սպասաւորներին, որից յետոյ ներս մտան երկու ծննդեան երգիչներ։ Նրանցից մէկն էր պատկառելի ծերունի սպիտակ մօրուքով, միւսը՝ մի պատանի չարաճճի աչքերով։ Նրանք երգեցին մեր հին, սքանչելի ծննդեան երգերը, որոնք կամ լի էին տրտմութեամբ ու ինքնաուրացութեամբ, կամ խորիմաստ ու բարեսրտական էին, և երբեմն ուրախ էին ու մոլեգին, որպէս մեր ժողովրդի բնաւորութիւնը։ Բոլորը ձայնակից էին լինում նրանց երգեցողութեանը։ Երբ որ նրանք երգեցին այն մասին, թէ ով ծնվեցաւ մսուրի մէջ, կամ որպէս երկիւղածութեամբ փառաբանում էին նը-

*) Եղևնի թարմ ճիւղ, որ զարդարում են մոմերով և զանազան քաղցրաւենիքով ծննդեան ճրագալոյցի գիշերը։

րան հովիւները, որոնք տեսնում էին նրա մէջ աշխարհի լոյսը և փրկութիւնը մահից ու մեղքից, —այդ ժամանակ Օլգայի ձայնը կորվեցաւ երանելի արտասուքներից։ Նա հեզութեամբ ծալեց ձեռքերը և նայեց նրա վրա, որին արդէն տուել էր իր սիրտը։

—Հետևեալ առաւօտը Օլգային այնպէս էր թւում, թէ ամբողջ աշխարհը փոխվել էր այն գիշերվայ մէջ։ Նա երեխայի նման ուրախանում էր արեգակի ճառագայթներով, որ խաղում էին նրա ջնարանի գորգի վրա, ուրախանում էր ձիւնով, որ այնքան պայծառ կերպով փայլում էր այգիում և դաշտերի վրա, մինչև անգամ ագռաւները, որոնք ուրախ թռչկոտում էին սպիտակ, սառած հողակոյտերի վրա, այնպէս փայլում էին, կարծես թէ, նրանք լուացվել ու մաքրվել էին տօնի համար, իսկ Օլգայի սեպհական սիրտը զգում էր մի առանձին ախորժելի վրդովմունք։ Տօնի երկրորդ օրը Միշէլը գնաց իր հարևանի մօտ, որը մի մալօրոսիացի ազնուական էր և որի մօտ պէտք է հաւաքվէին շատ անձինք նրա կուսակցութիւնից։ Վլադիմիրը գիտէր, որ նա տանը չի լինի։ Հազիւ թէ սկսել էր երեկոյեան մութը պատել, այդ միջոցին նրա սահնակի զանգակը լսելի եղաւ բակում։ Օլգան վազեց նրա առաջը, բայց յանկարծ կանգ առեց և, ամօթխածութեամբ աչքերը ցած թողնելով, ձեռք տուեց նրան։ Վլադիմիրը մեծ

փափագով սեղմեց նրա ձեռքը և իր սիրած կնոջը, որը դողում էր այդ րոպէում, տարաւ փոքրիկ դիւանի վրա, ուր նստեցին միմեանց մօտ։ Օլգայի բոլոր գոյութեան և ձևերի մէջ նշմարւում էր համարեա մի առանձին կուսական ողջախոհութիւն, երբ նա ամօթխածութեամբ և նազելի կերպով դրեց իր գլուխը նրա ուսի վրա։ Այդ րոպէում Օլգան ոչինչ բանի վրա չէր մտածում, ոչ իր մասին և ոչ նրա մասին, նա միայն կպաւ նրա կուրծքին և երջանիկ էր։—Դուք սպասում էիք ինձ,—անվճռական կերպով հարցրեց Վլադիմիրը։ Նա, չը փոխելով իր դրութիւնը, գլխի շարժումով պատասխանեց այո, յետոյ վեր առեց նրա ձեռքը և փաթաթեց իր մէջքին։—Դուք, շատ կարելի է, հասկանում էք, թէ ինչու համար եկայ ես,—դարձեալ ասաց երիտասարդը։—Ի՞նչ հասկանալու բան կայ այստեղ,—պարզմտութեամբ պատասխանեց Օլգան, —ես սիրում եմ ձեզ, և դրանից աւելի ուրիշ բանի վրա չեմ մտածում։—Իսկ խիղճը չէ՞ ասում ձեզ, որ մենք չենք կարող անհաշիւ կերպով հրապուրուել մեր սիրով,—հարցրեց նա խուլ ձայնով։—Դուք գիտէք, որ ես խիղճ չունեմ,—պատասխանեց Օլգան, և մի գեղեցիկ չարաճճի ժպիտ խաղաց նրա ամբողջ դէմքի վրա։ Բայց ինչ որ վերաբերում է ինձ, այժմ իմ գլխի ջերմութիւնը անցել է,—շարունակեց Վլադիմիրը,

—և ես պատուաւոր կերպով կշռեցի մեր դրութիւնը։ Բոլորը այժմ կախված է ձեզանից։ Ես դրա համար էլ եկայ, որ խորհրդակցեմ ձեզ հետ. մենք պէտք է քննենք այն, ինչոր սպասում է մեզ ապագայում։—Ի՞նչեր էք դուրս տալիս,—պատասխանեց Օլգան,—ես սիրում եմ ձեզ աւելի քան ամեն բան այս աշխարհում և ուրիշ ոչինչ գիտենալ չեմ ցանկանում։—Օլգա՛,—վախեցած կերպով ձայն տուեց նա։—Ի՞նչ է,—(նա վեր կացաւ)—չը լինի թէ կամենում էք ասել ինձ, որ դուք հրապուրվեցաք մի վայրկեանով, որ դուք խաբվեցաք և որ այլ ևս չէք սիրում ինձ։ Ես այնքան սիրում եմ ձեզ, եթէ դուք միայն գիտենայիք, թէ ո՛րքան եմ սիրում... ոչ, դուք չէք կարող հասկանալ այդ,—ասաց երիտասարդը սրտաշարժ անկեղծութեամբ,—և ահա հէնց միայն այդ սիրոյ պատճառով ես մտածում եմ ձեր բախտաւորութեան համար։ Դուք չէք կարող բախտաւոր լինել, եթէ մեր հանգամանքները չը փոխվեն։ Մի՞թէ այդ սէրը, որ բարձրացնում է մեզ գերիվեր քան աշխարհի սովորական շահերը, մի՞թէ դա պիտի դարձեալ գլորէ ձեզ այն տիղմի մէջ, որի մէջ ես չէի կարողանում տեսնել ձեզ առանց սրտացաւութեան։ Եթէ մինչև այժմ դուք բախտաւոր չէք եղել, բայց և չէք վատնել ձեր պատիւը, և չէք դաւաճանել ձեր պարտաւորութեանը։ Մի՞թէ ինձ վիճակված է սովորեցնել ձեզ մեղսագործու-

թեան, կեղծաւորութեան և խաբէութեան։ Եւ ինչպէս կը պահպանէք դուք ձեր հոգեկան խաղաղութիւնը, երբ դուք միշտ ստիպված կը լինէք խաղալ երկդիմի դեր՝ ցոյց տալ մէկ դէմքը ձեր ամուսնին, իսկ միւսը սիրականին, և վերջապէս չը հասկանալ, թէ որը նրանցից խաբում է ձեզ։ Ես այդ չեմ ցանկանում։ Ես չեմ ցանկանում տեսնել ձեր անկումը, ընդհակառակըն, ես յոյս ունեմ մաքրել ձեր սիրտը, բժշկել նրան դատարկ սնափառութիւնից, ազատել, և ոչ թէ փչացնել ձեզ։ Օլգա, թանգագին Օլգա, հաւատա ինձ, ես չեմ կարող անել այն, ինչ որ ուրիշները չէին նեղվի կատարելու համար։ Ա՛խ, ինչու ես չեմ կարող ասել ձեզ՝ եղիր իմ կինը։ Մենք ընդունում ենք ամուսնութեան խորհուրդը, և ես մեծ անազնւութիւն եմ համարում գողանալ կնոջը ամուսնի տանից, և մանաւանդ քո ամուսնի։ Ես սիրում եմ և յարգում եմ նրան, իսկ բաժանել քեզ նրանից—ես չեմ կարող։ Ես կարող եմ հրաժարվել քեզանից, բայց ես չեմ վստահանայ կոչել քեզ իմ կինը, որովհետև գիտեմ, որ դու ամուսին ունես։ Ես անզօր եմ հաշտվել այն մտքի հետ, թէ իմ սիրած կինը գտնվում է ուրիշի գրկում։—Օլգան աչքերը լայն բացարած, լսում էր նրան։—Ի՞նչ է քո ցանկութիւնը,—ես չեմ հասկանում քո միտքը. ախար նա իմ ամուսինն է և ունի սուրբ իրաւունք իմ

վրա։—Եթէ նրա իրաւունքը սուրբ է,—խստութեամբ պատասխանեց Վլադիմիրը,—ուրեմն մենք եղեռնագործութիւն չենք գործում դէպի նա, մանաւանդ ես ինքս։—Վլադիմի՛ր։—Օլգան սրտի խորին ցաւով արտասանեց նրա անունը և քարշ ընկաւ նրա պարանոցից։—Ի՞նչ ես կամենում, որ անեմ ես, ասա, ես կը կատարեմ բոլորը, ինչ որ դու ցանկանում ես։—Ես ցանկանում եմ, որ մենք երկուսս էլ մնայինք պատուաւոր և պատուաւոր կերպով գործէինք,—պատասխանեց նա,—աւելի ոչինչ պէտք չէ ինձ։ Սիրում ես դու ինձ։—Օլգան սրտաբորբոք կերպով սեղմեց իր վառվող շրթունքները նրա շրթունքների վրա և կամաց շշնջաց. ես միայն այժմ իմանում եմ, թէ ինչ է նշանակում սէրը. ես չեմ կարող ապրել առանց քեզ, առանց քո աչքերի, առանց քո ձայնի, համբուրիր ինձ...—Այդ բաւական չէ,—ասաց երիտասարդը, հեզութեամբ ազատվելով նրա ձեռքից,—ամենից առաջ ես պահանջում եմ քեզանից ճշմարտութիւն։—Նա վերկացաւ, սկսեց անց ու դարձ անել սենեակի մէջ։—Եթէ քո կեանքը կախված է իմից, եթէ դու զգում ես մի և նոյնը, ինչ որ ես եմ զգում, ուրեմն բացարձակ ու պատուաւոր կերպով, բոլոր աշխարհի առջև բաժանվիր քո ամուսնի հետ։ Օլգան սոսկաց։—Ոչ, չեմ կարող,—քրթմնջաց նա,—ես ափսոսում եմ իմ խեղճ զաւակներիս և Միշէլին, —ախար նա սիրում է ինձ, և ինչ կը մտածէին

մարդիկ... ոչ, իմ պատիւը թոյլ չի տայ այդ անել...—Վլադիմիրը մօտեցաւ և հեզութեամբ գրկեց նրան։—Ես չեմ հարկադրում քեզ,—փափկութեամբ ասաց նա,—ես չեմ պահանջում, որ դու իմը դառնայիր, ուրեմն այսուհետև կատարիր քո պարտքը և յաղթիր այն զգացմունքին, որ ունես դէպի ինձ։—Վլադիմիր,—բացականչեց Օլգան, երկիւղից գունաթափուելով և անշարժ մնալով,—դու կամենում ես թողնել ինձ։—Նա ծնկների վրա խոնարհուեցաւ երիտասարդի առջև և, հեկեկալով, իր գլուխը սեղմեց նրա ոտների վրա։—Մի՛ ձգիր ինձ, ի սէր Աստուծոյ, մի ձգիր։ Ես կը մեռնեմ առանց քեզ... ես թող չեմ տայ քեզ...—Վլադիմիրը աշխատեց վեր բարձրացնել նրան, բայց նա ձեռքերով աւելի պինդ կերպով գրկեց նրա ոտները և թանում էր իր արտասուքներով։—Ես միշտ պիտի սիրեմ քեզ, միայն քեզ,—տխրութեամբ պատասխանեց նա,—իւրաքանչիւր օր պիտի գամ քեզ մօտ։ Մենք միասին կուսումնասիրենք բանաստեղծներին, կուսումնասիրենք առաջին ժամանակների պատմութիւնը, կուսումնասիրենք ծաղիկները, անասունները և աստղները։ Ես կը սիրեմ քո դաւակներին և քո ամուսնին։

—Նա մօտեցրեց Օլգային և համբուրեց նրա գլուխը։—Եթէ դու յօժարւում ես յանձնել ինձ նրա ձեռքը, այդ նշանակում է, որ չես սիրում ինձ,—խօսեց Օլգան։—Բայց մի՞թէ ես քեզ չեմ

յանձնում նրան, եթէ դու կը լինես իմ սիրուհին և կը մնաս որպէս նրա ամուսին,—դառնութեամբ հարցրեց Վլադիմիրը։—Օլգան լուռ էր։—Մեզ անհրաժեշտ է հրաժարուել մեր կրքերից, նորից ասաց երիտասարդը։—Ես չեմ կարող,—պատասխանեց Օլգան։—Մենք պէտք է այնպէս վարվենք, որպէս ասեցի. ես թոյլ չեմ տայ, որ դու կորցնես քեզ,—կամաց ասաց երիտասարդը,—դու հիմա գիտես, թէ ինչ բանից պէտք է հրաժարվես, և ինչ բանից ոչ։—Ես գիտեմ միայն մի բան, որ դու պէտք է ինձ պատկանես։—Ցոյց տուր քո բնաւորութեան զօրութիւնը և յաղթիր քո կրքերին,—խստութեամբ ասաց Վլադիմիրը,—ես պէտք է թողնեմ քեզ։—Վլադիմի՛ր։—Ես պէտք է գնամ։ Ես քեզ չեմ չտապեցնում պատասխանի վերաբերութեամբ, փորձիր ինքդ քեզ և երբ որ կը հասնես մի օր և իսկէ վճռականութեան, այն ժամանակ գրիր ինձ,—այսպէս աւելի հեշտ կը լինի քեզ համար։ Նրանից յետոյ ես առաջվայ նման կը շարունակեմ այցելել ձեզ մօտ, որպէս մի հանգիստ և անկեղծ բարեկամ, առանց տրտունջի և առանց յոյսի։—Նա ձեռք տուեց Օլգային։

—Դու թողնում ես ինձ և մինչև անգամ չես կամենում համբուրել ինձ,—աղաղակեց Օլգան և, չը սպասելով նրա պատասխանին, ընկաւ նրա պարանոցի վրա, գրկեց իր ձեռքերով և այնպէս պինդ կերպով համբուրեց նրա շրթունքները, որ փոքր

էր հնում արիւնը դուրս ցայտէր: Հիմա գնա,— կցկտուր ձայնով ասաց նա, իր գլխալները ուղղելով,—գնա, բայց այժմ դու հազիւ կարող ես գնալ, դու իսկապէս շատ տկար ես:—Իրաւ որ տկար եմ, ասաց Վլադիմիրը, և ձեռքերով ամուր կերպով բռնեց նրան, և արտասուքը վազեց նրա աչքերից:—Դրա համար էլ ինձ աւելի անհրաժեշտ է շուտով թողնել քեզ: Նա բաց թողեց Օլգային և շտապով դուրս եկաւ սենեակից: Սանդուխի միջից նա մի անգամ ևս նայեց դէպի հետ: Օլգան կանգնած էր պատշգամբում և շարժում էր դէպի նա իր թաշկինակը: Հետևեալ օրերում ի զուր սպասում էր նրան Օլգան: Հասաւ նոր տարւայ օրը, նա պէտք է գար, բայց չեկաւ, այլ իր ծառայի ձեռքով ուղարկեց իր այցետոմսը: Օլգան փակվեցաւ իր սենեակում և ընկղմվեցաւ խորին մտածմունքների մէջ, բայց նա ոչ մի վճռականութեան չը հասաւ: Աշխարհային բոլոր ոչնչութիւնը, բոլոր տարակուսանքները և տանջանքները խորտակվեցան նրա խեղճ սրտի վրա: Նա ի զուր աշխատում էր իրան հաշիւ տալ իր սեպհական ցանկութիւնների մասին, նա ինքը չէր հասկանում, թէ ինչ էր կամենում, և, վերջապէս դադարեց մտածելուց և անձնատուր եղաւ իր սըրտի փոթորկալից ալիքների կամքին: Ամեն ինչ չքանում է նրա առջև, և նա նշմարում է միայն մի ինչ-որ աղօտ, անորոշ և անսահման բախ-

տաւորութիւն: Հետևեալ առաւօտը նա շտապեց հագնել իր հողաթափները և նստաւ գրասեղանի հանդէպ: Նա չէր հասկանում, թէ ինչ էր գրում, նա միայն ցանկանում էր, որ նա գար: Տրտմութիւնը նրա մասին ուտում էր նրա սիրտը: Նա ուղարկում է նրա մօտ մի ձիաւոր, հրամայում է շուտով գալ, բայց ձիաւորը վերադառնում է առանց պատասխանի, և Վլադիմիրը չէ գալիս: Վլադիմիրը նստած է հնացած բազկաթոռի մէջ, իր առանձնասենեակի լուսամուտի մօտ. Նրա առջև տարածված են ձմեռնային տխուր դաշտավայրերը, և նա կարդում է Գեօթէի Ֆաուստը, որը կոչում է իր բիբլիան, որովհետև ոչ մի տեղ չէ գտնում նա այն ուրախութիւնը ու այն կազդուրումը, որպէս այդ գրքի մէջ: Իր հայրենական գրականութեան մէջ չը կայ այնպիսի չարագրութիւն, որը նրա հոգուն մօտ լինէր:

«Դու խոստովանվում ես քո մէջ միայն մէկ ձգտում, ուրեմն մի աշխատիր հանաչել մի այլը: իսկ իմ կուրծքի մէջ չէ որ երկու հոգի կայ»...

—Առաջին անգամ վերջին տողը հասկանալի է լինում նրան: Մթնում է. նա խորասուզվում է իր բազկաթոռի մէջ, աչքերը խփում է, և սքանչելի երգը դեռ ևս հնչում է նրա սրտում: Լսելի է լինում թեթև սօսափիւն: Մէկը անլսելի ձայնով մտաւ սենեակը: Կատուն չէ արդեօք: Վլադիմիրը ձանձրանում է տեղից շարժվել: Բայց ահա լսվում

է մեղմ և քաղցրահնչիւն ծիծաղ: Վլադիմիրը նա-
յում է իր շուրջը և տեսնում է իր առջև Օլգային,
որը արագութեամբ հանում է իր մուշտակը և
ձգում է ուղիղ նրա վրա: Նա պատրաստվում է
վերկենալ, բայց Օլգան արդէն չոքեց ծնկների
վրա, գրկեց նրան և սկսեց իր համբոյրներով ծած-
կել նրա երեսը:—Աստուած իմ: Այդ ինչ ես ա-
նում: Ո՛րպիսի վտանգի ես ենթարկում քեզ,—
սարսափելով աղաղակեց Վլադիմիրը.—վեր կաց
և այս րոպէիս գնա՛, հէնց այս րոպէիս, խնդրում
եմ քեզ:—Ես տեղից չեմ շարժվի,—պատասխանեց
Օլգան,—ես ոչինչից չեմ վախենում, քանի որ քո
մօտ եմ գտնվում:—Եւ նա աւելի պինդ կեր-
պով կպաւ երիտասարդին և յամառութեամբ
դրեց իր գլուխը նրա ծնկների վրա:—Օլ-
գա, սիրելի՛ Օլգա: Ես մեռնում եմ երկիւղից
քո համար, աղաչում եմ, հեռացիր այստեղից,—
խնդրում էր Վլադիմիրը:—Այդ դու միայն կարող
էիր հեռանալ ինձանից, իսկ ես չեմ գնայ այս-
տեղից և կը մնամ, մինչև մութը կը պատէ: Ես
քեզ աւելին կասեմ—ես ամեն օր պիտի գամ
քեզ մօտ:—Աստուա՛ծ մի արասցէ,—աղաղակեց
երիտասարդը:—Անպատճառ պիտի գամ,—վճռա-
կան կերպով կրկնեց Օլգան: Վլադիմիրը երկար
նայում էր նրա վրա, կարծես թէ, ցանկանում էր
թափանցել նրա հոգու մէջ. նա այլ ևս չէր հաս-
կանում նրան, որովհետև Օլգան այժմ առաջվայ

ամօթխած, երկչոտ և առանց բնաւորութեան կի-
նը չէր: Երիտասարդի գլուխը սկսեց վառվել:—Ե-
թէ դու վճռել ես իմ վիճակը, ուրեմն յայտնիր,
—վրդովմունքով հարցրեց նա:—Օլգան ձայն չը
հանեց:—Այո՛, խնդրում եմ քեզ, մի լռիր:—Օլ-
գան զգաց, թէ ինչպէս դողում էր նա ամբողջ
մարմնով:—Ես անկարող եմ ընտրութիւն անել
քո և իմ զաւակների մէջ,—պատասխանեց Օլգան,
չը վստահանալով նայել նրա վրա.—մի տանջիր
ինձ, ես խնդրում եմ քեզանից միայն այն, ինչ
որ ինքս տալիս եմ քեզ՝ սէր, և աւելի ոչինչ:—
Բայց հէնց քո օգտի համար ես պահանջում եմ
քեզանից աւելի որոշ պատասխան: Օլգա, թանգա-
գին Օլգա, պատասխան տուր,—խնդրում էր Վլադի-
միրը խորտակված սրտով:—Ես չեմ կամենում պա-
տասխանել քեզ,—ասաց Օլգան:—Հարցը վերաբե-
րում է քեզ, քո բախտաւորութեանը, քո խղճին և քո
հոգեկան հանգստութեանը,—շարունակեց Վլադի-
միրը:—Հարցը վերաբերում է քեզ,—բորբոքված կեր-
պով ձայն տուեց Օլգան,—քո եսականութեանը, քո
փքված պատուասիրութեանը և քո թանգագին
կանոններին: Մի՞թէ ես արժանի չեմ զոհ լինելու,
երբ ես ամեն ինչ զոհում եմ քեզ համար...—Վը-
լադիմիրը զայրացաւ: Օլգայի սամոյրի մուշտակը
ընկաւ յատակի վրա: Նա վերկացաւ, յենվեցաւ
երիտասարդի բազկաթոռի թիկունքին և նայում
էր իր համար այնքան թանգագին մարդու վրա

և մինչդեռ նա անցուդարձ էր անում սենեակի մէջ, ինքը անբացատրելի ու սարսափելի կերպով տանջվում էր։—Իմ այցելութիւնը բաւական մեծ ապացոյց է, որ դու համոզվես, թէ քո համար ես չեմ վախենում կորցնել բոլորը, ինչ որ իմն եմ համարում—պատիւ, ամուսին և զաւակներ։—Ես այդ չեմ կամենում,—քթի տակից ասաց Վլադիմիրը։—Էլ ինչ ես ուզում դու,—հարցրեց Օլգան մօտենալով նրան,—ես կամենում եմ քեզ պատկանել, լինել քո կինը։—Միթէ դու ուրիշի կինը չես,—սառն և սուր կերպով ասաց Վլադիմիրը։ Նրա դէմքի վրա երևաց ոչ թէ մարդկային, այլ դիւական ծաղրածութիւն, որը Օլգայի մէջ սոսկում էր ազդում։ Բայց այս անգամ նա զզուանքով համբերեց նրա հայեացքին և կիսախուփ աչքերով ու սառնասրտութեամբ ասաց. տուր ինձ իմ մուշտակը։—Վլադիմիրը լռութեամբ հագցրեց նրան մուշտակը։ Օլգան մի քանի քայլ արեց և կանգ առեց։ Այդ րոպէում նրա մէջ բորբոքվում էր սարսափելի, դիւական ատելութիւն դէպի այն մարդը, որը այնպէս հաստատ և հանդարտ կանգնած էր նրա առջև։ Ոչ, թէ այսպէս և թէ այնպէս, Օլգան պէտք է լինի աղբիւրը թէ նրա չարչարանքների և թէ երջանկութեան. նա պէտք է տխրութիւնից հալումաշ լինի Օլգայի համար, և, վերջապէս, նա պէտք է դողայ Օլգայի առջև։ Անտանելի է նրա համար այն միտքը, որ նա հր-

րաժարվում է տիրապետել իրան սիրող և իր սիրած կնոջը։ Եթէ Օլգայի կրքերը չեն կլանի նրա բոլոր տարակուսանքները, նրա բոլոր բարոյական համոզմունքները, ուրեմն, երիտասարդը կամ չէ սիրում նրան, կամ սիրում է ոչ այնպէս, որպէս կը ցանկանար Օլգայի հպարտ սիրտը։ Նա զգում էր, որ պէտք է անձնատուր լինի նրան, այն մտքով, որպէս զի կարողանայ տիրապետել նրան, իբրև իր սեպհականութիւն, և այն ժամանակ ոչ ոքին չի տալ նրան։ Նա ոտքով զարկում է գետնին և ասում է կցկտուր ու սուր ձայնով. ես այստեղից չեմ գնայ։—Այդ րոպէում մի չար ծիծաղ ցնցում է նրա շրթունքները, նա նստում է բազկաթոռի մէջ և իր վրայից մի կողմ է ձըգում մուշտակը։—Ներիր ինձ,—սկսում է Վլադիմիրը,—ես վիրաւորեցի քեզ և ափսոսում եմ այդ մասին, անկեղծ ափսոսում եմ։ Լսում ես արդեօք ինձ, Օլգա, սիրելի Օլգա։ Այժմ իմ համոզմունքները քեզ յայտնի են։ Դու սիրում՛ ես ինձ և չես կարողանում յաղթել քո զգացմունքին. ես ինքս խոստովանվում եմ, որ այդ յաղթութիւնը բարձր է քո ուժերից։ Խնդրում եմ քեզ, վճռիր ամբողջապէս պատկանել նրան, ումը որ սիրում ես դու. թող տուր քո տունը, որի խաղաղութիւնը մշտապէս խանգարված է. եղիր իմ կինը. ես իմ ձեռքերի վրա կը պահեմ քեզ, կը լինեմ քո պաշտպանը աշխարհային խիստ կեանքի մէջ և

կը սկսեմ ապրել միմիայն քո համար։—Միթէ ես չեմ կամենում պատկանել քեզ, կատարելապէս քեզ պատկանել,—բացականչեց Օլգան ֆանատիկոսի անձնանուիրութեամբ, լայն բացանելով աչքերը և հանդարտ կերպով նայելով նրա վրա։ Վլադիմիրը գլուխը շարժեց, նստեց իր հին, պատառոտած դիւանի վրա և իր հայեացքը դարձրեց դէպի գետինը։—Դու սկսում ես տարակուսիլ,—ասաց Օլգան,—և ինքդ տեսնում ես, որ անկարող ես փոխել իմ համոզմունքը, բայց ես կարող եմ փոխել քոնը։

—Նրա դէմքը ներկվեցաւ խիստ քնքոյշ կարմրութեամբ. Նա արագութեամբ վեր կացաւ, մօտեցաւ դռանը, կողպեց դուռը և նետվեցաւ երիտասարդի առջև յատակի վրա։—Օլգա, այդ ինչ մտածմունք է...—Եկ ինձ մօտ,—ասաց նա,—բայց ո՛րպէս դողում ես դու։ Եկ, մի վախիր ինձանից...—Օլգան քնքշութեամբ սեղմվեցաւ նրա վրա։—Ես իսկապէս սկսում եմ վախենալ քեզանից,—ասաց երիտասարդը տենդային դրութեան մէջ,—խղճա ինձ վրա և թող տուր ինձ։—Ես այնպէս խղճում եմ քո վրա, որ չեմ գնայ այստեղից,—ծիծաղելով պատասխանեց Օլգան,—այո՛, դու հիմա կորած ես։—Նրա բիբերը լայնացան, պնչերը դողդողում էին, և երբ նա ախտաբորբոք կերպով գրկեց երիտասարդին և սկսեց համբուրել, այդ միջոցին երևան հանեց իր ատամները, իսկ և իսկ մի վայելչագեղ կատաղի գազանի նման, իր բոլոր անզուսպ խստասրտութեամբ։—Դու կը խեղդես ինձ քո համբոյրներով,—մրմնջաց Վլադիմիրը,—քո ճանկերի մէջ մարդու հոգին մոմի նման հալվում է։—Բայց գեղեցիկ դևը չը բաւականացաւ միայն նրա հոգով։—Ես կամենում եմ, որ քո խելքն ևս հալվէր,—շշնջաց Օլգան,—միայն այն ժամանակ մենք հաւասար կը լինենք։—Եւ նա կրկին սկսեց համբուրել նրան իր ջերմ շրթունքներով և հասցրեց նրան խելագարութեան։ Նա մօտ քարշեց Օլգային և մատներով սկսեց անգիտակցաբար փայփայել նրա ծամերը։—Մի նայիր իմ վրա,—հազիւ լսելի ձայնով ասաց խեղճ կինը... Եւ վերջապէս, հասաւ այն րոպէն, երբ ամեն ինչ մոռացվեցաւ, թէ տարակուսանքներ, թէ տանջանքներ և թէ համոզմունքներ։ Նա այժմ պատկանում էր Օլգային... Երբ ընկճված գտնվում էր նա սիրած կնոջ գրկում, և յետոյ ծնկների վրա խոնարհված աղաչանքներ էր անում, այդ ժամանակ մի կարճ, յաղթական ծիծաղ դուրս պրծաւ Օլգայի շրթունքից։—Վլադիմիր,—ասաց նա,—դու արհամարհում էիր, ի բաց էիր մերժում ինձ, իսկ այժմ ընկած ես իմ ոտներին մօտ, և եթէ ես կամենայի...—Ես վիրաւորեցի, վշտացրի քեզ,—կամաց ասաց նա,—այժմ դու իրաւունք ունես ոտնակոխ անել ինձ։—Ո՛րպիսի փառասիրութիւն,—զուարճութեամբ ձայն տուեց Օլգան, և ինքդ մտածիր, ինչ ուրախութիւն կը

պատճառէ դա ինձ։—Եթէ ես միայն կարող լինէի մտածել այդ րոպէում...—պատասխանեց նա, կարծես թէ, ղառանցութեան մէջ լինէր, և խաղաղ տրտմութիւնը տիրեց նրա ամբողջ գոյութեանը։—Մի հրէշաւոր զգացմունք կլանեց բոլորը։ Ես զոհեցի քեզ իմ ամենալաւ մտքերը, զգացմունքները և իմ ամբողջ կեանքի կանոնները, իսկ դու, խաղալիկ դարձնելով, փչում ես նրանց օդի մէջ, ինչպէս օճառի փամփուշտներ։ Այժմ ես այլ ևս չեմ հարցնում քեզանից, թէ ինչ է սպասում մեզ ապագայում,—իմանում եմ միայն մի բան, որ կամենում եմ պատկանել քեզ և լինել քո սեփականութիւնը ու քո ստրուկը... Օլգան ոչինչ չը պատասխանեց։ Նրա հոգին խաղաղ էր, այժմ նա իմանում էր, թէ ինչ է սէրը և երջանկութիւնը։

—Օլգան ունէր մի ծծմայր, որին իր ամուսնանալուց յետոյ ընծայել էր մի փոքրիկ դաստակերտ։ Այդ աննշան ագարակը գտնվում էր իր ամուսնու կալուածական տան մի կողմում և թագնված էր փոքրիկ անտառի ետևում։ Անձնանուէր և կամակատար պառաւը տեղեակ էր նրա գաղտնիքին, և երկու սիրող սրտերը հանդիպում էին միմեանց նրա փոքրիկ սենեակում, որ գտնվում էր տան ետևի մասում։ Օլգան խիստ յարմար և ախորժելի կերպով սարքել էր այդ սենեակը։ Այժմ Վլադիմիրը անսահման կերպով անձնա-

նուէր էր եղած նրան։ Երկուսն էլ երանութեան մէջ էին գտնվում։ Այն զգացմունքը, որ այժմ լցրել էր Օլգայի սիրտը և այնտեղից թափում էր լոյս և ջերմութիւն նրա ամբողջ շրջապատի վրա,—այդ զգացմունքը կլանեց նրա առաջվայ բոլոր տանջանքները և նրա կրած բոլոր վշտերը։ Բայց յանկարծ տիրեց նրան մի անակնկալ երկիւղ իր անսահման բախտաւորութեան մասին, մի երկիւղ, որը խորին կերպով ազդում էր և նրա սիրականի սրտին։ Օլգան սոսկում էր, հէնց որ Վլադիմիրը ձեռքով շօշափում էր նրա հագուստը։ Այդ ժամանակ մի ուրիշ ձայն առաջին անգամ խօսեց Օլգայի մէջ։ Վլադիմիրի անհամեմատ զօրաւոր և հրապուրիչ աչքերը զարթեցրին նրա մէջ նրա երկրորդ հոգին։ Դա պատահեց փոթորիկի միջոցին։ Ճրագները հանգցրած էին, և մի կայծակ ժամանակ առ ժամանակ լուսաւորում էր այն սենեակը, ուր Օլգան ինքնամոռացութեան մէջ հանգստանում էր Վլադիմիրի կուրծքի վրա։ Յանկարծ Օլգայի առջև սկսեցին անցնել ինչ-որ տեսիլքներ, և նա խօսել սկսեց Վլադիմիրի հետ։ Սկզբում երիտասարդը չը հասկացաւ, թէ բանը ինչումն է, միայն առեց նրան իր գրկի մէջ և կանչեց նրան իր անունով։ Բայց Օլգան չը զարթնեց։ Վլադիմիրին տիրեց մի առանձին անբացատրելի սարսափ, և նա սկսեց ականջ դնել խեղճ կնոջ խօսքերին, մի և նոյն ժամանակ թէ

վախենալով և թէ հետաքրքրութեամբ: փոթորիկը անցաւ և միայն հեռուից լսելի էին լինում որոտման խուլ ձայներ: Բայց Օլգան պառկած էր լուսնի լոյսի մէջ, որպէս մի հանգուցեալ: Այդ ժամանակ Վլադիմիրը օգնութիւն կոչեց իր սրտի բոլոր բնածին քաջութիւնը և սկսեց հարցմունքներ անել նրանից:—Ի՞նչ կայ այնտեղ, երկնքի միւս կողմում:—Ես ոչինչ չը գիտեմ այդ մասին: —Բայց կա՞յ արդեօք յետ-գերեզմանեայ կեանք:—Ոչ,—պատասխանեց Օլգան: Արիւնը սառեց երիտասարդի երակներում և սիրտը դադարեց զարկելուց: Օլգան նկատեց նրա դրութիւնը և ասաց, որ ոչինչ չէ տեսնում այն բաներից, որ գտնվում են աւելի բարձր, քան երկրային մթնոլորտը· Նա չէ տեսնում և այն, թէ ինչ է պատահում մարդու հետ նրա մահից յետոյ, բայց ինքը սարսափելի կերպով վախենում է գերեզմանից· Նրան այնպէս է թւում, որ շատ զարհուրելի է սառն գերեզմանի մէջ պառկելը, ուր որդերը պիտի կրծեն նրա մարմինը· Թէ ինքը աւելի յօժարութեամբ կը ցանկանար պառկել արձակ երկնքի ներքոյ, բայց այստեղ ևս ագռաւները կը կտցահարէին նրա մարմինը· Վլադիմիրը պէտք է նրան խօսք տայ, որ, երբ կը մեռնի Օլգան, նա կը դնէ նրան դամբարանի մէջ: Երիտասարդը այդ խոստացաւ նրան: Շուտով ընտելացաւ նա Օլգայի այդ երկրորդ հոգու հետ և յօժարութեամբ ականջ էր

դնում նրա ձայնին, և ձայնը, իր կողմից սիրում էր երիտասարդին: Օլգան պատրաստ էր տալ նրան իր հոգին: Որպէս մի երանելի քուն, անցնում էին ժամերը Վլադիմիրի հասարակութեան մէջ: Այժմ Օլգան ատում էր բոլոր զբօսանքները, բայց, իր վրա խօսել չը տալու համար, երբեմն երևում էր հասարակութեան մէջ: Վլադիմիրը յաճախ լինում էր Օլգայի տանը և ոչ սակաւ անգամ և գիշերում էր այնտեղ: Նա քնում էր այն ժամանակ այդ սենեակում, այդ մահճակալի վրա, և Օլգան...

—Եւ Վլադիմիրը շատ բարի էր, դարձեալ շարունակեց Օլգան,—միշտ իր հետ գրքեր էր բերում և նստած Օլգայի մօտ, լսելի ձայնով կարդում էր, կամ հրեշտակային համբերութեամբ ուսում էր տալիս նրա զաւակներին: Երբ գարունքը եկաւ, Օլգան և Վլադիմիրը միասին աշխատում էին այգում, միասին տնկում էին ամեն մի ծաղիկները, բուսեցնում էին բոլոր բանջարեղէնները, որ գործ էին ածվում սեղանի համար, իսկ մեղուները, ընտելացած քանարիաների նման, նստում էին Օլգայի ձեռքի վրա կամ ման էին գալիս նրա ծամերի վրա: Նա գիտէր, թէ այգու ո՞ր տեղերումն էին գտնվում զանազան թռչունների բոյները, սիրում էր սարեակին, որ նստած էր լինում տանձի ծերացած ծառի վրա, սիրում էր փոքրիկ դեղձանիկին և սոխակին, որին ցոյց էր տըվել նրան Վլադիմիրը, և նա շատ անգամ նա-

յում էր, թէ որպէս թռչունների արու և էգ զոյգերը թռչում էին զանազան կողմեր և կերակուր էին բերում իրանց փափուկ փետրազարդ ձագերի համար: Ամառը նրանք զբօսնում էին դաշտերում և նստում էին անտառի մօտ, իսկ գիշերը այգու թումբի վրա: Երբեմն երկնքի վրա ցրված էին լինում բազմաթիւ աստղներ, և Վլադիմիրը անգիր կարդում էր զանազան բանաստեղծների հրաշալի ոտանաւորները, որոնք, կարծես հոսում էին նրա շրթունքներից: Օլգան բնութիւնից ջանասիրութեամբ նկարում էր դաշտավայրերի և զանազան չինական տեսարանների պատկերներ: Երբ նրան յաջողվում էր կենդանի կերպով արտայայտել իր ֆանտազիան, և երբ Վլադիմիրը զննում էր նրա նկարները, այդ միջոցին Օլգան կարդում էր նրա աչքերի մէջ, թէ որ աստիճան գոհ է նա իր աշխատութիւններով,—և այդ րոպէում նա չէր ճանաչում մի այլ բախտ, որը կարող լինէր համեմատվել իր բախտաւորութեան հետ: Հունձքից յետոյ նրանք միասին ճանապարհորդում էին Կարպատեան լեռների վրա: Միշէլը ուղեցոյցի հետ գնում էին առաջ, իսկ Վլադիմիրը առաջնորդում էր Օլգային, բռնած նրա ձիու սանձից: Նրանք բարձրացան Սև սարի վրա, տեսան նրա գագաթին խորին, անյատակ լիճը, և բարձր լեռներից նայում էին իրանց հայրենական անսահման տափարակների վրա: Բայց երբ ձմեռը

նրանք դարձեալ փակվեցան իրանց փոքրիկ ուտաք տան մէջ, այդ ժամանակ սէրը մրտենիներով ու վարդերով զարդարում էր նրա անշուք պատերը, և մուզաները լուսով և մեղեդիներով լցուցանում էին երեկոյեան խաղաղ ժամերը: Օլգայի ամուսինը երեխաների հետ նստած էր լինում դիւանի վրա, Վլադիմիրը փոքրիկ կինամոնագոյն բազկաթոռի վրա, իսկ Օլգան երգեհոնի հանդէպ: Նա ածում էր գերմանական երևելի կոմպօզիտօրների ամենանշանաւոր աշխատասիրութիւնները կամ Վլադիմիրի հետ երգում էր մալօրուսեան տխուր երգեր: Երբեմն նրանք միասին կարդում էին զանազան տեսարաններ Ֆաուստից, Էգմոնտից, Ռոմէօից և Յուլիայից: Օլգան կարդում էր Գրետխենի դերը կամ Յուլիայի դերը, և, այդ վերջինի նման, նրա սիրտն եւս լցված էր լինում նրա տարփածուի սիրով: Եւ այսուամենայնիւ լինում էին և մռայլ րոպէներ: Երբեմն Օլգայի սրտին տիրում էր զղջման ապաշխարութիւնը, և նա ցանկանում էր ամեն ինչ խոստովանվել իր ամուսնին և քաւել իր երանութիւններով լի մեղքը: Ուրիշ անգամ նա ցանկանում էր փախչել Վլադիմիրի հետ, բայց պատիւը և զաւակները արգելում էին նրան մի այդպիսի քայլ անել: Օլգան մտատանջութիւնների մէջ տատանվում էր, չարչարվում էր, բայց հէնց որ նրա գիրկն էր ընկնում, բոլորը մոռանում էր: Այդ ժամանակ ան-

հետանում էին բոլոր տարակուսանքները, բոլոր հոգսերը, բոլոր մտածութիւնները, և նա իրան կատարելապէս երջանիկ էր համարում: Ոչ, և այդ ժամանակ նա կատարելապէս բախտաւոր չէր: Վլադիմիրի լռութեան ժամանակ, Օլգան երբեմն կարդում էր նրա մռայլված ճակատի վրա այդ դժնդակ յանդիմանութիւնները. ես խաբում եմ իմ բարեկամին, որը կատարելապէս հաւատում է ինձ. ես մեղքի մէջ եմ ձգում այն կնոջը, որին կամենում էի բարոյապէս բարձրացնել, և ծածկում եմ նրան նշաւակութեամբ:—Իսկ Օլգային անհանգստացնում էր մի բոլորովին այլ տանջանք: Նկատում են, որ նա անհաշտ է ապրում իր ամուսնի հետ, և խղճում են նրան, բայց նա այնքան խելագար կերպով բախտաւոր է համարում իրան, և այնքան հպարտանում է իր բախտաւորութեամբ, որ պատրաստ է ի լուր ամենեցուն յայտնել. ես սիրված եմ նրանից, որով դուք ամենքդ զարմանում էք, ես առաջինը եղայ, որ ոտքս դրի նրա հպարտ եսի վրա: Օլգան ինքը պահանջեց նրանից գաղտնիքներ և ինքն ևս չէր կարողանում պահպանել այդ գաղտնիքները: Օլգային շատ ցանկալի էր, որ ամենքը իմանային, որ ամենքը նախանձէին իրան, և առաւել ևս նախանձէին նրան, որին ինքը իր բարեյօժարութեամբ բարձրացրեց մինչև աստուածութեան աստիճան: Եւ այդպիսով, նա ինքը մատնիչի նման

երևան է հանում իր սէրը: Հէնց որ պատահում է, նրան ուրիշների առջև ցոյց տալ Վլադիմիրի գերազանցութիւնը, նա մոռանում է ամէն զգուշութիւններ: Նա միայն իրաւունք ունէ բռնել Օլգայի ձիու ասպանդակները, իջեցնել նրան սահնակից, հագիցը հանել նրա մուշտակը: Օլգան միշտ նրան է ընտրում իրան պարընկեր պար գալու ժամանակ. նա է տալիս Օլգային զովացուցիչ ըմպելի, նրա հրամանով սեղանի վրա լցնում է նրա բաժակը կամ կտրում է նրա համար արսի միս: Օլգան ճաշակում է մի պտուղ, իսկ միւսը իր պատառաքաղով տալիս է նրան, կամ խմում է նրա բաժակից, իսկ իր սեփական բաժակը տալիս է նրան, և այդ միջոցներում Օլգայի ոտը հանգստացած է լինում նրա ոտի վրա: Երբ Վլադիմիրը անհետանում է, Օլգան աչքերը չէ հեռացնում նրանից, իսկ երբ նա դեռ չէ եկած, Օլգան միշտ նայում է դէպի դուռը, մինչև ներս կը մտնէր, և այդ ժամանակ Օլգան գունաթափվում էր և կարմրում էր: Երբ որ խօսում էին Վլադիմիրի վրա, Օլգան տաքացած կերպով սկսում էր պաշտպանել նրան և հիացմամբ ջատագովում էր նրա ընդունակութիւնը ու խելքը, այնպէս որ կասկած էր յարուցանում ամենաանբարեսիրտ և ամենաանմտադրելի մարդկանց մէջ: Սկսում էին պըտըտվել լուրեր, համբաւներ, որոնք խառն էին ճշմարտութեամբ, ստութեամբ և փաստութեամբ, և

վերջապէս, արդէն ոչ ոք չէ տարակուսում, որ Վլադիմիր Պօզօլևը գեղեցիկ կնոջ բախտաւոր սիրականն է։ Շատ ու քիչ լուրեր հասնում են նրա ամուսնի ականջին. Նա երկար չէ հաւատում, որ իր կինը կարող էր դաւաճանել իրան, բայց, վերջապէս նրա կասկածանքն ևս յուզվում է և սկսում է հսկել իր կնոջ վրա։

—Այսպէս անցնում է մի տարի։ Առաջին սպիտակ ծաղիկները բացվեցան այգիում, գարնանային անուշահոտ օդը բաց դռնից հոսվում էր փոքրիկ դահլիճի մէջ, ուր Օլգան իր ամուսնի և սիրականի հետ նստած են թէյի սեղանի մօտ։ Օդը այն աստիճանի զարմանալի թարմ էր և անուշահոտութեամբ լի, գիշերային երկինքը փայլում էր անթիւ աստղներով, կանաչագոյն դաշտից լսելի էր լինում լորերի ձայնը։ Մի անբացատրելի երկիւղ, մի ինչ-որ բանի թախծալի փափագ, որը ոչ նման է ախորժելի տրտմութեան, ոչ աղմկալի բախտաւորութեան, տիրում են մարդու հոգուն։ Փոքրիկ կանաչագոյն ճանճերը և սպիտակ թիթեռները բըզբըզում են և պտոյտներ են գործում լամպայի թափանցիկ կալփակի շուրջը։ Վլադիմիրը բաց արեց Շէքսպիրի գիրքը։ Օլգան նրա ուսի վրայից նայում էր գրքի վրա և կարդում էր.

Ռօմէօ։ Մի ժամանակ այժմեան տանջանքները կը ծառայեն մեզ որպէս առարկայ քաղցր խօսակցութիւնների։

Ցուլիա։ Ա՛խ Աստուած, իմ սիրտը նախազգում է մի դժբախտութիւն։ Մի՞թէ աչքերս խաբում են ինձ։ ինձ երևում է, որ ես տեսնում եմ քեզ խորին գերեզմանի մէջ, գունաթափված...

—Անտեսանելի նետը միջամուխ էր եղած Օլգայի սրտի մէջ։ Նա չէր կարողանում հեռացնել իրանից այն անհասկանալի սարսափը և դարձնում էր իր վախեցած հայեացքը Վլադիմիրի վրա, որ իսկապէս գունաթափ էր եղած։—Ես չեմ կարող շարունակել ընթերցումը, իմ սիրտը, կարծես թէ, կտոր-կտոր է լինում...—Գարնանային օդն է այսպէս ազդում,—ասում է նրա ամուսինը,—կողպենք դուռը, որ բացվում է դէպի այգին։—Օլգան մի րոպէ դուրս է գալիս պատշգամբի վրա, յետոյ վերադառնում է, սկսում է թէյ ածել։ Նա նստում է Վլադիմիրի հանդէպ։ Նրա ամուսինը դիտում էր նրա վրա և ձեռքում բռնած լրագրի ետևից նկատում էր, թէ որպէս կինը իր ախտաբորբոք հայեացքներով նշաններ էր անում իր սիրականին։ Եւ մի և նոյն ժամանակ ոտքով սխալմամբ շօշափում է նա ամուսնի ոտքը։—Դա իմ ոտքն է,—հանդարտ կերպով ասում է նրան Միչէլը։ Օլգան սոսկալով և չփոթվելով թեքվում է սեղանի վրա։ Նա տեսնում է իր ամուսնի սարսափելի կերպով փոխված դէմքը, երբ նա դուրս է գնում դահլիճից։—Դու մատնեցիր մեզ,—հազիւ լսելի ձայնով ասում է նրան Վլադիմիրը։—Ես

դրանից չեմ վախենում,—մրմրթում է Օլգան,—թող նա ամեն բան գիտենայ, ես վճռել եմ պատկանել քեզ, միայն քեզ, ես կը լինեմ քո կինը, Վլադիմիր:—Նա շնորհակալութեամբ նայում է Օլգայի վրա և համբուրում է նրա ձեռքը:—Ո՛րքան սիրում եմ ես քեզ, և հետզհետէ աւելի և աւելի զօրութիւն է ստանում իմ սէրը:—Դու պէտք է գիշերը այստեղ մնաս. մեզ հարկաւոր է խօսել շատ բաների մասին:—Միայն ոչ այսօր,—վախեցած կերպով աղաչում է նրան Վլադիմիրը,—ես այժմ վատ նախազգացմունք ունեմ, ի սէր Աստուծոյ, թող այսօր յետաձգենք:—Միչէլը հազաց, նախ քան դահլիճը կրկին վերադառնալը. նա վեր առեց իր թէյի բաժակը և գանգատվում էր, թէ գլուխը ցաւում է. նրա ձայնը հնչում էր խիստ խուլ կերպով, երբ յայտնեց, թէ ժամանակ է գնալ հանգստանալու: Վլադիմիրը սեղմեց նրա և Օլգայի ձեռքը և գնաց իր սենեակը, ուր, առանց հանվելու, ընկաւ անկողնի վրա: Կէս գիշերից յետոյ լսեց նա այգիից կնոջ հագուստի սօսափիւն: Նա վեր թռաւ և մօտեցաւ լուսամուտին: Ամեն ինչ լուռ էր: Յանկարծ Օլգան դուրս ցատկեց ըստուերի միջից և իր ձեռքերով գրկեց նրան:—Ահա և քո վատ նախազգացութիւնները,—ծիծաղելով ասաց նա: Վլադիմիրը ոչինչ չը խօսեց, նա օգնեց նրան լուսամուտից մտնել սենեակը, կասկածանքով նայեց դէպի այգին և լուսամուտը

կողպեց: Օլգան նստեց:—Եւ այսպէս, դու վախենում ես ինձանից: Դու իրաւունք ունես վախենալու,—շարունակում էր նա հանաքներ անել և, իր սպիտակ ձեռքերը փաթաթելով նրա պարանոցին, կպաւ նրա կուրծքին...—Ես շատ շոգում եմ,—ասաց նա փոքր ինչ անցնելուց յետոյ,—բաց արա լուսամուտը: Վլադիմիրը բացասական կերպով շարժեց գլուխը:—Ի՞նչ է պատահել քեզ,—գոչեց նա արծաթահնչիւն ծիծաղով,—չը լինի թէ վախենում ես իմ ամուսնից:—Օլգան ինքը վեր կացաւ, բացարեց լուսամուտը և կրկին պառկեց նրա մօտ:—Խնդրում եմ քեզ, հեռացիր այստեղից,—ասաց Վլադիմիրը դողդոջուն ձայնով:—Օլգան ոչինչ չը պատասխանեց և անհոգ կերպով շարունակում էր մատներով խաղալ նրա մազերի հետ: Յանկարծ երիտասարդը սաստիկ արագութեամբ դիմեց դէպի լուսամուտը: Օլգան երկիւղի մէջ արագութեամբ շուռ տուեց գլուխը: Բայց արդէն ուշ էր: Նրա ամուսինը կանգնած էր նրանց հանդէպ: Լուռ, երկիւղից քարացած, Օլգան գլորվեցաւ դէպի մի կողմ, իսկ Վլադիմիրը նետվեցաւ նրա և ամուսնի մէջտեղում:—Նեղութիւն մի կրէք պաշտպանել նրան,—սառնութեամբ ասաց Միչէլը,—ես ձեռք չեմ տայ նրան: Գնա քո սենեակը, Օլգա, մեզ հարկաւոր է այստեղ մի քանի խօսք ասել միմեանց:—Օլգան դանդաղ քայլերով հեռացաւ, ձգելով իր վշտալի երկարատև հայացքը Վլադիմիրի

վրա, որը նայում էր նրան անբնական կերպով փայլող աչքերով։ Մտնելով իր սենեակը, նա բանալիով կողպեց դուռը և ընկաւ մահճակալի վրա, սրտում կրելով մի անբացատրելի դառն ցաւ։

—Առժամանակ անցնելուց յետոյ լսեց նա, որ ամուսինը վերադարձաւ իր սենեակը, յետոյ մէկ ուրիշն էլ ձիով դուրս գնաց բակից, և կրկին ամեն ինչ լռեց։ Լուսաբացին լսելի եղան նրա ամուսնի ամուր քայլերի ձայները. նա գնում էր կօրիդօրի միջով։ Անցան մի քանի տառապալից րոպէներ, և նա լսեց ամուսնի նժոյգի խրխնջալու ծանօթ ձայնը և յետոյ լսեց ձիու սմբակների տրոփիւններ,—նրա ամուսինը ձիով ուրիշ տեղ էր գնում։—Մոխրագոյն լոյսը տխուր կերպով ընկել էր սենեակների մէջ։ Օլգան դուրս եկաւ քնարանից։—Ո՞վ կայ այստեղ,—գոչեց նա։ Ոչ ոք չը պատասխանեց նրա ձայնին։ Նա դուրս եկաւ պատշգամբի վրա, տեսաւ փոքրիկ կազակին, որը, յօրանջելով և քնաթաթախ աչքերը տրորելով, անցնում էր բակով։—Ո՞րտեղ են Վլադիմիրը և աղան,—հարցրեց նրանից։—Աղան գրեց մի քանի նամակներ,—սառնասրտութեամբ պատասխանեց կազակը, ատամներով կրծոտելով մի յարդի կտոր,—և յետոյ ձիով գնաց չը գիտեմ թէ ուր, իսկ պարոն Պօդօլեվը գնաց աւելի վաղ քան թէ նա։

—Այժմ Օլգան հասկանում էր, որ նրանք գնացին միմեանց հետ մենամարտելու, և օրօրվելով յետ

է դառնում իր սենեակը. ամեն մի քայլում նրա ծնկները կոտրատվելու վրա են. արիւնը սառչում է երակներում, իսկ լաց լինել չէ կարողանում։ Նա ընկնում է խաչելութեան առջև, որը քարշ էր ընկած նրա մահճակալի վրա, և ձեռքով կոծում է իր ճակատը։ Նա յոյս ունի, որ Վլադիմիրը կը սպանէ իր ամուսնին, իր զաւակների հօրը, և ծնկների վրա աղօթում է... մինչև մի ոքմին ձիով մտնում է բակը և կանգնում է պատշգամբի մօտ։ Քայլերը մօտենում են։ Օլգան երկչոտ կերպով ականջ է դնում. նրա գլուխը թեքված է դէպի մի կողմ, բազկերակը սաստիկ զարկում է, նա վախենում է շարժվել անգամ, և կարծում է, թէ մեռնելու մօտ է... Ներս է մըտնում նրա ամուսինը։—Նա մեռաւ,—ասում է Օլգային,—ահա նամակը, որ գրել է քեզ,—իմ պատիւը բաւականութիւն ստացաւ... Այժմ դու ազատ ես թողնել այդ տունը, եթէ ցանկանում ես... Դրանից աւելի ոչինչ չը լսեց Օլգան, կարծես թէ, նրա ականջները խլացած լինէին, և նա ընկաւ յատակի վրա... Երբ նա յուշի եկաւ, այդ ժամանակ նրա առաջին հայեացքը ընկաւ խաչելութեան վրա։ Նա ոչինչ չէր հասկանում կատարւած իրողութիւնից, որովհետև նրա գլխում ամեն ինչ խառնաշփոթ դրութեան մէջ էր, իսկ սիրտը ցաւում էր մի ինչ որ վէրքից։ Փոքր ինչ անցնելուց յետոյ, նրա աչքն ընկաւ նամակի վրա, և

հետզհետէ նրա յիշողութիւնը պարզվեցաւ, բայց նա չը լաց եղաւ։ Նա, կարծես թէ, քարացած լինէր, համարեա սառնասրտութեամբ բաց արեց նամակը և կարդաց.

«Սիրելի՛ կին,

«Դու ամեն ինչ էիր ինձ համար՝ կեանք, երջանկութիւն և պատիւ։ Քո համար ես կատարեցի սխալ քայլ, մեղանչեցի և հրաժարվեցայ իմ ամենալաւ համոզմունքներից։ Մի այսպիսի վարմունք պահանջում է զոհ։ Այն ժամանակ, երբ դու կը կարդաս այդ նամակը, իմ վիճակը վճռված կը լինի։ Մի լաց լինիր իմ մասին։ Դու այնպէս լիացրիր քո սէրով և բախտաւորութեամբ մի տարի իմ կեանքից, որ այդ մի տարին աւելի թանգագին է, քան թէ մարդկային ամբողջ ողորմելի գոյութիւնը, և ես կարող եմ միայն շնորհակալ լինել քեզանից իմ վայելած երջանկութեան համար։ Ցանկանում եմ քեզ բախտաւորութիւն, իսկ եթէ այդ անկարելի կը լինի, այն ժամանակ պահպանիր քո պատիւը և կատարիր քո պարտքը։

«Թոյլ տուր ինձ դարձեալ կենդանի մնալ քո յիշողութեան մէջ։ Մնաք բարեաւ մշտապէս։

Քո Վլադիմիր»։

—Օլգան լռութեամբ ծալեց նամակը, վերկացաւ, և սկսեց իր իրեղէնները հաւաքել։ Նա հէնց այն րոպէում կամենում էր թողնել իր ամուսնին։

Բայց յանկարծ լսեց նա նախասենեակից երեխաների ձայներ. նա արագութեամբ բաց արեց դուռը, և երբ նրա ուրախ զաւակները քարշ ընկան նրա պարանոցից, այդ ժամանակ նա սկսեց հեկեկալ և ընկաւ նրանց առջև ծնկների վրա...

—Վլադիմիրին գտան Թղթենիների անտառում Ցուլաւայի մօտ։ Դա բոլորովին առանձնացած մի տեղ է և տասն մղոն շրջապատ ունի։ Ցուլաւայի դաշտային պահապան Բալաբանը,—Լեօպօլդը կը ճանաչէ նրան,—անտառում շրջագայելու ժամանակ գտաւ նրան։ Նա ընկած էր քամակի վրա և բռնած ունէր ատրճանակը ձեռքում։ Գնդակը անցել էր նրա կուրծքի մէջ։ Նրա մօտ գտան մի նամակ, որպիսին գրում է ամեն մի մենամարտող, որ կռւում է կամ սպանելու և կամ սպանվելու համար։ Այսպիսով վճռեցին, որ նա ինքնասպանութիւն է գործել և թաղեցին նրան գերեզմանատան շրջապարիսպից դուրս... Այն բոլորը, ով պատահեց դրանից յետոյ, պէտք է համարել կեանքի սովորական կողմը, բայց և դա կապ ունի նախընթաց անցքերի հետ։ Օլգան թէև սարսափելի կերպով ատում էր իր ամուսնին, բայց չը թողեց նրան։ Սրտի վշտերից, փոքր էր մնում, որ խելագարվէր նա. երբեմն մի դիւական միտք տիրում էր նրա սրտին, և մի անգամ նա արդէն լցրեց ատրճանակը, որպէս զի սպանէ ամուսնին, բայց այսուամենայնիւ, մնաց նրանից

անբաժան, որովհետև նա չէր կարող ապրել, եթէ մէկից սիրված չը լինէր։ Նրան ուրախութիւն էր պատճառում, իմանալով, որ ամուսինը դեռ ևս սիրում էր նրան, բայց սաստիկ տանջվում էր այն գիտակցութիւնից, որ թէև ինքը պատկանում է նրան, բայց նա չէ կարող կոչել կնոջը որպէս կատարելապէս իրան պատկանող։ Ամուսինը շատ անգամ անտանելի էր դառնում նրան։ Առ ժամանակից յետոյ սարսափելի գունատութիւնը պատեց Օլգայի դէմքը, նրա սիրտը առողջ չէր, և լուսնկայ գիշերներում նա ստիպված էր թափառել և հանգստութիւն չը գտնել։

Օլգան լռեց։

—Այժմ Լէօպոլդը բոլորը գիտէ,—ասաց նա խաղաղ, սրտաշարժ մտերմութեամբ,—այժմ նա կը հասկանայ Օլգային և լուռ կը մնայ։

Ես ձեռքս տուի նրան ի նշան երդման։

—Ես գիտեմ, որ Լէօպոլդը չի դաւաճանի այդ երդմանը,—ասաց նա,—բարի գիշեր։ Աքաղաղը, արդէն երկրորդ անգամն է, որ կանչում է. արևելքում երկնքի վրա նշմարվում են լուսաբացի պայծառ նշոյլները։ Ժամանակ է ինձ հեռանալու։

Նա դանդաղ ընթացքով հեռացաւ, ձգելով իր գեղեցիկ անդամները, և ձեռքով շօշափեց իր ծամերը, որից սփռվում էին կայծեր։ Նա մի անգամ ևս շուռ եկաւ դէպի ինձ և, լուսամուտից նայելով, մատը դրեց շրթունքի վրա։

Դրանից յետոյ աներևութացաւ նա։

Ես երկար ականջ էի դնում, յետոյ վերկացայ և մօտեցայ լուսամուտին։ Գիշերային խորին լռութեան մէջ ոչինչ չէր լսվում, բացի լրացած լուսնի արծաթափայլ լոյսից, որը առատութեամբ թափվել էր ամեն տեղ։

Առաւօտեան ես գնացի սեղանատունը, ուր տանտէրը առաջարկեց ինձ միասին նախաճաշիկ անել։—Յետոյ ես ինքս կը տանեմ ձեզ մինչև ճանապարհը,—քաղցրութեամբ աւելացրեց նա։

—Ո՞ւր է ձեր ամուսինը, հարցրի ես։

—Նա տկար է,—բաւական անփոյթ կերպով պատասխանեց նա,—նա սաստիկ տանջվում է միգրէնով, առաւելապէս լուսնի լրման ժամանակ։ Չը գիտէք արդեօք մի լաւ դարման այդ հիւանդութեան համար։ Մի չափահաս կին խորհուրդ էր տալիս թթու դրած վարունգներ, դուք ինչ կարծիք ունէք այդ մասին։

Մենք մնաք բարեաւ ասեցինք նրա հետ անտառի միւս կողմում։

Չը նայելով նրանց սիրալիր ընդունելութեանը, ես միւս անգամ չը մտայ այդ տունը, և ամեն անգամ, երբ գիշերային պահուն, պատահում էր ինձ անցկենալ մթին կաղամախիներով շրջապատած, մենաւոր կալուածական տան մօտով, մի առանձին տխրութիւն տիրում էր ինձ։

Այն օրից ես չեմ տեսել Օլգային, բայց երա-

զում չատ անգամ երևում է ինձ նրա սքանչելի հասակը իր գեղեցիկ գլխով, նրա գունաթափված հիանալի դէմքը խփած աչքերով, և գեղածածան ծամերը, սփռված երեսի ու թիկունքի վրա:

Ստեփաննոս Պօղոսեան
ՆԵՐԲՐԻՆՉԻՆ...
Госпубл. б-ка
Арм. ССР

20 MAY 2013

14506

ՀՀ Ազգային գրադարան
NL0552088